հատել (մեկին կամ մի բանի): Այս ածանցով դերբայը հանդես է գալիս որպես կրկնավոր բարդություն՝ արտահայտելով վիճակ, հաղորդելով գործողությանը բազմակիություն, երկարատևություն, լինելով -(y)s դերբայական դարձվածի քերականական հոմանիշը: Մակայն այս ձևը քիչ գործածական է՝ ճծնը ճծնը *baktmak-շրջվելով* նայել, ճնը ճնը *dirilmek-ծանր* հիվանդություն տանել, *koşup koşup yorulmak-վազելով* հոգնել, *bağırıp çağırtıp dürmek-անընդհատ* (անդադար) բղավել<sup>9</sup>: *Adama baktır bakır güldüler-Մարդուն նայելով* ծիծաղեցին /*նայեցին* ու ծիծաղեցին/: Այս ածանցը -*maktan* ածանցի հետ կիրառվելու ժամանակ արտահայտում է տևականություն և պատճառականություն (օրինակ՝ *Merdiveni inip çukmaktan nefesim kesildi-Աստիճանները իջելի-բարձրանալուց /իջնելուց և էլնելուց/ շունչս կտրվեց*): -*ıp* ածանցով մակբայական դերբայն արտահայտում է գործողություն՝ ա) միանման սյուբեկակաների. *Başımı kaldırıp baktım-Բարձրացնելով գլուխս՝ նայեցի*, բ) տարբեր սուբեկակաների. *Buna rağmen aksam olup ta ortalık karınca içime bir hüzün çöktü-Չնայած դրան, հենց որ ընկավ երեկոն ու մթնեց, ինձ մի թախիծ պարտրեց*: գ) *ta, te-էլ•* կապի (շեշտագուրկ) համադրությամբ. *ցույց է տալիս, դերբայում անկա տրամաբանական շեշտը*<sup>10</sup>. *Sabah olup ta kız hamama gitmeğe hazırlanmış zaman o geldi-Իսկ երբ բացվել էր առավոտը, և առջիկը պատրաստվում էր բաղնիք գնալ, նա եկավ*: -*ıp-ով* կառույցները կարող են ցույց տալ գործողության բոլոր ժամանակներում<sup>11</sup>: Ժամանակը որոշվում է՝

ա) նախադասության ստորոգյալով. *Orban telefon edip beni tiyatroya çağırdı- Օրհանը զանգահարելով ինձ կանչեց թատրոն*:

բ) ժամանակի պարագայով՝ *Yarın evde kalıp makaleyi yazacağım-Վաղը, տանը մնալով, հոդվածը կգրեմ*:

Այս դերբայի ժխտական ձևը կազմվում է -*ma* (-*me*) ածանցով՝ *gelip* (եկավ և գալով)–*gelmeyip* (չեկավ և չգալով), *gidip* (գնաց և գնալով)–*gitmeyip* (չգնաց և չգնալով): Եթե բայանիմը վերջանում է

<sup>9</sup> Տե՛ս N. Koç, *Yeni Dilleşmiş*, էջ 415:

<sup>10</sup> Տե՛ս A. Konoval, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 475-476:

<sup>11</sup> Տե՛ս Ալ. Մախաբյան, Ա. Մորոնեյան, Տ. Լեզնագրգրան, *Քերթրթեմնն զասացիքս զիրք Ա*, էջ 83:



ձայնավորով, ապա նրա և անանցի միջև ավելանում է -y-նկյունը (-yip, -yip, -yap, -yap)<sup>12</sup>։

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ -ip, -ip, -up, -ap անանցով կազմված մակբայական դերբայն արտահայտում է ա) գործողություն, որը նախորդում է մեկ այլ գործողությանը՝ բնութագրելով ստորոգայրը ձևի, ժամանակի, պատճառի և պարմանի տեսանկյունից, բ) գործողություն, որը տեղի է ունենում գլխավոր ստորոգայրում արտահայտված գործողության հետ միաժամանակ ու զուգահեռ, գ) ժամանակ կամ պայման, ընդ որում ստորադասական նախադասության գործողությունը կարող է նարակցել (միաժամանակ կատարվել) գլխավոր գործողությանը կամ էլ դրան նախորդել, իսկ գլխավոր գործողությունը կարող է արտահայտել արդյունք, որը հաջորդում է առաջին գործողությանը՝ արտահայտված դերբայով (օր.՝ Ata dost gibi bakır duşman gibi binmeli-Չիտև, ընկերաբար նայելով-խնամելով, պետք է հեծնել թշնամաբար)։

*բ) Վիճակ արտահայտող մակբայական դերբայներ (Durum ulçları)*

-a, -e անանցով կազմված մակբայական դերբայ

Հետոց ի վեր գործածություն ունեցող այս անանցով կազմված մակբայական դերբայը հանդես է գալիս հետևյալ ձևերում՝ **koş-a** **koş-a** վազքով, **göl-e** **göl-e** մնաք բարով, ամենայն բարիք (բարենաղթանք՝ գնացողին), **düş-e** **kalk-a** մեծ դժվարությամբ և այլն։ Ժամանակակից թուրքերենում այս ձևերը հանդես են գալիս՝ ստանձնելով մակբային բնորոշ շարահյուսական պաշտոն (պարագա)։ Նախկինում, ինչպես գրում է Մ. Էրզինը, այս դերբայներն ունեին ինքնուրույն կիրառություն՝ **koş-a** (**göt-**), **çek-e** (**götür-**), **kov-a** (**var-**)։ Ատոհանաբար կորցնելով ինքնուրույնությունը՝ դրանք վերածվել են կրկնավոր բարդությունների։ Ինքնուրույն կիրառությամբ գերունդիտումներ այսօր կարելի է հանդիպել շատ հազվադեպ<sup>13</sup>։ Նախկինում ինքնուրույն

<sup>12</sup> St'u Ömer Demircan, *Türkçe Türkçesine Kök-Ek Bilgileri*, Türk Dil Kurumu Yayınları: 436, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1977 (տե՛ս նաև Ազրուբերի և գրականության ցանկը, նույն տեղում, էջ 114-126), ինչպես նաև Ալ. Մախալան, Ա. Սողոմոնյան, *Տ. Լաթաֆյանի, Պոլսիցիների քառասունը*, էջ 83, 309-310։

<sup>13</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 320։

կիրառություն ունեցող *մի-յ-ե* մակբայական դերբայը այսօր արդեն ձեռք է բերել կապական գործառույթ՝ *böyledir diye... մտածելով, որ այդպես է... geldin diye... մտածելով, որ եկել ես... և այլն*: Այս գերունդիումն առանձին կիրառվում է միայն ժամանակի արտահայտման համար՝ *kal-a* (պակաս), *geç-e* (անց)<sup>14</sup>: Ըստ Մ. Էրզնիի՝ այս գերունդիումը ինչպես եսիակնում, այնպես էլ եերկացումս օգտագործվում է՝ բարդ բայեր կազմելու համար՝ *gel-e bil-, düş-e yaz-, yap-a dur-* և այլն (Küçük kardeşim ağlaya ağlaya eve geldi-Փոքր եղբայրս լաց լինելով տուն եկավ)<sup>15</sup>: Ժամ ցույց տվող բառերի հետ կիրառվելիս այն կազմում է ժամանակի իմաստ արտահայտող մակբայ: Saat ona çeyrek kala burada ol-Այստեղ եղիր տասնից տասնհինգ (քառորդ) պակաս: -a, -e անձանցը միահյուսված ձևով հանդես է գալիս եան ortaklaşa (համատեղ, միասին) և nöbetlece (ներթոյվ, փոխ առ փոխ, միմյանց հետևից) բառերի կազմում: Bu işi ortaklaşa yapacağız-Այս գործը պետք է անենք համատեղ ուժերով (միասնաբար): Ասկա է եան a.....-a մակբայական դերբայի կրճատված ձևի կիրառությունը (Ayarlar bizi birbirimizden/ Մեզ միմյանցից բաժանեցին, Hem de göz göre yürek parçalaya/ Ակնհայտորեն ու բացեիքաց (մեր) սիրտը կտոր-կտոր անելով):

Այս անձանցը, կցվելով *demek* (ասել) բայի արմատին, կազմում է *diye* մակբայական դերբայը, որն ունի հետևյալ կիրառությունները.

ա) ինքնուրույն գործածվելիս արտահայտում է -*arak*-ի իմաստ (Hemen dönerim diye çıktı, ama dömedim-Ասելով, որ իսկույն կվերադառնա, դուրս եկավ, բայց չվերադարձավ: "Vallahi ben söylemedim" diye yemin etti-Երդվեց՝ ասելով. «Աստվան վկա, ես չեմ ասել»),

բ) օգտագործվում է եան -*dur* *diye* կառույցի ձևով՝ արտահայտելով կատեգորիկություն: Bu saatte mutlaka uyanmanız diye düşünüyordum-Մտածում էի, թե ես այդ ժամին անպայման պետք է, որ արթնացած լինի:

գ) *Diye* մակբայական դերբայը հանդես է գալիս եան որպես հետադրություն և *adında, adlı* (անունով, անվամբ) իմաստն է արտահայտում: Buralarda Hacı Osman diye biri varmış- Այստեղ Հաջի Օսման անունով մի մայր է եղել (Այստեղ եղել է ուն Հաջի Օսման):

<sup>14</sup> Ալ. Մախաչյան, Ա. Մազունեյան, Տ. Լըբևուրյան, Քույրերնեի դասագիրք էջ 59:

<sup>15</sup> M. Ergin, *Türk Dil Bülteni* էջ 321:

դ) Diye մակրայական դերբայը կարող է ցույց տալ նաև գործողության նպասակը և շարժառիթը՝ օգտագործվելով ըղձական կամ էլ հրամայական եղանակի հետ (Օր.՝ *Seni uyan dirtmasın diye odadan çıktı*։ Նա դուրս եկավ սենյակից, որպեսզի քեզ չարթնացնի: *Çabuk gidelim diye taksiye bindik*-Նստեցինք տաքսի, որպեսզի շուտ գնանք-(շուտ գնալու նպատակով):

ե) Diye մակրայական դերբայը գործածվում է որպես ցնի հետադրության համանիշ. *O bey diye yasıyor*։ Նա ապրում է իշխանի պես/որպես մի իշխան/իշխանավարի:

*Մակրայական -arak, (-erek)* անանցով կազմված դերբայը ժամանակակից թուրքերենում ունի լայն գործածություն՝ *yap-arak* անելով, *oku-y-arak* կարդալով, *gel-erek* գալով, *bekle-y-erek* սպասելով: Թուրք լեզվաբանների կարծիքով այս անանցը հատուկ է «արևմտյան թյուրքերենին, որը հետագայում փոխանցվել է հին թյուրքերենին, այնուհետև հանդես է եկել օսմաներենում: Այն ձևավորվել է *-a, -e* դերբայական և *-rak, -rek* անանցների միացումից<sup>16</sup>։ Հին թյուրքերենի վերջին շրջանում այն դրսևորվել է՝ *-arak, -irek, -urak, -ärek (yi-y-ärek, aci-y-arak)* տարբերակներով: Օսմանյան շրջանում այս անանցը վերջնականապես ստանում է *-arak, -erek* ձևը և այդպես էլ կիրառական է մինչև օրս:

*-(y)arak/--(y)erek* անանցի կազմության մասին իրենց կարծիքն են հայտնել արևելագիտության դասականներ Ա. Քազըմ Բեկը, Շ. Դենիև և այլոք, որոնք նույնպես այն կարծիքին են, որ եջալ անանցը կազմված է երկու մասնիկների միացությունից՝ *-(y)s+rak*, որտեղ *-(y)s*-ն դիտարկում էին որպես մակրայական դերբայի կամ ըղձական եղանակի հիմք, իսկ *-rak-ը*՝ որպես համեմատական աստիճանի ցուցիչ-վերջածանց<sup>17</sup>։ Ակադեմիկոս Ա. Ն. Կոտեռովը նախապես *-(y)arak* անանցը փորձել է բաժանել երկու մասնիկի *-(y)ar+ak, (-)(y)ar<garu*-ն դիտարկել է որպես ներկա-ապառնի ժամանակի դերբայ), իսկ հետագայում կարծիք է հայտնել, որ *-ak* մասնիկի մեջ կարելի է տեսնել գոյական անուն (*ok*)՝ «ժամանակ» իմաստով *-(y)ar*-ով բայական ձևը հանդես է գալիս որոշյի

<sup>16</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 322:

<sup>17</sup> А. Котикова, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 476: Sli'u luall Kozem-Bek, *Общая грамматика турецко-татарского языка*, Казань, изд. 1-1839, с. 59.

գործառույթով՝ ok բառի համար)<sup>18</sup>, ըստ ռուսաստանյան թյուրքագետ-լեզվաբանի -y ar+ok>(y)arak համադրությունը վեր է անվել յուրահատուկ մի կառույցի, որը սկսել է հանդես գալ իր երկրորդական բաղադրիչի իմաստով՝ գործողության բնութագրման գործառույթով<sup>19</sup>:

-(y)arak, -erek ածանցով կազմվող մակբայական դերբայը ցույց է տալիս.

ա) գործողություն, որը տեղի է ունենում զլխավոր ստորոգյալով արտահայտված գործողության հետ համընթաց, բ) գործողություն, որը անմիջականորեն կախորդում է ստորոգյալով արտահայտված գործողությանը: Այս գործառույթով -arak, -erek-ով կազմվող մակբայական դերբայը հանդիսանում է -(y)ip-ով դերբայի քերականական հոմանիշը, միայն այն տարբերությամբ, որ -(y)arak, -erek գործողությունը բնութագրում է առավելապես ձևի տեսանկյունից, իսկ -(y)ip-ով մակբայական դերբայը՝ ձևի, ժամանակի, պատճառի ու պայմանի տեսանկյունից: Նախադասության մեջ երկու միասուտ պարագաների առկայության դեպքում մեկն արտահայտվում է -(y)ip-ով, իսկ մյուսը՝ -(y)arak-ով:

-(i) ken վերջածանցով մակբայական դերբայը ցույց է տալիս երկարատև գործողություն, որին զուգընթաց կատարվում է մեկ այլ գործողություն: Դերբայական այս ածանցը կազմված է -i «իսկե՛րբայանիմքից և բայական անուն կազմող -ken ածանցից: Ինքնուրույն կիրառության դեպքում (փաստորեն ժամանակակից թուրքերենում էլ առկա է -iken-ի և՛ ինքնուրույն բառի, և՛ ածանցի նշանակությունը) ունի սեփական շեշտ ու ժողովրդախոսակցական լեզվում երկարատև օգտագործման արդյունքում է վերածվել ածանցի՝<sup>20</sup> ենթարկվելով հետևյալ հնչյունական փոփոխությունների. ա) միանալով բաղաձայնով ավարտվող հիմքերին՝ -iken-ի -i-ն ընկնում է yazar+iken>yazarken, բ) ձայնավորով ավարտվող հիմքերի դեպքում՝ -iken-ի i-ն երկու ձայնավորների միացման արդյունքում վերածվում է -y-ի՝ ծղրenci iken-ծղրenciyen: գ)-ken-ը չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության կանոնին՝ kñçükken-փոքր եղած ժամանակ, çocukken-երեխա եղած

<sup>18</sup> А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 477:

<sup>19</sup> А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 477-78:

<sup>20</sup> А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 485:

ժամանակ, *burada-y-ken-* այստեղ եղած ժամանակ, *-ken* անանցով դերբայը, ի տարբերություն մյուս մակբայական դերբայների, կազմվում է ոչ թե բայահիմքերին ավելանալով, այլ սահմանական եղանակի ժամանակաձևերի հիմքերից ու հարկադրական եղանակից: Անցյալ ժամանակի պայմանական, ըրձական և հրամայական ձևերը բարդ մակբայական դերբայներ չունեն: *-ken* անանցով մակբայական դերբայը կամ գերունդիումը կազմվում է սահմանական եղանակի ժամանակաձևերի և հարկադրական եղանակի հիմքերից, ինչպես նաև անուններից՝ դրված ուղղական կամ ներգոյական հոլովներով: Այսպես՝ *yapar-ken-* անելիս, *veriyor-ken-* տալիս (տալու ժամանակ), *gitmiş-ken-* գնացած ժամանակ, *olacak-ken-* լինելու, ժամանակ, *gelmeli-y-ken-* այն ժամանակ, երբ պետք է գա:

Եղևք, որ հարկադրական եղանակով կազմված մակբայական դերբայի փոխարեն շատ հաճախ օգտագործվում է *gelmek istemken* ձևը: Այս անանցը, մասնանշում է ինչպես գործողության վիճակը, այնպես էլ ժամանակ: Այսինքն՝ այս անանցը վիճակի մակբայի նման կարող է հանդես գալ նաև ժամանակի մակբայի դերում<sup>21</sup>. *Dedem, Musul'da savasirken ölmüş.* Պապս զոհվել էր Մոսուլում կռվելու ժամանակ (երբ կռվում էր):

Նոսակցական թուրքերենում և որոշ թուրքական բարբառներում այս մակբայական անանցը բառավոր խոսքում կարող է ենթարկվել ձայնավորների ներդաշնակության կանոնին՝ *burada-y-kan, yapar-kan*<sup>22</sup>: Այս մակբայական դերբայով կազմվում են ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ, որոնք հակադրվում կամ համադրվում են գլխավորին «այն ժամանակ, երբ», «մինչդեռ» և այլն<sup>23</sup>: Օրինակ՝ *Sen buraya gelirken yağmur yağmaya başladı:* Սակայն կրք *-iken-*ը կցվում է ներկա-ապանի ժամանակի հիմքին, ցույց է տալիս ստորոցայի գործողության հետ համընթաց կատարվող գործողություն, այլ ոչ թե նշում է գործողության կոնկրետ ժամանակը: Որոշ դեպքերում *-iken-*ը հանդես է գալիս որպես *-(i)ş* և *-(y)zarak* ձևերի

<sup>21</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 327:

<sup>22</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 328:

<sup>23</sup> В. Гордлевский, *Грамматика турецкого языка*, Москва, 1928, с. 130.

քերականական հոմանիշ՝ *Dün sokaktan giderken iki kişiyе rastgeldim-* երեկ, փողոցով անցնելիս, երկու մարդու հանդիպեցի:

-iken մակբայական դերբայով կազմում է նաև զիջական իմաստով կառույցներ, որևէ երևույթ կամ վիճակ մեկ այլ երևույթի կամ վիճակի հետ համադրելու, ինչպես նաև հակադրելու նպատակով՝ *Samsun bundan kırk yıl evvel kâçûk kasabayken, şimdi Türkyenin büyük ve güzel şehirlerinden biri olmuşt.* -Թեև սրանից քառասուն տարի առաջ Սամսունը փոքրիկ մի գյուղաքաղաք էր, այժմ դարձել է Թուրքիայի մեծ և գեղեցիկ քաղաքներից մեկը<sup>24</sup>:

Հրայր Աճառյանը եկառում է որ հայերենի մի շարք բարբառներ փոխառել են թուրքերենի որոշ դերբայական ածանցներ: Այսպես, Պոլսի բարբառում *-iken-ը* անորոշի հետ միասին ցույց է տալի «ժամանակ, միջոց», օրինակ՝ *«էրթա» լն-իքեն, բերե՛ լն -իքեն / այս /ս/ հոդը դրվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ և թե՛ երրորդ դեմքի համար:* Այն ածանցը կարող է ավելանալ նաև հարակատար դերբային՝ առանց դիմորոշ հոդի և մատնանշել ժամանակ՝ *«բռնած իքեն»*-երբ /նա/ բռնեցի, *«հասած իքեն»*- երբ /դու/ հասար: Փոխառության այս երևույթը առկա է նաև Լոր Նախիջևանի բարբառում. *-iken-ը* ավելանալով անցյալ դերբային՝ ցույց է տալիս գործադրության կատարման ժամանակ, այս դեպքում, սակայն, *-iken-ը* ստանում է հայերենի դիմորոշ հոդերը, ինչպես՝ *«նայա՛ձիքեն»*-երբ ես նայում էի: Անորոշ դերբայի հետ հանդես գալով՝ ցույց է տալիս գործադրության կատարված ժամանակը, ինչպես՝ *«գարթա՛լնիքեն»*-կարդալու ժամանակ, *«անչնիքեն»*-ասելու ժամանակ<sup>25</sup>:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում եին թուրքերենից անցած և այսօր էլ կիրառության ունեցող *-i, -ı, -u, -ü* ածանցով կազմված մակբայական դերբայը: Ժամանակակից թուրքերենում այն հանդիպում է միայն բարդ բայերի կազմում՝ *al-i ver-, çek-i ver-, sor-u ver-, gör-ü ver-* և այլն: Լեզվի զարգացման արդյուքում *-i, -ı, -u, -ü* ածանցն իր տեղը զիջում է *-a, -e* ածանցին: Եշենք որ, արևմտյան թյուրքերենում ձայնավոր ածանցով զերունդիտումները հետագայում *-a, -e* ածանցներով են դերսևորվել:

<sup>24</sup> Այ. Մախարյան, Ա. Մադունեյան, Տ. Լաքմազուչյան, *Թուրքերենի դասագիրք* էջ 133:

<sup>25</sup> Հ. Աճառյան, *Հիմնատար թերաֆոնոլոգիան ծայրը լեզվի ՀՀ ԳԱԱ նրստ.*, ռ. 5, Երևան, 1965, էջ 43-44:

Այսպես՝ *di-y-â - di-y-e, becer-î bî - becer-e bî*: Մակայն ժամանակակից թուրքերենի որոշ բարբառներում և խոսվածքներում դեռևս կենտրոնակ և գործածական են *-i, -î, -a, -â* մակերայական դերբայակերտ այս ածանցները<sup>26</sup>: Հատկապես բնորոշ են Տրապիզոնի, Ռիզեի (Համշեն, Ծամրիամշեն) նահանգների բարբառներին<sup>27</sup>:

Նախկինում այս ածանցով դերբայական կառույցը՝ որպես մակերայ. լայնորեն կիրառվել է ինչպես ինքնուրույն, այնպես էլ կրկնական ձևերով, ինչպես օրինակ՝ եին թյուրքերենի *utan-i, kazar-i, iste-y-â, sevin-â sevin-â, işid-â işid-â, ağıla-y-u ağıla-y-u* ձևերում: Մակայն գրավոր խոսքում, այս ածանցներով դերբայական ձևերը լայն կիրառություն չունեն և իրենց տեղը զիջում են *-a, -e* կրկնակ գերունդիումին: *-i, -î, -a, -â* գերունդիումի ուշագրավ առանձնահատկություններից մեկն էլ այն է որ վերջինս նախկինում չի ենթարկվել ձայնավորների ներդաշնակության կանոնին<sup>28</sup>: *-i, -î, -a, -â* ածանցներով ստեղծվել են ընդհանուր իմաստ ունեցող գոյականներ և ածականներ, որոնք արդեն գիտակցվում են որպես բարացած ձևեր: Օրինակ՝ *yapmak-yarı* (շիկություն), *batmak-bats* (1. մայրամուտ, 2. արևմուտք), *kokmak-köku* (հոտ, բուրմուխ)<sup>29</sup>:

Բացի գործողություն մատնանշելուց *-ınca, -ince, -ınca, -ince* մակերայական դերբայի ածանցն արտահայտում է նաև ժամանակ՝ *yap-ınca* անելուն պես-(իմա. *yaptığı zaman*-անելու [արած] ժամանակ): Նախկինում գոյություն են ունեցել *-gınca, -gince* ձևերը, որոնք առաջացել են *-gün, -gün* բառակազմական (վերջ)ածանցի և *-ça, -çe* համեմատական ածանցի միացումից: «Արևմտյան թուրքերենին» անցել են *-ınca, -ince* ձևերը, «հին թյուրքերենում» երկար ժամանակ օգտագործվել են *ol-ınca, di-y-in-çe, kal-ınca, gör-ince* ձևերը: Հետագայում (օսմանյան շրջանում) այս ածանցը, ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության կանոնին, տացել

<sup>26</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 321:

<sup>27</sup> A. Cafecioğlu, *Kuzeydoğu Anadolu Ağaçlarından Toplamada, Düşünme yayınevi, Ankara, 1994, m. 259-262.*

<sup>28</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 321-322:

<sup>29</sup> Н. Дукарма, *Словъ турецкаго языка*, էջ 42:

է *al-inca*, *görme-y-ince*, *uyu-y-unca*, *gözük-ince* ձևերը, որոնք կենսունակ ու կիրառական է նաև այսօր<sup>20</sup>:

Ժամանակակից թուրքերենում մակրայական այս կադապարաձևին ավելանում է տրական հոլովի ածանց, և այս կառույցն օգտավորվում է *dek* և *kadar* հետդիրների հետ՝ *doyunca-y-a kadar*, *gelince-y-e dek*: *-inca*-ով մակրայական դերբայը արտահայտում է նաև ժամանակի իմաստ, հանդես է գալիս ժամանակի պարագայի պաշտոնում<sup>21</sup>: Հայերեն թարգմանելիս *-inca*, *-ince* ածանցով մակրայական դերբային որպես համարածեք հանդես է գալիս առողջ դերբայը՝ դրված տրական հոլովով և պես կապի համադրությամբ: *-inca*-ով մակրայական դերբայն արտահայտում է գործողություն՝ ներկա, առկա, ապառնի ժամանակներում: Գործողության ժամանակը որոշվում է ստորոգյալով. *Yazınca gitti*- Հենց որ նա գրեց, գեաց: *Bunu yazınca bana gönderiniz*-Յենց որ սա (կ)գրեք (գրելուն պես), ինձ ցույց տվեք: *Kuş yaklaşıncaya düşen kuşlar sıcak ölkelere gider*- Չմտղ մտնելալուն պես չվող թռչունները չվում են տաք երկրներ: *-inca*-ով մակրայական դերբայը, կազմվելով «ժխտական հիմքից», արտահայտում է այնպիսի գործողություն, որի չիրականանալը պայմանավորված է գլխավոր ստորոգյալով արտահայտված գործողությամբ, այն նույնպես պարտադիր դրվում է ժխտական ձևով<sup>22</sup>: *Gece olmayınca yolduz görünmez*- Մինչև գիշեր չլինի, աստղերը չեն երևում: *-inca* ածանցը, կցվելով *gelmek* բայի հիմքին, կարող է ստանալ նաև փոխարեքական իմաստ և նշանակել նաև «ինչ վերաբերում է»<sup>23</sup>. *Bana gelince...*- Ինչ վերաբերում է ինձ...

*-casına* (*-cesine*) ածանցով կազմվում է չափ ու վիճակ արտահայտող մակրայական դերբայ<sup>24</sup>: Ա. Կռնունովի բնորոշմամբ այն արտահայտում է «թվացող, կեղծ (ֆիկտիվ) գործողություն՝ կամ գործողության կատարման փորձ<sup>25</sup>, այսպես՝ *alircasına* կարծես թե (նկց որ թե վերցնում է *gelincecesine*-նկց որ թե չէր

<sup>20</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 322-323:

<sup>21</sup> Այլ Մաֆայրյան, Ա. Սողունյան, Տ. Լազմազորյան, *Թուրքերենի գրասցիկը* էջ 83:

<sup>22</sup> А. Косица, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 481:

<sup>23</sup> Այլ Մաֆայրյան, Ա. Սողունյան, Տ. Լազմազորյան, *Թուրքերենի գրասցիկը*, էջ 83:

<sup>24</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 407:

<sup>25</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 487:



գալիս: *Ölürcesine çalıyordu*-(Աշխատում էր մեռնելու չափ/իրեն չխնայելով): *Koşarsasına yürüyordu*-Այնպես էր քայլում, կարծես թե վազում էր /Վազելով էր քայլում/: *Yalvarcasına bakıyor*-Աղերսահողով էր նայում (Այնպես էր նայում, կարծես ինչ-որ բան էր աղերսում): Այս անանցը, դրվելով *-ma* անորոշ դերբայից հետո, դարձյալ արտահայտում է վիճակ և աստիճան:

*-alı, -eli*-ով մակբայական դերբայն արտահայտում է ժամանակի պարագա, և ցույց է տալիս բայով արտահայտված գործողության նախնական (նվաճ, սկզբնական) պահը («այն ժամանակներից, ինչ», «այն ժամանակից, երբ»: Այս մակբայական դերբայը կարող է համադրվել նաև *beri* «ի վեր» հետդիրի հետ<sup>26</sup>, մի երևույթ, որը, կարծես թե, անսովոր է գերունդիումի համար: Օգտագործվում է «*den beri*» իմաստով՝ արտահայտելով տևողություն, ժամանակահատված՝ *çık-alı, görme-y-eli*: Երբևէ *beri* հետդիրից առաջ դրվում է բացառական հոլովի անանց՝ *gel-eli beri, gid-eli-den beri*: *Ankarsya geleli kimseyi görmedim*-Ինչ էլե՛լ եմ Անկարա, ոչ մեկին չեմ տեսել: Ընդ որում, *-alı, -eli*-ով մակբայական դերբայը կարող է դրվել ուղղական կամ բացառական հոլովներով, որն իր սեփական իմաստային բնույթով ընդգծում է գործողության սկզվելու (ծագման) պահը<sup>27</sup> և կշում է այս մակբայական դերբայի անվանական բնույթը<sup>28</sup>: Այս անանցը գործածական է եղել նաև «Իին թյուրքերենում»՝ հանդես գալով *-galı, -geli* ձևով: «Արևմտյան թուրքերենին» անցել է *-alı, -eli* ձևով: «Հին թյուրքերենում» այն արտահայտել է «*mak için, -mek için*» իմաստը և կազմել պատճառ մատնանշող վիճակի մակբայ՝ «*al-galı-almak için*» վերցնելու համար, *gör-geli «görmek için*»: «Հին թյուրքերենում» և օսմաներենում, ինչպես նկատում է Մ. Էրգինը, առանց *beri* հետդիրի բացառական հոլովով դրված այս ձևը նույն իմաստով է ընկալվել՝ *bul-alı-dan, kes-eli-den*: Այս անանցով մակդերբայը, ստանալով բացառական հոլովի վերջածանց, վերջին ձայնավոր հնչյունը կորցնել է՝ *göreliden, ireliden, direliden, olaldan, kurulaldan*:

<sup>26</sup> N. Коф, *Yeni Dilleşim*, էջ 332:

<sup>27</sup> А. Кокочка, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 480: В. Гордлевской, *Грамматика турецкого языка*, Москва, 1928, էջ 127.

<sup>28</sup> Н. Дмитриев, *Строф турецкого языка*, էջ 57:

Մակբայական այս դերբայը օտարործվում է եսև հետևյալ ձևով՝ *geldim geleli, gittin gideli, aldi alalı*<sup>39</sup>:

-*dansa* (-*dense*) մակբայական դերբայի ածանցը, կազմվելով հոլովական և թերի օժանդակ բայի ըղձական-պայմանական ածանցից. կազմում է հակադրություն արտահայտող մակբայական դերբայ<sup>40</sup>. *Sana insanmaktansa, gidip gözlerimde göçmeyî yeğlerim-* Քեզ հավատալու վտխարեն՝ ես կեախընտրեմ զեալ ու իմ աչքով տեսել:

-*da...-alı* ածանցով մակբայական դերբայի մասնացույց է անում ժամանակ և վիճակ<sup>41</sup>. *Savaş başladı başlayalı her şey karaborsaya döştü-* Ինչ սկսվեց պատերազմը (սկսվեց-չսկսվեց/սկսված-չսկսված), ամեն բան հայտնվեց սև շուկայում:

Ածականական դերբայի -*dik* ածանցը բացառական, ներգոյական, տրական հոլովներով և համապատասխան հետդիրների զուգակցմամբ կազմում է ժամանակ և վիճակ արտահայտող մակբայական դերբայներ: -*diktan sonra* կադապարով մակբայական դերբայը կազմվել է դերբայական -*dik*, բացառական հոլովի ածանցի և *sonra* հետդիրի կցման արդյունքում: Արտահայտում է ժամանակի իմաստ: *Sen İzmir'den ayrıldiktan sonra ben gelmişim-* Քո՛ Իզմիրից մեկնելուց (հեռանալուց) հետո եմ ես եկել:

-*diğina...-acağına* ածանցով մակբայական դերբայը կազմվում է անցյալ ժամանակի դերբայ կազմող -*dik* և ապասնի ժամանակի դերբայ կազմող -*acak* ածանցների միջոցով և արտահայտում է հակադրություն<sup>42</sup>. *Onu sevdiğine seveceğine pişman olabilirsiniz-* Եթե երան սիրես, հեարավոր է զոջսա:

-*diği biçimde* (*şekilde*) ածանցով մակբայակն դերբայի արտահայտում է վիճակ<sup>43</sup>. *Odanı istediğin biçimde düzenleyebilirsiniz-* Սենյակը կարող ես դասավորել թո ուզածի պես: *Soruları benim istediğim biçimde yazıtlayacaksınız-* Հարցերին պատասխանելու եք իմ ուզածի պես:

<sup>39</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323:

<sup>40</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

<sup>41</sup> D. Meriç, F. Meriç, *Fenel Türkçe Dilbilgisi*, İnkilap Yayınevi, İstanbul, ss. 155-156.

<sup>42</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

<sup>43</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 408:

-*diğ* ածանցով և *halde* կապական բառով մակբայական դերբայն արտահայտում է միճակ, հակադրություն<sup>44</sup>. *Paranı öldüğü halde borç vermedim*-Չեպած որ փող ուներ, բայց պարտք չսվեց:

-*diğ* ածանցով *zaman* (-*diğ* *vakit*) բառով մակբայական դերբայը եույնակես մատնանշում է ժամանակի իմաստ<sup>45</sup>. *Ders çalmadığı zaman ne yaparsın?*-Ի՞նչ ես անում, երբ դաս չես սովորում:

-*diğ* *inde* կադապարածնը կազմում է ժամանակի իմաստ արտահայտող մակբայական դերբայ. *Bu konuya akşam bize geldiyinde konuşuruz*- Երբ երեկոյան գաս մեզ մտ, այդ ժամանակ էլ կխոսենք այդ թեմայի մասին (Այդ թեմայի շուրջ կխոսենք երեկոյան՝ քո գալու ժամանակ/երբ կգաս): -*diğ* *dan* կադապարածնը կազմում է պատճառ արտահայտող մակբայական դերբայ: *Sular kesildiğinden banyo yapamadım*- Քանի որ ջուրը կտրվեց, չկարողացա լոգանք ընդունել (Ջուրը կտրվելու պատճառով չկարողացա լոգանք ընդունել):

-*madan*//*meden* (<*ma*+*den*//*me*+*den*) մակբայական դերբայի ածանցը, կցվելով բայանհիմքին, կազմում է մակբայական դերբայ, որն արտահայտում է. ա) ձևի պարագա՝ «առանց» իմաստի: Այս մակբայական դերբայը հանդիսանում է ժխտական հիմքից կազմված -(y)*arak*-ով մակդերբայի քերականական հոմանիչ, ընդ որում երանց միջև եղած աարբերությունը քերականական բնույթ ունի: -*madan*-ով արտահայտված մակբայական դերբայի դեպքում գլխավոր և կախյալ գործողությունների միջև գոյություն ունի ավելի երկար ժամանակահատված, քան -(y)*arak*-ով մակբայական դերբայի դեպքում<sup>46</sup>: *Ben gülerimi hiç ayırmadan ona bakıyordum*- Ես առանց այք թարթելու նրան էին նայում: բ) ժամանակի պարագա՝ «մինչև» իմաստով: Իմաստը ընդգծելու համար այս մակբայական դերբայը կիրառվում է նաև «*önce*// *evvel*» հետդիրներին հետ<sup>47</sup>: *Uzun yola çıkmadan önce iyi ayu*- Երկար մանապարն ընկնելուց առաջ, լավ քնի՛ր: գ) Այս ածանցը փաստորեն արտահայտում է ժխտական իմաստ, որևէ էլ կցվում է միայն հաստատական բայերի

<sup>44</sup> N. Koç, *Yeni Dilleşmiş*, էջ 408:

<sup>45</sup> N. Koç, *Yeni Dilleşmiş*, էջ 408: St'a bulaş M. Hengizmen, *Türkçe Dilleşmiş*, էջ 198C

<sup>46</sup> A. Козюкова, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 483:

<sup>47</sup> A. Козюкова, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 483:

արմատներին ու հիմքերին: Լեզվաբան-թյուրքագետների կարծիքով այս ածանցն ի հայտ է եկել բավականին վաղ: «Հին թյուրքերենում» այս ածանցն ունեցել է *-madin, -medin* դրսևորման ձևը, որն էլ փոխանցվել է «արևմտյան թյուրքերենին»: Ածանցը երկար ժամանակ կիրառվել է նաև «հին թյուրքերենում», որից հետո ձևը է բերել ժամանակակից թյուրքերենի *-madan, -meden* ձևը: Ուսումնասիրողների կարծիքով այն առաջ է եկել բացառական հոլովի ազդեցությամբ: Իր գործառույթով *-madin, -medin-* ի *-din, -din* ձևը կույն է, ինչ *-madan, -meden-* ի *-dan, -den* ձևը: Եվ քանի որ ժխտական վերջածանցով բայերի արմատներին ուղղակի բացառական հոլովի ածանց չի կարող կցվել, ապա չի կարելի ասել, որ բացառական հոլովին կցված այս մակբայական դերբայի ածանցն ուղղակիորեն առաջ է եկել ժխտական ու բացառական հոլովի վերջածանցների միաձուլումից<sup>48</sup>: Մ. Էրզինի կարծիքով այս կառույցը ի հայտ է եկել *-ma-t-i-a* ~ *-me-t-i-a* ձևից՝ *bil-me-t-in*: Ընդունված է ասել, որ *-madin, -medin* գերունկյում ածանցը ծագել է *\*-ma, -me* ժխտական ածանցի, *-t* բայից գոյական կազմող ածանցի, *-i, -i* օգևող (օժանդակող) ձայնավորի և *-a* «ինտերումենտալ» ածանցի միացումից: Մրկնույն ժամանակ *-t-ն*, ընկնելով երկու ձայնավորների միջև, ձայնեղացել է՝ վերածվելով *ժ-ի*: Մակայն պետք է ասել, որ մեզ այնքան էլ շատ համոզիչ չի թվում *-madin, -medin-* ի նմանատիպ մեկնաբանությունը: Այս բացատրությունը թյուրքերենում գոյություն ունեցող որոշ ձևերի ծագումը լուսարանելու համար տեսական պետումների բնույթ է կրում, որը շատ դժվար է ընդունել<sup>49</sup>:

Մ. Էրզինը նշում է, որ ածանցի կառույցը պարզաբանելու համար անհրաժեշտ է ընդունել այն հանգամանքը, որ այն իր մեջ պարունակում է ժխտական և բացառական հոլովի ածանցներ և ածանցի ծագումը նա փնտրում է ժխտական բայի արմատի մեջ *-ma, -me* և բայից գոյական կազմող ածանցից կազմված գոյականի բացառական հոլովաձևում՝ *bil-me-me-din*: «Այստեղ իդար հաջորդող երկու կույն հնչյուններից մեկը ընկել է, որի արդյունքում է առաջ է եկել *-madin, medin* գերունկյումը, որն էլ իր մեջ

<sup>48</sup> M. Ergin, *Türk Dil Bülteni*, էջ 323-324:

<sup>49</sup> M. Ergin, *Türk Dil Bülteni*, էջ 323-324:

պարունակում է ինչպես ժխտականություն, այնպես էլ բացառական հոլովածն<sup>30</sup>: Միաժամանակ Մ. Էրզինն այն համարում է գոյականի հոլովածն. «Հատկապես աներածեշտ է եղել, որ այս գերունդիումի մեջ իմաստային տեսանկյունից միշտ առկա է եղել բացառական հոլովածը: Գոյականի հոլովական ածանցների մեջ բացառական հոլովը երբեմն նախադասության մեջ հանդես է գալիս մակրայի շարահյուսական դերով (*korkusundan kaçtı*)<sup>31</sup>: Որոշ թյուրքական բարբառներում և խոսվածքներում բացառական հոլովի -ճ-ն վերածվել է -յ-ի՝ *-mayın, -meyin*: Այսինքն, ածանցի ծագման ժամանակ ոչ թե չի եղել բացառական հոլովածը, այլ գերունդիումի ածանցի մեջ մոռացության է մատնվել բացառական հոլովի ածանցը: Այդ պատճառով էլ *ժ-յ-անցումը* ցույց չի տալիս, որ ածանցի ծագման ժամանակ թերևս բացառական հոլովածն չի եղել: Իսկ «արևմտյան թյուրքերենում» նմանատիպ -յ- անցում չի արձանագրվել, և ածանցի մեջ պահպանվել է բացառական հոլովածը<sup>32</sup>: «Արևմտյան թյուրքերենո -*madan, medin* ձևը վերածվել է -*madan, -meden*-ի «իևն թյուրքերենի» վերջին շրջանում: -*madın, -medin* ձևը որոշ ժամանակ գոյություն է ունեցել նաև օսմաներենում՝ *gel-medin, aç-madın*: Հետագայում սա իր տեղն է զիջել -*madan, -meden*-ին՝ *otur-madan, uyu-madan, dinlen-meden, çek-meden*<sup>33</sup>: Վերջին ժամանակաշրջանում -*madan, -meden* գերունդիումը, իրենից հետո առանալով *önce* բառը, ձևոր է րերել կապական կիրառության եղանակություն՝ *gelmeden önce*<sup>34</sup>. Soruma yanıt *vermeden önce* մնջն-Մինչև հարցիս պատասխանելը, մտածիր (Հարցիս պատասխանելուց առաջ մտածիր): Yola *çıkmadan önce* arabamın kontrolünü yaptır- Մինչև ճանապարհ ընկնելը մեքենան ստուգել տուր:

-*maksızın* (<-*mak-sız-ın*)//*-meksizın* ածանցով մակրայական դերբայն արտահայտում է ձևի պարագա և իմաստով մերձենում *y(arak)-ով* մակրայական դերբային (կազմված ժխտական հիմքից) և -*madan*-ով մակրայական դերբային, սակայն ժամանակակից

<sup>30</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323-324:

<sup>31</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 324:

<sup>32</sup> A. Caleroğlu, *Kuvvetliğin Berinle Afakelerinden Toplamalar*, s. 25.

<sup>33</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 324-25:

<sup>34</sup> N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

թուրքերենում համեմատաբար քիչ է կիրառվում<sup>55</sup>։ *Bir şey söylememek sizin ayrimış-lığınıza çarşınla*՝ հեռացավ։ -maktan ածանցով կազմվում է պատճառ և հետևանք արտահայտող մակրայական դերբայներ<sup>56</sup>։ *Nasihatlerini dinlemekten baktım usandım*-Կշտացել եմ երա խրատները լսելուց։

-maktan ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է հակադրության արտահայտող մակրայական դերբայ։ *Gidip polise teslim olmak* մեզ *gidi-* և *ol-* արմատներից մեկնել, քան թե գնալ ու հանձնվել ոստիկանությանը։

-ca, -ce մակրայական ածանցը երկար ժամանակ գործածական է եղել «արեմտյան թուրքերենի» առաջին շրջանում, եսև՝ օսմաներենում։ Մկզում ունեցել է *-ca, -ce* ձևը՝ *di-y-ca, at-ca*։ «Հին թուրքերենի» վերջին շրջանում աստիճանաբար այն վերածվել է *-ca, -ce* ձևի՝ նույն կերպ փոխանցվով օսմաներենին՝ *at-ca, gür-ce*։ Հետագայում այս ածանցը գրավոր խոսքում կորցրել է իր կիրառությունը։ Այսօր, այն միայն առկա է բանավոր խոսքում։ Այս ածանցը ենթարկվել է ձայնափոխների ներդաշնակության կանոնին<sup>57</sup>։ *-ca, ce* վերջաձայնը, երկար ժամանակ գործածվելով «արևմտյան թուրքերեն», ի վերջո իր տեղը զիջել է *-ca, -ce* ձևերին<sup>58</sup>։

*-dikçe (-dikçe, -dukça, -dükçe)* ածանցով մակրայական դերբայը մատնանշում է ժամանակ ու վիճակ<sup>59</sup>, հանդես է գալիս որպես ժամանակի պարագա։ *-dikçe*-ով մակրդերբայը ցույց է տալիս եսև հանրեթաց գործողություն, որի զարգացմանը զուգահեռ ծավալվում է ստորոգյալի գործողությունը<sup>60</sup>։ Այն կարող է արտահայտել, ա) գործողության կատարման աստիճանակա-  
ություն, բ) կանոնավոր կրկնություն, բազմակիություն։ Հայերեն թարգմանելիս համապատասխանում է հայերենի «ամեն անգամ երբ» կամ երկու գործողությունների միջև «երբ» շարկապատկեր կառույցին, գ) երկու գործողությունների միջև ժամանակավոր

<sup>55</sup> А. Копыта, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 484։

<sup>56</sup> N. Коç, *Yeni Dilbilgisi* էջ 331։

<sup>57</sup> Sı'a M. Ergin, *Türk Dil Bilgisi* էջ 325։

<sup>58</sup> Sı'a M. Ergin, *Türk Dil Bilgisi* էջ 326։

<sup>59</sup> Sı'a N. Коç, *Yeni Dilbilgisi* էջ 411։

<sup>60</sup> Sı'a A. Копыта, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 482։

կապ<sup>61</sup>: Հայերեն քարգմանելիս այն կարող է արտահայտվել «բանի դեռ» շաղկապավոր կառուցով (Օր.՝ *Siz sağ ben var oldukça elbet bir gün gene rastlaşırız*. Քանի դեռ դուք առողջ եք, իսկ ես կենդանի, իհարկե մի գեղեցիկ օր մենք կրկին կեանդիպենք):

-**dikçe** ածանցով կազմված մակբայական դերբայի ժխտական ձևն արտահայտում է գործողություն, որի ավարտից առաջ չի ավարտվում ստորոգյալի գործողությունը: *Ahmed'in mektubunu görmedikçe bu habere inanmam*. Քանի դեռ չեմ տեսել Ահմեդի նամակը (Առանց Ահմեդի նամակը տեսնելու) այդ տեղեկությանը չեմ հավատա<sup>62</sup>:

-**gac**, -**goc** ածանցով մակբայական դերբայը գործածվել է «իկն թուրքերենի» վերջին և օսմաներենի սկզբնական շրջաններում, ինչպես նաև աղբյուրներում: Իմաստային տեսանկյունից այս ածանցն ամբողջությամբ համապատասխանում է -**acak**, -**ecek** և -**ınca**, -**ince** ձևերին: Հետագայում այն ամբողջությամբ մատնվել է մոռացության՝ իր տեղը զիջելով ավելի կենսունակ -**ınca**, -**ince** ածանցին՝ **di-gec//diyince**-անելուն պես, **it-gec//edince**-անելու պես, **gör-gec//görünce**-տեսնելուն պես<sup>63</sup>:

-(**i**)**r**.....-**maz** (-**r**.....-**mez**) ածանցը, կցվելով բայի արմատին, կազմում է արագություն արտահայտող մակբայական դերբայ. *Osman bir haber alır almaz bana bildir*.-Նրանից լուր ստանալուն պես (ստացած-չստացած) անմիջապես ինձ տեղեկացրու:

Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայները կրում են շեշտ, որն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա: -**ınca**, -**ince** ածանցներում շեշտն ընկնում է առաջին վանկի ձայնավորի վրա, -**madan**, -**meden** ածանցը շեշակիր չէ, և շեշտն ընկնում է իրեն նախորդող վանկի վրա, -**ken**-ը նույնպես շեշտ չի կրում, շեշտը ընկնում է նախորդող վանկի վրա, -**dikçe**, -**dikçe**-ի շեշտն ընկնում է դերբայական -**dik**, -**dik** ածանցի վրա: Թուրքերենում բավականին տարածված երևույթ է հետադրությունների՝ մակբայական դերբայների համատեղ կիրառությունը:

<sup>61</sup> А. Костин, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 482:

<sup>62</sup> Ss'ın Üç. Uçları, U. Uçları, S. Uçları, *Թուրքերենի ցատկեր*, էջ 144:

<sup>63</sup> M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 329:

Այսպիսով՝ վերը բերված լեզվական փաստերի համադրումից հանգում ենք հետևյալին՝ մակրայական դերբայները (սևօջ) չեն մտնում բայի խոնարհման համակարգի մեջ և չեն կրում դիմային իմաստ: Լախադասության մեջ կատարում են բայական անդամի լրացման պաշտոններ և այս հատկանիշներով էլ տարբերվում են ածականական դերբայներից: Ստանում են սեռային ու ժյուսման վերջածանցներ: Երանց գործողության ոլորտն ավելի ընդարձակ է, քան ածականական դերբայներինը: Ըստ իրենց ունեցած գործառության և իմաստաբանական առանձնահատկությունների՝ մակրայական դերբայները բաժանվում են չորս խմբի՝ կապական նշանակության (Bağlama Ulaçları), վիճակ արտահայտող (Durum Ulaçları), ժամանակ արտահայտող (Zaman Ulaçları), պատճառ մատնանշող (Sebep Ulaçları): Մակրայական դերբայի հիմնական դերը դերբայական դարձված ձևավորելն է, որով էլ կազմում են ընդարձակ լրացական անդամով պարզ նախադասություններ: Ժամանակակից թուրքերենի մակրայական դերբայներն իրենց գործառությամբ համապատասխանում են հայերենի անորոշ դերբայի հոլովված ձևերին:



## ՅՈՒՐՔԵՐԵՆԻ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՈՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԿՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՈՒՐՁ

Յուրքերենի բարբառների վերաբերյալ ուսումնասիրությունները սկսել են կատարվել 19-րդ դարի կեսերից: Երկար տարիներ այս գործով զբաղվում էին արևմտյան ուսումնասիրողները, 1940 թ.-ից սկսած այն զբաղվեց նաև թուրք ուսումնասիրողների ուշադրությունը: Ծայսօր թուրքերենի բարբառների վերաբերյալ բազմաթիվ ու տարաբնույթ քանակավաքություն, ուսումնասիրության և համեմատության աշխատանքներ են կատարվել: Այս աշխատանքների մեծ մասը համալսարաններում տպագրված թեզեր են:

Բարբառների դասակարգման առաջին փորձը կատարել է Ի. Կուկուսը: 1896 թ.-ին նա Անատոլիայի բարբառները հետևյալ կերպ է բաժանում. 1. զեյթեկերեն (Ռզմիրի և Բուրսայի միջև), 2. Կաստամունուի բարբառ, 3. լազերեն (դեպի Սև ծովի արևելյան ափերը), 4. Հարսիտի բարբառ, 5. Քարամանլիի բարբառ (Մերսինի և Կոնիայի միջև), 6. Քըզըլլըրմաքի ավազանում Անկարայի բարբառ, 7. Անատոլիայի տարբեր վայրերում ապրող յուրյուքների և թուրքմենների բարբառ: Ըստ Կուկուսի զեյթեկերենը, Անկարայի բարբառը, յուրյուքների և թուրքմենների բարբառը թուրքական, իսկ մյուսները Անատոլիայում թուրքացված տարրերի բարբառներն են: Երա "Kiszcsai Török Dialektusairai" աշխատության մեջ տեղ գտած այս դասակարգումը ոչ մի զիտական հիմք չունի<sup>1</sup>:

Յուրքերենի բարբառների մատենագրությունը հարստացրած Ամեդ Ջաֆերոզլուն դեռևս 1946 թ. գրած իր մի հոդվածում հենվելով անձամբ հավաքած նյութերի վրա՝ Անատոլիայի բարբառների հետևյալ խմբերն է նշում. 1. արևելյան եանակների (իլերի) բարբառներ (Կարսի, Էյսզըղի (նախկին Նարբեղ), Կանի ու իր շրջակայքի, Մալաթիայի), 2. Էրզրումի, Տրապիզոնի, մասամբ Ռիզեի բարբառներ, 3. Սվասի (նայկ. Մեքասոխա), մասամբ Թոքաթի (Եվդոկիա) բարբառներ, 4. Ամասիայի, Չորումի,

<sup>1</sup> T. Kowalski, "Omenisch-Türkisch Dialekte", El. IV, 1931, s. 991-1011.

Անկարայի, մասամբ Յոզգասթի բարբառներ, 5. Միջին Անատոլիայի ((Կայսերիի (նախկին Կեսարիա) գլխավորությամբ)) բարբառներ, 6. Գազիանթեփի (Այնթափի) և էյուսիսային սահմանամերձ բարբառներ, 7. արևմտյան տահանգների բարբառներ (Էսքիշենիլի, Բալըքեսիրի, Մանիսայի, Իզմիրի, մասամբ Աֆիոնի, մինչև Ադրև և Անթաիա), 8. Կոնիայի բարբառ, 9. Կաստամունուի բարբառ<sup>2</sup>:

Ըստ Ջաֆերօղլուի, Գազիանթեփի բարբառը կրեք նկատմամբ ունի՝ կենտրոնի, Քիլիսի և շրջակայքի, թուրքմեն ցեղի բարբառ: Մալաթիայի Թահիր գավառակը (բուջաքը<sup>3</sup>) ավելի շատ Սվասի (Սերասոփա) բարբառին, իսկ Նեքիմհանի բարբառը իր որոշ քերականական ձևերով Կաստամունուի բարբառին է նման: Ջաֆերօղլուն առանձնապես նշում է, որ Տրասիզոնի կենտրոնական բարբառը էրզրումի բարբառին է մոտ, իսկ Աքչաաբաթը և Վաքֆըքեթիլը մի անկախ բարբառային շրջան են կազմում: Հողվածում տեղ է հատկացվել եսև ձեջիլ բառի տարբեր դրսևորումներին տարբեր բարբառներում (deel, daal, däl, deşil, degil և այլն) և անձնական դերանունների դասակարգմանը:

Թուրքերենի բարբառների դասակարգման աշխատանքներում ամենահաճախ օգտագործվող չափանիշներից մեկը ներկա ժամանակի վերջածանցի հեյյունալիտություններն են: Այս ածանցը իր բազմազան հեյյունական ձևերով (-yorur, -yuru, -yor, -yo, -ya, -yu, -yi, -y, -i և այլն) մեծ դեր է խաղում բարբառները տարբերակելու մեջ: Ահմեդ Ջաֆերօղլուն իր մի այլ ուսումնասիրության մեջ աշխատում է ցույց տալ այս ածանցի -yo, -yür, -ir, -i, -or ձևերի շուրջը հավաքվող բարբառային խմբերը<sup>4</sup>: Ըստ նրա՝ -yo ածանցն օգտագործող Միջին և Հարավային Անատոլիայի, Լույնիսկ՝ Անթալիայի, -yür ածանցն օգտագործող Տրասիզոնի, Ռիզեի, Սվասի (Սերասոփա) և նրա շրջակայքի, -i(y) ածանցն օգտագործող Հարվութի (Խարբերդ), Ուրֆայի, Էլլազըլի, Գազիանթեփի (Այնթափ), Դիլրիդիի և շրջակայքի, -or ածանցն

<sup>2</sup> A. Caferoğlu, "Anadolu Dialektolojine Dair Bir Deneme", Türk Dili Beüeten, 1946, sayı 67, s. 565-568.

<sup>3</sup> Կարլսլեհ միավոր Թուրքիայում:

<sup>4</sup> A. Caferoğlu, "Anadolu ve Eusanlı Afdeleri Anayurmlerinin Bugünkü Durumu", Türk Dili Kurultayında Okunan Bilimsel Bildiriler 1957, Ankara, 1960, s. 70.

օգտագործող որոշ շրջանների և Քիլիսի, -ir ածանցն օգտագործող էրգումսի, Կարսի բարբառները մի ընդհանուր խումբ են կազմում:

Թուրքեր Գյուլեստայը ներկա ժամանակի ածանցի այս բազմազանությունը քննարկում է ավելի ընդարձակ տարածաշրջանում: «Ներկա ժամանակի ածանցը Անատոլիայի բարբառներում»՝ ռատամնասիրության մեջ եւս ներկայացրել է ներկա ժամանակի ածանցի բոլոր փոփոխություններն ու այս ածանցներն օգտագործող բարբառները<sup>5</sup>: Միայն թե եւս չի որոշակիացրել բարբառային խմբերի սահմանները: Անկասկած, միայն մեկ չափանիշը բավարար չէ բարբառների սահմանները գծելու համար:

Օզգան Բաշթանի՝ գյուղերի անունների վերաբերյալ կատարած մի աշխատությունն էլ կարևոր է Անատոլիայի բարբառների դասակարգման մեջ բառապաշարի չափանիշի նշանակությունը ցույց տալու տեսանկյունից: Բաշթանը խոսում է իր անվան մեջ kale, hōyāk, hisar, konak բառեր ունեցող գյուղերի՝ Անատոլիայի աշխարհագրության մեջ տեղակայման մասին: Ըստ երա՝ kale-ով գյուղերի անուններ հիմնականում ծածկվում են արևելյան և հատկապես արևելյան սևծովյան շրջանում, hisar-ով գյուղական անունները ավելի շատ Արևմտյան Անատոլիային են հաստուկ, hōyāk-ով գյուղերը ձգվում են սկսած հարավարևելյան շրջանից դեպի Անկարայի հյուսիս-արևմուտք և Զանջլըը, մինչև Կաստամունու, իսկ konak-ով գյուղերը արևելյան և արևելյան սևծովյան շրջանի արևմտյան սահմանում են կենտրոնացած<sup>6</sup>:

Գ. Հազախն իր հոդվածում առաջարկում է Անատոլիայի և Ռումելիայի բարբառների դասակարգման մեջ օգտագործել հետևյալ չափանիշները. ղ, և, ճ, կ բաղաձայնների հետ կապված փոփոխությունները, էտնաքմայնացում-թուլացում, ապաշրթնաչափություն-շրթնաչափություն աններդաշնակությունը, դիմային վերջածանցների կառուցվածքը<sup>7</sup>:

Միլան Ադամովիչը խոնարհման ածանցների վերաբերյալ իր աշխատության մեջ անդրադարձել է նաև Անատոլիայի

<sup>5</sup> T. Gülcenay, "Anadolu Ağzalarında Şimdiki Zaman Ek'i", Ankara, TKA, 1985, s. 282-295.

<sup>6</sup> O. Başkan, "Türkiye Köy Adları Üzerine Bir Deneme", Ankara, TDAY - Belleten 1970, 1971, s. 237-251.

<sup>7</sup> G. Hazal, "Anadolu ve Rumeli Türk Ağzalarının Temel Özellikleri", Sıxy, İT, 1971, s. 84-86.

բարբառներում այս ածանցների կիրառությանը, նույնիսկ ցույց է տվել ներկա ժամանակի ածանցի տեղակայումը քարտեզի վրա: Ըստ նրա գծած քարտեզի, ներկա ժամանակի  $-yi(r)$  ածանցը օգտագործվում է Սամսունում, Թոքատում (Եվրոպիա), Սվասում (Սեբաստիա), Քանդամանադաշի և Գազիանթեփի արևելյան շրջանում: Իսկ արևմուտքում տարածված է ածանցի լայն ձայնավորով ձևերը<sup>6</sup>:

Լեդենի համալսարանի թուրքագետներից Պ. Կրալը թուրքերենի բարբառների դասակարգման մեջ գլխավորապես հետևյալ չափանիշներն է օգտագործել.  $k > g$ ,  $k > ǰ$ ,  $k > c$ ,  $g > c$ ,  $-k > -ǰ$  փոփոխությունները,  $ǰ$  բաղաձայնի պահպանվելը կամ ընկնելը, ոչ շրթնային ձայնավորին հաջորդող վանկի ոչ շրթնային կամ շրթնային ձայնավորները, առաջին վանկում  $\delta$ ,  $\theta > \alpha$ ,  $u$  փոփոխությունը,  $\tilde{n}$  բաղաձայնի հետ կապված փոփոխությունները,  $yokar/yukar$  բառի մեջ տեղի ունեցող հեյունափոխությունը, դիմային վերջածանցները, ըդձական և հրամայական եղանակների վերջածանցները, ներկա ժամանակի ածանցը և  $iken$  մակբայական-բայական ածանցի մեջ տեղի ունեցող հեյունափոխությունները: Կրալի աշխատանքի մասին տեղեկություն տվող "Turkish Linguistics Today" հոդվածում կա նաև հետս (զագար) բառին Անատոլիայում տրվող անունների մի առանձին քարտեզ ( $pürçüklü$ ,  $keçirli$ ,  $teper$  և այլն)<sup>7</sup>:

Ճապոնացի գիտնական Թ. Հայաշին բարբառների դասակարգման համար հետևյալ չափանիշներն է ընդունել. փակ  $e$  ձայնավորը, ետին և միջին քմային  $\tilde{n}$  բաղաձայնը, բառակազմում  $p/b$ ,  $t/d$ ,  $k/g$  պայթական բաղաձայնների հեյունափոխությունները, և բաղաձայնը<sup>8</sup>:

Թ. Բանգուտլուն «Անատոլիայի և Ռումելիայի բարբառները» վերնագրով հանրագիտարանային հոդվածում անդրադառնում է Անատոլիայի բարբառների դասակարգման մեջ որպես չափանիշ օգտագործվող որոշ առանձնահատկությունների և այս առանձնա-

<sup>6</sup> M. Adamović, *Konfigurationsgeschichte Der Türkischen Sprache*, Leiden, 1985, 116, 173, 328, 331.

<sup>7</sup> Hendrik Boeschoten - Ludo Verhoeven, *Turkish Linguistics Today*, Leiden-NewYork-Kopenhagen-Köln, 1991, 150-165.

<sup>8</sup> T. Hayashi, "Anadolu Ağızlarının Coğrafi Dağılımı Üzerine Bir Deneme Çalışması", IV Dilbilim Sempozyumu Bildirileri, 17-18 Mayıs, 1990, s. 234-242.

հասկությունները կրող *r* բաղաձայնը ընկնող արևմտյան անատոլիական, կիսանտոնաքամային *ó, ó* ձայնավորներ ունեցող միջին անատոլիական, *h* բաղաձայն ունեցող, երկու ձայնավորի միջև *g* բաղաձայնը պահպանող արևելաանատոլիական, բառասկզբում *k, t* բաղաձայնները պահպանող *և* ձայնեղ *ç, ć* հնչյուններ ունեցող արևելյան սևծովյան բարբառներին<sup>11</sup>:

Շոքը շրջանների բարբառային խմբերը որոշկուս ուղղությամբ կատարված դասակարգման փորձերի թիվը ընդհանուր դասակարգման փորձերից ավելի շատ է: Իհարկե, շրջաններն իրարից բաժանող վարչական սահմանները դեռևս բարբառային խմբերը որոշող սահմաններ չեն: Այս պատճառով որևէ շրջանի բարբառային առանձնահատկություններն ուսումնասիրող հետազոտողը իր ընդունած չափանիշներով աշխատել է գծել տարբեր բարբառային խմբերի սահմանները:

Անևոլ *R.* էրջիզատուը «Արևելյան Անատոլիայի բարբառների դասակարգումը» վերնագրով հռոջվածում տալիս է շրջանի բարբառները բնութագրող հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները, երկու ձայնավորի միջև գտնվող *g* բաղաձայնի պահպանումը, բառի վերջում *ı, u, ü* ձայնավորների *ı-ով* ներկայացվելը, *igit, ız, ızek* և *ınlın* բառերի առանց *y* հնչյունի լինելը, եզակի թվի առաջին և երկրորդ դեմքի ստորոգման վերջածանցների լայն ձայնավոր կրելը, հոգնակի թվի երկրորդ դեմքի վերջածանցի *-sz/-sz* ձևով հանդես գալը<sup>12</sup>: Հետո, ըստ այս առանձնահատկությունների՝ որոշվում է արևելյան շրջանի բարբառների արևմտյան սահմանը Արդվին, Էրզրում, Քիլիզյոլ, Դիարբեքիր, Ուրֆա իլերի<sup>13</sup> արևմտյան սահմանները մրացնող գծին էլ հենց այս շրջանի արևմտյան սահմանն է:

Ձկնեկի Քոքքամազը, որ ուսումնասիրել է Մանիսայի, Իզմիրի, Դեմիրգիլի, Այդրնի, Մուղլայի, Աֆյոնի և Քուրթանիայի բարբառները, որոշ հնչյունաբանական և ձևաբանական տարբերություններից ելնելով, Հարավարևմտյան Անատոլիայի բարբառները չորս շրջանի է բաժանում:

<sup>11</sup> T. Barzouçlu, "Anadolu ve Rumeli Ağzıları", Türk Dili ve Edebiyatı Ansiklopedisi, C.I. s. 132-134.

<sup>12</sup> A. B. Erçilman, "Doğu Anadolu Ağzılarınca Sözcükçülüğü", Ankara, TKA, 1965, s. 219-223.

<sup>13</sup> Վարչական միավոր Քուրթանում գտնվող Մանիկյան օգնագրիված վիզայի բառի համախոսը:

1. Մանիսայի բարբառը, որն իր մեջ ներառում է Բզմիրը և, որոշ առանձնահատկություններով, նաև Ուշաքը, 2. Դինարի բարբառը, որն իր մեջ ընդգրկում է նաև Ուշաքն ու Չիվիլը, ապահովում է Միջին և Արևմտյան Անատոլիայի բարբառային շրջանների միջև եղած անցումը, իր որոշ առանձնահատկություններով մտնում է նաև Ադրև-Ղենիզլիի խմբի մեջ, 3. Ադրև-Ղենիզլիի բարբառները, 4. Մուղլայի բարբառը<sup>14</sup>։

Ուսումնասիրության մեջ մեծ տեղ է հատկացվել այս բարբառների միջև եղած տարբերություններին։

Քուրզուք Գյուլեյը Ռիզեի իլը հինգ բարբառային շրջանի է բաժանում։ Առաջին շրջանը Ռիզեն միացնում է Տրապիզոնի արևելյի բարբառային շրջանի հետ, հիվեդերոյոլ բարբառային շրջանի առանձնահատկություններն էլ փոփոխվելով ձգվում

են մինչև Արդվինի Արհավի, Հոփա իլյեները<sup>15</sup>։ Առաջ ինտոնացիայի (tonus) r բաղաձայնը առաջին շրջանը մյուսներից առանձնացնող ամենակարևոր չափանիշն է։ Աշխատության մեջ քննարկված են նաև շրջանները միմյանցից բաժանող այլ առանձնահատկություններ<sup>16</sup>։

Կարսի իլը էթնիկապես մյուս իլերից տարբերվում է։ Այստեղ տարբեր բարբառային առանձնահատկությունների տեր ադրբեջանցիներ (Azeri Türkler), թուրքմեններ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ են ապրում։ Անմեղ Բ. Էրջիլասունը Կարսի իլի բարբառները դասակարգելիս, այս հանգամանքը նկատի ունենալով շրջանի բարբառները հիսգ խմբի է բաժանել՝ Կարսի տեղական բարբառը, Արդահան-Փոստֆի տեղական բարբառը, Հանաքի թուրքմենների բարբառը, Կարսի ադրբեջանցիների բարբառը և Կարսի թերևեմենների բարբառը<sup>17</sup>։

Է.Գեմալսազը Էրզրումի բարբառները երկու խմբի է բաժանում։ Երթնայնություն - ապաշրթնայնություն անհամապատասխանությունը, եզակի թվի առաջին դեմքի ստորոգման վերջածանցի ձայնավորի կառուցվածքը և ներկա ժամանակի վերջածանցը որպես չափանիշ ընդունած այս դասակարգման մեջ

<sup>14</sup> Z. Korkmaz, *Güney-Bati Anadolu Ağzları*, Ankara, DTCF Yay., 1956, s. 92.

<sup>15</sup> Կարսի տեղական միավոր թուրքիզում՝ գալստ, շրջան (տուլ.՝ kasa):

<sup>16</sup> Turgut Güney, *Rise İli Ağzları*, Ankara, 1978, TDK, s. 10-12.

<sup>17</sup> Ahmet B. Erçilova, *Kars İli Ağzları*, Ankara, 1983, TDK, s. 21-24.

ատաջին խումբը կազմում են Վերին Քարասու-Վերին Արաքսի, իսկ երկրորդ խումբը՝ Ճորոխի երկայնքի բարբառները: Ատաջին խումբը, ընդգրկելով Վերին Քարասուն և Վերին Արաքսը՝ երկու շրջանի, երկրորդ խումբը, ընդգրկելով Օլթուն, Թորթումը և Իսպիրը (Մայր), երեք շրջանի է բաժանվում<sup>18</sup>:

Եզակի թվի ատաջին և երկրորդ դեմքերի ստորոգման վերջածանցների կառուցվածքը հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող բարբառների դասակարգման մեջ կարևոր չափանիշ է Մուքիմ Սաղորը Էրզինջանի (Երզնկայի) բարբառները երեք խմբի է բաժանում՝ արևելյան, միջին և արևմտյան, որպես չափանիշ ընդունելով այս ածանցների փոփոխության աստիճանները<sup>19</sup>:

Այսպիսով, թուրքերենի բարբառների ենթախմբերը բնորոշող առանձնահատկությունների մեծ մասը հեյուսնաբանական են: Չնաբանական առանձնահատկությունները եույնպես բառերի և ածանցների մեջ հեյուսնափոխությունների հետևանք են: Ժամանակակից բարբառագետները թուրքերենի բարբառները դասակարգելիս որպես չափանիշ են ընդունել նաև նախադասության շեշտի և, մի փոքրիկ շրջանին հատուկ, շրջուն նախադասության օգտագործման հետ կապված առանձնահատկությունները: Չնայած բարբառներում տարբեր կառույցներ գրական լեզվից տարբերվում են, թուրքերեն նախադասության կայուն կառուցվածքը հիմնականում պահպանվել է: Թուրքերենի բարբառների տարբերակիչ գլխավոր առանձնահատկություններից են տարբեր պատճառներով պայմանավորված ձայնավորների ներդաշնակությունն ու աններդաշնակությունը, ներկա ժամանակի ու դիմային վերջածանցներում տեղի ունեցող հեյուսնափոխությունները: Ամեն բարբառային շրջանում գրական թուրքերենի կանոններին չենթարկվող բարբառների կողքին կան նաև բարբառներ, որոնք աստիճանաբար կորցնում են այս տեղեկեցությունները: Երջանների միջև եղած կապը սովորաբար ապահովվում է սանահանների երկայնքով ձգվող փոքր բարբառային խմբերով: Այս բարբառներում փոխներգործությունները աճել են, տարբերակիչ հիմնական առանձնահատկություն-

<sup>18</sup> Efrasiyap Gemalmaz, *Erzurum İli Ağzıları*, Erzurum, 1978, TDK, s. 9-11.

<sup>19</sup> Sağır Mukim, *Erzurum İli Ağzıları*, A.Ü. Doktora Tezi, Erzurum, 1987, c.1.

ները՝ թուլացել: Արևելյան խմբի բարբառները հյուսիսարևելյան խմբի բարբառներին հյուսիս-արևելքում Արդահանի, Փռտֆի, Ծաղ-շառի, Արդանուչի, Յուսուֆելիի և Արդլին վարչական կենտրոնի բարբառներով են կապվում: Հյուսիսարևելյան խմբի բարբառների որոշ առանձնահատկություններ այս վայրերում ազդեցիկ են դար-ձել: Արևմուտքում երկու շրջանի միացման կետը մի շարք կող-մերով հյուսիսարևելյան խմբի բարբառներին նմանվող Յորուլն է:

Քեմալիելի, Իլիչի, Արաբկիրի, Աղղյամանի, Հալֆեթի, Բիրեջիքի և Գազիանթեփի (Այնթափի) բարբառները իրենց ընդհա-նուր առանձնահատկություններով կամրջի դեր են կատարում արևելյան և արևմտյան խմբի բարբառների միջև: Հատկապես Աղղյամանի արևելքում, Բիրեջիքում, Հալֆեթիում և Գազիան-թեփում (Այնթափ) նկատվում է արևելյան խմբի բարբառների ճեշումը: Հյուսիսարևելյան խմբի առանձնահատկությունները սկսում են թուլանալ արևմուտքում չեփևիների բնակավայր Ծաղիվազարում և երա շրջակայքում: Այն հյուսիսարևելյան և արևմտյան խմբի բարբառների միացման կետն է: Չեփեիների բարբառային առանձնահատկությունները ազդեցիկ են Գիրեսունի և Օրդուի ավաներձ շրջաններում: Մարմարա ծովի ավերին էլ նկատում ենք արևմտյան խմբի բարբառային առանձնա-հատկությունների թուլանալը:

Անատոլիայի բարբառները արևելքում՝ Ադրբեջանի, հարավում՝ Իրաքի թուրքմենների և հյուսիս-արևմուտքում Ռումելիի բարբառների ազդեցությունն են կրում:

Արևելյան խմբի բարբառներում զգացվում է ադրբեջաներե-նի մեծ ազդեցությունը: Այս խմբի բարբառները կապված են Ուրֆայի, հարավում՝ Քերքուքի ու Թելլաֆերի (Իրաք) բարբառ-ների հետ: Ուրֆայի բարբառում առկա որոշ առանձնահատ-կություններ, որ շրջանի ընդհանուր կանոններից տարբերվում են, այս բարբառներում եույնպես հանդիպում են (անորոշ անցյալ ժամանակի ածանցի երկու ձևով հանդես գալը, հ>յ փոփոխու-թյունը, բազմավանկ բառերի վերջում *ի, ս, մ > ի* փոփոխության *ս, մ > ի, ի* ձևն ունենալը և այլն): Արևմտյան Ռումելիայի բարբառների և հյուսիսարևելյան ու մասամբ էլ արևելյան խմբի բարբառների միջև շատ ընդհանուր առանձնահատկություններ կան. բազմավանկ բառերի վերջում *ի, ս, մ > ի* փոփոխությունը, անորոշ անցյալ



ծամանակի անանգի մեկ ձև ունենալը, երկու ձայնավորի միջև և վանկի վերջում ց բաղաձայնի պահպանվելը և այլն:

<sup>15</sup> М. Манкел, Ответственность Англии пред Арменией, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, Кушневая, 1896, с. 158.

<sup>16</sup> Մ.Նեդիմ (Նախկին քարտուղար Սուլթան Համիդի), Հայ եղեռնը իմ վկայություններով Սոֆիա, Տպարություն «Մափու», 1936, էջ 12:

կազմակերպված կուսորածները քննադատել որպես պատասխան գործողություններ հայ «ազիտաստրներ» կողմից ցուցաբերած ակտիվության նկատմամբ<sup>17</sup>։ Որս հիվանագետը բարեխիղճ կերպով վերլուծելով բազմաթիվ փաստեր հանգում է եզրակացության, թե թուրքերի կողմից տարիների ընթացքում կազմակերպվող հայերի հալածանքները մաս են կազմում երբքին քաղաքականության ծրագրի և մաթեմատիկայի լեզվով ասած «մշտական մեծություն են», այսինքն շարունակվելու են անկախ այն գործողություններից, որոնք կձևոնարկեն հայերը<sup>18</sup>։ Շատ էության, քերված փաստաթուղթը վկայում է, որ ռուս հիվանագետը բացահայտել է հայկական կուսորածների համալսյան քաղաքականության կանխամտածված լինելու հանգամանքը։

Այսպիսով, կարելի եզրակացնել, որ հայոց ցեղասպանության համալսյան ծրագրի հիմնական քաղաքորիքները պատրաստ էին արդեն 1890-ական թթ. սկզբներից։ Այն սկսեց իրականացվել հայոց ազատագրական շարժման կարևոր կենտրոններից մեկում՝ Մասունում 1892 թվականից<sup>19</sup>։ Երկու տարի անց, 1894 թվականին կայսրության բանտերը արդեն լցված էին հայերով<sup>20</sup>։ Արլունայի գանգվածային կուսորածները դեռ առջևում էին։

<sup>17</sup> А. И. Гитинус, Революционная агитация среди турецких армян и быстрое в Анкальской Турции в 1895-1896 гг. беспрепятств. записки, С. Петербург, 16 июля 1897г. - Հայաստանի ազգային արխիվ, Իսոյ Քաղվածքներ, գրք 339, ք. 134 - 135։

<sup>18</sup> Լույս տեսում, ք. 146։

<sup>19</sup> Տես. Լ. Հ. Մկրտչյան, Արևմտահայության ցեղասպանության արդրվածամիջյան քաղաքականությունը. - Հայոց ցեղասպանությանը (ստատիստիկություններ), Խմբագիր՝ Պ. Հ. Զովհաննիսյան, Երևան, Հրատրյան, 2001, էջ 75։

<sup>20</sup> [Смертно, секретныя документы], Записки об армянском вопросе, Дашнак Нелекдова - Шинкуну, 23 февраля/7 марта 1895, Пере. - Հայաստանի ազգային արխիվ, Իսոյ Քաղվածքներ, գրք 35, Հայկական հարցի և արևմտահայերի մասին, 1895-1908, ք. 40։

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԹԵՎԵՆԻԲ ՖԻԳՐԵԹԻ

Օսմանյան կայսրության առաջադեմ մտածող բանաստեղծ, իմբրազիբ, հրապարակախոս, մանկավարժ Թևֆիք Ֆիքրեթը (1867-1915թթ.) լավագույնս անդրադարձել է պետության և հասարակության զարգացման գործում երիտասարդության՝ որպես նոր հայացքների ու մտնեցումների, նոր գաղափարների կրողի ու իրականացնողի առաքելությանը, դերին ու նշանակությանը: Ասվածն իր արտացոլումն է գտել «Հալուքի տետրը» («Halık'ın Defteri») ժողովածուի մեջ՝ անվանակոչված հեղինակի միակ որդու՝ Հալուքի պատվին, ում ժամանակի երիտասարդության մարմնավորում կարելի էր համարել:

1911թ. տպագրված ժողովածուի մեջ Թևֆիք Ֆիքրեթը գետեղեց իր դեմոկրատական և լավատեսությամբ լեցուն բանաստեղծությունները, որոնցում արտահայտել է պայծառ տրամադրություններ հայրենիքի երջանիկ ու փայլուն ապագայի և ճակատագրի նկատմամբ: «Հալուքի տետրը» ժողովածուի մասին թուրք հեղինակ Ռուշեն Էշրեֆը գրել է. «Հալուքի տետրը» երիտօրդական հեղափոխությունից առաջ և հետո այս երկրի (Օսմանյան կայսրության - Տ. Պ.) երիտասարդության մասին Թևֆիք Ֆիքրեթի մտորումների, զգացումների, հույսերի և իղեպների բանաձևումն է՝<sup>1</sup>:

Երիտասարդ Թևֆիք Ֆիքրեթը դպրոցում դասավանդել է գեղագրության, թուրքերեն ու ֆրանսերեն (մասնավորապես աշխատել է Գեղիկ փաշա դպրոցում): Այնուհետև երկար տարիներ մանկավարժական գործունեություն է ծավալել Ռոսերտ քոլեջում և նշանավոր Գալաթասարայի լիցեյում՝ նաև ստանձնելով վերջինիս ղեկավարությունը: Մեկավար լինելու ժամանակահատվածում (1908-1909 թթ.)՝ նրա օրոք Օսմանյան կայսրության այս կարևոր կրթական հաստատությունը մի շարք բարեփոխումներ ապրեց:

<sup>1</sup> Eugen Eşref (Onaydan), *Tevfik Fikret, Hayatına Dair Hatıralar*, İstanbul, Hilal Matbaası, 1919, s. 90

Շնորհում, այդ շրջանում լիցելում որպես ընտրովի առարկա մտցվեց նաև հայոց լեզուն:

Թե՛Ֆիք Ֆիքրեջը մեծ հույսեր էր կապում հատկապես երիտասարդների հետ, քանզի վերջինիս բնորոշ է ակտիվությունը, լավատեսությունը, դեպի նորը հակվածությունը, լավագույնն ապագայի նկատմամբ համոզվածությունը: Որպես ինտելեկտուալ և ստեղծագործական ներուժ՝ երիտասարդությունն ունակ է նոր գաղափարների, ավելի նախաձեռնող է, հակված է նոր ապրելակերպի կերտման: Լա պահպանողականության ու լճացման հակառակորդն է: Պետևս իր ստեղծագործություններով փորձում է դաստիարակել առողջ մտածելակերպ ունեցող սերունդ, որը կկարողանա կյանքի կոչել ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու իր իրավունքը և որակական նոր մակարդակով վերարտադրել նախորդ սերունդների ժառանգությունը:

Ուշադրության է արժանի «Հալալի հավատամքը» («Halâl'ın Âmentü'sü») բանաստեղծությունը, որում հեղինակը մարդու սելիական ուժերին հավատալու, բանականության, առաջադեմ գաղափարների, համամարդկային եղբայրության քառագույլ է Այստեղ նա պատմում է երկիրը դրախտի վերածելու իր ցանկությունների մասին՝ որպես գլխավոր գործող անձ մատնանշելով նրան, ով ի գորու է բարեկերտել իր երկիրը՝ չապավինելով միայն վերին ուժերին: Բանաստեղծը, հրաժարվելով ավանդապաշտությունից, զարգացնում է կոսմոպոլիտական գաղափարներ: Երա կարծիքով՝ անկախ ազգային պատկանելությունից, որպես հայրենիք պետք է ընդունել ողջ մարդկության համար հայրենիք հանդիսացող երկրագունդը: Այս առումով ուշադրության են արժանի պոետի հետևյալ խոսքերը. «Երկրագունդը հայրենիքս է մարդկության ցեղը՝ ազգս» («Toprak vatanım, oev'-i beşer milletim...»): Իհարկե, պոետի նման մտանցումները չէին կարող քննադատության չարժանանալ թուրքականության գաղափարախոսների կողմից: Չայս հայացքների տեր թուրք լրագրող, գրող, հրատարակախոս Մաբհիա Մերթելը գրում էր, որ Թե՛Ֆիք Ֆիքրեթին այս խոսքերի համար մեղադրել են հայրենամերժության մեջ, նրան որակել

որպես «անհայրենիք»<sup>2</sup>։ Թեֆիք Ֆիքրեթի նման արտահայտություններն ընկալվել են ևսլանիսկ որպես անարխիայի տարածման վտանգ հարուցող։ Սերթելը նկատում էր, որ Թեֆիք Ֆիքրեթի համաշխարհային հանրության գաղափարը, համաձայն որի՝ երկիրը ճանաչվում է համընդհանուր հայրենիք, իսկ բոլոր մարդիկ՝ եղբայրներ, իրականում ոչ թե հայրենամեծության են, այլ մարդկային բարձրագույն ձգտումների մարմնացում։

Թեֆիք Ֆիքրեթ գրում է.

Ebnâ-yı beşer birbirinin kardeşi... Hulyâ!

Olsun, ben o hulyâya de bin canla inandım<sup>3</sup>.

Մարդու զավակները միմյանց եղբայր են... Պատրանք (երևակայություն)

Թող այդպես լինի, ես այդ պատրանքին էլ հազար հոգով հավատացի։

Թեֆիք Ֆիքրեթն առավել քան համոզված է, որ մարդկությանը միավորող, եախապաշարմունքներից, ավանդապաշտական զգացումներից ազատող ուժը կրթությունն ու զինակիրքն են, և հույս է հայտնում, որ մի օր երկրում կտիրի իմացության ուժը.

Bir gün yapacak fen şu siyah toprağı altın,

Her şey olacak kudret-i irfanla...inandım.<sup>4</sup>

Մի օր զիտությունն այդ սև երկիրը ոսկի է դարձնելու

Ամեն ինչ իրֆանի (զինակիրքի, իմացության-Տ.Պ.) ուժով է լինելու... հավատացի։

Ըստ Թեֆիք Ֆիքրեթի՝ երիտասարդ սերունդը պիտի հաղորդակցվի համամարդկային արժեքներին, լինի դրանց կրողն ու կարողանա կամք գործադրել դրանք կենսագործելու համար։ Միայն նման երիտասարդություն ունեցող հասարակությունը կարող է ունակ լինել իրական բարեփոխումների։ Բանաստեղծը հարցադրում է անում՝ որքանո՞վ է թուրք երիտասարդությունն իր ապագան կապում իր հայրենիքի հետ և որքանո՞վ է պատրաստ իր ուժերը ներդնել իր իսկ հայրենիքի բարգալաճման գործում, իր իսկ

<sup>2</sup> Sertel Sabiha. *Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi*, İstanbul, Yurt ve Dünya Yayınları, 1946, s. 101

<sup>3</sup> Tevfik Fikret, *Halik'ın Defteri, Halik'ın Anecdotesi*, İstanbul, Çağrı Yayınları, 2006, s. 30

<sup>4</sup> Tevfik Fikret, *Halik'ın Defteri, Halik'ın Anecdotesi* s. 31



հայրենիքում ազատ ապրելու ու արարելու համար: Հալուքը, հանդես գալով որպես երիտասարդության մարմնացում, մեկնում է Ելրոսպա՝ կրթություն ստանալու, ապա հայրենիք վերադառնալով՝ «ձեռք բերած գիտելիքներով լուսավորելու երկիրը»:

«Հալուքի հրամեշտը» («Halûk'un Vedd'i») ստեղծագործության մեջ բանաստեղծը զուգահեռներ է անցկացնում Ստամբուլի ու Ետոլանդիայի միջև, ուր Հալուքը մեկնել էր ուսումնաստության: Թուրք զոսկանազետ Արդուլլահ Ուլմանը եկատում է, որ «Հալուքի հրամեշտը» ստեղծագործության մեջ Թևֆիկ Ֆիքրեթը Ստամբուլը կապում է բնության (tabiat), իսկ Ետոլանդիան քաղաքակրթության (medeniyet) հետ<sup>5</sup>: Մառախլապատ, անձրևոտ, ձյունոտ, սառցեպատ» Ետոլանդիան քաղաքակրթության պայմանների տեսանկյունից լրջության և եռանդի» (Cidd ü himmet), «լրջամտության ու ազատության» (vakaar ü hürriyyet) երկիր է իսկ «զուցե դրախտի չափ թարմ է, հոգևոր կանքի հետ կապված» Բոսֆորի կլիմայով Ստամբուլը «դասարկազուխ» (âvâre), «անտեղյակ» (bi-haber), «ձանձրացած, հոգևած» (bîzâr) մարդկանց անկյուն է: Նա մեծ ցավով արձանագրում է այդ դատը ճշմարտությունը. «Acı seyler, Halûk, fakat gerçeki / Դատը բաներ են, Հալուք, սակայն իրականությունն է»<sup>6</sup>:

Թևֆիկ Ֆիքրեթը իրեն համեմատում է անցյալի հետ, որդուն ապագայի: Հեղինակը զարգացնում է՝ սուսի ծառի կերպարը: Այն խորհրդանշան է Օսմանյան կայսրության փառահեղ անցյալը: Դարեր շարունակ այս ծառը մեծանում, ծաղկում, փթթում է.

Hani bir gün seninle Topkapı'dan  
Geliyorduk; yol üstü bir meydan,  
Bir çınar görduk; enli, boylu, vakır  
Bir ağaç; hiç eğilmemiş, mağrur  
Koca bir gövde; belki altı asır  
Belki ondan da fazla, dalgın; ağır,  
Kaygsız bir ömür sürüp gelmiş.<sup>7</sup>

<sup>5</sup> Uçman Abdullah, *Tevfik Fikret, Halûk'un Defteri*, İstanbul, Çağrı Yayınları, 2006, s. IX

<sup>6</sup> Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Vedd'i*, s. 35

<sup>7</sup> Tevfik Fikret, *Halûk'un Defteri, Halûk'un Vedd'i*, ss. 35-36

Հիշո՞ւմ ես, մի օր քեզ հետ Թուֆքափրից  
 Գալիս էինք. ճանապարհին մի հրապարակ,  
 Մի սուսի տեսանք՝ փարթամ, բարձր, հաղթանդամ  
 Մի ծառ է. երբեք չի կորացել, հապարտ  
 Հսկա մի բուն. գուցե վեց դար,  
 Գուցե տասնից (դրանից) էլ ավել, մտասույզ, ծանր,  
 Անվիշտ մի կյանք է անցկացրել:

Դարերի ընթացքում մեծացող, ապա «փառոջ պետության»  
 խորհրդանիշ հանդիսացող այս սուսին բանաստեղծի մեջ խոր ցավ է  
 արթնացնում: Ծառը սկսում է նեխել.

Fakat ayyūlca ser çeken, uzanan  
 Bu mehâbetli gövde çarçplak,  
 Ne yeşil bir filiz, ne bir yaprak...  
 Kuruyor; âh, pek yazık! Şu derin  
 Şerha bôğründe belki bir hâkin  
 Baltanın, bir gazabın yıldırımın  
 Zehridir... Söyle, ey çınar, bağrın  
 Hangi odlarla yandı? Hangi siyâh  
 Kurt içinden kemirdi? <sup>8</sup>

Սակայն գլուխը երկնքին հասցնող, ձգվող  
 Այս վեհասքանչ բույր մերկ է,  
 Ո՛չ կանաչ մի շիվ, ո՛չ մի տերև...  
 Զորանում է, ա՛խ, շատ ափսոս: Այդ խոր  
 Կտրվածքը կողքիդ հեարավոր է մի դավաճան (վնասատու)  
 Կացնի, մի ցասկոս կաթնակի  
 Թույնն է... Ասա՛, հե՛ 'յ սուսի, կուրծքդ  
 Ո՞ր կրակներով է այրվել: Ո՞ր սև  
 Որդը ներսիցդ կրծեց-կերավ:

Թևֆից Ֆիքրեթը համոզված է, որ կյանքի ողջ ընթացքն  
 ուղեկցվում է դժվարություններով ու դատաբարություններով, անցնում  
 պայքարի ուրիշներով: Սակայն նեղությունների ու

<sup>8</sup> Tervik Fikret, *Halk'ın Defteri, Halk'ın Vefdi'si*, s. 36-37

դժվարություններին դիմացողը, զաղափարի հետևից գնացող վաղ թե ուշ հասնում է իր նպատակին.

Koşan elbet varır; düşen kalkar;  
Kara taştan su damla damla akar,  
Birikir, sonra bir günüz göl olur;  
Arayan hakkı en sonunda bulur...<sup>9</sup>

Վազոզը, իհարկե, հասնում է ընկերող՝ վեր էլնում,  
Սև քարից ջուրը կաթիլ-կաթիլ հոսում է,  
Հավաքվում, հետո մի արծաթե լիճ է դառնում,  
Փետրողը ճշմարտությունն ամենավերջում է գտնում:

«Վաղը» («Ferdâ») բանաստեղծությունը կրկին նվիրված է երիտասարդներին. նախաբանում արդեն էլ գրված է «Այսօրվա երիտասարդներին» («Bugünün gençlerine»):

Բանաստեղծը գրում է.

Ferdâ senin; senin bu teceddüd, bu inkılâb...

Her şey senin değil değilmi ki zâten?... Sen, ey peşâb....<sup>10</sup>

Ապագան (վաղը) քոն է, քոն է այս արդիականացումը, այս հեղափոխությունը...

Եվ արդյո՞ք ամեն ինչ քեզ չի պատկանում: Դո՛ւ, ե՛նչ, երիտասարդությո՞ւն...

Թևֆիք Ֆիքրեթը պատմության նոր ժամանակաշրջանի բացումը, հայրենիքի հույսն ու ապագան կապում է երիտասարդության հետ, որի պատվի գործն է վերափոխել կյանքը.

Gençler, bütün ümid-i vatan şimdi sizdedir;

Her şey sizin, vatan da sizin...<sup>11</sup>

Երիտասարդն էր, հայրենիքի ամբողջ հույսը այժմ դուք եք,  
Ամեն ինչ ձերն է, հայրենիքն էլ է ձերը...

Երիտասարդների ձեռքում է գտնվում «Դրախտի յափ գեղեցիկ հայրենիք» («Cennet kadar güzel bir vatan») կառուցելու գործը: Թևֆիք

<sup>9</sup> Tevfik Fikret, *Halik'ın Defteri, Ferdâ* (ս. 41-42)

<sup>10</sup> Tevfik Fikret, *Halik'ın Defteri, Ferdâ*, ss. 72-73

<sup>11</sup> Tevfik Fikret, *Halik'ın Defteri, Ferdâ*, s. 74

Ֆիքրեթը երիտասարդների պարտքն է համարում հայրենիքի պաշտպանությունը: Բանաստեղծը գրում է, որ «հայրենիքն ուժեղ մարդկանց ուսերի վրա է քարձրանում»: Թևֆիկ Ֆիքրեթը կրկին ու կրկին զգուշացնում է, որ ապագան պատրվանից է հաշիվ պահանջելու: Պոետը համոզված է, որ մարդկությունը պետք է ձգտի դեպի վեր, հասնի երկնքին և երբեք չհագնեա, չճանճրաեա վեր սլանալուց:

Uğraş, didin, dînyûn, ara, bul, koş, atıl, bağır;

Durmak zamânı geçti, çalıtmak zamânıdır!<sup>12</sup>

Բսնի՛ր (ցանա՛), ճգնի՛ր (ձգտի՛ր), մտածի՛ր, փնտրի՛ր, գտի՛ր, վազի՛ր (սլացի՛ր), հարձակվի՛ր, թղավի՛ր:

Կանգնելու (անգործության) ժամանակն անցավ, աշխատելու ժամանակն է:

Իր կյանքի վերջին տարիներին Թևֆիկ Ֆիքրեթը մտադիր էր թողարկել «Հույս և վճռականություն» անունով հանդես, որն ուղեցույց կհանդիսանար երիտասարդության համար: Սակայն վերոնիշյալ հանդեսը լույս չտեսավ Բանաստեղծի հիվանդության պատճառով: «Ը՛վ տուեղ պատկանում է անկեղծ ու խիզախ երիտասարդներին, ույքեր պատրաստ են պայքարել հանուն ճշմարտության», - գրում է Թևֆիկ Ֆիքրեթը, և մատենանշում այն երիտասարդներին, ույքեր չեն պատրաստվի օգտագործել այդ «վեհագույն բառը»՝ հանուն շահադիտական նպատակների, այլ կպայքարեն հանուն ազատ մտքի ցանկացած կեղծ իշխանության դեմ...<sup>13</sup>

<sup>12</sup> Tevfik Fikret, *Halâk'ın Defteri, Farsî*, s. 76

<sup>13</sup> Рашид Фаиз, *Турецкие поэты, Встречи, Репортажи*, Москва, Наука, 1977, стр. 58

## TURKISH WITH THE FUNCTION OF COMMUNICATION LANGUAGE IN THE POLYETHNIC SOCIETY

Amtkeli is a name of a river, a village, a lake and even of a small mountain ridge in Georgia, Gulripshi Region. The toponym Amtkeli should be Georgian tkemali (bot. sour plum, myrobalan (*Prunus divaricata*) adapted in Abkhazian. The fact is that in the oldest sources from antique, early feudal and serfdom period toponyms on the territory of today's Abkhazia there is no toponym, which can be explained in Abkhazian language, also makes us think so.

In October 1966 in the environments of Amtkeli - one of the most beautiful lakes of Georgia, with the initiative of the Students' Scientific Society of Tbilisi State University was organized a complex expedition. The lake is located in the basin of the River Kodori. In 1891 there happened a strong earthquake, in consequence of which near Village Azanta a rocky slope of the Mountain Small Shkhanatcha cracked down, blocking the road of the River Amtkeli and there appeared a lake. In the South-West part of the Lake you can hear a rumble, which is either the echo of the roar of a tributary, or a sound of water outflow.

The population of the villages near the lake is ethnically quite diverse. I had to observe the linguistic situation. I thought that here a specialist of Caucasian languages .. would be more busy, than I, who knows the Turkish language anyway. Unexpectedly it turned out that most of the people, living near the Amtkeli Lake are Armenians, exiled from Turkey. There Greeks also lived. There were many people from Imereti, Rach'a, Lechkhumi and Megrelis (regions of Georgia). They moved From Rach'a and Imereti in 1949. From the Greeks questioned no one could remember the migration date. As for Armenians, they named 1922 as the time of moving here.

In the last decade of the 19<sup>th</sup> century the Armenian people fell victim of a conflict between Mohammedans and Christians, instigated by Abdul Hamid the 2<sup>nd</sup> - Sultan of Turkey. The Armenians were oppressed not only by Turks, but also by Mohammedan emigrants, recently moved

from the Balkan Peninsula. At the same time, the Kurd feudalists collected taxes from them.

In 1894 in Samsun Region a rebellion of the Armenians blew up. The Sultan Abdul Hamid the 2<sup>nd</sup> sent a troop for crushing the rebellion with such an instruction: the liquidation of the Armenian issue would be accomplished by the liquidation of the Armenians themselves.

They were crushing Armenians all over Turkey and this continued till 1896. The lower and middle layers of the Istanbul Armenians also suffered losses. Thus, the mass wipeout of Armenians already had a kind of "tradition"...

In May 1915, after the Russian army took Vani Lake surroundings, The Ottoman government ordained a law about deportation. This law provided evacuation of the frontline population if because of military operation, coordinated with the enemy and revealed treason of the homeland. In reality the deportation turned into an unprecedented massacre of the Armenian people. More than a million and a half of Armenians were exiled to the concentration camps of Syria and Mesopotamia, but very few of them reached the camps because of epidemics and hunger. The deportation was not limited by frontline and was expanded all over Anatolia. More than a million of Armenians perished.

The escaped dashed to Istanbul. In 1922 with support of the Consul of Armenians the refugees were sent to Yerevan via Batumi. After coming to Yerevan everyone could go anywhere they wanted. The Armenians, exiled from the Sasanus Vilayet chose Sukhumi (why did not they want to stay in their historical homeland? I did not dare to ask this question to aged informants) and settled in three villages near the Lake Armtkeli - Azanta, Abulkhvara and Gergemish, in 22 km-s from Sukhumi. There the etymology of the latter was cleared up. It turned out that the Greeks began to move away from this place, but the weather got bad and they returned. "He returned" in Turkish sounds as "*geri gelmiş*" that greatly coincides with the name of this village - Gergemish - indeed.

Historians of Turkish language call the language of Anatolian Turks of the 13<sup>th</sup>-15<sup>th</sup> centuries old Ottoman language, and the one of the 16<sup>th</sup>-19<sup>th</sup> centuries, saturated with Arabisms and Persicisms - Ottoman language. The third stage of the development is contemporary Turkish.

In the latter, like Ottoman, there are two main dialect zones – East and West.

The Armenians, I made tell the histories, were from Ordu and Samsun Vilayets. So we recorded several histories in the Samsun sub-dialect of the north-east dialect of Turkish (Ottoman) language.

Because of different reasons it became impossible to record the Turkish speech of the Greek. David Svanidze, a Georgian, who had been living here since 1926, having education of 9 years of school, spoke Megrelian, Russian, Greek, Armenian, and told me in Turkish about the origin of Amtkeli Lake, how the shepherds and flock of sheep, grassing on the slope, perished in connection with the rockfall. I asked Parthen Kopaliani, how he studied Turkish. He told me that when he moved here he was 8. The Armenians, Greek and Megrelians, all spoke Turkish to each other and all of us studied Turkish. I speak with my Greek and Armenian neighbors in Turkish.

My informers were representatives of elder and middle generation. They understood Armenian and Greek, too. The young people less knew Turkish.

In our disposal was an extended text, charged with extralinguistic factors. In particular, we have recorded everyday life stories that gave us possibility to make discourse analyze. A story about escape belongs to the occurrence aspect:

*On dört tarihta Türkler bizi kesiyordiler ve sirgin yaptılar, sorsu bizim peher Samsun'da, koy Kurşumlu idi. Ordan getürdüler Stambul'a. Stambul'dan bizi yolladılar. Ermenski konsol bizi topladı ve yolladı Yerevan'a. Yerevan'dan kim nereye istedi gitti, oriyе. Ben geldim Sohum'a. Şimdi yaşıyorum Azanta'da. Üç tane uşak öldüler Türkiya'da. Adım Heropsimsa Demiciyan. Bu uşak burda doğmuş, o Türkiya'de doğmuş...*

From the 14<sup>th</sup> year (1914) the Turkish were murdering and deporting us. Then our town was Samsun, and the village – Kurşumlu. From there they took us to Istanbul. From Istanbul they sent us. Ermensky konsul gathered us and sent us to Yerevan. From Yerevan everyone went where they wished. I came to Sukhumi. Now I live in Azanta. They killed my three sons in Turkey. My name is Heropsimsa Demirjian. This boy was born here, and that – in Turkey...'

The following record reflects everyday life:

*Ben sabah altıda kalktım, sora ağzına yakadı, sora geyidi, sora uz gra otka içti, biraz içiyorum, ne vakit olur otka içiyorum, ne vakit olmaz içme. Sora gitti beni işlarda. Ben ustayım, sora başladı beni işleri. Bu ramkaları yaptı, hepisi yapamadı. ..*

'I got up at 6 o'clock today, then I washed my face, then I got dressed, then I drank hundred grams of otka. I drink few. If I have time, I drink otka, if I have no time, I don't drink. Then I went to my businesses. I am a master of wood. Then I began my businesses. I made these frames, I could not do everything'.

In the next history the escape from a task-oriented social action, particularly, from everyday routine is manifested:

*Ben eyi seviyorum avçuluk. Köpek vardır iki tane tupekte var, çip tupek vardır. Gidiyorum bu gol tarafta, orda vardı her çif avdı. Vardı yaban domuz, vardı zengiluk bu dağda, eluk karageçi de vardı...*

'I love hunting very much. I have two dogs. I have a gun too, with a double barrel. I'll go to the side of the lake, there are all kinds of game. There is abundance on this mountain. Wild boar, roe deer, gazelle...'

*Kolhoz iş içüne soulcaim. Bizim kolhoz burda asnavnoy kultura tutum vardır. Burda kolhozda birinci tutun, sonra ikinci misirdur. Bizim vardır ferma. Bizim ferma çok eyidur. Her zama her sene veriyor sağlama plan yapıyor, plan ey veriyor, okumet. Çobanları eyi çalışıyorlar.*

*Biz geldük Abhaziada. Sora burda yapıyorum da çalışıyorum tutunum yapıyorum gene bizim vardır geçi ferma, domuzlar ferma yoktur, ay çalışıyor bizi geçi çobanları her zaman plan puzla veriyorlar. Çok eyi çalışıyor, sora yalanc çobanları çalışmıyor. Buni bizim pravlenia yardum yapıyor sutu sağma puzla veriyorlar.*

*Gene bizim vardır deputalar, onlarda her sene plan veriyor okumeta, ei çalışıyorlar bu millet.*

*I will tell about the activities of the kolkhoz. In our kolkhoz the main culture is tobacco. Here, in the kolkhoz first is tobacco, the second - corn. We have a farm. Our farm is very good. Always, every year it fulfills the plan completely, well fulfills the plan for the Government. The shepherds work well.*

*We came to Abkhazia, then we live and work here, we prepare tobacco. And we also have a goat farm. There is no pig farm. Our goat*



shepherds work well. They always fulfill the plan ahead of schedule. Also, the liar shepherds don't work. Our administration helps them and they give them quite much milk.

Also we have deputies. Every year they fulfill the plan of the Government. These people work well.

One Armenian informant told me a little about the history of the people, living in the surroundings of the lake, a little – about their supporter lake and its environments, and a little about himself.

*Arda yaşıyordu urumları yetnu beş hane idu. Onları okumet sulgunu yaptılar eskide bir kolhoz idi o vakıtı o karşında gezemiş idi.*

*Bizim kolhonda varu aruları. Bizim kolhonda vardu beş gerda. Bunları .....pçelavodlar ei çalışıyorlar. Ei veriyorlar bal.*

*Bu göl Antkelim. Aburda göl o vakit iserde göl yoğıdu. Bir Abudere gidiyordu. Antkel tarafta o vakit birkaç sene sons burda oldu bir şey toprak var idi onları da kaiboldu. Ne vakit oldu böyle pus hava kurmuş oldu giol. yine yer dışı aşağıda. Bazı kaiboldu, bazı sağlam kaldı. ora oldi bizim Antkeli giol.*

*.Sora geliyorla her taraf, bakıyorla, .....nasıl ol(t)du, burda eski millet biliyorla, çok yoktu, bazı vardı, bazı eldi, bazı sağlam kaldı. Hangi sağlam kadı, onları biliyorla bu giöl nasılı oldi. Bu giolda çok baluklar vardı. Alabaluk, sakaları baluk. demen bu giöl çok zengini oldu, her taraf on içum, bir taraf: materala vardı, kaştan, çınar....., karağöç, yakmağöç, arduç, pelit da vardu, funduk da var.*

*Mais otuzdan sora demek iyel aida bizim giöl ynce beuk oluyor. Hem beuk olur kasları dolu oluyor, agristoda sora giöl yavaş yavaş gidiyor.*

*Ben Manik Demirciyan, otuz beş senesinde heç (ö) öğrenmemişim.*

*Beş çocuk var iç oğla, iki kuz. Sabahdan kalkarım, yuzı yakaru, çamayur yaparım, yedururum, giderum benim işe gazmak (kirqvaze mu.Saobda).*

*Urumees bilurum, Türkças, Uruşças, Girces bilurum, Ermences.*

*Burda kocaya geldümüşe on iç senelik var. Benum koca burda gordum, burda aldak birbirimizi....*

*There lived Urums (Greeks), there were seventy five families. They made sulguni cheese for the Government. In our kolhoz we have bees. The pchelavodlar (bee-keepers) work well. They give well the honey.*

*This lake is Amtkeli. At that time it was not a lake. It was a creek. When the weather was bad, the lake was drying up, the land was falling down again. Some were lost, some escaped. There our Amtkeli Lake appeared. Then they were arriving from everywhere, were looking, how it happened. The old people know here, several were, several died, several are alive. Who are still alive they know how this lake had appeared. In this lake there are many fishes, trouts. This lake is very rich from every point of view: there are materials, chestnut, sycamore, elm, juniper, there is an oak tree too, there is hazelnut.*

*Since May thirty our lake has increased ( has become large). It increases and at the same time fills, after August the lake little by little (gradually) goes away.*

*I am Manik Demirjian, I'm going thirty-five, I have never studied (I'm completely illiterate).*

*I have five children, three boys, two girls. I get up in the morning, wash my face and hands, wash clothes, feed , go to my job for digging (she worked with limestone - M.J.).*

*I know Greek, Turkish, Russian, I know Georgian too. Armenian too.*

*It's thirteen years I have come here to my husband. I saw my husband here, here we took each other (perhaps we got married)....*

We recorded the poems of the most widespread couplet form (*manî*) of the Turkish folklore.

<i>Aya baktım, ay beyaz.</i>	I looked at the moon, the moon is white.
<i>Kuza baktım, kız beyaz.</i>	I looked at a girl, the girl is white.
<i>Ciibe baktım, param az.</i>	I looked in my pocket, I have few money.
<i>O kız beni karı (yarı) olmaz.</i>	That girl will not be my wife (sweetheart).
<i>Azantanın dasına bak,</i>	Look at Azanta's stone,
<i>Gözlerimüm yasına bak,</i>	Look at my eyes' tears,
<i>Ben sevdim, il aldı.</i>	I fell in love, I got old.
<i>Allahın işina bak.</i>	Look at Allah's business.
<i>Ellerinde pulı bakın,</i>	Look at the money in his hand,
<i>Hayı kız gözlerin çıkar.</i>	Be sacrificed to your blue eyes, eyes
<i>O çıkar gözlerine,</i>	O, blue-eyed girl,
<i>Kurban olsun, bu pakir.</i>	Let this poor man
<i>Oğümüzde dere var,</i>	In front of us is a creek,

<i>Eğlendim su içmeye,</i>	I stopped for drinking water,
<i>Sen o yanda, ben bu yanda,</i>	You are on that side, I am on this side,
<i>Köprü yoktur geçmiye.</i>	We have no bridge to cross and come together.
<i>Zeytin yağı yiyeme,</i>	I cannot drink olive oil
<i>Basma fıstık giyemem,</i>	I will not put on chintz dress
<i>Senin gibi yosmayın,</i>	I cannot became a lord
<i>Ben efendim alamam aman.</i>	For such a sad flirt as you.

In this mixed language there are many Russicisms: *kolkhoz* 'collective farm', *pchelovod (+lar)* 'bee-keepers', *uje* 'already', *osnovnoj kultura* 'basic cereals', *ferma* 'farm', *pravlenie* 'board of administration', etc.

From Georgian is borrowed *suluguni* (a variety of hard cheese).

From the phonetical events it is worthy to note sonorous initial sound like Azerbaijan language in those words, in which in Anatolian Turkish we have corresponding voiceless sound: *taş* \_ *daş* 'stone', *tuz* \_ *duz* 'salt';

*/k/* becoming voiced: *keçi* \_ *geçi*. Though this is not the case everywhere.

In roots and affixes instead of velar narrow non-labial /k/, generally everywhere there is /w/: *kız* \_ *kuz* 'girl'; with labial vowel they use a paradigm with the affix of predicativity: *vardur* instead of *vardır* 'is', *altın* → *altın* 'gold', *temiz* → *temir* 'clean'; we meet the labial variant of the affix of past tense (categorical): instead of *geldik* they use *geldük*.

The example of despirantisation is: *fazla* → *pazla*, *çip* instead of *çift*, *tüpek* instead of *tüfek*.

The result of reprochement of Turkish literary language with popular speech code is penetration of speech norm of word order into the literary language, in consequence of which order of words, specific to a Turkish sentence – SOV is changed mainly in two points: a predicate, which commonly is preceded by a subject or object, is prepositional with regard to them, and an attribute is postpositional with regard to dependent member. We come across this case many times in the recorded texts. The examples of inverted sentences – so called *devrik cümle* – are:

*Her sene plan veriyor okumeta.*

'He fulfills the plan every year for the Government'.

The predicate precedes the indirect object.

*Ben eyi seviyorum avculuk.*

'I love hunting very much'.

The predicate precedes unshaped direct object.

It is worthy to note that in the region with ethnic diversity the communication language was Turkish, though there was nobody of Turkish origin. In reality, Turkish, as *lingua franca* functions in such a community, no member of which is ethnic Turk. In the diasporon of this socio-linguistic event there are only three villages, but as/in conformity with *lingua franca* our object language seems to be changed: there the constructions, including participles and infinitives are not almost used - DIK- and -AcAK-forms, the order of vowels is disharmonized both from point of view of labiality and sequence.

Thus, Turkish could not appear here as a developed language and regular use of it by representatives of different nationalities caused simplification of its structure. The facts that we have examined, manifest the situation of forty years remoteness. It would be interesting to attest at the beginning of the 21<sup>st</sup> century the fact of existing of Turkish, as interethnic language in Abkhazian villages. Unfortunately, the contemporary situation yet does not give us such an opportunity.

## ՊԱՏՄԱԳԻՐ ԱՀՄԵՆԴ ՋԵՎԴԵԹ ՓԱՇԱՆ ՄՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրության իշխող վերնախավի կողմից ձեռնարկված սահմանափակ բարեփոխումներն էական արդյունք չուղեցին: Դրանի պատերազմի ավարտին՝ 1856 թ. փետրվարին, մեծ տերությունների ճնշման ներքո հրապարակված «Հաթթ-ը Հյումայունով» սկսվեց արևմտամետ բարեփոխումների՝ թանգիմաթի երկրորդ և վերջին փուլը: Գահ բարձրացած Աբդուլ Ազիզ սուլթանի առջև (1861-1876) ծառայած լուրջ խնդիրները պահանջում էին անհատադ լուծում, իսկ դա անմիջականորեն առնչվում էր վարչատարածքային կառավարման համակարգին: Կայսրության հատկապես այն շրջաններում, որտեղ բնակչության գերակշիռ մասը կազմում էին ոչ թուրք ժողովուրդները<sup>1</sup>, զոհե՞ն դուրս էին եկել կենտրոնական իշխանությունների վերահսկողությունից: Հաճախակի էին դարձել ժողովրդական հուզումները, ապստամբությունները, հատկապես քրիստոնեարևակ շրջաններում, մասնավորապես Բալկաններում և հարավ-արևելյան Անատոլիայում: Տեղական կառավարիչները պարբերաբար ընդվզում էին, չէին եղբարկվում կենտրոնական իշխանություններին, չէին կատարում իրենց պարտավորությունները, այն է՝ վճարել հարկերը և անհրաժեշտության դեպքում զորք տրամադրել: Իշխանությունները ստիպված էին նոր միջոցառումներ ձեռնարկել վիլայեթներում առկա իրավիճակը փոխելու համար<sup>2</sup>:

Այդ նպատակով 1860-1864 թթ. Բ. Դեուդը կայսրության տարբեր շրջաններ պարբերաբար հասույկ հանձնակատարներ (տնօրեն) էր ուղարկում, որոնց առաջադրանքը տեղում իրավիճակին ծանոթանալն էր և համապատասխան գործողությունների իրականացումը՝ վիճակը կայունացնելու և նահանգների արդյու-

<sup>1</sup> B.H. Davison, *Reform in the Ottoman Empire 1856-1876*, Princeton University Press, Princeton, 1963, p. 80: Մանրամասն տե՛ս A.Д. Носович, *История Турции*, т. IV, с. 3, Надеждностьство Ленинградского Университета, Ленинград, 1987, стр. 204-235.

<sup>2</sup> Evver Ziya Karal, *Osmanlı Tarihi*, c. VII, *İlahat fetranı devri 1861-1876*, Ankara, Türk Tarih Kurumu Basınevi, 1956, s. 152-163.

նավեւ կառավարումն ապահովելու համար<sup>3</sup>: Իրենց գործունեության մասին երանք հատուկ զեկուցագրեր էին ներկայացնում Բ. Ղեանը: Այդ զեկուցագրերը կարևոր տեղեկություններ էին հաղորդում, թե տվյալ շրջանի և երա բնակչության, թե տվյալ նահանգում առկա իրավիճակի, ինչպես նաև իրենց խնդիրներին հանձնակատարների գործունեության մասին: 1863 թ. կազմվում է կայսերական հատուկ հանձնաժողով, որը պետք է քններ մայրաքաղաք ուղարկված զեկուցագրերը: Երկու կառույցի նախագահ է նշանակվում ժամանակի ակնաբույժ պետական գործիչ, պաշտոնական տարեգիր և իրավագետ Անանյ Ջևղեֆ փաշան<sup>4</sup>:

Հանձնաժողովին չգոհացրին Բալկաններում և Անատոլիայում մյուսֆեթիշների գործունեության արդյունքները, քանի որ երանց չէր հաջողվել ոչ բնակչության շրջանում հուզումները մեղմել և ոչ էլ բարձրացնել կենտրոնական իշխանությունների հեղինակությունը: Կազմվեց նոր «Բարեփոխումների հանձնախումբ» (Fırka-i İslahiyye), որի ղեկավարությունը նույնպես վստահվեց Ջևղեֆ փաշային: Հանձնախումբը բացի քաղաքացիականից ուներ նաև ռազմական գործառույթներ, այսինքն հարկ եղած դեպքում պետք է զենք կիրառվեր տեղացիների դեմ, ուստի հանձնախումբի հրամանատար նշանակվեց կայսերական չորրորդ բանակի հրամանատար, մարշալ Դերվիշ փաշան: Այն հատուկ ստաբիլությանը պետք է մեկնեք Բոսնիայի վիլայեթ և Քոզանի սանջաք<sup>5</sup> և տեղում իրավիճակին ծանոթանալուց հետո համապատասխան միջոցներ ձեռնարկել այս հատվածների բնակչությանը հնազանդեցնելու<sup>6</sup> և նախատեսված բարենորոգումներն իրականացնելու համար:

<sup>3</sup> R.H. Davison, *Reform in the Ottoman Empire 1856-1876*, p. 107.

<sup>4</sup> Անանյ Ջևղեֆ փաշան (1822- 1895) եղել է Օսմանյան կայսրության 28-րդ պաշտոնական տարեգիրը (1855- 1866), առաջին քաղաքացիական դատարանի (Diva-ı Ahkâm Adliye) նախագահը, զբաղեցրել նահանգապետի (վալի) պաշտոնը մի քանի նահանգներում, եղել է կրթության, արդարադատության նախարար: Գաղտնագիրը հեղինակի է «Ջևղեֆի պատմությունը», «Ջևղեֆի հուշագրերը», «Ջևղեֆի զեկուցագրերը» և այլ աշխատությունների և մասնավորապես քուրդական աշխարհիկ զրեքի՝ Մեքելի: Ավելի մտքամասն տե՛ս *Türkîye Tarihî* 3. cilt, Cem Yayınevi, İstanbul, 2002, s. 354-356; Ahmet Cevdet Paşa'nın Hayatı ve Eserleri - Ahmet Cevdet Paşa, *Osmanlı İmparatorluğu Tarihî*, c. I, s. 15- 32.

<sup>5</sup> Գալլապ Ալանայի վիլայեթում (նահանգ):

<sup>6</sup> Enver Ziya Karal, *Osmanlı Tarihî*, s. 163.

Բոսնիայում և Իշչեղդայում<sup>7</sup> իր առաջադրանքը բարեկազմ ավարակույց հետո 1865 թ. Ջնդեթ փաշան մեկնում է Միս: Միսը Քոզանի սանջաքի արևմտյան հատվածի կենտրոնն էր և Կիլիկիայի հայոց կաթողիկոսի նստավայրը: Այստեղ հանձնախումբը ջերմ ընդունելություն գտավ: Ինչպես եղում է Ջնդեթ փաշան, Մսի կաթողիկոսն անգամ ժամանել էր նրանց ողջունելու համար<sup>8</sup>: Այս ժամանակաշրջանն Օսմանյան կայսրության հպատակ հայերի համար հույսերի և ոգևորության շրջան էր: Պատահական չէ, որ բարեփոխումների ընդհանուր մթնոլորտում Մսի բնակչության կողմից իշխանությունների այս գործողությունը գնահատվեց որպես պետական հոգածության դրսևորում: «Կիլիկոս Բ կաթողիկոսի»<sup>9</sup> կայսերական պալատ ներկայացված խնդրանքի հիման վրա է, որ կառավարությունը, որուն համբերությունը հատած էր, այլ չկրնալով հանդուրժել իր պետության ասանաններէն ներս անմեղ ժողովրդին վրայ ի գործ դրուած վայրագութեանց և համիշտակութեանց՝ կորովի միջոցներ ձեռք կանէ՛ և 1865»<sup>10</sup>: Գոզան (Միս) կը դրկուին Տերմիշ և Իսմայիլ փաշաները<sup>11</sup>, - զրում է «Միս-Մատան» աշխատության հեղինակ Միսաք Քելչեանը<sup>12</sup>:

Իրականում պետության այս քայլը երկրի անհնազանդ տարրերին սաստելու, ինքնավարության ամեն դրսևորումները վերացնելու, կենտրոնական իշխանությունների հեղինակությունը բարձրացնելու համար նախապատրաստված համալիր միջոցառումների մաս էր կազմում:

Անմեղ Ջնդեթ փաշան, լինելով պատմագիր, իր այցելության ժամանակ կատարված դեպքերի մասին օրպես ականատես

<sup>7</sup> Շարքու, երկայտան քաղաք Ալբանիայում:

<sup>8</sup> Ahmet Cevdet Paşa, *Meââinât*, Yusuf Halıoğlu (haz.), İstanbul, 1980, s. 156.

<sup>9</sup> Կիրակոս Բ (1855-1866) Մսի 36-րդ մասնավոր կաթողիկոսն է Արարական սանձաք-Լրս նախահռչակությանը առաջին անգամ Մսում բացվեց ժառանգափոխաց վարժարան: «Ազգին և պետության օգուին բուխած բաներուն ի գնահատութիւն» սուրբն Արշույ Ազնը ջնդեթի է կրան Ա կարգի մեջիդ շրանչան: Մանյամանտ տն ո Միսաք Քելչեան, *Միս-Մատան Պիրոք*, Տղարան «Նայ ճանաչանի», 1948, էջ 239-241:

<sup>10</sup> Ազգությանը քուրդ Իսմայիլ փաշան այցի էր ընկել Դրիթի պատերազմի ժամանակ և դարձել գեղապետ (միլլապայ), Անմեղ Ջնդեթ փաշայի օգուական էր և «Բարեփոխումների հանձնախմբի» նրամանտաղմերից:

<sup>11</sup> Միսաք Քելչեան, *Միս-Մատան* էջ 241:

շարադրում է իր հայտնի «Ջնդեթի հուշագրեր»<sup>12</sup> (այսուհետև՝ «Հուշագրեր») աշխատության մեջ, որը, մեր կարծիքով, կարևոր աղբյուր է Օսմանյան կայսրության հպատակ հայերի պատմության այդ ժամանակշրջանի դեպքերի, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի նկատմամբ պետության վարած քաղաքականության մասին:

Ամենդ Ջնդեթ փաշայի «Հուշագրեր» աշխատության 38-րդ հուշագիրն ամբողջությամբ վերաբերում է Հայոց եկեղեցուն, մասնավորապես Սսի կաթողիկոսության 1830-60-ական թթ.: Հակիրճ ակնարկից հետո պատմագիրը մանրամասն ներկայացնում է Միսի կաթողիկոսության վիճակը XIX դարի երկրորդ կեսին, անդրադառնում Մայր Աթոռի և Սսի կաթողիկոսությունների փոխհարաբերություններին, որը հանգեցրել էր նաև Կ. Պոլսի հայության երկվիճակվածությանը, դարի 60-ական թթ. Կ. Պոլսի հայ համայնքում ծավալված սահմանադրական շարժմանը և այլն: Պատմագիր Ջնդեթը չի թաքցնում իր համակրանքը Սսի կաթողիկոսության նկատմամբ՝ ամաստալով, որ իր երկրի կառավարող շրջանները պատշաճ ուշադրություն չեն դարձնում այս հարցերին:

Կարծում եմ՝ պատահական չէ պատմագիր Ջնդեթ փաշայի այսչափ հետաքրքրությունը Հայոց եկեղեցու նկատմամբ: Պետականության բացակայության պայմաններում ազգապահպանության դժվարին գործը ստանձնած եկեղեցին հայ ժողովրդի գրեթե միակ համախմբողն էր, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը յուրաքանչյուր հայի համար նաև հայրենիքի խորհրդանիշ էր: Փաստորեն եկեղեցին դիտվում էր որպես հայերի վրա ազդելու միջոց ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ ցարական Ռուսաստանի իշխանությունների կողմից<sup>13</sup>:

Աշխատության մեջ Ջնդեթ փաշան չի թաքցնում իր բացասական վերաբերմունքը հայերի, մասնավորապես Կ. Պոլսի

<sup>12</sup> Tezâkir-i Cevdet, աշխատությունը շարկացած է կարճ հուշագրերից (tezâkir), թվով 39, որոնք նա գրի է առել վերջոյն կրակին՝ պաշտոնական տարեգիր, երես ժամանակ, և հետագայում փոխանցել իրեն հաջորդած տարեգիր Ամենդ Կոյսնի էֆենդիին:

<sup>13</sup> Վ. Դիլյուս, Վ. Ոչտուսի, Հայ ժողովրդի պատմություն և Վ, Երևան, Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1974, էջ 211:



մեծահարուստների, ինչպես նաև երիտասարդ հայ բուրժուազիայի նկատմամբ, որոնց վերաբերումները Էջմիածնի Մայր Աթոռի գեանատվում է որպես հակապետական: Առաջադեմ գործչի համարում ունեցող պատմագիրը շարունակելով թուրքական իշխանությունների քաղաքականությունը վերացնելու Հայաստանի մասին ամեն հիշատակում՝ Աղթամարի կաթողիկոսության մասին խոսելիս Արևմտյան Հայաստանն անվանում է Քուրդիստան<sup>14</sup>:

Ստորև ներկայացնում ենք հայոց պատմական Կրիլիկայի տարածքում գտնվող Միսի կաթողիկոսության մասին գույնիս ամբողջությամբ, որն առաջին անգամ է թարգմանվում հայերեն:

### Հուշագիր 38<sup>15</sup>

(Թարգմանություն)

Այն ժամանակ, երբ Հալեպից Ստամբուլ վերադարձանք<sup>16</sup>, Մսի կաթողիկոսության հարցը դեռևս հեարավոր չէր եղել լուծել, ուստի հարկ համարեցի գրի առնել այս հուշագիրը՝ այդ մասին որոշ տեղեկություններ տրամադրելու համար:

Քրիստոնեության հենց սկզբանական շրջանում միաստվածության և Սուրբ Երրորդության հարցի շուրջ Բզնիկում<sup>17</sup> կայացավ հոգևորականների ժողով: Այդ ժողովին մասնակազած հոգևորականների ձայների մեծամասնությամբ Սուրբ Երրորդությունը որոշվեց, և Արիտի վարդապետությունը<sup>18</sup> չեղյալ հայտարարվեց, իսկ նրա հետևորդներն ամեն տեղից վտարվեցին: Հետագայում Կոնստանտինիեի<sup>19</sup> և Հռոմի եկեղեցիների միջև առաջ եկած անհամաձայնությունը հեարավոր չեղավ հարթել, և նրանք բաժանվեցին իրարից՝ ստանալով Արևելյան և Արևմտյան եկեղեցի անվանումները: Արևմտյան եկեղեցու հետևորդները կոչվեցին

<sup>14</sup> Տե՛ս էջ 161: /

<sup>15</sup> *Cevdet Pasa, Teskir, teskire 21-39, TTK Basmevi, Ankara, 1991, s. 234-239.*

<sup>16</sup> Միսի Զեղեք փաշան գրաղբերել է Հալեպի նահանգապետի (վարի) պաշտակը 1866-1868թթ.:

<sup>17</sup> 325 թ. կայացած Լիզիտի առաջին տիեզերական ժողովը:

<sup>18</sup> Այդ կերի վարդապետությամբ մերժվում էր Քրիստոսի աստվածային էությունը: Մանրամասն տե՛ս *Encyclopedia of Religions and Ethics* vol. I, T. & T. Clark, Edinburgh, 1964, p. 776.

<sup>19</sup> *Konstantinople, Stambouluի անվանումներից է, որը կիրառվել է քաղաքի գրավումից հետո՝ 1453թ., մինչև 1923 թ.՝ Քուրդիստանի Հանրապետության եղանակով:*

կաթոլիկ, իսկ արևելյան եկեղեցու հետևորդները՝ ուղղափառ Քանի որ Կոնստանդինիեն տարված էր քրիստոնեության տարածման և ճանաչման գաղափարներով, իսկ Հռոմն էլ գտնվում էր հնագույն կենտրոնում, Ստամբուլի պատրիարքը և (Հռոմի) Պապը հետևում էին մեկը մյուսի գերագահության ճանաչման սկզբունքին:

Ուշագույն որ Հռոմեական պետությունը բաժանվեց Արևելյան և Արևմտյան կայսրություն կոչվող երկու մասերի<sup>20</sup>, այնպես էլ քրիստոնեյաներն ըստ հավատքի երկու մասի բաժանվեցին: Որոշ ժամանակ անց կրոնական մի հարցի շուրջ կրկին կայացավ հոգևորականների ժողով այս անգամ Քաղցրոյում<sup>21</sup>: Այս ժողովին էջմիածնի եպիսկոպոսը չկարողացավ մասնկացել և իր բացակայությամբ հրապարակված որոշումը<sup>22</sup> չընդունեց: Այդ պահից սկսած Արևելյան եկեղեցու հետևորդները երկու մասի բաժանվեցին, և հայերը հույներից անջատվելով՝ էջմիածնի եպիսկոպոսին հետևեցին և նրան «կաթոլիկոս»<sup>23</sup>, այսինքն համընդհանուր հոգևոր առաջնորդ, անվանեցին: Ավելի ուշ՝ թաթարական արշավանքների ժամանակ, նրանք ավերեցին էջմիածինը<sup>24</sup> և իրենց ձկերի նրամակներով ոստակոխ արեցին: Դրանից հետո հայերն այս կողմեր [Կիլիկիա] գաղթեցին: Կաթոլիկոսն էլ իր ընտանիքի հետ մյասին այտեղ եկավ և Միսում կառուցելով հայոսի վանքը՝ այդ վայրը հոգևոր իշխանության կենտրոն դարձրեց<sup>25</sup>: Այս ընտանիքից մի հոգի էլ Քուրդիստանում գտնվող Աղթամար կղզում մնաց: Այս կերպ հայերի համար երկու հոգևոր կենտրոն ձևավորվեց, և երկուսում էլ սկսեցին եպիսկոպոսներ ձեռնադրել: Սաի կաթոլիկոսն ավելի ընդարձակ հարգանք էր վայելում [հայեր շրջանում], քան Աղթամարի կաթոլիկոսը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ

<sup>20</sup> 395 թ. Հռոմեական կայսրության բաժանումը:

<sup>21</sup> Քաղցրոսի (Kadisy) 451 թ. տիեզերական ժողովը:

<sup>22</sup> Ստեփանոսն տե՛ս u Philip Schaff, *History of the Christian Church*, vol. 3, Hendrickson Publishers, Massachusetts, 1996, p. 744-746.

<sup>23</sup> Մանրամասն տե՛ս Մաղաքիս եպիսկոպոս Օրմանեան, *Առաջադասական Տեղարան Սրբոյ Կաթոլիկ էջմիածնի, Վաղարշապատ*, 1886, էջ 11-15:

<sup>24</sup> Մելգուն թուրքերի արշավանքները Հայաստան 11-րդ դարում:

<sup>25</sup> Մանրամասն տե՛ս Մաղաքիս արքեպիսկոպոս Օրմանեան, *Հայոց ճկնդեցն*, Տեր-Արսեսյան, Կ.Պոլիս, 1911 թ., էջ 74:

Ստամ հաստատվել էր [ամենայն հայոց] զլիսավոր կաթողիկոսը, ում նկատմամբ հայերը բարեպաշտ զգացմունքներ էին տածում: Աստիճանաբար սկսեց ձևավորվել [կաթողիկոսական աթոռի] հաջորդական ժառանգականության սկզբունքը<sup>26</sup>, քանի որ երկու վայրերում էլ կաթողիկոսները նույն ընտանիքին էին պատկանում: Երբ քաթարների կողմից Էջմիածինն հասցված չարագործությունները և վնասները հետևում մնացին, հայերն իրենց էին սրբավայրը վերականգնելու համար Սսի կաթողիկոսին Էջմիածին գաղտ հրավեր հղեցին: [Կաթողիկոսը] սակայն, չէր կարող հետևալ այնտեղից և գնալ [Էջմիածին], քանի որ նրա ընտանիքը Սսի կողմերում էր հաստատվել: Ուստի հայերի կողմից կիրառվեց դրսից կաթողիկոս ընտրելու սկզբունքը: [Սսի] կաթողիկոսը լինելով նախորդ կաթողիկոսի տոհմից՝ հավակնում էր լինել առաջինը հոգևոր առաջնորդների մեջ՝ հաշվի առնելով նաև այն, որ սրբազան մասունքները Սսի մայրավանքում էին գտնվում: Կաթողիկոսական աթոռն [Էջմիածնում] վերահաստատելու համար ընտրվեցին մեծ ներդրումներ ունեցող եպիսկոպոսներ և պատվելի այրեր, ովքեր էլ միաձայն Էջմիածնի եկեղեցու զերագահությունը ձևաաչեցին<sup>27</sup>: Այդ որոշման համար հիմք ծառայեց այն, որ Էջմիածինը հնագույն սրբավայր էր: Այդ կերպ երկու եկեղեցիների<sup>28</sup> միջև մրցակցության սկսվեց: Քոզան (Սյա), Ադանա, Մարաշ (Գերմանիկ), Ջերբուս (Ուլսիա), Գյուրյուն (Գյուրին), Դարեհոն (Դարաեղա, Տարուեղա), Դիվրիկ<sup>29</sup> (Տըրիկ), Մալաթիա (Մելիտաիեն), Բեհիսնի (Պենեսնի), Ուրֆա<sup>30</sup> (Շիսիա), Ռուսթալե<sup>31</sup> (Հոսմկլա), Բիրեջիք (Պիրիջիք, Պիրոնիք), Լիզիք (Լիսիքիև, Մծքին), Այնթապ, Հալեպ (Բերիա), Անթաքիա (Անտիոք), Լազքյե քաղաքներում գտնվող հայկական

<sup>26</sup> «Ժառանգական հաջորդականության սկզբունք» ասելով ներդրում է նկատի ունի նույն տոհմը: Ինչպես գիտեք, կաթողիկոսները հայկական առաքելական եկեղեցում կուսակցոն են:

<sup>27</sup> 1441թ. Վաղարշապատում կրավիթված ազգային-եկեղեցական ժողովի մասնակցների որոշմանով Մայր Աթոռ Սսից տեղափոխվում է Ս. Էջմիածին, և Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Ա Վրդապեցի (1441-1463թթ.):

<sup>28</sup> Կաթողիկոսական աթոռները:

<sup>29</sup> Divriği-Դիվրիի, քաղաք ժամանակակից թուրքիայի հանրապետության Սիվասի նահանգում:

<sup>30</sup> Շահլուրճա նահանգը գտնվում է ժամանակակից թուրքիայի հարավ-արևելքում:

<sup>31</sup> Հոսմկլա, գտնվում է ժամանակակից թուրքիայի Շահլուրճա նահանգում:

եկեղեցիները և վանքերը գտնվում են Սսի կաթողիկոսության ենթակայության տակ: Հայերն ունեն նաև Ստամբուլի և Երուսաղեմի պատրիարքներ և երանց հսկողության տակ գտնվող հոգևոր հաստատություններ: Քանի որ վերջիններս (պատրիարքներն) ունեն եպիսկոպոսի աստիճան, ուստի իրենք չեն կարող այդ աստիճանը շնորհել: Եպիսկոպոսական աստիճան շնորհելու և սրբազան մյուսոն երկելու [իրավունքը] միայն կաթողիկոսին է վերապահված: Արդուհանդերձ, Ստամբուլի [հարցը] պատրիարքն ունի մեն հեղինակություն հայերի շրջանում, քանի որ պատրիարքությունը գտնվում է սուլթանության կենտրոնում, և նրա միջոցով են կաթողիկոսները հարաբերություններ հաստատում Բ. Դոան հետ: Պատրիարքները հաճախ էջմիածնում են եպիսկոպոս ձեռնադրվում կամ էլ ընտրվում են այն եպիսկոպոսներից, ովքեր եղել են այնուհեղ: Այդ էր պատճառը, որ Ստամբուլը (պատրիարքությունը) և հետևորդ հայերը, հակված լինելով դեպի էջմիածին և ջերմ վերաբերմունք ունենալով, ամեն տարի Ստամբուլից էջմիածնի եպիսկոպոսին եվերներ էին ուղարկում: Մի ժամանակ էջմիածնի եկեղեցին գտնվում էր իրանական տարածքում [Իրանի տիրապետության տակ], ավելի ուշ Ռուսական պետությունն Երևանի տարածքը Իրանից գրավեց և իր երկրյի միացրեց, և էջմիածինն էլ Ռուսական պետության մեջ մնաց: Այդ պատճառով էլ Ստամբուլի վերաբերմունքը հայերի նկատմամբ փոխվեց: Լորին գերազանցություն Սուլթան Մահմուդ II խանի<sup>22</sup> օրոք հայ պատվելիներից<sup>23</sup> հայտնի Քազազ Արթին<sup>24</sup> անմիջական մտերմության մեջ գտնվելով [սուլթանի հետ]՝ բարձր հեղինակություն ուներ էր թե նրա [սուլթանի] մտտ և թե ժողովրդի շրջանում<sup>25</sup>: Երբ

<sup>22</sup> Սուլթան Մահմուդ II 1785-1839, խանը սիստոս է, որը գրվում է սուլթանների անունից հետո, նշանակում է տիրակալ:

<sup>23</sup> Ի կեսի ունի ամիրաների:

<sup>24</sup> Y. G. Çark, *Türk Devleti İktisadiye Emalleri 1653-1953* İstanbul, Yeni Matbaa, 1953, s.66: *Մայրաքաղաքի մայրաթիիւն Ամիթայն Յեզմանն Առաջ Անուանկայ ազգայնն տեղութայնն բարձրագոյն Քուրախու Տար. Ղազանցի Վիճ. Լախիթուսի և Պեսարալոյ, 1872: Առն Քիթիածնան, Յարութիւն Ամիթա Յեզմանն և իր ժամանակները 1771-1971, Գտիլըն, 1971:*

<sup>25</sup> Պեզմանը զինավազում էր պատրիարքի խորհրդակցութենների խորհուրդը, և ընդհանուր ամենայն էանաչկան էր որպես «ազգապետ»: Varma Artıncıyan, *Osmanlı Devleti'nde Ermeni Anayasan'ın doğuşu 1839-1863*, Aras Yayınları, İstanbul, 2004, s. 38.

Էջմիածնի եկեղեցին անցավ Ռուսական պետությանը, (Քաղաք Արթինը) հայերին հորդորեց դադարեցնել այնտեղ եկրեկների ուղարկումը: Եւ ամէլի մեծ կարևորություն էր տալիս Սսի կաթողիկոսությանը: Միտր և Ադանան, սակայն, գտնվում էին Քոզան օղլուների տիրապետության տակ, իսկ կրանց միջև ընկած տարածքը քոչվոր ցեղերի ասպատակությունների վայր էր: Այդ իսկ պատճառով հայերը կարծում էին, որ Միս գեալ-գալը հարմար չէր, ուստի Սսի կաթողիկոսության միճակը հարկ եղածի պես հետադարձ չեղավ բարեկարգել:

Ռուսական պետությունը հույս ունի Էջմիածնի միջոցով գրավել և իր կողմը թեքել ամենուր գտնվող հայերին, ուստի ռուսական դեսպանության գլխավոր թարգմանիչն երբեմն հորդորում էր Արուազին գործերի նախարար Աքիֆ փաշային<sup>66</sup>, որ հայերին հրամայվի չդադարեցնել Ստամբուլից Էջմիածնին ըստ սովորության ուղարկվող տարեկան եկիրատվությունները: Սակայն Քաղաք Արթինն, ինչպես որ հայերին էր հորդորում այդ կապակցությամբ [հանգանակությունները դադարեցնելու], այնպես էլ Աքիֆ փաշային բացատրում էր հետևյալը. «Նախկինում, երբ Էջմիածինը գտնվում էր Օսմանյան կայսրության համեմատ ավելի փոքր շահական Իրանի տիրապետության տակ, Ստամբուլն այնտեղիկն [այստեղի գումարները] այստեղ էր քաշում: Այժմ Ռուսիայի նման ուժեղ և հզոր մի պետության ձեռքն է անցել [Էջմիածինը]: Սրանից հետո այստեղիկն [այստեղի գումարները] է այնտեղ քաշվում: Այս կերպ հայերի շրջանում ի հայտ են գալիս Ռուսաստանի համակիրներ: Օսմանյան կայսրությունն էլ տեսնում է այդ և սառչում է հայերի նկատմամբ: Մինչդեռ այժմ Օսմանյան կայսրության ֆինանսական ուժը հայերի ձեռքում է, և բոլոր օսմանցի պաշտոնյաների գումարները և հաշիվները հայ սարաֆների գրասենյակներում է: Օսմանցիների կարծիքով, ամենանարգարժան պատիվն ու նամուսը հայ սպասավորներն են վայելում: Եթե այս վատանությունը կորչի, հայկական համայնքը հսկայական վնասներ կկրի: Իսկ Օսմանյան կայսրությունը քաղաքակառուցական վնասներ կրած կլինի: Ուստի անհրաժեշտ է, որ

<sup>66</sup> Մեմուր Աքիֆ փաշա Քաղաքու (1787-1845) Օսմանյան կայսրության XIX դարի ստացին կեսի նախնի մտերմականներից և պետական գործիչներից էր: 1835-1837թթ. գրավեցրել է Արուազին գործերի նախարարի (Hariciye Nazırı) պաշտակը:

Ստամբուլն արդեն թուլացնի էջմիածնի հետ ունեցած իր կապերը: Այդ պատճառով ստիպել եմ, որ որոշում ընդունվի էջմիածնին նվերներ ուղարկելուն վերջ դնելու մասին: Դուք էլ պետք է աջակցեք դրան»: Աքիֆ փաշան Ռուսաստանի գլխավոր թարգմանչի այդ կապակցությամբ (էջմիածնի հանգանատություններ ուղարկելու) արված հիշեցումներին կարևորություն չի տալիս և մի որոշ ժամանակ կարողանում է խուսափել դրանցից: Թարգմանիչը մի օր Աքիֆ փաշային ասում է. «Դուք էջմիածնի հետ կապված այս հարցը չեք գնահատում ըստ արժանվույն: Մի ազգ որքան որ իր կրոնին և հավատքին հավատարիմ լինի, պետությանն էլ նույնքան հավատարիմ կլինի: Իսկ հայերի նվիրվածությունն իրենց հավատքին միայն էջմիածնի եկեղեցու նկատմամբ եղած կապը ամրացնելով է ուժեղանում»: Դրան ի պատասխան Աքիֆ փաշան ասում է. «Այո՛, այո՛, խնդրի կարևորությունը հիմա եմ հասկանում: Մակայն եթե դուք այս հարցում մեզ համար լավագույն օրինակը դառնաք, մենք էլ ձեզ կհետնենք: Օրինակ, Կազանի և Էժդեքիանի»<sup>77</sup> Էջմիածնի հարցն ամրապնդում այդքան մուսուլման կա: Իսլամական խալիֆաթի հետ սրանց բոլորի ունեցած կապի ամրապնդմամբ են կրոնավորների հրամանները ուժ գտնում: Գլխավորապես այնտեղի ուլեմը եթե կրոնական հարցերը կարգավորելիս շեյխ-ուլ իսլամ էֆենդիին դիմելու սկզբունցով առաջնորդվի, Ռուսական պետության նկատմամբ հավատարմությունն էլ կաճի, ինչի ակնհաստես ենք մենք: Այդպես էլ մենք էջմիածնի նկատմամբ հայերի կապը ամրապնդելու համար հարկ եղած միջոցները ձեռք կառնենք»: Դրանից հետո Ռուսաստանի թարգմանիչն այս հիշեցումներից հրաժարվեց: Այդուհանդերձ դրանից հետո ռուսաստանցիները անմիջականորեն հայերին գրավելու և իրենց կողմը թեքելու ջանքեր են գործադրում և աստիճանաբար հայերի շրջանում մեծաթիվ կողմակիցներ են ձեռք բերում և այս կապակցությամբ մեր անուշադրության կամ էլ անզգուշության հետևանցով շատ բան են շահում: Ռուսական դեսպանության միջնորդությամբ Օսմանյան կայսրությունն իր հպատակներից չափազանց շատ հայ պատվելիների պաշտոններ և [չքա] եղաններ տվեց, իսկ սա էլ նրա քաղաքական շահերին չափազանց շատ վնասեց:

<sup>77</sup> Ejdertan- Usupnuznab

Ռոյալտե որ Ղրիմի պատերազմի ավարտին Բ.Ղոսն կողմից հրապարակված բարեփոխումների հոգևակազդի հասնաձայն հունաց պատրիարքության համար մի սահմանադրություն պատրաստվեց. այնպես էլ հայերը մի սահմանադրության ծրագիր գրի առան և Բ.Ղոսեը ներկայացրին: Այս ծրագիրը գրված էր ֆրանսիական հանդուստության ժամանակներում արված սահմանադրությունների նման: Այն ժամանակ, երբ ես հրավիրվեցի ծառայելու Բ.Ղոսն կողմից ճշգրտումների և ուղղումների համար կազմակերպած հասնաձայնողովի նախագահությունում<sup>38</sup>, ներկայացված հոդվածների 1/3 մասը ջնջվեց, մնացածն էլ հեարավորինս ձևափոխվեց: Ահա հեեց այդ ժամանակ պարզ երևաց, թե նորաթուխ հայ չելերիներն<sup>39</sup> ինչ ճանապարհ են բռնել: Այս հասնաձայնում քննարկման առաջադրված հոդվածներից մեկը վերաբերում էր Միսի և Աղթամարի կաթողիկոսություններում գործածության մեջ գտնվող ժառանգակալության սկզբունքին, որը չեղյալ էր հայտարարվում և սահմանվում դրսից կաթողիկոս ընտրելու հնարավորություն և աղ ծարցերի հետ կապված առանձնահատկություններ, որոնք առեպնում էին սահմանադրությանը<sup>40</sup>: Այդ ժամանակ Բ.Ղոսն ազդեցությունը Քոզանում դեռնս ուժեղ չէր, ուստի այս հարցը ապագային թողնելով՝ որոշում կայացվեց Քոզանի գրավումից և բարեփոխումներից հետո գործընթացին անդադրանալ, իսկ դրանց մասին (Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների) սահմանադրության մեջ խոսք չկար:

Երբ «Բարեփոխումների հասնախմբի» հետ Քոզան էինք մեկնում, Բ.Ղոսեը համաձայնությական ինտրագիր և արձանագրություն ներկայացվեց առ այն, որ Նիկողոս անունով մի նախնկոպոս<sup>41</sup> տեղական հեազույն ավանդության համաձայն ընտրվի

<sup>38</sup> Enver Ziya Kemal, *Osmanlı Tazimi*, s. 161; R.H. Davison, *Reform*, p. 107.

<sup>39</sup> «Լորսթադն չելերիներ» անելով՝ ներխուժն ի նկատի ունի երիտասարդ հայ ազատականների կողմառուն ներկայացուցիչներին՝ Գրիգոր Օռոտնին, Լանդադեո Ռուսիթյանին, Մերուջե Վիլեյանին և մյուս մտադրականներին: Չելերի (թարգմանաբար՝ բարեկիրք; նեհ. պարսեի) ոչ մտադրան հղամարդկանց քրիստոնե, մասնավորապես հայ անարականներին հարցույց ղնվածն:

<sup>40</sup> Եթե, որ կաթողիկոս ընտրելու սկզբունքի շարք կիսվում էին նաև Վ. Ղուսի հայության մասնումները: Նոյրին ասուց կլավ Երուսաղեմի հայաց պատրիարքի մահվանից հետո, երբ պարզ չէր ինչով պնաց է աստեղողվել:

<sup>41</sup> Նիկողոս Նալն, Գրիգորիան (1820-1880), ծագումով սիսեցի, Սսի ինքոս կաթողիկոս (1866 թ.): Մանրաման ան ու Միտայ Քելչյան, *Միտ-Մատան* էջ 226-227:

Սօսի կաթողիկոս, որովհետև նախկին կաթողիկոսը վախճանվել էր, իսկ Լիկոզոսը բացի երանից, որ երա ազգականներից էր, նաև աշխատել էր Միսի կաթողիկոսի մտա որպես կապերի ղեկավար: Ռոտշում կայացվեց առ այն, որ աներածեշտ է Ստամբուլից Միս գնացող հայերի անվտանգ և հանգիստ երթևեկության համար ամեն տեսակ հարմարություններ ապահովելու նպատակով վերանորոգել Սօսի մենաստանը և եկեղեցին, գրանցամատյանում վերագրանցել մենաստանի կողմից ժամանակ առ ժամանակ մշակվող և երան պատկանող մի հողակտորի մայրավանքին միացվելը, քանի որ Քոզանի շրջանում երկար ժամանակ մարդահամար չէր անցկացվել, (բացի այդ) կառուցել մինչև Ադանա տանող մի խճուղի և մեծամեծ իջևանատներ Սօսի ու Ադանայի միջև ընկած տարածքում, որոնք պետք է միացվեն մայրավանքին:

Մի խոսքով, այս կերպ (վերոհիշյ) Ստամբուլի հայերի երեսը դարձնել դեպի Սօսի կաթողիկոսություն: Ստամբուլ վերադառնալուց հետո հարկ եղած ամեն քանց գործադրվեց, որ Սօսի մենաստանի վերանորոգման համար պետությունից հինգ բեռ դուրուշ հատկացվի, որ հայ սարաֆներին և պատվելիներին պատկանող մեկական բաժին ելիքաբերվի, սակայն այդ ժամանակ, եթե նույնիսկ հայերի մեջ կային մարդիկ, ովքեր ցանկանում էին տեսնել Սօսի մենաստանն այդչափ շենացած, այնուամենայնիվ էջմիածնի կողմը հանվածները շատ էին: Իսկ ռուսական կողմնորոշում ունեցողները բացի այն, որ աջակցություն չցուցաբերեցին Սօսի այսչափ փառք ու պատիվ վաստակելու գաղափարի իրականացմանն ուղղված գործադրություններին, նաև թույլ չտվեցին, որ Սօսի շրջանի ժողովուրդն ըստ իր հին ավանդության ինքն իր համար կաթողիկոս ընտրի: Երանք առաջ էին քաշում հաճախ կիրառվող այն սկզբունքը, որի համաձայն հայերի կողմից պետք է ընտրությունն իրականացվեր: Ստամբուլում գտնվող հայոց պատրիարքության ժողովը քվեների մեծամասնությամբ Լիկոզոսի կաթողիկոսությունը մերժեց: Իսկ Լիկոզոսն առաջ. «Ստամբուլի պատրիարքն ինչու է մեր գործին խառնվում: Նա մեր զեկուցագրերն է պաշտոնապես հանձնում Բ.Դռանը: Նա համարվում է մեր պաշտոնական ներկայացուցիչը»: Սօսի շրջանում գտնվող եպիսկոպոսներից ռմանց ներկայությամբ նա բացում է գանձարանը և հայերի համար չափազանց թանկ համարվող իրերը հանում և ինքն իրեն ցողում է սրբազան գեյթունի



յուրով, ապա մեն մենակ անցնում է կաթողիկոսական նստավայր ու նստում: Սա առաջացնում է պատրիարքության ժողովի գայրույթը, և (ժողովը) նրա կաթողիկոսությունը չի ճանաչում և Միս է ուղարկում մի կաթողիկոսի փոխանորդ<sup>42</sup>, իսկ Բ.Ղուրը հաջոց պատրիարքի նստայի հիման վրա Նիկեոզոսին մայրաքաղաք ուղարկելու հրաման է տալիս: Այս ընթացքում մենք էլ Հալեայի վալիի պաշտոնն էինք զբաղեցնում և թեպետ տատանվում էինք այս հրամանի իրագործման հարցում, այնուամենայնիվ Ստամբուլի պեղմանը և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նիկեոզոսն էլ Ադանայում էր գտնվում, Ադանայի մուսասարրըֆի կողմից Նիկեոզոսը մայրաքաղաք ուղարկվեց: Այդ պատճառով էլ պատրիարքության կողմից ուղարկված փոխանորդը թեպետ գալիս է Հալեայի վիլայեթ, սակայն Քոզանի հայերի կողմից չի ընդունվում և չի կարողանում գնալ Միս, ուստի Հալեա է գալիս: Այնուհետև ևս Ալեքսա է գնում և մնում այնտեղ: Իսկ Նիկեոզոսը մայրաքաղաքում աքսորյալի կարգավիճակում էր<sup>43</sup>: Այն ժամանակ, երբ ես որպես Առաջին քաղաքացիական դատարանի նախագահ<sup>44</sup> եկա մայրաքաղաք, այս հարցը դեռևս չէր լուծվել: Թեպետ պատրիարքության կողմից ընտրված կաթողիկոսը Միս է ուղարկվում, սակայն ևս չի կարողանում այնտեղ երկար մնալ և Մարաշ գնալով՝ այնտեղ է ապաստան գտնում:

Աղայունքում էջմիածնի կողմը հակվածները հաղթանակեցին, և Սսի կաթողիկոսության գործերը քայքայված և խառնակ մի իրավիճակում մնացին<sup>45</sup>՝ հակառակ այն բանի, որ Սսի մայրավանքի և եկեղեցու հետ կապված երազանքները, որոնք հեարավոր չնդամ իրականացնել, բխում էին Բ. Ղուսան շահերից:

297 և 298 թթ.<sup>46</sup>

<sup>42</sup> Սսի աթոռի տեղագրան է նշանակվում Ալեքսայի առաջնորդ Մըլուչ Սեֆրանան եպիսկոպոսը: Մադրաման տն՝ ս Մ.արքեպիսկոպոս Օրմանես, Ազգապատան հատոր 9, էջմիածնի, Մար Աթո Ս. էջմիածնի, 2001, էջ 4750-4756:

<sup>43</sup> 1876թ. Նիկեոզոս եպիսկոպոսը ներքև է աջմանում՝ գրավոր հրամարկելով կաթողիկոսական սիպուսից, մնում է Ազանայում իրի առաջնորդ Յիլչեան, Միս-Մառնես, էջ 227:

<sup>44</sup> Divan-ı Ahkâm-ı Adliye, նշանակվել է 1868 թ., մանրամասն տն՝ ս E. Z. Karal, Osmanlı Tarih, s. 166-168.

<sup>45</sup> Մալաթիա արքեպիսկոպոս Օրմանես, Ազգապատան էջ 4901-4912:

<sup>46</sup> Էջմիայի օրացույցով 1297- 1298 թթ. համապատասխանում են Գրիգորյան օրացույցի 1880-1881 թթ.:

## ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋ

2011 թ. ապրիլի 5-ին «Անադոլու» լրատվական գործակալությունը հաղորդեց, թե նույն թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 13:30-ին, Բոդազըլյան գավառում նախատեսվում է ոգեկոչել Հայոց ցեղասպանության ժամանակ Յոզղատի մութասարդիֆի (սանջակի կառավարիչ) տեղակալը և Բոդազըլյանի կայմակամը (գավառապետ) նրանք Մեհմեդ Քեմալի հիշատակը: Թուրքական գործակալությունը նշում էր նաև, թե Քեմալը 1922 թ. հոկտեմբերի 14-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հրապարակած հատուկ օրենքով հռչակվել էր «ազգային նահատակ»<sup>1</sup>:

Հայաստանների հերոսացումը նորություն չէ Թուրքիայում: Ղեռ մեկ ամիս էլ չէր անցել այն օրից, երբ նույն լրատվական գործակալությունը 2011 թ. մարտի 15-ին լուր հաղորդեց, թե «Թալեաթ փաշա կոմիտեի» և «Թուրքական աշխարհի մշակույթի և մարդու իրավունքների» կազմակերպության նախաձեռնությամբ հիշատակի ոգեկոչման արարողություն էր կազմակերպվելու Հայոց ցեղասպանության գլխավոր համակարգող Թալեաթ փաշայի գերեզմանի մոտ: Ի դեպ՝ միջոցառմանը մասնակցելու էր նաև վերոհիշյալ Մեհմեդ Քեմալի թողը՝ Մեհմեդ Քեմալ էրզյուլեթը<sup>2</sup>:

Թուրք ազգայնականները չեն բավարարվում ցեղասպանների հիշատակին հարգանքի տուրք մատուցելով միայն Թուրքիայում կարելի է հանդիպել նման մարդասպանների արձանների, սրանց անունները կրող պողոտաների և, անգամ, դպրոցների:

Ինչպես նշում է թուրք գրող Ղոզան Արեանկյուն, ներկայում «Ուրֆայի նահատակ Լուսրեթի» անունը կրող դպրոցի սաները, ամենայն հավանականությամբ, տեղյակ էլ չեն, թե ում անվամբ է կոչվել իրենց դպրոցը կամ էլ նկատարում են, թե եա եղել է ազգային մեծ հերոս<sup>3</sup>:

<sup>1</sup> "Kaymakam Kemal Bey Anilacak", *Anadolu Haber Ajansı*, 05.04.2011.

<sup>2</sup> "Tali: Paşa'nın Öldürülüşünün 90. Yılı Döndümü", *Anadolu Haber Ajansı*, 15.03.2011.

<sup>3</sup> Doğan Akhanlı, "Ermeni Soykırımı Yaşar Ölünde-1".

<http://www.zurde.org/2011/03/ermeni-soykirimi-yaşar-otunde/>

Այնինչ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Բաքերդի կատավարչի, հետագայում՝ Ուրֆայի գավառապետի պաշտոնները զբաղեցրած Քեհրամկադևի Լուսրիթը ևս Հայոց ցեղասպանությունն իրականացնող կատավարիչներից մեկն էր, որը մահապատժի էր ենթարկվել ոչ թե որևէ օտարերկրյա, այլ հենց թուրքական դատարանի՝ Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի կողմից: Մարդասպաններից, հայասպաններից և ցեղասպաններից ներկայում շարունակում են ոգեշնչվել թե՛ Թուրքիայում և թե՛ Ադրբեջանում:

Այսպես, օրինակ, ներկայում էրգեներոնի գործով մեղադրյալ Վելի Քուլյուշը, Գիրեսունում (Կերասուն) ժանդարմերիայի շրջանային հրամանատարը եղած ժամանակ խորապես ազդվելով Առաջին աշխարհամարտի ընթացքում Ադրվինի և շրջակա բնակավայրերի հայության բնաջնջումն իրականացրած Թուֆալ Օսմանի կենսագրությունից, Գիրեսունում կանգնեցրել էր վերջինիս արձանը<sup>4</sup>: Ադրբեջանում էլ շարունակում են նորածին երեխաներին կոչել հայ սպա Գուրգես Մարգարյանին սպանած ադրբեջանցի Ռամիլ Մաֆարովի անունով:

Ինչ վերաբերում է Յոզղատի մուֆասսարիֆի տեղակալ, Բողազլյանի կայմական Մեհմեդ Քեմալին, ապա վերջինս 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված շուրջ 63 դատական գործերի շարքում առաջինը կայացած Յոզղատի դատավարության երեք մեղադրյալներից մեկն էր:

1919 թ. փետրվարի 5-ին Ստամբուլի ռազմական ատյանում սկսվել էր Յոզղատի հայության տեղահանության և կոտորածների դատաքննությունը, որը ժամանակի օսմանյան մամուլում ստացել էր պատմական դատավարություն» որակումը: Դատը (18 նիստ) տևել է ունեցել 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները նախապես 3 հոգի են եղել՝ Յոզղատի մուֆասսարիֆի տեղակալ, Բողազլյանի կայմական Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թեֆիկը և Յոզղատի վարչաֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆելյագ

<sup>4</sup> "2. Nisan 1923: Soykırım Suçları Karşı Topal Osman Öldürüldü", <http://www.mackisat.org/tarihce-bugun/3355-2-nisan-1923-soykirim-suclari-karsi-topal-osman-olduruldu>.

Ային: 17-րդ նիստում վերջինիս գործն ասանձնացվել է՝ հետագայում քննվելու նպատակով, բայց մնացել է թղթի վրա<sup>5</sup>: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի՝ ամբաստանյալներից Քողազըյանի կարմական Քեմալը դատապարտվել է մահվան, իսկ ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թեֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքաղի<sup>6</sup>:

Նախ՝ հարկ է կշել, որ Յոզղատի դատական նիստերի ժամանակ և հատկապես՝ 1919 թ. փետրվարի 22-ի նիստում ընթերցվել են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հատկապես՝ ծածկագիր հեռագրեր, որոնց վավերականությունը հաստատելուց հետո է միայն ռազմական դատարանը մահվան դատապարտել Քեմալին<sup>7</sup>:

Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 12-ին Յոզղատի կառավարիչ (մութասարիֆ) Ջեմալ բեյը գրավոր ցուցումներ էր տվել հեռաքննիչ հանձնաժողովին, համաձայն որոնց՝ տեղահանության գործի մեջ ընդգրկված էին եղել նաև տեղի ոստիկանները: Յոզղատ քաղաքից ու շրջակա գյուղերից տարագրված հայերը կոտորվել և բնաջնջվել էին ոստիկանների, հրոսակախմբերի ու բնակչության կողմից<sup>8</sup>:

Յոզղատի դատավարության երրորդ նիստում հաստատվել է, որ Յոզղատի հայերի կոտորածներին տեղի բնակչության մասնակցությունն ապահովել ու խրախուսել էին մեղադրյալներ Քեմալը և Թեֆիկը: Այսպես՝ քաղհայցվորի ներկայացուցիչ Լևոն Տերիդը վկայել է. «Քեմալը հայոց ողբերգության թատերաբեմներից Գյուլլեր գավառակում կատարված կոտորածի առեղծայնամբ ասել էր. «Թառերական ներկայացման նեք գեռու»: Մեղադրյալը, Գյուլլերի մահմեդական բնակչության ֆանատիկ զգացումները զրգոող ելույթ ունենալով, ապահովել էր, որպեսզի ջարդերին

<sup>5</sup> Տեյագ Ային բառուցի ազատ է արձակվել, որպեսզի նկարագրության ունենա ներկայատու մեկ այլ շրջանում գտնվող դատարանին, որը պետք է քննել իր գործը, սակայն նա ուղիղովել է Անկարա և գրառամարտը ընտրվել Անկարայի եղբայրաց Ազգային ժողովում, տե՛ս Vahakn N. Dadrian, *Taxer Akcam, "Tebcir ve Takir", Dizan-i Herb-i Orst Zabitleri, Iticid ve Terakki'ine Yaryulanan 1919-1922, Istanbul, 2006, s. 194.*

<sup>6</sup> *Takir ve Tebcir*, No 3617, 7 Ağustos, 1919, ss. 1-2.

<sup>7</sup> Գրիկեր, *Յոզղատի ծայրայանություն փանդաղցաման պատանդները*, Նիս Երցք, 1980, էջ 66:

<sup>8</sup> Գրիկեր, *Յոզղատի ծայրայանություն փանդաղցաման պատանդները*, էջ 125:

մասնակցեր կան տեղի բնակչությունը: Քեմալը, տառապող ժողովրդի հեծեծանքները և տանջանքները դիտելով, կարգի է եր ծխել, իսկ ժանդարմերիայի հրամանատար Թնֆիկը, էլ ուրիշ ունենալով, խցախուսել էր բնակչության մասնակցությունը կոտորածին և հրացանով անձամբ սպանել երեք հոգու<sup>9</sup>:

Միևնույն եփառում Անոն Ֆերիզը նշել է «Կոտորածի թառերաբեմ դարձած Գյուլերում 6000 հոգու սպանությունը հայտնի է այն դիակների շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրի մարմնի տեղամասերը կտրատված են եղել որևէ կողմից: Դա հայտնաբերվել է բժշկական հանձնաժողովի կողմից կատարված դատաբժշկական գնահատման շնորհիվ»<sup>10</sup>:

Նույն եփատի ժամանակ անդրադարձ է եղել նաև բողոքական հայերի տեղահանությանը, ովքեր, օրենքի համաձայն, չպետք է ենթարկվեին արքայի: Ըստ քաղհայացվոր Հայկի՝ «...երբ իր մայրը Քեմալ բեյին ասել էր, թե ինքը բողոքական է, և խնդրել տեղահանության չենթարկել իրեն, Քեմալը պատասխանել է, թե իր կարծիքով բոլորը մեկ են՝ բողոքական, թե կաթոլիկ, բոլորը հայ են և հեռանալու են»<sup>11</sup>:

1919 թ. փետրվարի 11-ին տեղի ունեցած չորրորդ եփառում հանդես է եկել վկա Արթինը, որը հայտնել է «...հայերին ութ-ութ կապել են իրար և Ցոզղատից դուրս տարել, խլվել են հայերի մոտ գտնվող թանկարժեք իրերը, դրամը, կողոպտիչները կանանց հարբեցրել են Օսման փաշա դերվիշների մենաստանի մուտակայքում, Ցոզղատի մութասարիճի տեղակալ, Բողազլույանի կայմակամ Քեմալ բեյը 500 հեծյալ ավազակախմբով եկել է Գյուլեր, մահապատժի են ենթարկել նախ՝ քահանայի փոքրիկ երեխային, ապա՝ կնոջը և այնուհետև՝ քահանային, որից հետո Քեմալը, դուղուկ նվազելով, քաջալերել է մարդասպաններին՝ ասելով «Դուք չգիտեք՝ ինչպես կոտորել»: Չեթենեղը (ավազակախմբերը)

<sup>9</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 10 Şubat, 1919.

<sup>10</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 10 Şubat, 1919.

<sup>11</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 10 Şubat 1919. 1915 թ. մարտի 2/15-ի գազանի երեսնակի համաձայն՝ Դեր Ջոր արքայանոց ենթակա էին նաև օսարսահպատակ հայերը, տե՛ս Արսն Ավագյան, 1915 թ. Օսմանյան թուրքիստան օսարսահպատակ և վասալառու հայերի տեղահանման խնդրի վերաբերյալ (թուրքական արժինի մեկ վասալառուի եփանս վրա), *Բանբեր Հայաստանի պեյրիվենդի* թիվ 2 (106), Երևան, 2005, էջ 194-197:

Քննալ բեյի այս խոսքերից հետո սկսել են ամենայն դաժանությամբ կոտորել ամեն պատահածի»<sup>12</sup>:

Մինևույն նկատում որպես վկա ցուցմունքներով հասնես է եկել նաև Յոզղասի նախկին պատգամավոր Շաքիր բեյը, որը դատարանին հայտնել է, թե ինքը տեղի կատավարչին դիմել է հայերի կոտորածները դադարեցնելու համար, բայց՝ ապարդյուն<sup>13</sup>:

Յոզղասի դատարանության 1919 թ. փետրվարի 12-ի նկատում դատարանին տրված վկայությունների շարքում հիշատակման են արժանի հասկապես հայ վկա Օմեհի Վատվաթյանի ցուցմունքները, որոնք առնչվում էին նաև բնի կրտսեպիոյանս դեպքերին. «...Այդպես բերվեցինք Օամահ փաշա դերվիշների մնաատան, այնտեղ էր գտնվում նաև յոզղասցի սուրիկան Լուման էֆենդին, և ահա այստեղ գտնվող Տեյյազ բեյն ու Լուման էֆենդին վերցրեցին մեզ մտո գտնվող դրամները և հրամայեցին մեզ ուղարկել Յենեղ, գիշերը ինձ և մեկերկու աղջկա ևս ասացին. «Ձեզ մուսուլման ենք դարձնելու. մնացե՛ք այստեղ», և պահեցին: Մյուսներին տարան 50-60 սաղերով: Այդ օրն այնտեղ էր նաև մեղադրյալ Քննալ բեյը: Ձեռքին թուր՝ եկավ մեզ մտո և հետևյալն ասաց իր մարդկանց. «Եթե դուք սրանց բռնորին էլ, ինչպես որ հարկն է չսպանեք, և՛ս ձեզ կսպանեն: Մի թե մեր մաջրեն այսօրվա համար չեն ծնել մեզ: Դե՛հ, ի՛նչ եք կանգնել, գնացե՛ք, կոտորե՛ք: 6 տարեկանից մինչև 70 տարեկան՝ բոլորի՛ն կոտորե՛ք: Այնտեղ հենց իմ աչքի առաջ կոտորեցին բոլոր մարդկանց՝ ցորեն հեձնելու պես, ինձ էլ մորս գրկից խլեցին՝ սպանելու համար, հարվածեցին գլխիս: Մպանվածների գրպանները դատարկեցին, երեկոյան մեզ ուղիղ տարան կալմակամություն: Այդ կատավարիչ Քննալ բեյն այնտեղ մեկ անգամ ևս ծեծեց ինձ և սեփական ձեռքերով խլեց զգեստիս տակ գտնվող 1 լիբայի հասնող գումարը, սպա ուղնկցորդներին հրամայեց սպանել ինձ, սակայն վերջիններս ինձ փախցրեցին ու տարան Փուլ գյուղը, որտեղ Աղղզուզկ անվամբ մի ժանդարմ, ինձ իր հետ վերցնելով, տարավ Նոջիրլի գյուղը, այստեղ տասնապետ Անմուդն ինձ 6 ամիս պահեց իր տանը, սպա էս փախստ այն ախոռից, որտեղ ինձ փակել էին»<sup>14</sup>: Դատախազի այն հարցին, թե

<sup>12</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 12 Şubat, 1919.

<sup>13</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 12 Şubat, 1919.

<sup>14</sup> "Tarihî Muhakeme", *Alemdar*, 13 Şubat, 1919.

Օճեկին ինչպես է ազատվել կոտորածից, վերջինս պատասխանեց, թե իսկամ է ընդունել և այդպիսով փրկվել մահից<sup>15</sup>:

Լույս եփստում հանդես եկած վկա Ազելիվ Իբրանուսյանը շազմական ասոյանին հայտնել է, թե մտա 860 տուն ոչ մահմեդական բնակչություն էր բռնագաղթեցվել, ինքն էլ էր եղել նրանց մեջ, մի մասն ուղարկվել էր Թաշփընսար և այստեղ կոտորվել, իսկ մեղադրյալ Քեմալ բեյն իր ռճիրների համար վատտահել էր «մտագործ կայմակամ» մականունը<sup>16</sup>:

1919 թ. փետրվարի 15-ին կայացած 6-րդ եփստում վկա Ստեփանը ցուցումներ էր տվել առ այն, որ եսխ՝ Գյուլլեր, ապա՝ էլեքչիլեր արքայական հայերը կացիներով, քունզներով և գեղանդիներով սպանվել են տեղի գյուղացիների կողմից: Վկան հայտնել է, որ ջարդին ներկա են եղել նաև ամբաստանյալները, և որ կոտորվել է իրենց ողջ թաղամասը<sup>17</sup>:

1919 թ. փետրվարի 18-ին կայացած 7-րդ եփստում հանդես եկած վկաներից Անկարայի 15-րդ կորպուսի հրամանատար, գեղապետ Հալիլ Ռեջային վկայել է, որ «ըստ մայր Եահաբ բեյի<sup>18</sup> ստացած ծածկագիր-հեռագրի՝ Բողազլըյանում բնաջնջվել էին 2-ից 3 հարյուր հայեր»<sup>19</sup>:

**«Հալիլ Ռեջայի- Հանցագործությունների հետաքննիչ** հանձնաժողովում էլ են ինձ հարցրել, թե Բողազլըյանից հեռագիր ստացել եմ, թե ոչ: Կարծեմ՝ նման մի հեռագիր է ստացել Եահաբ բեյը, այն վերաբերել է 2-3 հարյուր հայերի բնաջնջմանը: Հեռագիրն ինձ մտո չէ: Այն պեսթ է որ հղված լինի Կալսերիից Անկարա:

**Դատախազ- Ի՞նչ պատճառներից ելնելով է Ռազմական գերատեսչությունը զբաղվել տեղահանության խնդիրներով:**

**Հալիլ Ռեջայի- Տեղյակ չեմ: Ինձ նման հեռագիր հասավ, ես էլ այն հանձնեցի զլխավոր հրամանատարությանը: Եահաբ բեյից չեմ հարցրել պատճառների մասին: (...)**

**Դատախազ- Որտեղի՞ց է Եահաբ բեյը նման տեղեկություն ստացել:**

<sup>15</sup> "Tarikh Mshakeme", *Alexander*, 13 Şubat, 1919.

<sup>16</sup> "Tarikh Mshakeme", *Alexander*, 13 Şubat, 1919.

<sup>17</sup> "Kad ve Tehcir De'yan", *Memsuket*, 16 Şubat, 1919.

<sup>18</sup> Եահաբ բեյը եղել է Կեսարիայի 15-րդ կորպուսի հրամանատարը:

<sup>19</sup> "Tarikh Mshakeme", *Alexander*, 19 Şubat, 1919.

Հայիկ Ռեջայի- Բողազլյանից<sup>20</sup>:

Նույն նիստում լսել են նաև ազգությամբ հույն վկա Հրիսթաքի Անդրեյադիսին, որը հանդես է եկել հետևյալ վկայությամբ. «331 թ. (1915) հուլիսի 24-ին՝ ուրբաթ առավոտյան, հրաման եկավ, և Ջեմալ բեյը<sup>21</sup> տեղահանությունն սկսեց: Աքսոբյալների առաջին խումբը հաջորդ օրը տարագրվեց Սվաս: Երկրորդ խումբը նույնպես Սվաս (Սեբաստիա) ուղարկվեց: Հայերի երրորդ խումբն աքսորվեց Կայսերի (Կեսարիա): Այդ ժամանակ Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը<sup>22</sup> հայերին քնաջնջելու վերաբերյալ բանավոր հրամաններ տվեց: Ջեմալ բեյը չհամաձայնեց դրան: Գնաց Զորում: Լսեցինք, որ պաշտոնից ետացվել է կրան փոխարինեց Քեմալը: Լսեցինք, որ քնաջնջվել են միայն Բողազլյանի հայերը: (...)

Այնուհետև ժողովուրդին զույգ-զույգ տարել են Բաղլըջայի և Բեզլիհանի կողմերը: Լցրել են մի փարախի մեջ, որի շուրջը ճահճուտ է եղել, և այնտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-թաքնվածներին էլ բացահայտելու նպատակով ասել էին, թե իսկամ ընդունածները փրկվելու էին, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, կրանց էլ էին կոտորել»<sup>23</sup>:

Յողղատի դատաքննության 9-րդ նիստում, որը տևել է ունեցել 1919 թ. փետրվարի 22-ին, դատարանի նախագահ Հայրեթ փաշան դատական քարտուղարին խնդրում է ընթերցել մի շարք ծածկագիր հեռագրեր, որոնցից մեկում դիվիզիոնի հրամանատարը կորպուսին էր հաղորդում Բողազլյանում 1500 հայերի սպանության մասին, իսկ մյուսում, որը կրում էր 207 համարը, նշվում էր, որ Բողազլյանում և շրջակա քնակավայրերում քնաջնջվել էին 360 հայեր<sup>24</sup>:

Սույն դատական գործընթացի 10-րդ նիստում, որը կայացել է 1919 թ. մարտի 5-ին, վկաներից ունկեղության է արժանացել

<sup>20</sup> "Katil ve Tehcir De'vân", *Afemleket*, 19 Şubat, 1919.

<sup>21</sup> Յողղատի մութասարրիֆը:

<sup>22</sup> Յողղատում Միություն և առաջադիմության կուսակցության պատվիրակը եղել է Լեզաթի բեյը:

<sup>23</sup> "Katil ve Tehcir De'vân", *Afemleket*, 19 Şubat, 1919.

<sup>24</sup> "Katil ve Tehcir De'vân", *Afemleket*, 23 Şubat 1919. Սույն նիստում ընթերցված մյուս ծածկագիր հեռագրի մասին տե՛ս Գրիֆէր, *Եռզրասթ Հայաստանութեան փոերազոսման պատմությունը*, էջ 61:



Թոքաթի մութասարրիֆը, որն ասել է, թե հայերի սպանությունների փաստը հայտնի է եղել բոլորին<sup>25</sup>:

Լույս եխառում որպես վկա լսվել է նաև վարչական տեսուչ Լեղիմ բեյը, որը հայտնել է, թե ըստ իրեն հասած խոսակցությունների՝ տարագրված 140 հոգանոց հայկական քարավանին զիջերը փակել են մի փարսխում և գաղազաններով ոչնչացրել: Վկան նաև շեշտել է, որ հայերին աքսորել են որոշ գյուղերից, և որ ճանապարհին նրանք ենթարկվել են սովազակախմբերի հարձակումներին<sup>26</sup>: Այս նիստում ևս ընթերցվել է Շահաբ բեյի զեկուցումը, ըստ որի՝ Բողազլյանի տեղահանության ժամանակ կատարվել են սպանություններ և չարաշահումներ: Լերկայացվել է ևս երկու զեկուցում: Դրանցից առաջինում, որը հաղորդվել էր ժանդարմերիայի կողմից, նշվում էր, թե 36 հայերից 11-ը սպանվել էր երոսակախորների կողմից, և մյուսները կտատրվել էին հետագայում, իսկ երկրորդ զեկուցումը, որի վրա նշված էր «գաղտնի» բառը, վերաբերում էր Բողազլյանի տեղահանությանը<sup>27</sup>:

Յոզղատի դատավարության ընթացքում բացահայտվել է, որ հայերի քարավանները հսկելու նպատակով պետության կողմից ուղարկված մարդիկ ևս տեղի բնակչությանը հրահրել են հայերի դեմ: Այսպես՝ 1919 թ. մարտի 24-ի նիստում դատախազ Հարալամբու էֆենդին ամբաստանյալ Քեմալին հարցրել է, թե հայերի քարավանները ծակելու և կարգուկանոնը պահպանելու նպատակով ուղարկված Արդուլլահը ինչու էր խառնակություններ հրահրել բնակչության մեջ: Դատախազը եզրակացրել է, թե պետական պաշտոնյաների անկայության պայմաններում պետության կողմից նման անձանց ևս ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդել<sup>28</sup>:

Ամբաստանյալ Քեմալ բեյի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ ինքը ստորադասներին հրամայել էր տեղահանությանը վերաբերող հրամանների մի մասն ընթերցելուց հետո այրել: Այդ մասին Քեմալին հիշեցվել է նաև 1919 թ. մարտի

<sup>25</sup> "Kati ve Tehcir De'vân", *Mémoréec*, 6 Mart, 1919.

<sup>26</sup> "Kati ve Tehcir De'vân", *Mémoréec*, 7 Mart, 1919.

<sup>27</sup> "Kati ve Tehcir De'vân", *Mémoréec*, 7 Mart, 1919.

<sup>28</sup> "Divân-ı Harb'î Tehcir Mühakemesi Başlıd", *Akşam*, 25 Mart, 1919.

24-ի նիստում: Քնն Քեմալ բեյը փորձել է եերքել իր ցուցմունքը, սակայն դատախազ Հարալամբո էֆենդին հաստատել է այդ փաստը:

«Նախագահ- Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովին Չիր տված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման է եղել, իսկ մնացածը որսուել է:

Քեմալ բեյ- Բուլոբն էլ պահպանվել են, էֆենդի՝ Ճիշտն ասած՝ այդ օրը շատ հոգնած էի. ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ- Ես, Հետաքննիչ հանձնաժողովի անդամ լինելով, հարկում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, եետո՝ զղել»<sup>29</sup>:

Միևնույն նիստում դատարանի նախագահի կողմից եիշատակվում է Յոզղատի հոգևոր առաջնորդի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի՝ մյուսֆոխն փորձել է խրատել Քեմալին, իսկ վերջինս ասել է. «Ու կատավարությունից բարեզու ք ես»<sup>30</sup>:

Սույն դատաքննության ընթացքում ամբաստանյալները փորձում էին իրենց արդարացնել՝ վկայակոչելով կատավարության կողմից ստացված հրամանները: Դատախազների ընթացքում երանց տված ցուցմունքների համաձայն՝ կատավարությունը գոյության միջոցներ չէր տրամադրել հայերի քարավաններին<sup>31</sup>:

Յոզղատի դատավարության 1919 թ. մարտի 27-ի նիստի ժամանակ եույն փաստարկով է իրեն փորձում արդարացնել ամբաստանյալներից Քեմալը:

«Նախագահ- Ճիշտն ասա. հայերին բնաջնջելու մտադրությունները անձևակա ն, թե մնկ այլ դրդապատճառ ունեին:

Քեմալ բեյ- Քա՛վ լիցի, փաշա՛, հայերին բնաջնջելու հրահանգ երբեք չեմ տվել:

Նախագահ- Մի թե Յոզղատը գործողությունների թատեքարենից դուրս էր:

Քեմալ բեյ- Ո՛չ, էֆենդի՛:

<sup>29</sup> "Divan-ı Harb'îde Tehcir Mubakemeti Başladı", *Alemdar*, 25 Mart, 1919.

<sup>30</sup> "Divan-ı Harb'îde Tehcir Mubakemeti Başladı", *Alemdar*, 25 Mart, 1919.

<sup>31</sup> "Divan-ı Harb'îde Tehcir Mubakemeti Başladı", *Alemdar*, 25 Mart, 1919.

Լախագան- Ռնչու<sup>21</sup> մի խումբ արտոդրյալներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

**Ֆեմալ բեյ-** Միջոցներ չկային, էֆենդի<sup>22</sup>, ես կատարել եմ կատավարության կողմից ստացված հրամանը<sup>23</sup>:

Մինևույն եխատում դատարանին ցուցմունքներ տված վկա Մեհմեդ բեյը, որն անգլոսպաստակ գեղապետ էր, հարտեղ է, թե ինքն անձամբ է տեսել, թե ինչպես են կացիներով ու դաշույններով հայերին կոտորում<sup>24</sup>: Մեհմեդ բեյը նշել է, որ հայերին կոտորել են Քարաբուշ լեռնահովտում<sup>25</sup>:

Դարձյալ 1919 թ. մարտի 27-ի եխատում հանդես եկած վկաներից Սլյուտարի մութասարրիֆ Մեհմեդ Ալի բեյը չի բացատրել հայերի կոտորածների և պաշտոնյաների և տեղի բնակչության մասնակցության հավանականությունը, սակայն, ըստ վկայի ցուցմունքի, դա հեռաքավոր էր կատավարության կողմից տրված գաղտնի հրամանի դեպքում միայն<sup>26</sup>:

1919 թ. ապրիլի 8-ին կայացած դատավճռով մահապատժի դատապարտված Մեհմեդ Ֆեմալը կախադան է բարձրացվել երկու օր անց՝ ապրիլի 10-ին Ստամբուլի Բայազետ հրապարակում: Բողազլոյանի զավառապետ Մեհմեդ Ֆեմալի մահապատժիժը (1919 թ. ապրիլի 10) խիստ վրդովմունքի տեղիք է տվել թուրք հասարակության մեջ: Լախի՝ մահապատժի արարողությունն ինքնին կատարվել է ոչ ընդունված կարգով: Ըստ օրենքի՝ կախադանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում ևսիքան արևածագը, դատապարտյալի մարմինը հրապարակում էր մեռում ևս 5-6 ժամ, ապա՝ անշուք կերպով թաղվում: Մինչդեռ Ֆեմալի մահապատժիժն ի կատար է անվել կեսօրից հետո՝ ժամը 19:20-ին<sup>27</sup>: Արարողությանը մասնակցել են բարձրաստիճան պաշտոնյաներ ու հոծ բազմություն: Մահապատժից հետո Ֆեմալի դիակը դրվել է Բայազետ մզկիթի լվացարանում գործողություն,

<sup>21</sup> "Tebcir ve Taktir Muhakemesi", *Almanak*, 28 Mart, 1919

<sup>22</sup> "Tebcir ve Taktir Muhakemesi", *Almanak*, 28 Mart, 1919

<sup>23</sup> "Katil ve Tebdir Da'vân", *Memleket*, 28 Mart, 1919.

<sup>24</sup> "Tebcir ve Taktir Muhakemesi", *Almanak*, 28 Mart, 1919.

<sup>25</sup> "Kenzal Bey İdarı Oludu", *Almanak*, 11 Nisan, 1919.

որն անթույլատրելի էր մանապատժի դեպքում<sup>33</sup>: Մանապատժի հաջորդ օրը մեծ շուքով կազմակերպվել է Քեմալի թաղման արարողությունը, որին մասնակցել են առավել քան 10 հազար ցուցարարներ: Ոճրագործը հռչակվել է «ազգային նահատակ», նրա այրին ու զավակները՝ վերցվել ազգային խեղամակառության տակ և, ինչպես նշում է Արամ Անտոնյանը, «Այն թուրք ժողովուրդը որ հանրային հանգանակութեանց իր քսակը այն ատեն միայն կը բառայ, երբ վիզը կը սեղմեն, ինքնաբերաբար, 5-10 օրուան ընթացքին 20 հազար օսմ. ոսկի գումար մը հանգանակելով, յահճենց Քեմալ պեյի այրիին»<sup>34</sup>:

Այսպիսով՝ Քեմալի պես ոճրագործների հերոսացման պատմությունը ձգվում է մինչև իր ապրած ժամանակները: Այսօր ևս նման ցեղասպանների ռզեկոչման արարողություններին շարունակում են մասնակցել թուրք հասարակության պատկառելի թվով ներկայացուցիչներ, քանի որ հենց նման հարասպանների շնորհիվ է այսօրվա թուրքիան դարձել «ազգային պետություն»:

<sup>33</sup> Գրիկեշ, *Շոգրատի ճարտարապետական վանքացրտաբան պատմություն*, էջ 330:

<sup>34</sup> Արամ Անտոնյան, *Մեծ աֆյոզ*, Ղաթրե, 1921, էջ 272:

## ՕՍՄԱՆԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԵՆԱՀԱՅԵՐԻ ԲՈՒՒ ԻՍԼԱՄԱՅՄԱՆ ԽՂԻՐ ԵՈՒՐՁ

Մն ծովի հարավ-արևելյան ափերում եևուց ի վեր հայկական ներկայության մասին փաստող տարբեր աղբյուրներ կան: Մերան-ծովյան տարածքներում հայերի թիվը զգալիորեն ավելացավ 8-րդ դարի վերջին, երբ արաբական հարկադրի կեղեքումներից ազատվելու համար հայոց Շապուհ և Համամ Ամառուսի իշխանները 12000 բնակչությամբ Արագածոտն և Կոտայք գավառներից արտագաղթեցին Բյուզանդիայ և հաստատվեցին Մն ծովի հարավ-արևելյան ափամերձ շրջաններում: Ավելի ուշ Համամ Ամառուսի իշխանը այնտեղ կառուցում է մի քաղաք՝ այն իր անունով կոչելով Համամաշեն, որը եևուագաբամ վերածվում է Համշենի: Հենց այդ անվամբ էլ շրջանի հայ բնակչությանը սկսում են անվանել համշենահայեր և այս տերմինը եևուագաբամ աշխարհագրական ավելի լայն տարածում է տուանում:

Հայտնի է, որ հայերը Օսմանյան կայսրությունում պարբերաբար եևթարկվել են տարատեսակ հալածանքների, որոնցից անմասն չեն մնացել եևս Համշենի հայերը: Այդ հալածանքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում բռնի կրոնափոխության քաղաքականությունը, որը թուրքական իշխանությունները Մն ծովի ափամերձ շրջաններում բնակվող հայության եևկատմամբ առավել ակտիվ սկսել են կիրառել արդեն 16-րդ դարի վերջին: Առկա աղբյուրները, զրահանությունը ցույց են տալիս, որ բռնի իսլամացված հայերի պատմության մեջ առավել ուսումնասիրված կարելի է համարել համշենահայերի իսկոյրը: Օսմանյան տիրապետության շրջանում հայերի բռնի իսլամացման համար կիրառված մեթոդները ունեն բազմաթիվ ընդհանրություններ, ուստի համշենահայերի կրոնափոխության ուսումնասիրությունը եևս հստակ պատկերացում է տալիս Օսմանյան կայսրությունում ընդհանուր իսլամացման քաղաքականության վերաբերյալ:

Օսմանյան թուրքերը 1453թ. զրավելով Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդուպոլիսը՝ եևր թափով շարունակեցին իրենց առաջխաղացումը: Որոշ ժամանակ անց՝ 1461թ. զրավեցին եևս Տրապիզոնի կայսրությունը: Կարելի է ասել, որ Մն ծովի

հարավ-արևելյան ափերի ոչ մուսուլման բնակչության ուժացման քաղաքականության որոշակի տարրեր արդեն նկատելի էին այդ ժամանակ, սակայն կարծիքներ կան կան, որ բոնի իսլամացման առավել ակտիվ փորձերը սկսվել են 16-րդ դարի վերջերից<sup>1</sup>: Կիրառված սիստեմատիկ քաղաքականության հետևանքով թուրքերին հաջողվեց բոնի իսլամացման ենթարկել տարածաշրջանի ոչ մուսուլման մի շարք ժողովուրդների՝ հույներին, լազերին, վրացիներին և համշենահայերի մի մասին: Ինչպես իրավացիորեն նկատում է հայազգի արևելագետ Մ. Կոնդաքյանը, թուրքերը ձգտում էին իսլամացնել հատկապես քրիստոնյա Ռուսաստանին ստեմանակից ազգերին՝ ստեղծելով յուրանառուկ կրոնական պատենեք քրիստոնեության և Ռուսաստանի դեմ<sup>2</sup>: Սակայն հարկ է հատուկ շեշտել, որ մերձսևծովյան ոչ մուսուլման ժողովուրդներից բոնի իսլամացման քաղաքականությանը ամենաերկարը դիմադրեցին համշենահայերը և ավելի ուշ միայն երանց մի հատված ստիպված կրոնափոխ եղավ: Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ Համշենում իսլամացումը տեղի է ունեցել գերազանցապես բոնի մեթոդներով, մասիվան սպառնալիքի տակ և կեղծ են թուրքական այն տեսակետները, համաձայն որոնց հայերը կամովին են ընտրել իսլամը: Մրան զուգահեռ ավելորդ չէ նկատել նաև, որ թուրքական իշխանությունները Համշենում նս փորձել են կիրառել շահագրգռելու քաղաքականությունը, որպեսզի մարդիկ «կամովին» իսլամ ընդունեն<sup>3</sup>: Կան փաստեր, որոնք վկայում են, որ Համշենում իրականացվել են բոնի իսլամացման քաղաքականության այլ մեթոդներ նս. այսպես, Մաշուսցի անվան Մատենադարանում պահվող 1531 թվականի մի ձեռագրից տեղեկանում ենք, որ Համշենում հայ բնակչության շրջանում անցկացվել են մանկահավանքներ (դեշիրմե). *«Թվին 20 /-1531/ սուլթան Սուլեյմանն՝ որ է Մելիսի տղայն ենիյարա համար տղայ ժողվեց ի*

<sup>1</sup> Լուսինե Մանակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բոնի մանկապետական քաղաքականության հետևանքները, *Քաղաքացիական և օսմանադիստական ձեռագրատառիչներ*, Ռուսեն Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, հ. IV, Աստիկ, Երևան, 2006, էջ 216-218:

<sup>2</sup> Քեֆի Կոնդաքյան, *Турция: история культуры и религии*, Ерewan, Издательство АН Армянской ССР, 1983, стр. 22.

<sup>3</sup> Բարևուկ Քաղաքյան, *Հայ ազգացրություն և բոնածրատության*, Երևան, ՀՀ ԳԱԱ երասարակցություն, 1981, հ. 13, էջ 67:



*Առտպագարի գեղերն ու քաղաքներ...»* Հայր Հակոբոս Տաշյանը կարծում է, որ Համշենի բռնի իսլամացումը սկսվել է 17-րդ դարի վերջերին և շարունակվել ամբողջ 18-րդ դարի ընթացքում<sup>9</sup>։ Լույն կարծիքին է նաև Մխիթարյան միաբան Հայր Ղուկաս վարդապետ Իճնիճյանը, որը 1806թ. գրում է *«Քանիցք երկրին յառաջագոյն հայ էին, այլ ի յնա ժէ դարուն եւ ի սկիզբն ժՇ-երրորդին առհասարակ հանդերձ ամբողջ շրջակայ գիւրջըլխք դարձան ի տաճկութիուն...»*<sup>10</sup>։ Այն, որ մինչև 18-րդ դարի սկիզբը Համշենի հայության շրջանում իսլամացվածները մեծ թիվ չեն կազմել փաստում են տարրեր աղբյուրներ, որոնց թվում խիստ կարևոր են օսմանկան աշխարհագիր մատյանները<sup>11</sup>, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունը ներկայացրել է թուրքագետ Լուսինե Մանուկյանը։ Համշենահայերի բռնի իսլամացման քաղաքականությունը ակտիվորեն դրսևորվել է նաև 19-րդ դարի վերջին քառորդին, որն իր վերջնակետին է հասել 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին։ Բռնի իսլամացմանը զուգահեռ և դրանից խուսափելու համար համշենահայերը դիմել են նաև գաղթի, որի հետևանքով լայնացել է երանց աշխարհագրական ավտվածությունը։

Ավելորդ չէ նկատել, որ այսօր Թուրքիայի տարածքում բնակվող կրոնափոխ համշենահայերի յուրահասակություններից է այն, որ երանց մի մասը մինչև մեր օրերը պահպանել է հայերեն խոսվածքը, հայկական, քրիստոնեական որոշ սովորույթներ։ Կենսակերպի այս նրկակի բնույթը պատճառ է դարձել, որպեսզի մասնագիտական գրականության մեջ նրանց երբեմն տեղանեն «կես-կես»-եր։ Արտաքուստ մուսուլման, սակայն իրականում քրիստոնյա համշենահայերի վիճակին անդրադարձել են մի շարք հեղինակներ։ Այսպես, համշենահայերի խեղրի քազմամյա ուսումնասիրող Մերգել Վարդանյանը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Հայր Պողոս վարդապետ Մեներյանի անտիպ ուղեգրությունից մի հատված, որում նա 1776թ.

<sup>9</sup> Հ. Յակոբոս վ. Տաշյան, *Հայ բնակչությունը Մեծ ձայնն սկիզբն Գարին Վինենա, Մխիթարյան տպարան 1921*, էջ 30:

<sup>10</sup> Մերգել Վարդանյան, *Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, Դրան-ԼանՇ, Նյուան, 1989*, թիվ 1-2-3, էջ 2:

<sup>11</sup> Լուսինե Մանուկյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մանկականացման քաղաքականությունը հետևանքները, *Քուլտուրալուրան և օսմանագնահատման հետազոտություններ, Ռուսիե Մաֆրատությունի ընդհանուր ինքնագրայամբ, հ. IV, Ատոլի, Նյուան, 2006*, էջ 212-215):



սեպտեմբերին, լինելով Համշենի ծնակ գյուղում՝ գրում է, որ այնտեղ ապրում էին 200 տուն մուսուլման և 5-6 տուն քրիստոնյա հայեր<sup>12</sup>։ Քեև բնակչության մեծամասնությունը պաշտոնապես եղել է մուսուլման, բայց ինչպես եշում է հոգևորականը. «Յարսէ եւ յաննէ՛ ի համբարէնն գաջն իս»<sup>13</sup>։ Ավելին՝ շատ իսլամացված համշենահայեր խնդրել են քրիստոնեական ծեսով օրհնել իրենց նախնիների գերեզմանները։ Ավելի ուշ Մխիթարյան միաբանության մեկ այլ գործիչ Մինաս Բժշկյանը 19-րդ դարի սկզբին շրջագայելով Համշենում՝ եշում է. «Համշենցիք կես-կես են, շատք դարձած են, բայց քրիստոնեության ավարտութիւնը կը պահեն, ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ընէր, գրեթէ ամէնքը Վարդապետն և Վերափոխման կերթան եկեղեցին մտ կը փառեն և մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. Բոլորը հայերեն կը խօսին»<sup>14</sup>։ Եւսլե ինդրին է անդրադարձել նաև Հ. Տաշյանը. «Բնականապէս այսպիսի բնութեամբ իսլամացած ժողովուրդ մը երկար տունն կես-կես կը մնար։ Այս բանով կը կշահանային այս կողմերն անոնք, որ արտաքուստ ստիպուած են այլ եւս մանմտական մնալ – որովհետեւ թուրքական ու իսլամական օրէնքով իսլամացածի մը քրիստոնեության վերադարձի փորձն իսկ մանապարտութեան պատիժ կը կրէ. – բայց ներքուստ կը պահէ անկի կամ եւուզ երկար տեւողութեամբ յիշատակն անցելոյն եւ վատ ոգի մը ներքին քրիստոնեական ու ազգային ծանոզման»<sup>15</sup>։

Այսպիսով՝ անկա նյութերը ևս մեկ անգամ փաստում են, որ բոնի իսլամացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում տարբեր ժամանակաշրջաններում եղել է անկյունաքարային և իր մեջ պարունակել է հստակ ցեղասպանական գործառնություններ, որին զոհ են զնացել բազմաթիվ ոչ մուսուլման ժողովուրդներ։

<sup>12</sup> Մեզլէ Վարդանյան, *Գրոնպոլե ծանրճանաչելի բարբառը, բռնակառնությունը և կոչարգնտը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 33։

<sup>13</sup> Վարդանյան, *Գրոնպոլե ծանրճանաչելի բարբառը, բռնակառնությունը և կոչարգնտը*, էջ 419։

<sup>14</sup> Հ. Մինաս վոյ. Բժշկյան, *Պատմութիւն Պանասի որ է Մետ ձով Անկեսի*, 1819, էջ 96-97։

<sup>15</sup> Տաշյան, *Հայ բնակչութիւնը Մեւ ձովնն սնկէն Գաղին*, էջ 35։

## ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՔՐԴԱՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ  
(1980-1990ԱԿԱՆ ԹԹ.)**

Քրդական հարցի ռազմաանհրաքայունը թուրքիայում այսօր ունի կարևոր քաղաքական, և գիտական նշանակություն, քանի որ այն ներքաղաքական խնդրից վերածվել է տարածաշրջանային հիմնախնդրի, դարձել միջպետական հարաբերությունների բարդ հանգույց, որտեղ ներքաշված են և՛ իրենց քաղաքական կողմնորոշմամբ տարբեր երկրներ, և՛ միջազգային ուժեր<sup>1</sup>:

Քրդական հիմնախնդրի հանգուցալուծման հետևակարևորը և նոր քաղաքական զարգացումները Մերձավոր Արևելքում, սահմանների վերաձևման և, որպես հետևանք, տարածաշրջանի ապակայունացման անխուսափելիությունը կարևորում են թուրքիայում քրդական հիմնախնդրի համակողմանի վերլուծության և գնահատականի նշանակությունը: Այդ առնչությամբ մի քանի խոսք քրդական հարցի սրությունը պայմանավորող գործոնների մասին:

Հանրապետական թուրքիայի ազգային պետական քաղաքականության հիմքում ի սկզբանե դրվեց ազգայնականությունը: Մերժելով երկրում առկա ազգային փոքրամասնությունների, այդ թվում քուրդ ազգաբնակչության գոյությունը, քեմալականները որդեգրեցին պանթուրքիստական հայտնի կարգախոսը. «վերափոխել լուրջ մանադականներին թուրքերի»<sup>2</sup>:

Այդպիսի անհանդուժողականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերաճեց պետական գաղափարախոսության, որը և օգնեց թուրքիային տարածաշրջանում ինքնահաստատվել և հետագայում հաջողությամբ խաղալով համաշխարհային երկու ծանակարգերի առձակատման վրա՝ ապահովել իր առաջընթացը:

<sup>1</sup> Օ.И.Жагалина, Курдский вопрос как региональный и локальный конфликт, Восток, №6, стр.91

<sup>2</sup> С.С.Авдеева, Политические национальные движения в Турции, Ерван, 1963, стр.49

Թուրքիայի քուրդ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության շուրջ 17%-ը և կենտրոնացած է երկրի հարավ-արևելյան վիլայեթներում՝ Քիզիլդուում, Քիթլիսում, Վանում, Դիարբեքիրում, Կարսում, Մալաթիայում, Ադեյամանում, Ադրդում, Մուշում, Էրզրումում, որոնց մեծ մասում բացարձակ մեծամասնություն է կազմում: Բնակչության կենսամակարդակը նշված վիլայեթներում չորսից - հինգ անգամ ցածր է Թուրքիայի Հանրապետության միջինից, որը հետևանք է կառավարության կողմից իրականացվող խորակառուցական տնտեսական քաղաքականության: Այստեղ բնակչության 70%-ից ավելին գրաղված է գյուղատնտեսությամբ, խոշոր արդյունաբերական ձևերակությունները, որպես կանոն, չկան տեղում և կազմում<sup>3</sup>:

Առավելապես շահարկելով քրդերի կրոնական զգացմունքները, թուրքերին և քրդերին անվանելով «միասնական կրոնի զավակները», քննադատները ամեն կերպ աշխատեցին ծավալելու ներքին և արտաքին «սուր Թուրքիայի» սահմաններում նրանց իրավունքների հարգման և ազգային քաղաքական վիճակի լիարժեքության մասին:

Թուրքական իշխանությունների կողմից իրականացվող ասիմիլյացիայի քաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների անտեսումը բարձրացվել է պետական մակարդակի, ունեցել շարունակական բնույթ և իր հիմնավորումն է գտել Թուրքիայի Հանրապետության բոլոր սահմանադրություններում:

«Տուրքաբնակյուր ոք, ով ունի Թուրքիայի քաղաքացիություն, թուրք է» (գործող սահմանադրություն, հոդված 66):

«Ոչ մի այլ լեզու բացի թուրքերենից, չի կարող դասավանդվել և ուսումնասիրվել կրթական հիմնարկներում, որպես մայրենի լեզու» (գործող սահմանադրություն, հոդված 42)<sup>4</sup>:

Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ էրդեբը համարվելով «թուրք» զրկվում էին ազգային, իսկ գործնականում ընդունվելով որպես «քուրդ» քաղաքացիական իրավունքներից:

Կանխամտածված ձևով քրդաբնակ շրջաններում ստեղծվում էր ազատ աշխատուժի հսկայական ավելցուկ, որն առաջ է բերում

<sup>3</sup> М.А. Гасретян, *Курдская проблема в Турции*, (1986-1995), Москва 2001, стр 68

<sup>4</sup> [http://www.tbmm.gov.tr/soyuzum/soyuzum\\_2011.doc](http://www.tbmm.gov.tr/soyuzum/soyuzum_2011.doc)

միգրացիան երևույթներ դեպի արևմուտքի խոշոր արդյունաբերական կենտրոններ<sup>5</sup>։ Այս քաղաքականությունն ուղղված էր մի կողմից քրդաբնակ շրջանների ժողովրդագրական կառուցվածքի փոփոխմանը, մյուս կողմից՝ քրդերի ձուլման գործընթացն ավելի դյուրին դարձնելուն։

70-ական թվականների սկզբից Թուրքիայում դիտվում է ձախ կողմնորոշման քաղաքական ուժերի գործունեության աշխուժացում։ Այս շարժումը հայտնի պատճառներով ավելի պարարտ հող գտավ ջուրդ մտավորականության և ուսանողության շրջանում։ Ստեղծվեցին քրդական մի շարք քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության հիմքում դրել էին ժողովրդավարության, սոցիալական ապահովության, գործազրկության և իրավահավասարության հետ կապված հարցեր, ինչը կազմում էին այդ տարիների Թուրքիայում գոյություն ունեցող կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի հիմնական մասը<sup>6</sup>։

1974թ. Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողների մի խումբ, որի մեծամասնությունը քրդեր էին, հիմնեցին «Ժողովրդավար երիտասարդների միությունը», որը սցենարիստական կողմնորոշմամբ ձախակողմյան կազմակերպություն էր և իր գաղափարախոսության հիմքում դրել էր մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը<sup>7</sup>։

PKK աղբյուրների համաձայն՝ կազմավորումից մեկ տարի անց, Դիքմենում (Անկարայի նահանգ) տեղի ունեցած նստաշրջանում այս կազմակերպությունը փոփոխություններ մտցրեց իր ծրագրում և հայտարարեց «համաքրդական կուսակցության» ստեղծման մասին։ Նստաշրջանում ընտրվեց «Բանվորական խումբ» (Կենտրոնական խորհրդի լիազորություններով), որը պետք է մշակեր քրդական հասարակության բոլոր խավերի շահերը պաշտպանող ծրագիր։ Հռչակված «Մանիֆեստում» շարադրվեց Քրդստանի ազգային ազատագրության ծրագիրը<sup>8</sup>։

<sup>5</sup> Christiane Moez, *Les Kurdes aujourd'hui*, Paris 1984, p. 191

<sup>6</sup> К.В. Вереща, *Курдская война в советском Туркменистане XX-го и XXI веков*, Москва 2007, стр. 34

<sup>7</sup> Michael M. Gunter, *The Kurdish problem in Turkey*, *Middle East Journal*, no.3, summer 1988, p. 391

<sup>8</sup> Abdullah Öcalan, *Sir Asik serzemek*, *Weguşin Serzemên* 135, 2004, s. 331

Երեք տարի քրդարեակ շրջաններում վարած քարոզչական աշխատանքներից հետո 1978թ. նոյեմբերի 27-ին Ղիարբեքիի նահանգի Ֆիսե գյուղում կազմակերպությունը գումարեց իր առաջին համագումարը, որտեղ այն վերանվանվեց Քրդաստանի աշխատավորական կուսակցության՝ PKK: Հաստատվեցին կուսակցության կանոնադրությունն ու գործունեության ծրագիրը, ընդունվեց նրա դրոշը: PKK նախագահ ընտրվեց Արդուլան Օջալանը<sup>9</sup>: Կուսակցությունը պաշտոնապես դավանում է մարքսիզմ-լենինիզմ, ավելի կոնկրետ՝ նրա մտիստական-կաստրոյական տարածեսակը<sup>10</sup>:

Ամբողջ «Քրդաստանի» ազատագրման և միանական անկախ պետության կուսակցության կարգախոսի այդպիսի համար հայտարարվեց, որ PKK չի ճանաչում երկրի մասնատվածության փաստը և գոյություն ունեցող սահմանները<sup>11</sup>: Կուսակցությունը հռչակեց իր հատուկ առաքելությունը՝ հանդես գալ ողջ քուրդ ժողովրդի անունից: Այս կարգախոսը հիմնված էր երևակայական «մեկ ազգ մեկ կուսակցություն և մեկ առաջնորդ» գաղափարի վրա՝ դրանից բխող բուրբ հետևություններով:

Ելնով, որ կուսակցության ինչպես այդ, այնպես էլ հետագա տարիների ծրագրային փաստաթղթերի համար բնորոշ է իրատեսության բացակայությունը, պատմական իրողության հետ հաշվի չնստելու հանգամանքը:

PKK առաջացումը համարելով պատմական «անհրաժեշտություն»՝ նրա նախագահ Արդուլան Օջալանը գրում է. «Քուրդ ժողովուրդը դատապարտված էր դանդաղ մահվան: Քրդերի մտտ ձևավորվել էր ստրկական հոգեբանություն և կուսակցությունը նախ և առաջ պայքար սկսեց այդ հոգեբանության դեմ՝ դրան

<sup>9</sup> Արդուլան Օջալանը կուսակցության նախագահից վերանվեց ազգային առաջնորդի, կուրդի: 1999թ. փետրվարի 15-ին թուրքական հասուկ ծառայությունների նրա ձեռքակալությունից հետո եղան բազմաթիվ ինքնաբերկիզումներ, PKK պարբերականներում հայտնվեցին «Ղիս կյանք առանց առաջնորդի» կոչեր: Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ Tuncay Özkan, *Operasyon*, İstanbul, Doğan Kitapçılık 2000

<sup>10</sup> История Курдистана, под ред. М.С. Лазаря, III. X. Мюн, Москва 1999, стр. 432

<sup>11</sup> Martin van Bruinessen, *Kurdish paths to Nation, The Awrah, nationalism and politics*, edited by Faleh A. Jabar & Hosham Dewod, London 2006, p. 43

հակադրելով ազատության, իրավահավասարության և ժողովրդավարության երր հեղափոխական հոգեբանություն»<sup>12</sup>:

Ասպարեզ գալու առաջին իսկ պահից PKK հռչակեց «ողջ Քրդստանի» քաղաքական, ազգային, ազատագրական գործերում իր գերակայությունը, մենաշնորհ իրավունքի գաղափարը: Մինչ այդ, ինչպես նաև ժամանակակից շրջանում գործող քրդական բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները հայտարարվեցին համաձայնողական, հաշտվողական, իսկ երբեմն՝ ազգադավ, և որպես այդպիսիք՝ դրանց դեմ պայքարը համարվեց առաջնահերթ: 1979-1980թթ. այդ առճակատումը վերաճեց զինված ընդհարման PKK և FUL-ի, «Ալա Ռզգարիի», «Քեքոչլիսի» և Քրդստանի Սոցիալիստական Կուսակցության միջև<sup>13</sup>:

PKK -ին հաջողվեց չեզոքացնել այդ կուսակցությունները և դառնալ այն ուժը, որ կազմակերպեց և գլխավորեց վերջին և ամենաընդգրկուն քրդական շարժումը Թուրքիայում:

1980թ. զինվորական հեղաշրջումից հետո Թուրքիայի կառավարության կողմից իրականացվող ազգայնական քաղաքականությունը ավելի ընդգծված բնույթ կրեց: Իշխանությունները, որ մինչ այդ ժխտում էին Թուրքիայում քրդական հիմնախնդրի գոյությունը, հայտարարեցին արևելյան վիլայեթներում աճող քրդական վտանգի մասին, որը փորձ էր ստանալ հասարակության աջակցությունը՝ պատժիչ գործողություններ սկսելու համար<sup>14</sup>:

Դրան հաջորդեցին քրդերի զանգվածային ձերբակալություններ. միայն 1981թ. ընթացքում PKK -ին անդամակցելու համար 123 քուրդ դատապարտվեց մահվան՝ խոտվություններ հրահրելու, անջատողական քարոզչություն վարելու և ազգային անվտանգության 30 աշխատակիցների սպանության մեղադրանքներով: Իշխանությունների այդ գործողությունների դեմ ի նշան բողոքի PKK անդամ Մազլում Դոդանը ինքնահրկիզվեց<sup>15</sup>: Սա ինքնահրկիզման առաջին դեպքն է կուսակցության պատմության մեջ,

<sup>12</sup> Абдулла Оджалан, Курдистанские дивотности 19-ого века по историческое время и движение РПК, Москва 1998, стр. 258

<sup>13</sup> История Курдистана, под ред. М.С. Лаврова, ИЛХ. МГУ, Москва 1999, стр. 432

<sup>14</sup> E.В. Загорнова, Рабочая Партия Курдистана в 80-90-е годы XX в., Курдский вопрос на рубеже тысячелетий, Москва 2004, стр.68

<sup>15</sup> Кемалек просит курдских павстанцев в Туркиек, YAGC № 17.24.04.1981, Michael M. Gunter, The Kurdish problem in Turkey, Middle East Journal, no.3, summer 1988, p. 395

որն այնուհետև «Լախընսորէյի» ձեռագիր դարձավ PKK անդամների համար:

Միլիայի իշխանությունների աջակցությամբ՝ Օջալանը 1981թ. մայիսին Քեքաայի հովտում հիմնեց զինվորական ռազմական ակադեմիա, որտեղ սկսվեց PKK անդամների եռամսյա սուրսուտանը՝ հետագա ռազմական գործողությունների համար:

1984թ. օգոստոսի 15-ին կուսակցության 50 անդամների կողմից էրան քաղաքի գրավումը առաջին պարտիզանական գործողությունն էր Թուրքիայի արևելքում, որը ժամանակավոր ընդհատումներով տևեց շուրջ 15 տարի<sup>14</sup>: 1984թ. հոկտեմբերին երրորդ համազումարում կազմավորվեց PKK -ի ռազմական թևը՝ այսպես կոչված «Քրդստանի ժողովուրդների ազատագրության բանակը» (ՔՄԱԲ), որը 1987թ.-ին առաջին հրամանատար Մահսուվ Քորքմազի սպանությունից հետո՝ մինչև օրս գլխավորում է Ջամիլ Բայիկը: Կուսակցության տվյալներով ՔՄԱԲ-ի անդամների թիվը հասնում էր մոտ 15 հազարի<sup>15</sup>: Բացի Թուրքիայում պարտիզանական գործողություններ իրականացնելուց PKK ելրոպական մի շարք երկրների թուրքական դեսպանատներում իրականացնում էր անարհեստական գործողություններ՝ փորձելով քրդական հարցի վրա հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը: Ջինվան պայքարին համընթաց հասունանում էր նաև համազգային քաղաքական կազմակերպություն ստեղծելու գաղափարը: 1985թ. ստեղծվեց PKK քաղաքական թևը՝ «Քրդստանի ազգային ազատագրության ճակատը» (ՔԱԱԾ)<sup>16</sup>, որը սկսեց ակտիվ քարոզչություն վարել քրդական սփյուռքում: Հիմնական շեշտը դրվեց Եսթանբուլում և Երևանում կուսակցությունն հիմնեց իր գրասենյակներ, որոնք համակարգում են կուսակցության գործունեությունը, մանրամասնում զինված պայքարը, քարոզում գաղափարախոսությունը:

<sup>14</sup> В. Вергеса, *Курдский вопрос в политике Турции (конец XX-начала XXI века)*, Москва 2007, стр. 34

<sup>15</sup> Э. Загорнов, *Рабочая Партия Курдистана в 80-90-х годах XX в.*, *Курдский вопрос на рубеже тысячелетий*, Москва 2004, стр.68. Մոնթանյուլիսի PKK պարտիզանների քանակի մասին տվյալները ինչու էսկազան են՝ պայմանավորված էր սուրհանգիստի գոյնում, նրանք երանց թիվը հարզվում է մինչև 40 հազարի

<sup>16</sup> Michael M. Gunter, *The Kurdish problem in Turkey*, *Middle East Journal*, no.3, summer 1988, p. 397



PKK տարածման հացողության գրավականը, թերևս այն է, որ երան հիմնականում անդամագրած են ցածր դասի քրդեր, որոնք անհաշտ պայքարի մեջ են և քուրդ ցեղապետերի, և տեղական պաշտոնյաների հետ: Իսկ ընդհանրապես, ետր տեղամների հավաքագրումը մշտապես իրականացվել է բացառիկ դաժանությամբ. քուրդ երիտասարդները կամ բռնի պարտիզանացվել են, կամ խարանվել՝ որպես «պետության գործակալներ»:

1985թ. Թուրքիայի նախագահ Թ.Օզալը որպես քուրդ պարտիզանների դեմ հակամիջոց եերդրեց «գյուղական պահապանների» համակարգը (1993թ. արդեն շուրջ 35000 անդամ)<sup>19</sup>, որոնք հիմնականում կազմված էին քրդերից և կոչված էին պաշտպանելու գյուղական խաղաղ բնակչությանը պարտիզաններից: Միջքրդական բախումներն տևեցին չափերի հասան: PKK հայտարարեց, որ յուրաքանչյուր ընտանիք, ով գործ է ունեցել պետության հետ, եթեակա է ոչեչացման: Պարտիզանները մեկը մյուսի հետևից այրում էին քրդական գյուղեր, կրակի մատնում սեփական ժողովրդին՝ իրենց գործողություններն արդարացնելով գյուղական պահապանների դեմ պայքարով<sup>20</sup>:

Իր ֆինանսական կայունությունն ապահովելու համար, PKK եերգրավվեց թմրանյութերի և զենքի անօրինական վաճառքի բիզնեսի մեջ: Որոշ տվյալների համաձայն՝ PKK տարեկան բյուջեն կազմում էր միջինը 86 մլն ԱՄՆ դոլար<sup>21</sup>:

PKK -ի անմիջական հովանավորությամբ 1995թ. ապրիլի 12-ին Հաազայում կազմավորվեց Քրդաստանի տարազիր խորհրդարանը:

Երկու օր անց, ապրիլի 14-ին թուրքական «ՉԱՄԱՆ» թերթը ըերարձակ հողված տպագրեց խորհրդարանի կազմավորման վերաբերյալ. «Մուսը լիքն էր քրդերով, հայերով և ասորիներով: Հավաքի նպատակը մեծ Հայաստանի ստեղծման համար պայքարն է, իսկ PKK հայկական աղբյուրներից ծնված մի կազմակերպություն է: Թուրքիայում քրդական հարց գոյություն չունի, դա Հայկական հարցն է...»<sup>22</sup>:

<sup>19</sup> David McDowall, *A modern history of the Kurds*, LB. Tauris, 2004, p. 421

В конечном итоге, форсирование налаживания армяно-турецких отношений оказалось иррациональным с политической, экономической, социальной и моральной точек зрения, несмотря на то, что в их урегулировании в большей степени должны были быть заинтересованы именно Турция и Армения. В качестве основной причины провала процесса примирения следует назвать очевидную асимметрию в уровне заинтересованности двух государств в их урегулировании с учетом воздействия на динамику экономического развития и с учетом восприятия самого факта армянским и турецким обществами. Кроме того, решающим для Турции являются стратегические отношения с Азербайджаном, которые и формируют ее позицию по урегулированию Нагорно-Карабахского конфликта. Таким образом, именно эта асимметрия в армяно-турецких отношениях является определяющим фактором и практически

---

царкан, вопреки обещаниям турецкого правительства, не был установлен арест. Официальный Эчмиадзин не участвовал в церемонии. Мероприятие было воспринято в армянском обществе как пик акции Турции, и в Ереване состоялись акции протеста.

<sup>34</sup> «Телевизионное обращение президента Республики Армения Сержа Саркисяна относительно процесса нормализации отношений между Арменией и Турцией». Официальный сайт президента Армении, 22 апреля 2010 года. <http://www.president.am/events/news/rus/?day=22&month=04&year=2010&id=963>

делает невозможным достижение прогресса на этом направлении даже в среднесрочной перспективе — в 8-10 лет.

### Заключение

Уровень политической мобилизации Турции и ее активность на внешнеполитической арене во многом определяется процессами, связанными с ее членством в Европейском Союзе, развитием двусторонних отношений с США и Россией, Кипрской и курдской проблемами, а также процессами, имеющими место в непосредственной близости от ее границ. В целом, усиление стратегического интереса Турции к Южному Кавказу закономерно, однако, несмотря на то, что географически и стратегически Южный Кавказ является *front yard*, в настоящее время активность Турции на Южном Кавказе носит, скорее, вынужденный характер.

В приложении к Южному Кавказу Турция предпочла бы проводить региональную политику, нацеленную на стабилизацию региона. Именно на это ориентированы все предложения турецкого руководства по созданию пактов и платформ стабильности и безопасности, которые, однако, могут осуществиться при нормализации двусторонних отношений между государствами региона, и при поступательном развитии отношений Турции с каждым из них. В плоскости двусторонних отношений Турции с государствами Южного Кавказа есть противоречия, которые, при определенном соотношении политических, экономических и военно-политических проблем способствуют дальнейшей разобщенности между самими региональными государствами, и тем самым отодвигают в неопределенное будущее все варианты регионального сотрудничества, приемлемые для Турции.

Турция уже имеет экономические дивиденды от транзита энергоресурсов зоны Каспия; она контролирует коммуникационные возможности и Грузии, и Азербайджана. Турникова ситуация в отношениях с Арменией также в определенной степени оказалась выгодной для нее, поскольку, с одной стороны, позволила продемонстрировать миру собственную готовность к разрешению проблемы, с другой — усугубила положение Армении на международной

арене, в том числе, увеличив давление на нее в вопросе урегулирования Нагорно-Карабахского конфликта.

В южнокавказской политике Турции в среднесрочной перспективе следует ожидать:

- рост турецких инвестиций в экономику Азербайджана и Грузии, а также Абхазии;
- усиление военного присутствия Турции на территории Азербайджана и Грузии;
- еще большей координации усилий Турции и Азербайджана (при опосредованной поддержке Грузии) в направлении исключения Армении из всех возможных региональных проектов;
- ужесточение позиции Турции по вопросу признания Геноцида армян и открытия турецко-армянской границы, а также продолжения поддержки позиции Азербайджана в вопросе урегулирования Нагорно-Карабахского конфликта; однако, после подписания армяно-турецких Протоколов она вынуждена действовать менее прямолинейно;
- ускорение процесса по созданию платформы для политической интеграции тюркских государств.

В южнокавказской политике Турции важно и то, что фактическое разделение пространства Южного Кавказа на российскую и турецкую зоны влияния в контексте Realpolitik вполне устраивает и Россию, и Турцию, которые выстраивают свои взаимоотношения совершенно вне зависимости от двусторонних отношений с Арменией, Грузией или Азербайджаном. Кроме того, они обе не заинтересованы в появлении каких-либо третьих внешних акторов на Южном Кавказе.

Обе региональные державы имеют достаточно широкое поле для стратегического маневрирования и разрешения любых возникающих между ними разногласий на этом пространстве. В частности, в ходе официального визита президента России Д.Медведева в Турцию, было заявлено, что «Россия и Турция заинтересованы в укреплении стабильности в Кавказском регионе, в том числе, конечно, и в разрешении нагорно-карабахского конфликта. Мы со своей стороны, я имею в виду Российскую Федерацию, будем этот процесс продвигать, используя все возможности, авторитет и

влияние Российской Федерации. Будем, естественно, консультироваться по этим вопросам и с турецкими партнерами»<sup>15</sup>.

Подытоживая, следует отметить, что Турция, став после развала Советского Союза и прекращения блоковой политики неожиданно для самой себя региональной державой, постепенно сживает с этой ролью. Тем не менее, южнокавказское направление все еще не является приоритетным во внешней политике Турции, что означает продолжение некоторой рефлекторности в застраивании отношений с тремя государствами этого пространства.

---

<sup>15</sup> Совместная пресс-конференция Д.Медведева с президентом Турции А.Гюлем 12 мая 2010. Официальный сайт президента России <http://news.kreml.ru/transcripts/7722>

**ՄԵՍ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐՄԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ  
1945-1946 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ  
ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԻՐԻ ՄԱՍԻՆ**

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունը պատերազմի ավարտից հետո հանգեցրել էր խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման: Արդյունքում ԽՍՀՄ-ը չէր սպել էր հայտարարել 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը և Թուրքիայի առջև իր պայմաններն էր առաջ քաշել. վերանայել ինչպես սևծովյան նեղուցների վերաբերյալ Մոնտրոյում սահմանված ռեժիմը, այնպես էլ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև եղած սահմանը: Այսինքն, վերադարձնել Կարսը և Արդահանը:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած այս ճգնաժամը այդ տարիներին անհասկառություն էր առաջացրել ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Ինչը ստիպել էր այդ երկրների արտգործնախարարություններին ռատամնասիրություններ կատարել և զեկուցագրերի տեսքով իրենց տեսակետն արտահայտել այս խնդիրների վերաբերյալ: Հատկապես ուշագրավ էր Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության 1945-1948 թթ. ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջատիրության խնդրի շուրջ պատրաստած զեկուցագրեր-տեղեկագրերը, որոնք ամբողջական պատկերացում էին տալիս պաշտոնական Լոնդոնի՝ այդ խնդրի վերաբերյալ ունեցած դիրքորոշման մասին: Այդ փաստաթղթերի մեծ մասը տեղ են գտել 1998 թ. Անիտա Բուրդեթի խմբագրությամբ հրատարակված «Հայաստան. Քաղաքական ու էթնիկական սահմանները. 1878-1948 թթ.» խորագրով արխիվային փաստաթղթերի ժողովածուում<sup>1</sup>:

<sup>1</sup> Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, London, Archive Editions, 1998. Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության արխիվում պահվող Հայկական նաբեյն վերաբերյալ այդ տարիների որոշ փաստաթղթեր իրենց աշխատություններում հրատարակել են Ջ. Մալքոնսը, Յ. Բարսեղյանը և Ա. Կիրակոսյանը:



Ուսումնասիրելով Մեծ Բրիտանիայի արտաքին գերատեսչության պատրաստած այդ զեկույցները՝ պարզ է դառնում, որ Լեւոնեն ուշադրությամբ հետևել է Անկարայի ու Մոսկվայի միջև ընթացած գործընթացին՝ միջոցներ փնտրելով Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու համար: Սակայն միաժամանակ պետք է շեշտել, որ 1945 թ. սկզբին դաշնակից պետությունները (ԱՄՆ և Մեծ Բրիտանիա) խորհրդա-թուրքական հարաբերություններում փորձում էին չեզոքություն պահպանել: Լեւոնին և Վաշինգտոնին հիմնականում հետաքրքրում էր սեծովյան նեղուցների հարցը, իսկ ինչ վերաբերում էր Կարսին և Արդահանին, ապա այս տարածքների խնդրում նախընտրում էին չմիջամտել: Սան Ֆրանցիսկոյի ՄԱԿ-ի հիմնադիր ժողովի թուրքական պատվիրակության անդամ Ն. Էրիմը, ամփոփելով այդ երկրների տեսակետը, տեղեկացրել է «Խորհրդային Միության յուշագիրն էսք, Թուրքիան Մ. Նահանգներուն դիմեց եւ հաղորդեց թէ Սոսալիսի պահանջներուն ժխտողական պատասխան պիտի տայ. Կրնաք մեզի օգնել»<sup>2</sup>: Ըստ թուրք դիվանագետի՝ ԱՄՆ-ի պատասխանը հետևյալն էր. «Պատերազմէն հօգևած եք, զինուորները արձակում կը պահանջեն, տաքը հազար մղոնը կտրելով ձեզի օժանդակութեան հասնիլ անկարելի է համաձայնեցէք Խորհրդային Միութեան հետ»<sup>3</sup>: Անկարայի կատարարությունը դիմել է նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենին, որը համակարծիք է եղել Վաշինգտոնի հետ՝ ասելով. «Ուր որ է՝ բանակին մեք յեղափոխութիւն պիտի ծագի, համաձայնեցէք Խորհրդային Միութեան հետ»<sup>4</sup>: Ավելին վերջինս հասկացրել էր, թե ցանկանում է նեղուցների հարցը գառել «թուրքսովետական դաշնագրի վերականգնման խնդրէն, այսինքն Կարսի և Արդահանի Ռուսիոյ թողուելու հարցէն»<sup>5</sup>: Այլ կերպ ասած՝ Անգլիան խոստանում էր նեղուցների հարցում օգնել, իսկ Կարսի և Արդահանի հողային պահանջների խնդրում անկարկում էր, որ Թուրքիան իր «ճարը պետք է տեսնի ինքնուրույն»: Ինքարկէ, այս առաջարկն անընդունելի էր Անկարայի համար, քանի որ նրա

<sup>2</sup> Թուրքիան և Հայկական հարցի վերաբերմամբ, Ազգայն Քննարկ, Խելոնկերի 5, 1977:

<sup>3</sup> Լույս տեսչում:

<sup>4</sup> Լույս տեսչում:

<sup>5</sup> «Նեղուցներու և Հայ-թուրքական սահմանի հարցը», Փորձովեց, օգոստոսի 18, 1945:

համար նեղուցները և արևելյան նահանգներն ունեին նույն կարևորությունը:

Այսպես, որ դաշնակից պետությունները ևս հայտնվել էին դժվարին իրավիճակում, քանի որ մի կողմից չէին ցանկանում Թուրքիայի պատճառով քայմալե ՆՍՉՄ-ի հետ, մյուս կողմից էլ՝ Թուրքիային թույլ տալ՝ զիջել այս տարածքները: Ըստ բրիտանական փաստաթղթերի՝ շնայան տարածքների հարցում Մեծ Բրիտանիան նախընտրում էր չնգործություն պահպանել, սակայն միևնույն ժամանակ քայլեր էր ձեռնարկում Թուրքիայի շահերը պաշտպանելու համար: Այդ քայլերից առանձնացնենք Պոտտամի խորհրդածրույնի նախօրեին իրադրությունը տեղում ուսումնասիրելու նպատակով բրիտանական արտաքին գերատեսչության Թուրքիայի արևելյան նահանգներ կազմակերպած այցելությունները, որոնցից ուշագրավը Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան մամլո խոսնակ Ու. Բ. Տ. Ալլենի հունիսի 28-ից հուլիսի 30-ը կատարած շրջագայությունն է և այդ մասին արտգործնախարարությանը ներկայացրած զեկուցագիրը: Փաստաթղթում նա գրում է «Քննակվելու առնչությամբ և ապահովության նկատառումով վստահությունը վերահաստատված չէ, և այսօր Մուշի ու Ալաշկերտի դաշտերը շատ նոսր են բնակեցված, ... միևնույն Վանի ավազանը հրապարակում է միայն Բուլղարիայից եկող մանրեղական գաղթականներին»<sup>6</sup>: Ալլենի գնահատմամբ Կարսը համեմատաբար ավելի խիտ է բնակեցված, բայց «գործարաններ չկան Արդվինի, Կարսի, Էրզրումի, Վանի և Չուսմերկի սահմանային նահանգներում: ... Այս տեղերը մեծում են ավերված վիճակում (գնահատում եմ, որ Կարսի տների երկու երրորդը լքված և անարդարենակ են): Հին Վանը լքված է, իսկ նոր բնակավայրը պարունակում է նախկին քաղաքի բնակչության շուրջ մեկ վեցերորդը: ...»<sup>7</sup>: Մամլո խոսնակը եզրակացնում է, թե սահմանամերձ նահանգներում բնակչության բնակեցումը և զարգացումը խոչընդոտվում է ապագայի նկատմամբ ժողովրդի վախով, ավելին, կատավարությունը ևս այս տարածքների ապագան «կասկածելի» է համարում և այդ պատճառով էլ նախընտրում է չֆինանսավորել: Փաստաթղթում նշված է, թե թուրք

<sup>6</sup> Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Borderlines, 1875-1948*, p. 998.

<sup>7</sup> Լույս տեսնում էր 998-999:

պաշտոնյաները և ժողովուրդը վստահ են, որ Խորհրդային Միության հետ պատերազմն անխուսափելի է և՛ան տեղեկացվում է, որ 12-15 թուրքական զորաբաժանումներ կան Տրապիզոն-Էրզրում-Մուշ գծով դեպի արևելք<sup>6</sup>։ Այսպիսով, վերոհիշյալ զեկուցագիրը հիմնավորում է այն տեսակետը, թե խոսքը գնում է «թուրքական տարածքների» մասին, քանի որ այստեղ հայեր չեն բնակվում։ Պետք է նկատել նաև, որ Ալլենի դիտարկումները կարևոր դերակատարում է ունեցել բրիտանական դիրքորոշման հիմնավոր ներկայացման գործում, քանի որ հետագայում Մեծ Բրիտանիայի արագորձեռնախարարության Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության հիմնաեւարցի վերաբերյալ պատրաստած զեկուցագրեր-տեղեկագրերը հիմնականում հիմնվել են այս փաստաթղթի վրա։

Այդ զեկուցագիր-տեղեկագրերից կարելի է առանձնացնել երեքը։ Առաջինը՝ «Թուրքական տարածքների հայկական պահանջները» խորագրով 5 էջանոց տեղեկագիրն է, որը պատրաստվել է 1945 թ. հոկտեմբերի 5-ին՝ սեպտեմբերին Լոնդոնում կայացած մեծ տերությունների արագորձեռնախարարների հանդիպումից հետո։ Այն ներկայացվել է Գեորգ VI թագավորին և Լորդերի պալատին<sup>7</sup>։ Ապատակն էր վերջիններիս ծանոթացնել հիմնախնդրի հետ։

Փաստաթղթում շեշտվել է, թե մինչև 1945 թ. հոգային նման պահանջի մասին խոսք չի եղել։ Ըստ բրիտանական կողմի՝ պահանջը հիմնված է ետևյալ տրամաբանության վրա.

- պետք է հնարավորություն ստեղծվի, որ արտասահմանում ապրող հայերը (ըստ տարբեր հաշվարկների՝ 1-1,5 մլն. մարդ) կարողանան վերադառնալ հայրենիք,
- դա արդարացի կլինի մի ժողովրդի նկատմամբ, որին անցրալում պատճառել են զարհուրելի մի չարիք,
- Կարսի ամրոցը ռազմավարական տեսակետից աներաժեշտ է Խորհրդային Միությանը։

Այնուհետև տեղեկագրում հարցն ուսումնասիրվել էր պատմական, ազգագրական, իրավական, տնտեսական, ռազմական

<sup>6</sup> Լույս տեսում, էջ 1000։

<sup>7</sup> Յակն Մալրյան, «Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անուշով 1945-ին կատարուած հողալին պահանջը», Հայագրական հայացքներով հավերժ հատ. ԺԸ, 1998, էջ 297։

տեսանկյունից: Վերջում ներկայացվել է թուրքական դիրքորոշումը՝ տեղեկացնելով, որ տարածքային պահանջները Թուրքիայում բացասաբար են ընդունվել: Վարչապետը հայտարարել է, որ թուրքերը եախընտրում են կովել, քան թե Կարսը, Արդահանն ու Արդվիկը հանձնել ՅՍՀՄ-ին: Բացի այդ, փաստաթղթում ներկայացվել է թուրքական մամուլում շրջանառության մեջ դրված այն պատճառաբանությունները թե ինչու պետք է այդ տարածքները մեան Թուրքիայի կազմում: Դրանք են՝

- երկրամասում հայեր չեն ապրում,
- Թուրքիայի համար այս շրջաններն ունեն ռազմավարական մեծ նշանակություն,
- 1920 թ. խորհրդային կառավարությունն այն զիջել է կամովին (հիշեցնենք, որ խորհրդային կառավարությունը Կարսը և Արդահանը զիջել է ոչ թե 1920 թ., այլ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրով - Ք. Մ.)<sup>15</sup>:

Փաստաթուղթն իր բնույթով ճանաչողական է այն հիմնականում, ինչպես վերը եղվեց, Անգլիայի կառավարող շրջանակներին ծանոթացրել է Հայկական հարցի էության հետ:

Մի քանի ամիս անց էլ՝ դեկտեմբերի 22-ին, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը կառավարությանը ներկայացրել է երկրորդ տեղեկագիրը՝ «Թուրքական հողերի վրացական պահանջը» խորագրով (տեղեկագիրը նրկու էջից է բաղկացած): Այս փաստաթուղթը օրակարգում է հայտնվել Մեծ տերությունների արտգործնախարարների մոսկովյան հանդիպման ընթացքում: Հիշեցնենք, որ դեկտեմբերի 14-ին՝ Մոսկվայի վեհաժողովի նախօրեին, Թբիլիսի «Կոմունիստ» թերթում հրատարակվել է վրացի ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Լ. Քերձեթիշվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով նամակը<sup>16</sup>: Իսկ դեկտեմբերի 20-ին «Ղրավդա», «Իզվեստիա» և «Կրասնայա Զվեզդա» թերթերը վրացերենից թարգմանելով ռուսերեն՝ արտատպել են այս հոդվածը, ինչը վկայում է, որ այն տարվել է Ի. Ստալինի հավանությամբ, քանի որ առանց վերջինիս գիտակցությամբ ոչ մի հոդված այս

<sup>15</sup> Anita L.P. Burton, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1001-1005.

<sup>16</sup> С. Джанашвили и Н. Бердзенишвили, «О наших законных требованиях к Турции», *Правда*, 20 декабря, 1945.

պաշտոնական պարբերականներում չի տպագրվել: Այլ կերպ ասած՝ Խորհրդային Միությունը հայկականից բացի, վրացական տարածքների պահանջատիրության հարցն էլ էր առաջ քաշում, ինչին, իհարկե, Լոնդոնը չէր կարող չհետաքրքրվել:

«Յուրքական հողերի վրացական պահանջը» խորագրով փաստաթուղթը «Յուրքական տարածքների հայկական պահանջները» տեղեկագրի նման տեղեկատվական բնույթ ուներ և ծանոթացնում էր հիմնախնդրի հետ: Տեղեկագրում կրկին շեշտվել է, որ Յուրքիայից պահանջված տարածքներում հայեր ու վրացիներ չեն ապրում, չնայած բրիտանական կողմը միաժամանակ ակնարկում է, որ հայերն ավելի մեծ իրավունքներ ունեն, քանի որ տեղի հայերն անցյալ դարավերջին և այս դարասկզբին կոտորվել են թուրքերի կողմից<sup>12</sup>:

Բրիտանական կողմը սկզբնական շրջանում եզրակացրել է, որ Մոսկվան վրացական պահանջներ է երկայացրել՝ խորհրդային նախնական պահանջն ավելի չափավոր ցույց տալու և Անկարային վախեցնելու համար, որպեսզի վերջինս զիջի ավելի փոքր պահանջներին<sup>13</sup>: Ի դեպ, ավելի ուշ ՅՍՀՄ-ը հստակեցրել է, որ հայկական պահանջները չի փոխարինել վրացականով, այլ երկուսն էլ հետապնդում է:

Բացի այդ, շեշտենք, որ վերը նշված երկու տեղեկագրերը ծառայել են իրենց նպատակին: Դրանց շնորհիվ բրիտանացի դիվանագետները մանրամասն ծանոթ լինելով այդ հիմնահարցին կարողացել են տարբեր ամբիոններից հիմնավոր ձևով իրենց տեսակետը հայտնել: Օրինակ՝ 1946 թ. փետրվարի 20-ին Համայնքների պալատում Անգլիայի արտգործնախարար Է. Բնիկը<sup>14</sup> անդրա-

<sup>12</sup> Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1968*, p. 1006.

<sup>13</sup> Ջակն Մալլեյան, «Անի Բրիտանիա և Խորհրդային Հարաստանի ու Խորհրդային Վրաստանի անունով 1945-ին կատարյալ հռչակյալ պահանջը», էջ 299:

<sup>14</sup> Էռնեստ Բնիկ (1881-1951 թթ.) անգլիական քաղաքական գործիչ, լեյբորիստական կուսակցության և քրեյ-ռաիֆոնների աջ պարագլուխներից 1940-1945 թթ. Ու. Չեչլիժ կալիֆոն կառավարությունում վարել է աշխատակցի և ազգային զարնակի նախարարի պաշտոնը, իսկ 1945-1951 թթ. Վ. Լոլիի լեյբորիստական կառավարությունում ստանենել է պրասքին գործերի նախարարի պորտֆելը: Լզաստել է «Մաշջալի պլան»-ի իրականացմանը, ինչպես նաև 1948 թ. Արևմտահնդկական միության (Բրիտանյան պակտ) տեղեկանքը և 1949 թ. Հյուսիս Ասիական գաղթից (LUSO) արտազրմանը:

դարնալով Կարսի ու Արդահանի խնդրին հայտարարել է «Խորհրդա-թուրքական սահմանը պարտադրված չի եղել, այլ երկկողմանի բանակցությունների արդյունք է և որ հայ ազգաբնակչությունն այստեղից տեղահանված է»: Եւ հիջեցրել է, որ 1939 թ. Մոլոտովը պաշտոնապես հերքել է տարածված այն լուրերը, թե ԽՍՀՄ-ը պահանջներ ունի այս տարածքներում<sup>14</sup>: Վերլուծելով Քնիեի խոսքերը՝ պարզ է դառնում, որ եւս հիմնավորով այդ տեղեկագրերի վրա եւս փորձում է հիմնավորել հետևյալ տեսակետները.

- եւս, որ 1921 թ. սահմանի գծմանը Ստալինը մեծ առեւտրություն ունի,
- երկրորդը՝ այստեղ հայեր չեն ապրում, էլ ինչ հողային պահանջատիրության մասին է խոսքը: Այլ կերպ ասած՝ բրիտանական կողմի կարծիքով, հայերի բացակայությունն այդ տարածաշրջանում Թուրքիային իրավասու է դարձնում հանդես գալու այդ հողերի իրական տիրոջ դերում:

Մինչդեռ Մեծ Բրիտանիայի քաղաքական ոչ բուռն շրջանակներն էին կիսում այս մտածեցումը: Անգլիական «Դեյլի Վոքեր» թերթը դատապարտել է Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը և զարմանալի չի համարել, որ 1921 թ. Խորհրդային Միությունից իվված հողերի հարցը երկպառանս դարձել է արդիական<sup>15</sup>: Իսկ 1946 թ. մարտի 14-ին Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Վ. Մինտրակին<sup>16</sup>, մեկ օր անց էլ՝ մարտի 15-ին խորհրդարանի երիտասարդ անդամ Թ. Դրայթերզը<sup>17</sup> է. Քնիեին եամակներ են հղել<sup>18</sup>, որոնցում քննադատել են նրա ելույթը և ներկայացրել մանրամասներ Հայաստանի ու Հայկական հարցի վերաբերյալ<sup>19</sup>:

<sup>14</sup> «Passionate Speech E. Bevin in Parliament», *New York Times*, 22 February, 1946.

<sup>15</sup> «Տեղի ուղեղնքն կը դատապարտէ Թուրքիան», *Շողակեայ*, մարտի 5, 1946:

<sup>16</sup> Ջավին Մոլլոյան, *Հայկական հարցը մասին Վեյլուք*, Մշակ հրատարակչություն, 1978, էջ 73:

<sup>17</sup> Թու Դրայթերզ անգլիական քաղաքական գործիչ, լեյբորիստական կուսակցության անդամ:

<sup>18</sup> Юрий Барсегов, *Генерал армян: ответственности Турция и обязанность мирового сообщества. Документы и комментарии*, т. 2, М., Гендариоки, 2005, с. 411.

<sup>19</sup> Տեղեկացնենք, որ մի քանի օր անց՝ մարտի 23-ին արագորժնայադարը՝ է. Քնիեը պատահական եամակ է ուղարկել Թ. Դրայթերզին և իր ելույթի հետ կապված վազզարևումներ ավել: Քնիեն գրել է, որ այստեղ պղև գոյություն չունեն ազգային խնդիրներ, չնայած չի արդարացնում թուրքերի կայմից անջատում նայրի:

Քեյսի ելույթի շուրջ սկսված քննարկումները հանգեցրել են նրան, որ Մեծ Բրիտանիայի արտոգործնախարարությունը 1946 թ. ապրիլի 4-ին նոր գեկուցագիր է պատրաստել «Հայկական և վրացական պահանջները՝ թուրքական տարածքների նկատմամբ» խորագրով<sup>21</sup>: Ութ էջանոց այս փաստաթուղթն իր մեջ ընդգրկում էր 1945 թ. հոկտեմբերի 5-ին և դեկտեմբերի 22-ին պատրաստված տեղեկագրերը:

Շեշտենք, որ ի տարբերություն վերը եղյալ երկու տեղեկագրերի այս գեկուցագրում պատմական մասերը վերանայված և ընդլայնված էին: Հերքվում էր թուրքական այն պնդումը, թե իրենց տիրապետությունը Հայաստանի վրա հաստատվել է 1071 թ.: Բրիտանական կողմը հիշեցնում էր, որ այդ ժամանակաշրջանում տարածաշրջանի տերերը սկզբով թուրքերն էին, իսկ օսմանյան տիրապետությունն այստեղ հաստատվել է միայն 1534 թ. սկսած<sup>22</sup>: Այս փաստաթղթից առանձնացրել ենք հետևյալը.

- Մանրամասն անդրադարձ կա նաև Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական և Կարսի հոկտեմբերի 13-ի պայմանագրերին՝ խստովանելով, որ հայերն ու ռուսները Կարսի շրջանը ուզում էին պահել, սակայն թուրքերը պարտադրեցին, որ այդ տարածքները զիջեն իրենց: Բրիտանական կողմը ընդունում էր, որ պատերազմում հաղթանակած ՌՍՀՄ-ը ցանկանում էր վերադարձնել իր կորցրած հողերը<sup>23</sup>:
- Մի կողմից Անգլիան ընդունում էր, որ Կարսի-Արդահանի կորուստը Թուրքիայի համար տևտեսական տեսանկյունից էական նշանակություն չունի, սակայն, ճիշտ էր համարում այդ հողերի Խորհրդային Միությանը կցելը, քանի որ այդ դեպքում քրդերն իրենց անջատողական ձգտումներով կարող են մեծ հարված հասցնել ՌՍՀՄ-ին<sup>24</sup>, միաժամանակ իրազեկելով, թե թուրքերը պնդում են, որ Կարսի բարձրավանդակն իրենց

կուտորանները, սակայն ընդունում է նաև այն գաղափարը, որ խորհրդային կառավարության՝ հայերի ներկայությունը պատճառաբանված, պահանջները ներկայիս պայմաններում անտեղի են: *See*: Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1021-1022.

<sup>21</sup> Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1023-1030.

<sup>22</sup> Լոյն տեղում, էջ 1024:

<sup>23</sup> Anita L.P. Burdett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1024-1025.

<sup>24</sup> Լոյն տեղում, էջ 1026:

անհրաժեշտ է ՆԱՀՄ-ի առաջխաղացումը Միջերկրական ծով և Պարսից ծոց կասեցնելու համար<sup>25</sup>:

- Փաստաթղթի եզրակացության մեջ արձարվում է նաև հայոց Մեծ եղեռնի հարցը. «Անխռնեմ կլինի նաև անտեսել հողային հաստոցման պահանջը, որը կարող է հիմնված լինել թուրքերի՝ հայերի նկատմամբ իրականացրած ջարդերի վրա: Այս ջարդերն այնքան դաժանորեն էին իրականացվել, որ մարդկության հիշողության վրա տեսական մեծ հետք են թողել, որ էթե խորհրդային կառավարությունը ցանկանա պայքար ձեռնարկել՝ վերհիշելով այս ամենը, ապա շատ հավանական է, որ համաշխարհային հանրության շրջանում կարող է ձեռք բերել մեծ համակրանք, ինչը կարող է թուրքիային դնել ծանր իրավիճակում՝ որպես «համար մեկ սև ոչխար»<sup>26</sup>:
- Չնայած Լոնդոնը փաստաթղթում ակնարկում էր, որ այդ տարածքները չպետք է տալ ՆԱՀՄ-ին, սակայն մրաժամանակ հայկական պահանջներն ավելի լուրջ էր ընդունում, քան վրացականը: Բրիտանական կողմը շեշտում էր, որ երկու երկրները պահանջներ ներկայացնելով՝ հիմնվում են արդարության վրա: «Լերկայումս թվում է՝ սխալ և անհետառես է թույլ տալ, որպեսզի հայերի պատմական պահանջները և նույնիսկ կասկածելի համարվող վրացիներինը օգտագործվեն Խորհրդային Միության ռազմավարական նպատակների համար: Ցանկացած դեպքում Խորհրդային Միությունը էթե պահանջի վրացիներին տալ այն տարածքները, որոնք երանք պահանջում են, ապա դժվար թե կարողանա պնդել, որ նույն տարածքներն անցնեն նաև հայերին»<sup>27</sup>:

Վերոհիշյալ զեկուցագիրը բացահայտորեն ներկայացնում էր Մեծ Բրիտանիայի այն դիրքորոշումը, որ պահանջվող հողերը ՆԱՀՄ-ին անհրաժեշտ են ծավալապաշտական նպատակներով, ինչը երան թույլ էր տալիս պաշտպանել թուրքիայի շահերը միջազգային հանդիպումներում:

Հայկական տարածքային պահանջատիրությանը վերաբերող բրիտանական փաստաթղթերից առանձնացնենք ևս մի քանիսը:

<sup>25</sup> Լույս տեսնում էր 1027:

<sup>26</sup> Anita L.F. Bardett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1028-1029.

<sup>27</sup> Anita L.F. Bardett, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1029-1030.



1946թ. հունվարի 31-ին Բրիտանիայի արագորենախարարությունը պատրաստել է Կարսի պայմանագրի վերաբերյալ մի գրություն, որում հղումներ է կատարել 1921թ. բրիտանացի դիվանագետների զեկուլցներից<sup>28</sup>։ Փաստաթղթի վերջում բրիտանական կողմը նաև գել է հետևյալ եզրակացության։ ՆԱՀՄ-ի հայտարարությունը պարունակում է միայն իրականության մի մասը։ Ավանդելով, որ բավականին անհեծեթ են այն պնդումները, թե տարածքները տրվել են Թուրքիային ստիպողաբար և, որ խորհրդային հավակնությունները հիմնավորված են էթնիկական նկատառումներով։ Միաժամանակ հակասելով իրենց իրենց ընդունում են, որ Կարսի պայմանագրի ստորագրման պահին Թուրքիան ավելի ուժեղ էր, քան ՆԱՀՄ-ը։ Սակայն դա չհամարելով էական շեշտում են, որ Խորհրդային Միությունը այս տարածքները կորցրել է իր «Մացյա-վելիու քաղաքականության» արդյունքում, նպատակադրվելով, հետագայում վերադարձնել դրանք<sup>29</sup>։ Ռեյն էլ, պաշտոնական Լոնդոնի գեախառնամաբ՝ այդ տարիներին փորձում էր իրականացնել Մոսկվան։

Իսկ 1948 թ. ապրիլի 24-ի Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դ. Քելլին «Թուրքիային ՆԱՀՄ-ի ներկայացրած Թուրքսահայաստանը հայերին վերադարձնելու պահանջի վերաբերյալ» Լոնդոն ուղարկած իր նամակում կատավարությանը տեղեկացրել է, որ Թուրքիային ՆԱՀՄ-ը նոր տարածքային պահանջներ է ներկայացրել։ Քելլին նամակում նախ թվարկում է թե տարածքային հավակնություններ հետապնդելով Ռուսաստանը ինչ է ձգտում<sup>30</sup>, այնուհետև համատու ներկայացվում է այդ տարածքները վերադարձնելու ուղղությամբ Մոսկվայի ձեռնարկած քայլերը<sup>31</sup>։ Բացի այդ, փաստաթղթից պարզ է դառնում, որ նթն նախկինում Թուրքիայից Խորհրդային Միությունը պահանջում էր Կարսը, Արդահանը և Արդվինը, ապա 1948 թ. դրանց ավելացել է Վանը, Բիթլիսը և Էրզրումը<sup>32</sup>։ Այլ կերպ ասած՝ ՆԱՀՄ-ը ցանկանում էր իր կազմում տեսնել ամբողջ Թուրքսահայաստանը,

<sup>28</sup> Լույն տեղում, էջ 667։

<sup>29</sup> Լույն տեղում, էջ 668։

<sup>30</sup> Anita L.P. Burden, *Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948*, pp. 1056-1058.

<sup>31</sup> Լույն տեղում, էջ 1056։

<sup>32</sup> Լույն տեղում, էջ 1059։

այսինքն՝ ներկայիս Թուրքիայի մտա մեկ քարտուղը: Ըստ բրիտանացի դիվանագետի՝ Թորհրդային Միությունը նպատակադրվել է ցանկացած գնով ստանալ Արևելյան Անատոլիայի տարածքը (խոսքը գնում է Թուրքահայաստանի մասին - Ք. Մ.), ինչ նրա գնահատմամբ՝ ծավալապաշտություն է:

Վերը ներկայացված բրիտանական արխիվային փաստաթղթերը վկայում են, որ պաշտոնական Լոնդոնը հետաքրքրված է եղել այս խեղրով և ուշադրությամբ հետևել է Անկարայի ու Մոսկվայի քաղերին՝ միջոցներ փնտրելով Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու համար: Դրանցից կարելի է նզրակացնել, որ բրիտանացի դիվանագետներն լավ են կատարել Թուրքիայի իրավապաշտպանի իրենց ստանձնած դերը և օգտագործել են ցանկացած հնարավորություն տարածքային պահանջատիրության հարցը փակուղի մտցնելու համար:

## ԱԼԵՎՈՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԲԱՆԻՉԱՑԻԱՑԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԹՈՒՐԿԻԱՑՈՒՄ 1960-ԱՎԱՆ ԹԹ.

Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին տարիներին ալևիները գլխավորապես կազմում էին գյուղական համայնքի մի մասը՝ բնակվելով առավելապես երկրի հարավ-արևելյան շրջաններում: Հիմնականում ազգությամբ թուրք ալևիներով բնակեցված շրջանները միշտ եղել են Կայսերի, Սվազ, Դիվրիզ նահանգները, իսկ քուրդ ալևիներով բնակեցված շրջանները՝ Թունջելին, Էլազիզը և Մուշը: Փոքր թվաքանակով ալևիներ բնակվել են նաև Միջերկրական ծովի ափամերձ շրջաններում<sup>1</sup>: Մակադն տասնամյակների ընթացքում նրանց մեծ մասը գյուղից տեղափոխվել է քաղաք՝ բնակչության հաստատելով հատկապես Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում և այլև: Այս քաղաքներում բնակվող ալևիների վերաբերյալ, աակադն, տեղեկությունները բավականին սուղ են և հուսակ չեն:

Սկզբում՝ մինչ տեղաշարժը դեպի քաղաք, ալևիները փակ համայնք էին, և անձանտթներին դժվար էր թափանցել նրանց ներհամայնքային կյանք: Սակայն հանրապետության հռչակումից հետո ալևիների նկատմամբ սկսված ճնշումները՝ հատկապես քրդական ապստամբությունների ժամանակ քրդերով և նաև ալևիներով բնակեցված բազմաթիվ քաղաքայրերի ոչնչացումը և դրանց բնակչության տեղահանումը, ինչպես նաև սոցիալական խնդիրները, որոնք այդ շրջանների տնտեսապես փակ լինելու արդյունք էին, մեծ հոսք առաջացրեցին դեպի երկրի արևմտյան շրջաններ և հատկապես մեծ քաղաքներ, ինչի արդյունքում խախտվեց ալևիականության գաղտնիության սկզբունքը, և համայնքը ժամանակի ընթացքում դարձավ ավելի թափանցելի:

Իրենց բնակավայրերից արտագաղթելու առաջին ալիքը սկսվեց 1937-38 թվականներին՝ Դերսիմում տեղի ունեցած արյունալի իրադարձություններից հետո, երբ դաժանաբար կոտորվեցին

<sup>1</sup> 1919թ. օգոստոսի ավալներով՝ ջզբաշեքի թիվը Կիլիկիայում հասնում էր 50 հազարի: Ssu. Vahé Tachjian, *La France en Cilicie et en Haute-Mésopotamie Aux confins de la Turquie, de la Syrie et de l'Irak (1919-1933)*, Paris, Editions Karthala, 2004, p. 82

և տեղահանվեցին հարյուր հազարից ավել բնակիչներ: Հարկավոր է ընդգծել, սակայն, որ այս սարսափելի դեպքերից հետո բազմաթիվ ակնինք, ուրիշ տարահանվել էին Դերսիմի իրենց բնակավայրերից, 1940-ական թվականներին վերադարձան ինչ «հակառակ կառավարության վարած ծայրահեղական քաղաքականությանը: Սակայն հաջորդ տասնամյակների ընթացքում կրկին ստիպված եղան լքել իրենց բնակավայրերը՝ այս անգամ արդեն սոցիալական ծանր պայմաններից ելնելով՝ օտար վայրերում՝ Թուրքիայի արևմտյան շրջաններում կամ Եվրոպայում, աշխատանք գտնելու նպատակով:

Այնուամենայնիվ մինչև 1950-ական թվականներն ակնների արտագաղթը գյուղից դեպի քաղաք, ընդհանուր առմամբ, նշանակալի չէր, եթե ինքնից չհաշվենք սեզոնային աշխատողներին, ովքեր գնում էին, օրինակ, Սև ծովի ավաամերձ շրջաններում միջոց հավաքելու կամ շրջանային կենտրոններում ժամանակավոր աշխատանք կատարելու:

Արտագաղթի եիմնական ալիքն սկսվեց 1950-ական թվականների վերջին և լայն թափով շարունակվեց 1960-ական թվականների ընթացքում՝ եիմնականում պայմանավորված լինելով երկրում կառավարության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության հետ:

Դերսիմի իրադարձություններից հետո մտա մեկ տասնամյակ ակնները շարունակում էին ծավալել ընդհատակյա ներհամայնքային կրոնական գործունեություն՝ հետքավորինս հեռու մնալով քաղաքական իրադարձություններից: Սակայն արդեն 1950-ական թվականներից կրանք սկսեցին աջակցություն ցույց տալ դեմոկրատական կուսակցությանը, քանի որ դժգոհ էին միակուսակցական ռեժիմից և կարծում էին, որ բազմակուսակցական համակարգը կբարելավի համայնքի դրությունը<sup>2</sup>:

Բայաթ-Մեղեդերես կառավարության վարած քաղաքականության արդյունքում օգտվելով ստեղծված քաղաքական բարենպաստ իրադրությունից, երբ որոշ չափով ազատություն տրվեց կրոնական հարցերին, 1950-ական թվականներին ակտիվացան բոլոր միաբանությունները և աղանդները, այդ թվում նաև բեքթաշիական և ակիական, որոնք գաղտնի կամ ակնհայտ կերպով կատարում

<sup>2</sup> David Shankland, *The Alevis in Turkey*, New York, Routledge Curzon 2003, p. 24

էին ծիսական արարողություններ՝ կրելով կրոնական հագուստներ<sup>1</sup>:

Մակայն այդ գործընթացը երկար չտևեց, քանի որ ալևիները դեմոկրատական կուսակցության վարած քաղաքականությունից հիասթափություն ապրեցին այն բանից հետո, երբ երկրում սկսեցին հեչել կոչեր՝ մզկիթներում աղոթելու, արարելն ազան կանչելու և այլնի մասին: Դեմոկրատական կուսակցությունը, կրոնական սուննիամետ քաղաքականությունից բացի, վարում էր նաև տնտեսական խտրական քաղաքականություն, որն անմիջականորեն ազդում էր նաև ալևիների կենսամակարդակի վրա. կատավարությունն աջակցում էր խոշոր հողատերերին, ինչի պատճառով բազմաթիվ գյուղացիներ, որոնց թվում էին բազմաթիվ ալևիներ, հողագուրկ էին դառնում: Այս իրողությունը պատճառ էր դառնում մեծ քանակությամբ գյուղացիների դեպի քաղաք արտահոսքի՝ դատարկ թողնելով բազմաթիվ ալևիական գյուղեր<sup>2</sup>:

Մակայն եշանակալի է այն հանգամանքը, որ քաղաքային միջավայր տեղափոխված և հարազատ բնակավայրերից կտրված ալևիների երկրորդ սերունդը՝ որպես հավաքական ինքնություն, ճանաչում էր ալևիականությունը, այլ ոչ թե ազգությունը, ինչպես, օրինակ, քուրդ ալևիների պարագայում, ովքեր հայտարարում էին, որ «ոչ թե քուրդ եմ, այլ ալևի»<sup>3</sup>:

1960-ական թվականներին Թուրքիայի քաղաքական դաշտում ավելի ակնառու դարձավ ալևիների և հատկապես ալևի-քուրդերի դերը, որոնք ձգտում էին գրավել քաղաքական սպեկտրի առավել ձախ թևը: Դա մի կողմից հետևանք էր այն իրողության, որ աստիճանաբար սկսել էր բյուրեղանալ Թուրքիայի քաղաքական դաշտը, իսկ մյուս կողմից՝ շարունակվում էր սուննիզմի արմատականացման գործընթացը: Արդյունքում, պատմական հին արմատներ ունեցող ալևի-սուննի հակամարտությունը, քաղաքական մրցակ-

<sup>1</sup> Раффи Кондикчан, Турция: мусульманские политики в ислам, Ереван, Издательство АН АрмССР 1983, стр. 147

<sup>2</sup> Orul Çabğlar, "Alevilerin tarihinden kritik sayfalar", *Aleviler ve de ölmek istiyoruz* geneli/ de, İstanbul, Doğan kitap, 2005, s. 164

<sup>3</sup> Kristina Kehl-Bodrogi, "Kurds, Turks, or a people in their own right? Competing collective identities among the Zazas", *The Muslim world*, Vol. LXXXIX, No. 3-4, July-October, 1999, p. 446

ցույցան ձևով, երկրում նոր ուժղեությունը սրվեց որպես ձախերի և աջերի պայքար, և ալեխների մի մասը սկսեց ալեխականությունը դիտել սոցիալիստական և մարքսիստական գաղափարախոսությունների քողի տակ:

Այս ամենը տեղի էր ունենում լայն թափով շարունակվող արտագաղթի ֆոնի վրա, ինչի արդյունքում կասրահում էին ալեխական բնակավայրերը, իսկ ալեխականությունը սկսել էր ձևափոխվել քաղաքային միջավայրում:

Աշխատանք գտնելու նպատակով ժամանակավոր իրենց բնակավայրերից մեկեան գյուղացիները, անգամ աշխատանքի ավարտից հետո, գյուղ չէին վերադառնում, այլ փորձում էին բնակություն հաստատել Ստամբուլում կամ գոնև այդ քաղաքին ավելի մոտ ընկած շրջաններում, քանի որ գյուղական համայնքներում կրանց սպասում էր գործազրկությունը, կամ, լավագույն դեպքում, ցածր վարձատրվող աշխատանք:

Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր ալեխներն էին իրենց կամքով արտագնա աշխատանքից հետո բնակություն հաստատում ծննդավայրից հեռու: Պատճառն այն էր, որ ալեխական գյուղական համայնքները փակ էին արտաքին աշխարհի համար, և արտագնա աշխատանքի մեկեանների պատճառով խախտվում էր գաղտնիության սկզբունքը, ուստի գյուղական համայնքից դեպի քաղաք հեռացող ալեխների համայնքի անդամներն իրենք այլևս չէին ընդունում<sup>4</sup>:

Իրականում քաղաքաբնակ դարձած ալեխները հիմնականում չէին կարողանում չխախտել ալեխական գաղտնիության սկզբունքները և իրենք էլ արդեն ստիպված այնքան խստությամբ չէին վերաբերվում թաքիայի ինստիտուտի կիրառմանը, որքան առաջ, չնաշված այն քիչ թվով ալեխներին, որոնք մինչ այժմ էլ դեռ թաքցնում են շրջապատում իրենց ալեխական ինքնությունը<sup>5</sup>:

Այս երևույթը բավական ձևափոխում է ալեխականության հիմնական դրույթները՝ փոանցելով կրոնական բազմաթիվ սովորույթների և ընդհանրապես ալեխականության գլխավոր սկզբունքների հետագա գոյությանը՝ մեծապես փոփոխելով կատարվող

<sup>4</sup> Martin van Bruinessen, "Muslims, Minorities and Modernity: The restructuring of heterodoxy in the Middle East and Southeast Asia", <http://www.let.uu.nl/~martin.vanbruinessen/personal/publicacions/Orade%20korte%20versie.htm>

<sup>5</sup> Ali Yaman, "Kizilbasli Alevi Dedesi", <http://www.alevibektasi.org/adedes.htm>

արարողությունների կատարման եղանակը և ստիպելով ակիևներին այլ տեսանկյունից նայել սովորույթներին և ընդհանրապես ակիականությանը՝ որպես կենսակերպ:

Հարկ է եշել, որ ակիականության ձևափոխությունը, թեև անհամեմատ դանդաղ ընթացքով, սկսվել էր դեռևս անցած դարի առաջին քառորդում, երբ 1925թ. երկրում արգելվել էր ակիական արարողությունների անցկացումը: Չնայած բազմաթիվ ակիևների համառ ջանքերին, ովքեր գաղտնի կերպով շարունակում էին կատարել ծեսերը՝ սերնդներունը փոխանցելով դրանց անցկացման կարգը, այնուամենայնիվ արգելքն իր ազդեցությունը թողեց, և արդեն 1980-90-ական թվականներին, երբ սկսվեց ակիական գարթակը, շատ քիչ թվով ակիևներ էին հիշում կրոնական արարողությունների անցկացման կարգի մասին:

Առաջին հերթին քաղաքային միջավայրում փոխվեց ծիսակատարությունների անցկացման կարգը, հատկապես ջեմեյիների կոնցեպցիան, որոնք հասնիսանում էին ակիևների բոլոր կրոնական արարողությունների անցկացման և հանդիպումների վայրեր: Թուրքիայի մեծ քաղաքներում գործող ջեմեյիները դարձան բազմաֆունկցիոնալ հաստատություններ, որտեղ, զուտ կրոնական արարողություններից բացի, կատարվում էին նաև մշակութային այլ միջոցառումներ: Բնականաբար, տեղի ունեցող համաքույթները, իրենց ձևով և եղանակով, տարբերվում էին նախկինում գուդական վայրերում կատարվածներից:

Ավելի ուշ ակիական ինքնագիտակցությունը հատկապես երիտասարդության շրջանում ուժեղացելու նպատակով ծիսակատարությունները մեծ քաղաքներում սկսեցին անցկացվել հարսանյաց սրահներում և սպորտային դահլիճներում: Այս հիմքի վրա կրկին ծաղկում ապրեց ակիական երաժշտությունը և պոեզիան: Աղյուսքում, ակիական սովորույթները և ծեսերը սկսեցին կատարվել ոչ թե որպես կրոնական, այլ սովետական աշխարհիկ եղանակով՝ միայն երգի և պարի միջոցով՝ շատ դեպքերում դիտվելով որպես ուղղակի ակիական մշակութային համաքույթներ:

Քանի որ քաղաքային կյանքը և աշխատանքային միջավայրը գործնականորեն թույլ չէին տալիս ակիևներին տոների ժամանակ պահել ծով և մասնակցել կատարվող բոլոր ծիսակատարություններին, բազմաթիվ ակիևների համար, օրինակ, Մուհաբրեմի արարողությունները եշանակում էին այն ժամանակը, երբ մարտիկ

աշխատանքից հետո հավաքվում էին քաղաքային ալևիական տարբեր հավաքատեղիներում՝ փորձելով չկտրել կապը հարազատների և մյուս հավատակիցների հետ:

Մակայն այս ամենի հետ մեկտեղ քիչ չէին նաև ավանդապահ ալևիները, որոնք պահում էին սովորույթներն անփոփոխ և նրանց շնորհիվ դեռ երկար ժամանակ մի շարք ավանդույթներ կիրառվում էին տասնացիորեն այն եղանակով, ինչպես առաջ, երբ բնակվում էին հիմնականում գյուղական համայնքներում: Այժմ էլ բազմաթիվ ալևիներ դեռևս փորձում են պահպանել ու շարունակել իրենց սովորույթները նաև քաղաքային միջավայրում: Օրինակ՝ որոշ ալևիներ դեռևս խուսափում են իրար միջև տեղի ունեցած վիճաբանությունների լուծման համար դիմել պետական դատարաններ, քանի որ համաձայն ալևիական օրենքի՝ սուննիական, այն է՝ պետական դատարաններ դիմելն արգելված է: Նրանց միջև առաջացած խնդիրները փորձում են լուծել դեղենները՝ հիմնականում կրոնական արարողություններից առաջ տեղի ունեցող քննարկումների ընթացքում, քանի որ, ըստ ավանդույթի, ծեսերի ժամանակ հավաքված մասնակիցների միջև չպետք է լինեն տարաձայնություններ՝ անգամ ամենափոքր հարցի շուրջ<sup>4</sup>:

Ալևիական սովորույթների և ծեսերի մոտացության մյուս պատճառներից մեկն էլ հիմնականում քաղաքներում մեծամասնություն կազմող սուննիների կողմից խորակալության ենթարկվելու վախն էր, քանզի ալևիականությունը հասարակության մեջ դիտվում էր որպես խաբան, ուստի խաշոր քաղաքներում բնակվող բազմաթիվ ալևիներ ջանում էին թաքցնել իրենց ինքնությունը՝ փորձելով նմանվել մեծամասնությանը, ինչը կարճ ժամանակի ընթացքում հանգեցնում էր բազմաթիվ ադժեքների կորստի: Արդյունքում, նրանց հիշողության մեջ կամաց-կանց սկսում էր խամրել հավատքը: Իսկ քաղաքներում տեղի ունեցող արարողությունները սովորաբար կատարվում էին նորովի՝ միավորելով բազմաթիվ այլ ավանդույթներ:

Հենց այդ շրջանում էլ Թուրքիայում սկսում է ձևավորվել այն համոզմունքը, թե ալևիականությունը կրոն է առանց արարողությունների կատարման, որին, սակայն, ընդդիմանում էին բազմաթիվ ալևիներ, ովքեր հաճախում էին տեղական հավաքատե-

<sup>4</sup> Shankland, *The Alevis in Turkey*, p. 7



զինեղը, ինչպես եսն որոշ ղեղներ, ովքեր փորձում էին կենդանի պահել այդ ավանդույթները:

Սակայն իրավիճակը փոխվեց 1980-ական թվականներին, երբ ալեիները հիմնեցին մշակութային միություններ, ինչի արդյունքում ալեիականությունը սկսվեց դիտվել որպես մշակութային և կրոնական ինքնություն: Այս միությունները, որոնք հիմնվեցին մեծ քաղաքներում՝ հատկապես ալեի խիստ բնակչություն ունեցող Քաղամասերում, իսկ մի մասն էլ՝ հին բնօրհայտական եղբայրությունների գործած վայրերում, ջանք չէին խնայում, որպեսզի վերականգնեն ալեիական երիտասարդները և ծիսակատարությունները:

Փոփոխությունների նեֆարկված ալեիական ամենակարևոր կոնցեպցիաներից մեկը՝ ղեղների ինստիտուտը, ուրբանիզացիայի արդյունքում կրած ազդեցությունների պատճառով կանգնել էր լուրջ փորձության առջև: Նախնաստեղ ղեղների դերի անկումը ալեի հասարակության մեջ կապված էր ընդհանրապես ալեիականության կրոնական արժեքների կորստի հետ, քանի որ ալեիների սերունդների միջև առաջացել էր քաղաքական հենքի վրա ձևավորված անդունդ, որն արդեն 1960-ական թվականներին շեշտակիորեն արտահայտվելով՝ գնալով էլ ավելի էր թուլացնում կրոնական առաջնորդների դիրքերը: Մտչիրը կադանում էր նրանում, որ ալեի հին սերունդի ներկայացուցիչները մնացել էին քեմալական գաղափարախոսության աջակիցներ՝ հուսալով, որ պետությունը մի օր պաշտոնապես կճանաչի իրենց իրավունքները, իսկ ալեի երիտասարդությունը, ավելի քաղաքականացած լինելով, կրում էր հեղափոխական գաղափարների ազդեցությունը և միանում էր ձախակողմյան կուսակցություններին, որոնք դիտում էին աունիներին որպես թշնամիներ և պայքարում էին աունիզմին ձուլվելու դեմ՝ համարելով ալեիականությունն ավելի շատ քաղաքական, քան կրոնական ուսմունք: Որոշ ձախակողմյան ալեիներ ընդհանրապես դեմ էին արտահայտվում անզամ իրենց կրոնական հիերարխիային՝ դիտելով այն որպես ժողովրդին ֆեոդալական սկզբունքներով շահագործող դաս, ինչը և ճանգնեցրեց ղեղների առաքելության կարևորության և ալեիական հասարակության մեջ դերի նվազմանը<sup>6</sup>:

<sup>6</sup> David Zeidan, "The Alevis of Anatolia", *Middle East Review of International Affairs*, Volume 3, No. 4, December, 1999, <http://meria.idc.ac.il/journal/1999/issue4/jv3n4e5.html>

Ղեղեններն էլ իրենց հերթին, չունենալով համապատասխան գիտելիքներ, չէին կարողանում հարմարվել տեղի ունեցող փոփոխություններին: Արանք անկարող էին բավարարել նոր սերնդի պահանջները քաղաքային պայմաններում: Հին լեզուներն ու հերթաթեմերն այլևս չէին հետաքրքրում քաղաքաբնակ երիտասարդներին, ովքեր բնադաշտում էին ղեղեններին՝ որպես ֆանտաստիկ պատմություններ պատմողների<sup>10</sup>: Այս իրավիճակը հաճախ հանդիպում էր նաև գյուղական վայրերում: Որոշ բնակավայրերում անգամ եղել են դեսպեր, երբ ղեղեններին փտարել են գյուղից<sup>11</sup>:

Այս ամենին զուգարվում էր նաև ավիիների կողմից երիտասարդ ղեղեններին չընդունելու հարցը, քանի որ ավիների մի մասը կարծում էր, որ երիտասարդները չեն կարող լինել ղեղեններ և պահել սերնդներուղ փոխանցվող ավանդույթները<sup>12</sup>: Ավիլին, ծեր ղեղենների մահից հետո երանց տեղը զբաղեցնող սակավաթիվ երիտասարդ ղեղեններն իրենք չունեին նախկին հետաքրքրությունն իրենց մասնագիտության նկատմամբ, քանզի ձգտում էին ունենալ ավելի նկատարեր աշխատանք: Արդյունքում, 1980-ականներին արդեն գրեթե չկային իրական գիտելիքներ ունեցող ղեղեններ, և ծիսական արարողությունները ղեկավարող ղեղենները ստիպված ծեսի ողջ ընթացքում կանոնակարգը կարդում էին իրենց առջև դրված թղթերից, ինչը ևս մեծապես ազդում էր հասարակության մեջ նրանց ունեցած հեղինակության վրա<sup>13</sup>:

Վերջին շրջանում խնդիրը լուծելու նպատակով կատարվեցին թերթներում ղեղենների ուսուցումներ կազմակերպելու փորձեր, սակայն այս քայլն իր հերթին առաջացրեց մի շարք այլ հարցեր. ինչպե՞ս և ընտրել ղեղեններին, քանի որ միևնույն այս պաշտոնը փոխանցվել է ժառանգաբար, այդպիսի բոլոր ցանկացողները կարող են դառնալ ղեղե՞ կամ ինչպե՞ս կրկնունի ավիական համայնքն այդպիսի ղեղեններին և այլն<sup>14</sup>:

<sup>10</sup> Fuat Bozkurt, "State-Community Relations in the Restructuring of Alevism", *Alevi Identity, Cultural, religious and social perspectives*, Istanbul, Nazime Matbasan, 1998, p. 86

<sup>11</sup> Karin Vorhoff, "Let's reclaim our History and Culture!": Imagining Alevi community in contemporary Turkey", *Die Welt des Islams*, Vol. 38, Issue 2, July 1998, p. 244

<sup>12</sup> Feriyan Altun, "Aleviler soldan aradıkları bulamadı, AKP'yi destekleyenler karıştı", *Aleviler ve de dinler istişleri genel de*, İstanbul, Doğan kitap, 2009, s. 93

<sup>13</sup> Bozkurt, "State-Community Relations in the Restructuring of Alevism", p. 86

<sup>14</sup> Լույս տեղում, էջ 86

Ուրբանիզացիայի ազդեցությունն արևիական սովորույթների և կրոնական ավանդույթների վրա եղանակալի է, սակայն սույն հոդվածի սահմաններում հետքավոր չէ նկարագրել և վերլուծել բոլոր փոփոխությունները: Ուղղակի, որպես օրինակ, կարելի է ելել մուսահիփությունը: Այսպես, արևիները անվանում են խորհրդատու ընկերոջը: Մուսահիփությունը մեծապես փոփոխության ենթարկված, անզամ կարելի է ասել՝ այլևս գրեթե չկիրառվող, բայց ներհամայնքային կյանքում շատ կարևոր դեր ունեցած կոնցեպցիաներից մեկն է. նրա էությունը հետևյալն է՝ ցանկացած տղամարդ պետք է ունենա մուսահիփ, ում ընտրությունը հատուկ արարողությամբ է եղել, և արևի երկու մուսահիփներից մեկի մեղք գործելու դեպքում մյուսն էլ է համարվում «վարկաբեկված»<sup>12</sup>: Սակայն այժմ, երբ համայնքի անդամներից մեկը գտնվում է գյուղում, իսկ մյուսը՝ քաղաքում կամ ավելի հեռու՝ օրինակ՝ Ելրոպայում, հետքավոր չէ կիրառել այս ավանդույթը, ուստի իրականում այն չի գործում:

Ուրբանիզացիայի արդյունքում քաղաքային միջավայրում ձևավորված արևի բեակչության շրջանում արևիականության ձևափոխումը շարունակվում է մինչ այսօր: Յեն հիմնականում քաղաքարեակ դարձած արևիները չեն պահպանում իրենց նախնիների ավանդույթները, այնուամենայնիվ վերջին տասնամյակների ընթացքում սկսված արևիական զարթոնքը երիտասարդ արևիների շրջանում արթնացրել է իրենց արմատները ճանաչելու ցանկություն, ինչպես նաև բազմաթիվ արևիների համակել իրենց կրոնական ինքնությամբ հպարտանալու զգացումով, ինչի արդյունքում նոր սերնդի ներկայացուցիչները փորձում են վերագտնել այն ավանդույթները, սովորույթներն ու պատմությունները, որոնք անմիջապես կապված են ոչ վաղ անցալում իրենց քնկավայրերից դուրս եկած նախնիների հետ:

Արևիականության ձևափոխության գործընթացն իր շարունակական բնույթի պատճառով դեռ երկար ժամանակ կմնա հետազոտողների ուշադրության կենտրոնում:

<sup>12</sup> Ասպարիֆ Տալալյան, Քրիստոնեական բողոքականության և զրոյության հարաբերությունը, Գ. Պոլիս, տպագրության Բ. Մասթեանս, 1914, էջ 51-53

## ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱԼ ՈՐՈՇ ԱՌԱՂԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ժամանակակից թուրք արձակագիր Յաշար Քեմալի ստեղծագործությունները, բացի իրենց թեմատիկ և ժանրային ինքնատիպությունից, առանձնանում են լեզվաաճական պատկերավորման հարուստ միջոցներով: Առհասարակ յուրաքանչյուր գրող ստեղծում է իր լեզվաաճական արտահայտչամիջոցները, որոնք էլ արեանհայտվում են համեմատություններով, փոխաբերություններով, մակդիրներով, շարահյուսական ճկուն հնարքներով և այլն: Հենց այս լեզվական միջոցներով է ձևավորում գրողի լեզուն, որով էլ կա կերտում է իր սեփական գրական ոճը:

Հայ գրականության մեջ, օրինակ, անհետք է շփոթել Զարեհի և Տերյանի, Բակունցի և Թումանյանի ոճերը: Նրանք մշակել են յուրօրինակ լեզվաաճական համակարգ, որով էլ միմյանցից տարբերվում են: Առաջին հերթին դրանք բառերն են, բառակապակցությունները, հետո արդեն նախադասություններն՝ իրենց իմաստային շարահյուսական կադրավարներով:

Այդպես էլ թուրք գրականության մեջ Յաշար Քեմալն առանձնանում է իր ուրույն ոճով: Քեմալի ընտրած ոճը, պատկերավորման հնարանքները համահունչ են նրա գրական թեմատիկային: Եւ այդ պատկերավորման միջոցներով կարողանում է ընթերցողին տեղափոխել իր ստեղծած յուրահատուկ կոլորիտային միջավայրը: Սույն հոդվածի շրջանակում կփորձենք մի քանի օրինակների վերլուծությամբ ցույց տալ գրողի արձակում տեղ գտած համեմատությունների դաստորոմները:

Եւսի կշեռք, որ լեզվաբանների բնութագրմամբ համեմատությունն այլաբանության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, գրողի ոճական հնար, որի կիրառման դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի տպավորիչ է դառնում: Հեղինակն իր խոսքը ազդեցիկ դարձնելու համար առարկայի որևէ կողմը համադրում է արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման այլ

առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը:

Համեմատության մեջ սովորաբար ընդգծվում է նաև համեմատվող առարկաների ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը, և երկու հասկացությունների միջև ստեղծվում է փոխադարձ կապ: Համեմատությունները, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են նեղիմակի (ստուդի) վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ<sup>1</sup>: Այլ կերպ՝ կարելի է ասել, որ ռճական այս նկարը երկու առարկաների կամ երևույթների համադրությունն է, որը կատարվում է նկարագրությունն ավելի վառ դարձնելու համար: Համեմատության միջոցի կիրառումով նեղիմակը երկու երևույթների միջև կապ է հաստատում և մեկի օգնությամբ բացատրում և բնութագրում է մյուսը<sup>2</sup>: Այն ընդգծում է երևույթի հատկանիշներից ամենաէականը: Համեմատությունը հիմնականում բաղկացած է երեք անդամից՝ ա) *առարկա, որը համեմատվում է*, բ) *առարկա, որի հետ համեմատվում է*, գ) *այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը*<sup>3</sup>:

Հաճախ համեմատության ժամանակ երևույթներն իրար կապող հատկանիշը կարող է չնշվել, եթե այն պարզ հասկացվում է: Օստ Պ. Պոդոպանի, համեմատությունը նաև «տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկա կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու, հավասարազնելու կամ ետպահանջելու երևույթն է, որին դիմում են առարկային կարևորություն տալու, նրա զեղազիտական արժեքը բարձրացնելու նպատակով: Միմյանցից հեռու և անհամաստեղծի առարկաների և երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բնաստեղծական շնորհքի արգասիք են, այլև իմացության արտահայտություն»<sup>4</sup>:

<sup>1</sup> Լ. Եզնկյան, *Հայոց լեզվի ռճագիտություն*, ԵՊՀ հրատ., Երևան, 2007, էջ 334:

<sup>2</sup> Է. Ջրբաջյան, *Գրականության տեսություն*, ԵՊՀ հրատ., Երևան, 1980, էջ 228:

<sup>3</sup> Տե՛ս Է. Ջրբաջյան, *եյն տեղում*:

<sup>4</sup> Պ. Պոդոպան, *Բայի եղանակների ռճական էմբրատությունները արդի հայերենում*, Երևան, 1959, էջ 281:

Հետաքրքիր է որ ռճական այս հեարի միջոցով համեմատության մեջ է դիտվում անձն ու առարկան, կենդանական աշխարհի ու մարդու միջև գոյություն ունեցող չափորոշիչները: Մրանք իրենց հերթին գործածվում են առանց այլաբանական իմաստի: Համեմատական ձևերի մեջ են մտնում այն հատկանիշները, որոնք բերող են թե՛ մարդկային էությանն ու կենդանական աշխարհին, և թե՛ բնության երևույթներին: Եթե համեմատուեք փոխաբերությունների և համեմատությունների միջև եղած տարանջատումը, ապա այն բավականին անեկատ է: Քերականագետները ևս այս հարցի մասին ունեն իրենց մտտեցումները՝ իմաստային յուրօրինակ ձևակերպումներով:

Համեմատությունը ևս ռճական դարձույթ է և պատկերավորման մի միջոց է, որով համեմատում են երևույթները, և որտեղ չկա երևույթների՝ մեկը մյուսին չեզոքացնելու միտում: Ընդհակառակը, բաղադրիչներից ամեն մեկը պահպանում է իր հատկանիշը: Իսկ փոխաբերության մեջ միտքը գործածվում է այլաբերական իմաստով և ուրույն չափագանցության մի տեսակ է կազմում, այսինքն՝ փոխաբերվող մի կողմը, ըստ էության, բացակայում է ն գոյություն չունի:

Three subcommittees between local Turkish Aerospace Industries (TAI), Aselsan and the Turkish Mechanical and Chemical Industry Corporation (MKE) and their Saudi counterparts will be set up to explore the possibilities of deeper defense industry cooperation. It is too early to say specifically on which projects the two countries will cooperate. A cooperative project has been in operation for two years between Saudi Arabia and Turkey involving the modernization of several hundred US-made M113 Armored Personnel Vehicles (APV) by the Turkish company FNSS at a plant built in this country. The military cooperation agreement will also enable the joint training of Turkish and Saudi officers.<sup>45</sup> The military sphere of cooperation however is far away of being the main driving force in the deepening partnership between the Kingdom and Turkey. The countries are cooperating closely in the finance sector and investment banking. Turkish banking system is relatively strong which had helped the country to cope well with the world economic meltdown. The Turkish government is assisting all Saudi investors seeking ways to enter the Turkish market. The Turkey is striving to bring more petrodollars into Turkey.<sup>46</sup> Recently it has been announced that Saudi Arabia would consider investing a total of billions of U.S.

<sup>43</sup> "Turkey, Saudi Arabia sign deal for military agreement", *World Bulletin*, 24 May 2010, [http://www.worldbulletin.net/news\\_detail.php?id=58966](http://www.worldbulletin.net/news_detail.php?id=58966), accessed on August 1, 2010

<sup>44</sup> "Turkey creates legal basis for military cooperation", *Today's Zaman*, 29 May, 2010, <http://www.todayszaman.com/tz-web/news-211433-105-turkey-creates-legal-basis-for-military-hardware-cooperation-with-saudi.html>, accessed on August 4, 2010

<sup>45</sup> "Turkey creates legal basis for military cooperation", *Today's Zaman*, 29 May, 2010, <http://www.todayszaman.com/tz-web/news-211433-105-turkey-creates-legal-basis-for-military-hardware-cooperation-with-saudi.html>, accessed on August 4, 2010

<sup>46</sup> "Turkey, Saudi Arabia need to boost trade", *Hurriyet Daily News*, February 8, 2010, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkey-saudi-arabia-need-to-boost-trade-2010-02-08>, accessed on August 2, 2010

dollars in Turkey in four years for the realizations of various kinds of projects.<sup>67</sup>

The trade volume between the two countries currently exceeds USD 5.5 billion, adding that the goal is to increase this figure to USD 10 billion by the end of 2010. Saudi Arabia is the biggest country in the Gulf region and they plan to make infrastructure investments worth 200 billion Euro by the year 2010. The governments are providing necessary support to the private sector to boost the trade and so far they have been successful in the process.<sup>68</sup> Trade is expected to increase even more, as the strategic locations of both countries translate into economies which are in a position to supplement each other<sup>69</sup>. Almost 80 percent of Turkey's imports from Saudi Arabia are comprised of raw oil, while Turkey mainly exports automotive, clothing, textile, iron and steel, vegetables and fruits.<sup>70</sup>

As all over the world also in the Gulf the Turkish construction companies are demonstrating serious activeness trying to get the most of the wealthy and booming region. Turkish construction companies regard the Saudi market as very lucrative. Huge infrastructural programs are envisaged and this will provide enormous opportunities for Turkish companies. The Saudi market is giving year after year more projects for Turkish businessmen in the construction sphere.<sup>71</sup>

The two countries had already signed agreements covering tax exemption, investment protection, and transportation and the cooperation will be further developed and fixed within a legal

---

<sup>67</sup> <http://english.peopledaily.com.cn/90001/90778/90858/90863/6938350.html>, accessed on August 5, 2010

<sup>68</sup> "Turkey eyes share in \$400 Bln Saudi Plan", *Today's Zaman*, 2 April, 2010, <http://www.todayszaman.com/ta-web/news-206137-156-turkey-eyes-share-in-400-bln-saudi-plans.html>, accessed on July 19, 2010

<sup>69</sup> Turkey's Political Relations with Saudi Arabia, Republic of Turkey, Ministry of Foreign Affairs, <http://www.mfa.gov.tr/turkey-a-political-relations-with-saudi-arabia.en.mfa>, accessed on August 5, 2010

<sup>70</sup> Turkey's Commercial and Economic Relations with Saudi Arabia, Republic of Turkey, Ministry of Foreign Affairs <http://www.mfa.gov.tr/turkey-a-commercial-and-economic-relations-with-saudi-arabia.en.mfa>, accessed on August 5, 2010

<sup>71</sup> Turkey and Saudi Arabia: A new Middle East Partnership?, *Stirring Trouble Internationally*, February 7, 2009, <http://www.stirringtroubleinternationally.com/2009/02/07/turkey-and-saudi-arabia-a-new-middle-east-partnership/>, accessed on July 15, 2010

framework. Turkey and the Saudi Kingdom have made deals for cooperation also in such areas as educational exchange programs, cooperation in youth and sports, and maritime transportation. The Turks have made several requests to the Saudi Government to allow Turkish to be broadcast for at least two hours per week, to allow Turkish republic of Northern Cyprus to open in Riyadh a consulate, as well as they asked to make it easier for Turkish business to invest and operate within the kingdom and GCC.<sup>72</sup> Turkey and Saudi Arabia have agreed to launch preliminary works for cooperation in health sector and have already registered a lot of progress in this direction.<sup>73</sup> Thus all the potential spheres of collaboration have registered serious progress and deepening in the recent years having the opportunity to give even a bigger push to the evolution of the strategic partnership in many other spheres.

### Conclusions, limitations

The role of Turkey in the Middle East is changing, as the country is trying to be more active all over the region and initiating a restoration of relations with the Arab neighbors. Turkey is positioning itself on the path of playing a more important role in the whole region, being a mediator between different conflicting sides, serving as a natural bridge between Middle East and the outside world. The connector that Turkey is trying to be concerns not only politics but also the energetic sphere, becoming an essential energetic corridor for the whole world. With the AKP in power the country is trying to strengthen its economic, financial and political presence in the Middle East. Turkey is aims to be active in the most important Arabic and Islamic forums such as the Arab league or the organization of Islamic conference.

Saudi Arabia is playing a role of an important power and a serious partner in the process of the new Turkish orientation in the Middle East. The relations between Turkey and Saudi Arabia are having a serious impact on the formation of a new political picture in the Middle East and the relationship of the Gulf Cooperation Council with other countries. Due to geographical difference and different international politics

---

<sup>72</sup> Olson, 2008

<sup>73</sup> Turkey, Saudi Arabia agree on health cooperation, World Bulletin, 19 January 2010, [http://www.worldbulletin.net/news\\_detail.php?id=52880](http://www.worldbulletin.net/news_detail.php?id=52880), accessed on July 31, 2010

orientation, it is difficult to call the relations as the best, however during the last years there has been a serious improvement. The political and economical stances of both states are following the path of convergence. This work showed that the two states are cooperating in long row of spheres and the partnership is on the path of increase. The countries collaborate in the military sector creating a common ground for a further partnership fostering in other realms. As it was possible to figure out the two countries are very active in collaboration in various spheres. The partnership mostly intensified in the last years and has a potential of serious evolution and growth. The countries have already reached a noticeable trade ratio and the number is growing year after year. The Turkish construction companies are busy in Saudi Arabia as well as all over the Gulf, taking up numerous projects and spreading their networks. Turkey and Saudi Arabia have common in some cases perhaps even identical stances concerning many regional and global problems, namely the Iranian influence in the region as well as the situation in the Gaza strip.

The high-level governmental meetings, non-precedent Saudi King visits to Turkey are nurturing the partnership serving a solid background for a long-term profitable relationship. Personal ties of both country leader are helping to facilitate the process of integration into a common framework. The bilateral meetings on this level will continue shaping the collaboration picture for the two states.

The attitude of AKP is going to be favorable for the development of the relationship between the countries. Turkey will continue the process of restoration of its former role in the region and will be using the potential and power of Saudi Arabia as one of the tools for relationship development with the whole block of GCC and fortifying its position in the Middle East.

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՑՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄԸ  
ՅԱՔՈՒՓ ՔԱՂԻԻ «ՕՏԱՐԸ» ՎԵՂՈՒՄ

Քուրք գրող Յարուսի Քաղրիի արդեն իսկ 30-ական թթ. ստեղծագործությունները վկայում են նրա գրողական բարձր վարպետության մասին: Հեղինակն իր գրվածքներում ձգտում էր ռեալիստորեն անդրադառնալ արդիական թեմաներին, սակայն այս շրջանի ստեղծագործություններում ակնառու են դառնում գրողի զաղափարական հակասությունները, երկվածությունն իրականության գնահատականներում: Մա հասկնապես զգալի է զուդացիական խեղդիքների մեկնաբանություններում: Գյուղացիության սոցիալական, քաղաքական և մշակութային խորը ճգնաժամը չլուծվեց նաև քեմալիզմի հաղթանակից հետո: Ի տարբերություն «դեմոկրատական ուղղությանը» հարող գրողների՝ Քաղրին այն թուրք մտավորականներից էր, ովքեր շարունակում էին հավատալ քեմալիզմի դրույթներին, և իրականության անկատարությունն արդարացնում էին բարեփոխումների անցկացման հապաղումով, ինչպես նաև մտավորականների անտարբերությամբ:

«Օտարը» ("Yaban", 1932)<sup>1</sup> վեպը Քաղրի ամենից հայտնի և ամենից շատ ընթերցված ստեղծագործությունն է, որը մեծ հեղինակություն ու ճանաչում է բերում գրողին: Այն գրողի հինգերորդ վեպն է, որն ինչպես իր հրատարակության ժամանակ՝ 1932թ., այնպես էլ հետագայում՝ թե՛ իր բովանդակությամբ, և թե՛ մատուցման ձևի պատճառով բավականին բուռն քննարկումների առարկա է դարձել<sup>2</sup>: Դեռևս «Օտարը» վեպը գրեցուց տասը տարի առաջ, Քաղրին իր «*Թշնամու այրած բնակավայրերը*» "Barbarların

<sup>1</sup> Y. K. Karoemanoğlu, *Yaban*, İletişim Yayınları, İstanbul, 1932, տե՛ս նույն *İletişim Yayınları*, 1948, 1970, 1990, 2005 հրատարակությունները:

<sup>2</sup> Հալիդե Էդիթ Աղրվալը մի ամբողջ գրում է, որ ցանկացել է այդ վերնաշերտով մի վեպ էլ ինքը գրել, և քանի որ արդեն այդ անունով վեպ կար, նա նրաժամով էլ այդ մտքից՝ իր վեպը վերնաշերտով «Կրակ վերնաշերտի» (56-ն C. Kadret, *Türk Edebiyatında Hikâye ve Roman*, Cilt 2, İstanbul: İnkilâp

Yayınevi, 1968, s. 1535):

*Yaktığı Köyler Ahalisine*<sup>1</sup> վերևագրով հռչակումս անդրադարձել էր թուրք գյուղացու և մտավորականի միջև հետադր շփման և մտավորականի կողմից գյուղացուն մտացուրթյան մատենելու խնդրին: Այստեղ Քաղրին գրում է. «Իրականում երջանիկ սոված էին, քանի որ կշտանալու էին: Երջանիկ մերկ էին, քանի որ հագնվելու էին: Աղետներ տեսա, բայց երջանիկ էին, քանի որ արդարության էին հասնելու»<sup>2</sup>: Մակայե եման արտահայտություններ անող և «Օտարը» վեսի հեղինակ Յակուֆ Քաղրին եռյակը չէր այլևս: Այս վեպը գրելիս նա 1932թ. «Քաղր»<sup>3</sup>

<sup>1</sup> Niyazi Ak, *Yakup Kadri Karacanoglu, İnan-Emir-Fikir-Ödül*, İstanbul, İnciçim, 2001. s. 11-12.

<sup>2</sup> Քաղրայում անեցից հետքսեանք «Քաղր» ամսագրին արժանազան ազդեցություն ունեցող թուրքական ինտելեկտուալ շարժումներից մեկն է համարվել: Ամսագիրը կարևորում և երապարակում էր Քուրդիստի Հանրապետության կազմակերպչական գործունեությունը: Ամսագիրը, որի գաղափարական կողմը խիստ արտահայտված էր, միաժամանակ դարձավ մտավորականների յուրօրինակ մի շարժման եկեղան: 1932-ից 1935 թթ-ի շեքացում երապարակվել է 36 համար: Ամսագրի գաղափարախոսող Շեյքե Սյուրեյա Արևմյուս էր, իսկ մեծաշեղծը պատկանում էր Յուրուֆ Քաղրին, երապարակչական տնօրենը Վեյսը Աղիմ Քարն էր: Իսկ Խանգը Հուսրն Քոչին և Բուրխան Ասաֆ Բոչլին հիմնադիր գրողներն էին Շեյքե Սուրեյան 1931թ. հունվարի 15-ին «Քուրդ օրախոսքի» Անկարայից գլխավոր կենտրոնում «Հնչյունություն և Քաղր» վերնագրով մի դասախոսություն է կարդում, որին մասնակցում էին թե՛ «Քուրդ օրախոսքը», և թե՛ ժողովրդամեծապետական կուսակցության (CHP) լիազոր ներկայացուցիչները: Այս դասախոսությունը հետաքրքրությամբ ընդունվեց թե՛ «Քուրդ օրախոսքի» ներկայացուցիչների, և թե՛ որտեղ չաղաքական անունից կողմից: Հասագրում դասախոսության ակցիան բազմազան և ներկայացվեց պետության լիազոր կառույցներում եղած պաշտոնյաների կարծիքին: Ըստով Յուրուֆ Քաղրին որպես այս գործընթացի շարունակության առաջավորում է ստեղծել ամսագիր. «Ես պատգամավորներին և ժողովրդին ժողովրդական կուսակցության սկզբունքները բացատրելու համար մի ամսագիր եմ յուր ընտանի ցանկանում: Քաղրին այդ մտքին տեղեկություն է մտատափա Քեմալին և սահանգով թողալու յուր» սկսում է այն կատարել: Այս ամսագրի կատարողական առիթով Քեմալ Արաքուրդն ասել է, որ ամսագրի կատարող յուրանառակ ձևով և մեթոդով թուրք ազգին և երկրի կառուցմանն ու առաջադիմությունը ծառայել է: Ամսագրում հիմնականում յուր էին տեսնում այնպիսի հոդվածներ, զորտեղ քարոզում էին Քեմալի առջ քայտած այն հարսի վեց դրոշմները, մասնավորապես՝ հոդվածներում յուրաքանում է կաթիլով: Յուրուֆ Քաղրի Քարաամանուրուղի քաղաքական գաղափարների մասին մանրամասն տե՛ս Seder Palat (Kocuk), "Kadro dergisi" (1) - Derginin ekonomiyic bakisi, "Toplum ve Politika Enstitüsü", Sali, 16 Mart, 2010. Fatih Demirci, *Kadro Hareketi ve Kadrocular*, Düzüncüner Üniv. Sosyal Bilimler Dergisi, sayı 15, 2006. Alparslan Aslan, *Birikim Dergisi*, Güncel Makaleler, 21. 07. 2008. Lütfi Sunar, *Kadro Dergisi*/Hareketi ve

ամսագրի անդամ Յակուբ Քալչիին էր, որի գաղափարները ժամանակի ընթացքում կտրուկ շրջադարձ էին ապրել: Հատկապես քաղաքական գաղափարներն աստվել վառ արտահայտվում էն նրա «Օտարը» և «Անկարա» վեպերում:

Երա վերոնշյալ հոդվածը դարձավ «Օտարը» վեպի հիմքը: Քալչիին իր հոդվածում ասաց քաշած խնդիրներն ավելի ընդլայնեց, զարգացրեց և դարձրեց գրական թեմա: Վեպի առանցքը կազմում է մտավորական-գյուղացի հակասությունը: Վեպում բարձրացրած խիստ արդիական և հրատապ խնդիրների համար այն թուրք գրականագետներն արժևորել են որպես «գրական գոեար»<sup>5</sup>:

1921թ. Արևմտյան ճակատի հրամանատարության հրահանգով «Բոնությունների ուսումնասիրման հանձնաժողովի» (Tetkik-i Mezalim Heyeti) պատվիրակության կազմում Քալչիին այցելում է երկրի տարբեր շրջանները, Մաքարիայի պատերազմից<sup>6</sup> հետո անձամբ շրջում տարբեր գյուղերում, իր տեսածն ու զգացածը, պատերազմի ծանր հետևանքները, որի անմիջական կրողը, ըստ նրա, թուրք գյուղացին էր (որն է խոսք չի ասվում ոչ թուրք գյուղացիության անասելի տառապանքների ու գրկանքների մասին), գրառել և զեղարվեստորեն արտացոլել է իր «Օտարը» վեպում:

Այս ստեղծագործությունն ունի դասական վեպին բնորոշ հատկանիշեր և կառուցվածք: Վեպի դիպաշարը (սյուժեն) ժամանակային առումով ընդգրկում է ասաջին համաշխարհային պատերազմը, Մաքարիայի հաղթանակը, քեմալական շարժման տարիները, իսկ դեպքերը զարգանում են Անատոլիայի (նկատի

Etkileri, Türk Araştırmaları Literatür Derg. Cilt 2, Sayı 1, Sh 511. Ayhan Orhan, *Tek Fecül Yılların Ekonomik Politikası ve Kadro Hareketi*, Kocaeli Üniv. Soey. Bilimler Enst. Sayı 17 (2009). Nevin Coşar, *Kriz, Seyah ve Sülpe*, (1926- 1950), Bağlam Yay. 2004, sayfa 29

<sup>5</sup> Ali Serdar, *Yakup Kadri Karacaoğlan'ın Romanlarında cinsellik*, Ankara, 2002, s. 72.

<sup>6</sup> Հուհանասն իր կորցած տարածքներն ազատագրելու նպատակով Անգլիայի աջակցությամբ 1921թ. նոր հարձակում ձեռնարկեց թուրքական ուժերի դեմ և արևել մտնելով էին ընդհուպ Անկարային 1921թ. օգոստի 23-ին Մաքարիա գետի վրա սկզբում է վճռական ճակատամարտ և անում մինչև ռեպուբլիկի 13-ը, այն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Թուրքական կողմից ուղղակի գործողությունները ղեկավարում էր ինքն անձամբ Մուստաֆա Քեմալը, որն այս հաղթանակի համար ԹԱՄԺ-ը նրան շեռքեց մարշալի աստիճան և «Լալը» («Հաղթող») տիտղոսը (Տե՛ս Մ. Ա. Հասաթյան, Ս. Ֆ. Օրելջոլյու, Յու. Ա.Պետրոսյան, *Թուրքիայի պատմության ուղեցանցներ*, էջ 241-242):



ունի Փոքր Ասիան) Փորսուկ գետի ափին գտնվող փոքրիկ մի գյուղում: Հեղինակի նկարագրմամբ՝ գյուղը ծայրաստիճան անտեր, մոռացված մի փլատակ էր հիշեցնում: Ըստ գեղարվեստական հնարանքի՝ քննալական շարժման հաղթանակից հետո, Հայմանայի հովտում՝ Փորսուկի դաշտին ափամերձ մի գյուղի ավերակների միջից, հեղինակը հայտնաբերում է թուրքական բանակի սպա, վեպի գլխավոր հերոս՝ Ահմեդ Ջելալի պատաստուված հուշատետրը՝ ծայրերն ամբողջովին այրված վիճակում, որի գրառումներն էլ դառնում են վեպի դիպաշարը: *«Արևմտյան ռազմաճակատ ուղարկված հետազոտությունների պատմիրականության կազմում ավերակների միջից՝ քարերի տակից, մոխրացած մարդկային ոսկորների մեջ, ծայրերն այրված հուշատետրի տեսքով այս գրվածքը գտա՝»:*

Ահմեդ Ջելալը փաշայի որդի էր, որը կրթություն էր ստացել Ստամբուլում և ուներ քաղաքային դաստիարակություն: Որպես պահետապին սպա՝ մասնակցել էր առաջին համաշխարհային պատերազմին և կորցրել մի ձեռքը: Անձնական եպիստեմոլոգիայից դիմում է ռազմական հասնակատար Մեհմեդ Ալիին, որպեսզի տեղափոխվի նրա գյուղը՝ Փորսուկ գետին ափամերձ: Վեպի հերոսն ապրում էր հոգևոր ճգնաժամ: Նրա «ծայրենասիրական» զգացմունքերը վիրավորել էին ծախս և անբարո մայրաքաղաքային չինովիիկները: Ահմեդ Ջելալը դեռ երեսուներեկ տարեկան չկար, սակայն իր համար ամեն ինչ արդեն ավարտված էր համարում: Անգլիական ռազմուժի վերահսկողության հետևանքով Ահմեդ Ջելալն այլևս չկարողացավ Ստամբուլ վերադառնալ և հույս ունենալով, թե հասարակ ժողովրդի մեջ կարող է գտնել զաղափարակից-համախոհների, որոշում է հաստատվել գյուղում: Մեր առջև ներկայանում է ամբողջ հետամնաց ու խավարամիտ գյուղի դեմ միանձնյա դուրս եկած մի կերպար: Չնայած նրա թափած բոլոր ջանքերին՝ այդպես էլ չի հաջողվում գյուղում գտնել ակնկալած մարդկային մտերմությունը: Եվ վեպի գլխավոր հերոսը կյանքից հիասթափություն էր ապրում. նա իրեն երբեք այդքան օտար չէր զգացել սեփական ժողովրդից, երբեք այդքան մեկուսի չէր եղել, այստեղ նա սեփական մաշկի վրա

<sup>1</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Fahri İletişim Yayımları*, 2008, s. 15-16.

է զգում իր և գյուղացու միջև եղած անհաղթահարելի անդունդը<sup>4</sup>։ Ի սկզբանե՝ Ահմեդ Ջելալը գյուղացիների հանդեպ ուներ տհաճության զգացում, որը զնալով ավելի է խորանում, և որքան էլ նա փորձում էր թաքցնել, այն չէր վրիպում գյուղացիների այքից։

Հերոսը, որ սոզորված էր քննաչական գաղափարներով, հաստատվում է գյուղում և ամեն կերպ ձգտում է գյուղացիներին ապացուցել, որ ինքն օտար չէ, երանք բուրբն էլ ունեն մի՞ննույն ցավը, երազանքը, փորձում է գյուղացիներին բացատրել Մուստաֆա Քեմալի սկսած պայքարի նշանակությունն ու նպատակները, հաճախ խոսում է թուրք ժողովրդի «անկախության երազի» մասին, որի ձեռքբերումը շատ իրական և մտա է համարում։ Սակայն երան ոչ ոք չի հավատում, գյուղացիները մշտապես թերահավատորեն, օտարոտի լսում էին նրա քարոզները։

Գլխավոր հերոսը մտերմիկ հարաբերություններ է հաստատում միայն Մեհմեդ Ալիի հետ, որը ծառայության ընթացքում իր եթթակա զինվորներից մեկն էր, Մեհմեդի մոր՝ տիկին Ջեյնեթի, եղբոր՝ Իսմայիլի և նրա կնոջ Էմինեի հետ։ Ահմեդը, թե՛ն գյուղում ձեռք է բերում բարեկամներ, սակայն մշտապես նրան ուղեկցում էր այն զգացումը, որ կա մի անանցանելի անջրպետ իր և սեփական ժողովրդի միջև։ Դարզ էր մի բան, նրան գյուղացիները վերաբերվում էին որպես օտարականի։

Մեհմեդ Ալին չնայած պաշտպանում էր Ահմեդ Ջելալին, բայց իր համագյուղացիներից շատ բանով չէր տարբերվում։ Նախկինում զինվորական Մեհմեդ Ալին, վերադառնալով գյուղ, ամբողջովին փոխվում է, և հեղինակը հանգում է այն եզրակացության, որ զինվորական դաստիարակությունը և նմանատիպ բաներն անցողիկ են, եթե մարդը տգետ է սահմանափակ և չի ուզում աշխատել իր զարգացման վրա։ Վեպի մեկ այլ կերպար Բեքիր Ծավուշը նախկինում զինվորական էր, ուստի Ահմեդ Ջելալի հետ մի փոքր ավելի մտա էր։ Թուսակցությունների ընթացքում նրա սզխտությունն անմիջապես այքի էր զարնում։ Իր աշխարհայացքով և մտածողությամբ համագյուղացիներից շատ չէր տարբերվում։

Վեպի ինքնատիպ հերոսներից մեկը տիկին Ջեյնեթն էր՝ Մեհմեդ Ալիի մայրը, որը համակերպվել էր իր ճակատագրի հետ,

<sup>4</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Fabek*, 1990, s. 36.

պատերազմում կորցրել որդիներից մեկին և ամուսնուն: Հեղինակը տոեղծել էր միայնակ տան հոգան ուսերին վերցրած, յքալորության և ցավի մեջ ապրող թուրք կնոջ կերպար<sup>9</sup>:

Վեպի մեկ այլ կերպար Սալիի աղան, որ գյուղի ամենահարուստ մարդն էր, գյուղի տերն ու տիրակալը, իր հագուկապով մուրացկանից չէր տարբերվում: Աչքի էր ընկնում գյուղական պարզուսակ խորամանկությամբ: Կեղեքում էր ողջ գյուղը և դեռ ցանկանում էր իր ձևոքն առնել տիկլի Ջեյնեքի հողակտորը<sup>10</sup>: Անձնական շահերից ելնելով՝ եւ շուտով համագործակցում է թշնամու հետ և գյուղը թողնում բախտի քմահաճույքին: Եուրջ բուրբը ռազմական բախումներ, ավերակներ, սովի ու անմարդկային պայմանների մեջ հայտնված բնակիչներ: Իսկ օտար ուժերի հետ համագործակցող Սալիի աղան և շեյխ Յուսուֆը շարունակում էին տանջել և կեղեքել գյուղացիներին<sup>11</sup>:

Եթե Սալիի աղան տնտեսապես էր կոդոպատում գյուղը, ապա շեյխ Յուսուֆը, որը հոգևորականի դիմակի տակ էր թաքցնում իր խնկական էությունը, նույնն անում էր հոգևոր դաշտում. եւ գյուղացիներին կրոնական և բարոյական ճնշումների էր ենթարկում: Այս երկուսը, լինելով ծայր աստիճան տգետ, խավարամիտ և փեթի, միաժամանակ գյուղի ամենաազդեցիկ և հզոր ուժերը, փորձում էին ամեն կերպ խոչընդոտել Անմեղ Ջելալին: Պետք է ասել, որ վեպի երկրորդական կերպարների փոքր երկխոսությունները եւ բացահայտում են առեւտրակ թուրք գյուղացու ստայնությունն ու աշխարհընկալումը:

Ինչպես պարզվում է վեպից, գյուղը որոշ ժամանակ մտնում է հունական ռազմական երկրորդ միավորման վերահսկողության տակ: Հեղինակը, հույն զինվորներին վերագրելով բարբարոսի հատկանիշներ, նկարագրում է գյուղացիների նկատմամբ իբր նրանց իրականացրած բռնություններն ու կտտանքները, անասելի տանջանքները: Սակայն եւ որոնե խոսք չի գրում, թե թուրք զինվորներն, այսպես կոչված «ազգային ազատագրական պայքարի ներքո» իրականում ինչպիսի բարբարոսություններ են իրագործել ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Տեղին է մեջ րեքել հույն

<sup>9</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Fahri*, 2008, s. 31, 37.

<sup>10</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Fahri*, 2008, s. 63-64.

<sup>11</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Fahri*, 2008, s. 27-28, 48.

թուրքացեալ Յ. Աբջողլուի այն կարծիքը, որ թուրքական պատմագրությունն ամեն կերպ «փորձում է կոտորողին հավասարեցնել գոհին և հելլենականության հանդեպ կազմակերպված բռնագաղթի փաստը բացատրել որպես հունական բանակի Անատոլիայում (նկատի ունի Փոքր Ասիան) ներկայության արդյունքում, մի հանգամանք, որը զրգոեց թուրք ազգայնական շրջանակները և ստաբացրեց երանց հակազդումը»: «Փոքրասիական պատերազմի՝ Անկախության կամ Ազատագրական պատերազմի ընթացքում թուրքական ազգայնական ուժերը շարունակեցին այն գործը, որը սկսվել էր 20-րդ դարի երկրորդ տասնամյակում... Բնորոշ դեպքերից են հույն բնակիչների գանգվածային ջարդերը Այդինի ողջ տարածքում (1919թ. հունիս), Աստակոսի ծոցի հունական, հայկական գյուղերում, ինչպես նաև Լիկենիայում և Լիկոսնիայում (1920)»<sup>12</sup>:

Այստեղ կարող ենք ավելացնել, որ ոչ միայն թուրք պատմագրությունն, այլև թուրք գրականությունը, տվյալ դեպքում Յաջուսի Քաղրին իր այս վնասով քողածածկելով քեմալականների իրական չովինիստական և պանթուրքական եությունը, ամեն կերպ ձգտում է շարժմանը հաղորդել վնհ, հայրենասիրական գաղափարներ:

Քաղրիի մտնեցումը թե՛ գյուղին, և թե՛ գյուղացուն հակասական է: Հաս նրա՝ այդ մարդիկ պատերազմի հետ ընդհանրապես որևէ կապ չունեն և չեն էլ ուզում ունենալ: Ի հակադրություն նրանց՝ քեմալական պայքարի վերաբերյալ միանգամայն այդ դիրքորոշում ունի գլխավոր հերոսը՝ Անմեղ Ջելալը. նա ապրում էր քեմալական գաղափարներով, դրանք իր կյանքի միակ իշխաններն էին: Լույնիակ պարտությունից հետո նահանջող «թշնամու զոքրերի կատարած ավերածություններին» գյուղացիները որևէ հակազդեցություն ցույց չեն տալիս: Երանք այդ փաստը կարծես

<sup>12</sup> Հուլիների և հոգիների մաքրագրությանը փոքրասիական տարածքներից տեղի է ունենում մինչև 1920թ. տնտես վերջը: «Հայնաևար ստմանք, հեռուում են հունկաղ պրակտիկային. նախ և ստաղ բնակչության բանկարմեք և այլ շարժական անկցվածքային տարրերի կազմաուտը, որոնք չորսխառ բնակիչները ասիական էին հանկնկ որպես փրկագին, որպեսզի մազապարծ լինեն տառալի վատ արկաններից՝ Երկրորդ փուլում՝ զինված ուժերի կողմից գյուղերի շրջապատումը և ամեն կերպ երանց ոչնչացումը» (Յ. Աբջողլու, *Անկեղծ Արդուի բնայնջումը*, էջ 102-103):

հեազանդությանը են ընդունում: Գյուղացիների այս անտար-  
բերությունը և ստրկական հոգեբանությունն Ահմեդին քիչ է մնում  
խելագարության հասցնել: Փատորեն Ահմեդի բոլոր գրույցներն ու  
բացատրությունները գյուղացիների հետ անցել էր ապարդյուն:

Քաղրին, իր այս վեպի գլխավոր թեմա դարձնելով տարիներով  
լքված գյուղացու և մտավորականի միջև եղած խորը անջրպետը,  
բացեիրաց ներկայացնում է որ քաղաքից եկած յուրաքանչյուր  
մտավորական գյուղացու համար ընկալվում է որպես օտարական:  
Սակայն քարանձավային պայմաններում ապրող մարդկանց միջև  
հայտնված Ահմեդ Ջելալի իր համար ստեղծում է պատրանք, որ մի  
օր ինքը կարող է ապացուցել, որ օտարական չէ: Ակնհայտ էր,  
ասկայն, որ թուրք մտավորականը, թուրք «լուսավորիչը»  
թուրքական «այնանձավալ և խավար այս աշխարհում» մի օտար,  
միայնակ մարդ է: Ահմեդ Ջելալին թվում էր, թե վերադարձել է  
ղեպի իր արմատները, և նա որքան խորն էր ընկզմվում  
գյուղացիների հետ հարաբերություններում, այնքան ավելի է զգում,  
թե ինչպես է հեռանում իր արմատներից: Միայնության ցավը  
մեղմելու համար ցանկանում է զեպի «իր հուռը վերադառնալ,  
ասկայն հուռը արդեն ցրված է, եսխրապանը ուղղաբերձ ժայռի  
բարձրուկից բարձրաձայնում է, փորձում հավաքել ցրված հուռը,  
բաց՝ իզուր»<sup>13</sup>: Եուսուով Ահմեդը զգում է որ ինքն էլ գյուղացիների  
պես ամեն ինչ թողնում է ճակատագրին: Հերոսի տրամաբա-  
նությունը շատ հաճախ անդի է տալիս գյուղացիների բեազդներիին:  
Եվ հաճախ հերոսը կրկնում է «Ձեզ ո՞վ կարող է օգնել, ձեզ համար  
եթե երկնքից հրեշտակներ էլ իջեցնեն, մինևույն է, չեն կարող  
փրկել: Որովհետև ամենից առավել ձեզ պետք է ձեզանից փրկել»<sup>14</sup>:

Յակուբ Քաղրին վեպում ձգտել է համակողմանիորեն կենտել  
մտավորական խավի կողմից մոտաջված, անտեսված գյուղացուն,  
ցույց տալ նրա զրկանքներն ու ծայր ատոհճան աղքատությունը:  
Ստեղծված իրավիճակում հեղինակը բացահայտորեն մեղադրում է  
միմիայն մտավորականությանը և փորձում գյուղացու ողբը  
հասցնել թուրք մտավորականին ու վերջինիս էլ պատաս-  
խանատվության կանչել նրանց ճակատագրի համար: Յակուբ

<sup>13</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yeden*, 1990, s. 45.

<sup>14</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yeden*, 1990, s. 21, 25, 54.

Քաղրի Քարասոսանսոլուն իր հողվածներից մեկում ասում է «Ես մաքուր, զտարյուն անատոլիացի եմ: Անատոլիայում գյուղի և ավանի, ավանի և քաղաքի միջև մեծ տարբերություն չկա»<sup>15</sup>: Մակայն «Օտար»-ը վեպում հեղինակը ներկայացնում է մտավորականության և հասարակ ժողովրդի, գյուղացու և քաղաքացու միջև եղած խորը անջրպետը: Հետաքրքրական է որ Քաղրիի նախորդ գործերի և «Օտար»-ի գյուղացու կերպարները միմյանցից զգալիորեն տարբեր են: Մի կողմից հեղինակը նկարագրում է երկրի փոքրասիական բարեբեր հողերի վրա գյուղացու չքավոր ու անկարող վիճակը, մյուս կողմից՝ կերպավորում է պատերազմի տարիներին դաժան պայմանների դատապարտված թուրք գյուղացուն՝ որպես ժլատ, եսասեր և բացասապես զուրկ վեհ զգացումներից, որը դարձել էր «անմշակ հողերի նման անզգամ»:

Գլխավոր հերոս Ամեդ Ջելալը ցանկանում էր միաձուլվել գյուղացիներին և աբախով վերագտնել իրեն. «Նրանց պես լինել, նրանց պես նստել վեր կենալ, նրանց լեզվով խոսել»: Ամեն ինչ կանեմ նրանց պես: Մակայն ինչպե՞ս մտածեմ նրանց պես»<sup>16</sup>: Նման շեշտադրությամբ հեղինակը եզում է այդ գաղափարի անհնարին լինելը: Անձի և հասարակության միջև ներդաշնանակությունը միայն արտաքենապես լինել չի կարող, նրանց և՛ մտքերը, և՛ զգացումները պետք է եռյակը լինեն: Հեղինակը նաև փորձում է պարզաբանել մտավորականի և գյուղացու միջև տուեղծված անդունդի պատճառները. ըստ նրա՝ դրանք գալիս են դեռևս Օսմանյան ժամանակաշրջանից, դրանք մշակութային անհամատեղելիության հետևանքով ասաջացած էրևույթներ են: Քարասոսանսոլուն մտանախոյ իսկադրությունը վեպում զարգացնելով՝ կերպավորում է քեմալական գաղափարները կրող, երկրի լուսավոր ապագայի հանդեպ հավատով տոգորված մտավորականների և հավատը կորցրած խավարամիտ գյուղացիների, որոնք չէին էլ հասկանում, թե իրենք ովքեր էին: Ամեդ Ջելալը և գյուղացիները տարբեր աշխարհների են պատկանում, նրանցից մեկը կիրք՝ քաղաքացի է, իսկ մյուսը անզրագետ գյուղացի: Գալվաններում հասա-

<sup>15</sup> Atilla Özkırımı, *Yaban Üzerine*, İstanbul, 2000, s. 15-16.

<sup>16</sup> Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, s. 12.

բակ ժողովրդից շատերը դեռևս չունենին ընդգծված թուրքական ինքնության գիտակցություն, նրան մտո գերիշխող էր իսլամական հավատականության պատկանելու զգացումը: Ցեն պատերազմում հիմնական կտվող ուժը կրկին գյուղացիներ էին, սակայն նրանք «ընդամենը մի հաս էին, որ ղեկավարվում էին մտավորական սպաների կողմից»: Անմեղ Ջելալն ասում է, որ հաղթանակը պետք է ոչ թե գյուղացիներին փրկելու, այլ հողերը պաշտպանելու համար: Եվ միայն պաշտպանված երկրում կարող է գյուղացին գտնել իր երջանկությունը<sup>17</sup>:

Քաղրին գյուղացիների չքավոր վիճակը պարմանավորում էր մտավորականների հետ ունեցած խորը անջրպետով, մյուս կողմից էլ՝ նույն գյուղացիներին մեղադրում քարացածության մեջ: Հենց այս ելակետից էլ նա կերպավորել է թուրք գյուղացուն իր «Օտարը» վեպում: Քաղրիի այս ստեղծագործությունը կարծես նրա «Մոզոմ և Գոմոր» վեպի շարունակությունն է, որում նա հիմնականում բացահայտված են թուրք մտավորականի և ժողովրդի փոխհարաբերությունները:

Վեպում Քաղրին, իդեալականացնելով Քեմալ Աթաթուրքին, զարգացնում է այն միտքը, որ միայն նա և նրա հետևորդները հանձն առան «ազգի փրկության պատասխանատվությունը»: Բայց կար մի սովոր գանգված, որ չէր հավատում ո՛չ նրանց, ո՛չ էլ ազգին, նա հավատում էր միայն Ստամբուլում նստած խալիֆին: Գյուղացին թերթեր չէր կարդում, արտաքին աշխարհի հետ կապ չունենալու հետևանքով ծանոթ չէր Մուսաֆա Քեմալին: Անմեղ Ջելալը գյուղով անցնող քեմալական զինվորների մասին պատմում էր, որ «նրանք բանակի սպայից առավել են, նրանք կռուսական ուսմունքի առաջնորդների պես են»: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Անմեղ Ջելալն ինքն էլ մի քեմալական զինվոր էր: Վեպի անմիջապես կեսից պատերազմի հետ կապված լուրերը, խոսակցությունները և իրադարձություններն առաջին պլան են մղվում, և դրան զուգահեռ Անմեղ Ջելալի և գյուղացիների միջև հարաբերությունները որակապես փոփոխության են ենթարկվում: Գյուղացիները, նրան թշնամի կարծելով, ցանկանում էին հաշվեհարդար տեսնել: Սակայն «Հիսուսն իրեն խաչողներին

<sup>17</sup> Yakup Kadri Karacanoglu, *Yaban*, s. 53.

ներում էր, քանի որ կրանք չգիտեին, թե ինչ էին անում՝ Աստածաշնչյան այս դրույթը Անմեղը դարձրել է գյուղացիների հետ շփման իր կարգախոսը<sup>18</sup>:

Անմեղ Ջելալը գյուղ է գալիս «ոչ միայն թշնամու հալածանքներից», այլև «իր ստուապանքներից» պաշտպանվելու համար<sup>19</sup>: Եւ ինչպես գյուղ գալուց առաջ, այնպես էլ հետո, իր մեջ միշտ մի նեղություն, մի անեկարագրելի անհանգստություն է կրում: Գյուղ գալով՝ սկսում է մտածել, թե «ինչ-որ թանկագին բանից է կտրվել», սակայն միևնույն ժամանակ երևում է, որ «եսևում ոչինչ և ոչ մեկին» էլ չի թողել<sup>20</sup>: Իսկ թե ինչ է թողել ետևում՝ մայր կամ սիրած էակ, այդ անեղությանը ոչինչ չի ասում և հեղինակն էլ որևէ հուշում չի տալիս ընթերցողին հասկանալու համար, թե որևէ գոյություն չունեցող այդ «թանկ բանը»: Մնացում տեսնում ենք մի Անմեղ Ջելալի, ով իրեն ներկայացնում է որպես ամեն ինչը կորցրած և մեծ ցավ ապրող մի մարդու: Անմեղ Ջելալի՝ «Ջզում եմ ինձ այնպես, կարծես ողջ-ողջ թաղված լինեմ գերեզմանոցում»<sup>21</sup> խոսքերից հասկացվում է, որ եւ կորցրել է ապրելու ցանկությունը: Եւր կյանք ստեղծելու նպատակով բոլորովին անծանոթ մի գյուղ գնալը եւ նույնացնում է «ողջ-ողջ թաղվելու» հետ: «Երեսուներեք տարվա ավիրված գոյությունը այլևս անդառնալի համարվող չհամտեման երջանկություն է թվում: «Նեւ երեսուներեքս չբուրած, ամեն ինչ վերջացած է, գործն ավարտված է: Պետք է խոստովանենք, որ սերը, ցանկությունը, կիրքն ու հույսն այլևս կորած են ու հանգած, պետք է խոստովանենք՝ փակ են երջանկության և հաջողության դռները: Իսկ այստեղ գալով՝ դատապարտված եմ ծառի պես աստիճանաբար չորանալուն»: Երբ գյուղն անցնում է հույն գինվորների ձեռքը, Անմեղը կալանավորվում է և նրա մոտ դարձյալ զույս է բարձրացնում մահվան մասին երևակայությունը: Չապրելու կամ էլ ողջ-ողջ թաղվելու զգացումը կոր պատկերացմամբ է ներկայացվում: «Խեղճ Անմեղ Ջելալը մահացավ և նրան գերեզմանոցում դժոխքի հրեշտակներն են սպասում: Որովհետև

<sup>18</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 44:

<sup>19</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, 1990, էջ 44:

<sup>20</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 41:

<sup>21</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 35:



այս երկրի վրա ապրել է ինչպես քավարանում»<sup>22</sup>։ Ահմեդը չէր կարողանում կողմնորոշվել՝ արժանի է ապրելու, թե՛ մտնելու։ Ինչպես Յաքուփ Քադրիի գրեթե բոլոր տղամարդ կերպարները, այնպես էլ Ահմեդ Ջելալի իրեն զգում է «չմեծացած երևիսայի պես», ինչն էլ բացատրում է Մեհմեդ Ալիի պաշտպանության տակ գտնվելու նրա մղումը։ «Ես ծաղրանու չեմ, սակայն, անկասկած, միամիտ և մեծ երևիսա եմ»<sup>23</sup>։ «Մեծ երևիսա» պատկերացումը, ինչպես մյուս վեպերում, այնպես էլ այստեղ, ամբողջակամեջում է անպաշտպան աշխարհում անպաշտպան մարդու վիճակի հետ։ Իր հերոսի անպաշտպանվածությունն ու հեշտությամբ վնասվելու հոգնիճակը բացատրելու համար հեղինակը դիմում է մեկ այլ պատկերի։ Ահմեդն իրեն նույնակամեջում է պոչը կտրած շան հետ։ Երբ գյուղ են գալիս թուրքական բանակի սպաները, Ահմեդ Ջելալը մի պահ ցանկանում է գնալ նրանց հետ, սակայն հրաժարվում է այդ մտքից՝ իրեն հաշմանդամ և խեղճ զգալու պատճառով։ Այստեղ նա հիշում է՝ դեռես պատերազմի տարիներին ժազմաճակատում իրեն հանդիպած անպոչ շանը։ Նա մտածում է, որ եթե սպաների հետ գնա, կնմանվի հենց այդ շանը, և սպաները նրան «խեղանդամ կենդանու պես» կթաքցնեն թիկուղեքում<sup>24</sup>։ Այստեղ տեսնում ենք, որ Ահմեդ Ջելալի աջ ձեռքի կտրուստը նրա համար ավելի է քան ֆիզիկական արտաք։ Այդ պատճառով ավելի ճիշտ կլինի մտածել, որ Ահմեդի՝ Քավարանում լինելն ու ապրել չկարողանալու հոգնիճակներն ասոցացվում են նրա հոգեբանական անլիարժեքության բարդույթի հետ։

Գլխավոր հերոսի էությունն անողոք է ինչպես շրջապատի մարդկանց, այնպես էլ իր նկատմամբ։ Ինչ բնորոշումներ օգտագործում է գյուղացիների համար, չի զլանում նույնաչափ անձանկներ օգտագործել նաև իր համար։ Ահմեդ Ջելալի՝ քննալական շարժման զաղափարների և էմիսիի հետ կապված իդեալականացված պատկերացումներից բացի՝ վեպում հնարավոր չէ հանդիպել գեթ մեկ տեսարանի, որտեղ գլխավոր հերոսը կլանքին նայում էր դրական հայացքով։

<sup>22</sup> Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 124, 191։

<sup>23</sup> Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 123։

<sup>24</sup> Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 159-160։

Հեղինակը վեպում հստակ ցույց է տվել նաև թուրք գյուղացու և մտավորականի միջև եղած լեզվական, համոզմունքների և աշխարհընկալման տարբերությունների խորը անդունդը: Նա զարգացնում է այն միտքը, որ թուրք մտավորականն էլ իր հեղինակն չէր ճանաչում թուրք գյուղացուն, չգիտեր նրա կենսական և հոգեբանական ծանր խնդիրները: Գյուղացին մաքառելով սևուկ է հայթայթում, զուրկ է բժշկությունից, մաքուր խմելու ջրից, ուսուցչությունից, երկրագործության համար հողերն անտեր են մնացել, չկա անասնաբուժություն, չկան ճանապարհներ, էլեկտրականություն: Գյուղացու այդ վիճակի համար կրկին Քաղրին մեղադրում է քաղաքաբնակին: Հետամանացությունը կարծես գյուղացու համար դարձել էր ետմալ կենսակերպ, գյուղում դպրոցների բացակայության պատճառով գյուղացիները գրել-կարդալ չէին իմանում: Անա այսպիսի պատկերները Քաղրին իր վեպում մերթ ընդ մերթ առաջին պլան է մղում:

Ճաքճաք շուրթերով, արևից այրված երկար դեմքերով, խամրած մազերով գյուղացին պատերազմի հանդես ոխով և զգվանքով էր լքված: Որպես սոցիալական և գաղափարական առաջընթացի արդյունք՝ վնասի վերջում գյուղացիները կամաց-կամաց սկսում են կարտո զգալ երկրի հանդեպ: Այս դրույթով հեղինակը փորձում է թուրք գյուղացու մեջ արմատավորել «ճայրենիքի», «սեփական երկրի» գաղափարը, արթնացնել հայրենասիրության զգացումը՝ շատ լավ հասականաչով, որ այդ երկրի բնիկ տերերը կամ բնաջնջված էին, կամ արտաքսված, կամ էլ բռնի իսլամացված:

Վեպում հաճախ Քաղրիի կիրառած գեղարվեստական մեթոդները կարծես հիշեցնում են բալզակյան մեթոդներին, զրակա-նության մեջ արմատացած ռեալիստական և նատուրալիստական մտածումներին: Նրա մտտ այնքան է խորանում նատուրալիզմը, որ գյուղացուն հետևյալ կերպ է բնութագրում. «Գյուղացիները վարում էին համարյա անասունի կենսակերպ, խղճուկ գոյությունը նրանց դարձրել էր բարոյապես այլանդակ: Նրանք հյուծված, տանքահար եղած, ֆիզիկապես ոչ լիարժեք էակներ են, նրանց այդպես է դարձրել ծանր աշխատանքը, դաժան բնությունը»<sup>25</sup>:

<sup>25</sup> Литература Востока в новейшее время (1917-1945), изд. Московского Ун-верситета, 1977, с. 93.

Որպես հեղինակի հնարանքի ինքնատիպություն՝ կշենք, որ վեպում որոշ կերպարներ համեմատվում են կենդանիների հետ: Այդ շրջանի թուրքական այլ վեպերում նման գուգահեռներն այդչափ վառ չեն դրսևորված: «Գյուլի բնակիչներից ամեն մեկն իր բնում պատասպարված կուրք է»: Հեղինակը վարձում է հայտնաբերել, թե ինչն է ստիպում այդ գյուղացիներին ապրել զուտ կենդանական բնագոյներով: Վեպում կա կենդանիների շատ նմանեցված երկու կերպար՝ Հմիեի ամուսինը՝ Բամայիլը և խորամանկ Սալիի աղան: Հմտորեն օգտագործվել են նաև բույսերը, հատկապես բույսերի երկու տեսակ: Գյուղացիների չորությունը, անպետքությունը, փտածությունը նկարագրելիս հեղինակը սկսում է գուգահեռներ անցկացնել նրանց և հուտած բույսերի միջև: Բակ դրան հակառակ՝ կան նաև կյանքի գեղեցկությունն ու աշխուժությունը խորհրդանշող բույսեր՝ օրինակ՝ Հմիեի կերպարը նունացնում է գեղեցիկ բույսերի հետ:

Վեպի գլխավոր հերոսի ինքնությունը համակողմանիորեն ընկալելու համար կվորձենք նրա կերպարը դիտարկել նաև կլիտղամարդ փոխհարաբերությունների ծիրում: Կշենք, որ կնոջ խնդիրը թուրքական հասարակության մեջ կորովի մեկնաբանություն ստացավ քննալականների օրոք հրապարակախառության, և հատկապես, գեղարվեստական զուսկանության մեջ: Ուստի պատահական չէ որ Քադրիի «Օտարը» վեպում ծանրակշիռ տեղ են զբաղեցնում Ահմեդ Ջելալի՝ կանանց հանդեպ ունեցած ընկալումները, որոնց վերլուծությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացությանը, որ չնայած Թուրքիայում կնոջ նկատմամբ որոշակի ազատամտական գաղափարների տարածման, այնուամենայնիվ, կինը Քադրիի «Օտարը» վեպում դիտարկվում է «ինքնություն և դեմք չունեցող արարած», որին անզամ կին անվանել չէր կարելի:

«Օտարը» վեպում Ահմեդ Ջելալի աշխարհի ու շրջապատի և կանանց ընկալման ձևերը միմյանցից տարբեր չեն: Նրա կողմից կատարվող նմանություններն ու համեմատությունները հիմնականում բացասական ուղղվածություն ունեն: Ինչքան էլ Ահմեդ

Ջելալը գյուղացի կանանց տարանջատի Ստամբուլի կանանցից<sup>26</sup>, նրա երևակայության մեջ կեռջ պատկերը ներկայանում է որպես մի կերպար, որից «պետք է խուսափել»: Վեպի սկզբում գյուղն ու նրա շրջակայքն ուսումնասիրող Ամնեղ Ջելալի հայացքը այնուամենայնիվ ընկնում է նաև կանանց վրա: «Այստեղ գալուցս ի վեր՝ կիս կամ աղջիկ կոչվող որն է արարած չեմ տեսել»<sup>27</sup>: Հետաքրքիր է այն, որ Ամնեղը, գյուղում չհանդիպելով իր պատկերազրոյսի կանանց, նրանց հեզուսկան երանգով անվանում է արարածի մի տեսակ՝ նրանց դուրս թողնելով մարդ կատեգորիայից: Ջինվորական հանձնակատար Մեհմեդ Ալիի հարսանիքի ժամանակ հանկարծ Ամնեղ Ջելալը կանանց մեջ բացասական հասկանիչների կողքին սկսում է տեսնել նաև մի փոքր դրականը. «Նրանց մեծ մասը տան է, կարճանհասակ, գեղամու, սովորականից խոշորամարմին, և, այնուամենայնիվ, ունի հաճելի փափկություն»<sup>28</sup>: Սակայն Ամնեղ Ջելալն ինչքան էլ փորձեր նրանցում գտնել որևէ հրապուրիչ բան, նրանց հետ մերձենալու մտքից տեսանություն էր զգում<sup>29</sup>:

Թեև գրողը փորձում է ցույց տալ այլ երթառտերստ, սակայն իրենից անկախ հեղինակը բացահայտել է թուրքի բնագոյային-անասնական, արհամարական վերաբերմունքը կեռջ նկատմամբ, ինչի ապացույցն են նրա կուպիտ, գոնեիկ բնորոշումները, սիրո ընկալումներն ու մեկնարկությունները: Եուտով պարզվում է, որ Ամնեղ Ջելալը որոշակի «զգացմունք» է տածում հանձնակատար Մեհմեդ Ալիի եղբոր՝ Իսմայիլի կեռջ՝ Էմինեի նկատմամբ: Սակայն դա ավելի շատ կիրք էր, քան սիրո զգացմունք: Եւ վեպի հետզանդ հերոսներից մեկն է: Էմինեի կերպարում Քաղրիի փորձել է մարմնավորել հասարակ թուրք աղջկան: Ամնեղ Ջելալին սիրելով՝ եւ ամուսնանում է Մեհմեդ Ալիի եղբոր՝ Իսմայիլի հետ: Իսկ դրա պատճառը հեղինակը բացատրում է, որ եւ էլ իր համազորացիների նման Ամնեղին ընկալում էր որպես օտարական: Վերջում այլեւ չդիմանալով գյուղական անոնարդկային պայմաններին՝ հունական միացալ ուժերի մուտք գործելուց հետո Էմինեն

<sup>26</sup> Yakup Kadri Karsoomanoglu, *Yaban*, s. 229.

<sup>27</sup> Yakup Kadri Karsoomanoglu, *Yaban*, 2008, s. 34-35.

<sup>28</sup> Yakup Kadri Karsoomanoglu, *Yaban*, էջ 53.

<sup>29</sup> Yakup Kadri Karsoomanoglu, *Yaban*, էջ 54.

համաձայնվում է փախչել Ահմեդ Ջելայի հետ: Այստեղ էմինեն նաև  
 հանդես է գալիս որպես հատուկ սիրո ինքնագոհության զնացող մի  
 կերպար, որ անգամ պատրաստ էր լքել իր ընտանիքը: Փախուստի  
 ժամանակ էմինեն և Ահմեդ Ջելայը ծանր վիրավորվում են:  
 Փախչելով գյուղից՝ երանք, քանի որ վիրավոր էին, թաքնվում են  
 մուսակա զերեզմանոցում: Էմինեն մշակում է Ահմեդի վերքը, և  
 այդպիսով իրականանում է Ահմեդի երազանքը՝ մարմնական  
 հպումը. «Ճիշտ է՝ այդ ձեռքերը մարմնիս վրա հենց այնպես  
 թափառում էին: Ճիշտ է՝ դրանք ստամբուլի տիկնոջ ձեռքերի պես  
 ճերմակ ու փափուկ չէին, ոչ էլ շուշանի հուռով էին բուրում:  
 Սակայն այդուհով ներկված այս հողի վրա դեպի ինձ ձգված այդ  
 կոշտ ու անվարժ ձեռքերը մահվան և կյանքի միջև պայքարի  
 պահին ինձ մոտանալ տվեցին իմ բոլոր ցավերը, տեսիլից տանջվող  
 մարմնիս պատճառեցին վերերկրյա հաճույք»<sup>20</sup>: Երազ և էմինեի հետ  
 հարաբերությունները հիմնված են երևակաության վրա, միայն  
 վեպի վերջին հատվածում է Ահմեդը կարողանում է հպվել նրան,  
 որից հետո միմյանցից բաժանվում են ընդմիջո: Սակայն էմինեին  
 թողնում է մուսակա մի գյուղում՝ պահ տալով նրա մտն իր  
 հուշատետրը: Էմինեն հաշտվում է իր ճակատագրի հետ, իսկ  
 Ահմեդը միայնակ շարունակում է իր ուղին և անձանթ  
 ճանապարհով հեռանում դեպի մշուշոտ ապագա: Վնասում  
 տեսնում ենք, որ երբ հունական բանակի զորամիավորումն այրում  
 է ռոջ գյուղը, զերեվարում գյուղացիներին և վիրավորում էմինեին  
 ու Ահմեդ Ջելային, վերջինս չի գործում այնպես, ինչպես կգործեր  
 «ծայրենասիրության, ազգասիրության կրակով տոգորված»  
 այսպես կոչված քեմալական մուսուլմանականը: Այն պահին, երբ  
 օտար ռազմուժը մտել էր գյուղ, Ահմեդ Ջելայը փախչելու ծրագիր է  
 մշակում: Այստեղ բացահատվում նրա իսկական քաղցրեհիսկան և  
 ետասիրական էությունը: Երբեմն նրա կերպարը նաև հիշեցնում է  
 բուպե ասաջ իր սիրեցյալին հասնելու մասին մտածող աշուղի, թող  
 այս մուլտրված, մերկ և անճար անբռնող սովից գալարվելով  
 մահանա: Ես ոչ ուտելու, ոչ էլ խմելու կարիք ունեմ: Երեկոյան  
 մութն ընկնելուն պես կվերցնեմ էմինեի և կզևամ»<sup>21</sup>: Երբ էմինեն

<sup>20</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 229:

<sup>21</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 233:

սկում է անհանգստանալ Անիեղ Ձելալի վերքի համար, և երբ ավելի ուշ Անիեղ Ձելալը նրա ծնկների վրա հանգստություն է գտնում, այդ ամենը նրան մոտանալ են տալիս իր վատ հուշերը: Լույսիսկ էրազում՝ Էմիենի կողքին, Անիեղը, մի կողմ թողնելով վեպի աստեղծը կազմող մտավորական-գյուղացի հակադրությունը, որոշ իմաստով մտովի մտավորականին հաշտեցնում է գյուղացու հետ. «Երազում տեսա, որ թուրք գյուղացու և թուրք մտավորականի միջև տե՛ս վեճից հետոք անգամ չի մնացել: Էմիենի՝ ծառի ճյուղեր հիշեցնող թևերն առողջ և ամուր կապ դարձան իմ և այդ թշնամանքի ու անտարբերության միջև: Գյուղում անցկացրած երկու-երեք տարիների ընթացքում ինձ դժոխային ցավ պատճառած ողջ ատելությունը, ցասումը, ըմբոստությունը, դժբախտությունն ինձից դուրս են գալիս իմ աջ կողքի վերքից հոսող արյան հետ: Կարծես պայթել է և դուրս է ժայթքում իմ ներսում բորբոքված թարախապալարը... Ինչպիսի հանգստություն, ինչպիսի հանգստություն եմ զգում...»<sup>32</sup>:

Թուրք գրականագետ Յ. Լաջին «Օտարը» խորագրով իր հոդվածում վեպի այդ վերջին հատվածը հեզանցով այսպես է ներկայացնում. «Անիեղ Ձելալը, ով ընդամենը որոշ ժամանակ առաջ սուրը ձեռքին՝ հանուն քեմալական գաղափարների գյուղում մեռնել էր ցանկանում, բայտի քմահաճույքին է թողնում ձախ ազդրից վիրավորված Էմիենին, ում ձեռքի մի հպումից մոռանում էր իր ցավերը, ում կողքին երազում տեսել էր, թե իբր «թուրք գյուղացու և թուրք մտավորականի միջև տե՛ս վեճից հետոք անգամ չի մնացել»<sup>33</sup>: Անիեղը հաճախ համեմատություններ էր անցկացնում Էմիենի և Ստամբուլի կանանց միջև: Վերջիններս նրան հիշեցնում են մարդություն, նրբություն ու շուշանի բույր: Մյուս կողմից Ստամբուլի կանանց մասին արված այդ արտահայտությունները երբեմն հակառակ երանգ են ստանում: Եւ, նշելով, որ կանանց մասին պատկերացում է կազմել «իր դատը անձնական փորձից», ասում է, որ սերը «բաղկացած է անհատական սեռական ճզևածամերից»<sup>34</sup> և սերը նմանեցնում է ընդամենը «զուգավորման շրջանում ճզևածամեր ասյրող կենդանիների»:

<sup>32</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 230:

<sup>33</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 109:

<sup>34</sup> Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 65-66:

վիճակին: Ահմեդ Ջելալը «վեռը» բնութագրում է «անմարդկային», «մահաբեր» վիրավորական արտահայտություններով: Երանց համար գործածում է «վայրի կատու», «թունավոր օձ» արտահայտությունները՝ էլ ավելի ընդգծելով կանանց հանդեպ իր ունեցած թերաբժեքության բարդույթն ու տածած թշնամակը: Ահմեդի համար չկար հոգեկան կապ հասկացութունը, նրա մեջ խոսում էր կիրքը և ոչ թե իսկական սիրո զգացումը: Երա՛ յուրովի սիրո ընկալումները մեկ անգամ ևս հաստատում են, որ անգամ քաղաքային թուրք մտավորականի էության մեջ շարունակում էր ապրել իր նախնիներից ժառանգած քաղվորաիրոսակային էությունը: Թեև վնասում խոսքը գիտում է թուրք կեռց մասին, սակայն թուրքական բարբարոս վերաբերմունքը հատկապես ոչ թուրք կանանց՝ նկատմամբ բազմաթիվ փաստերով է հաստատված: Փաստորեն, թուրքն իր իսկական էությունից չէր ազատագրվել:

Քաղրիի «Օտարը» վնասը հենց թուրք հասարակության մեջ արժանացել է հակասական գեահատականների: Երանց մի մասնի կարծիքով այն իրենից զրական ոչ մի արժեք չի ներկայացնում: Այն ուղղակի ռեալիստական արվեստի ըմբռնման տեր գրողի իրականության մեկնարկումն է<sup>25</sup>, և ավելի շատ ունի քարոզչական բնույթ՝ ու նպատակ: Ժամանակակից հայտնի թուրք գրող Ռեշադ Լուրի Գյունդեքիևի գեահատմամբ՝ Քաղրիի այս վնասն արվեստի կանոնների տեսանկետից զրված է շատ անփույթ՝<sup>26</sup>: Բ. Մորանը կարծում է, որ Ռեշադ Լուրի Գյունդեքիևի այս պնդումը սխալ է և «Օտար»-ում իրադարձությունների հետևում պարզ կերպով ներկայացվում են քննալական պայքարի իրական ընթացքն ու զարգացումները: Լա նաև փորձում է բացել Քաղրիի վեր հանած խնդրի ենթախորքը, վնասում գյուղացու և մտավորականի միջև անդունդի խորացումը: Ըստ Բ. Մորանի՝ այս իրողությունը կապված է քննալական շարժման նկատմամբ թուրք հասարակության այդ երկու խավերի դրսևորած դիրքորոշմամբ: Պատումի սկզբում Ահմեդ Ջելալը պարզապես մի օտարական էր, բայց լինելով քննալիզմի ջատագով՝ նրա նկատմամբ թշնամական վերաբերմունքն առաջել սուր բնույթ ստացավ, մեծացավ

<sup>25</sup> Akı Niyazi, *Yakup Kadri Karasmazoglu ile İsmail-Hakkî Fikri-Gökalp*, İstanbul: Decapim, 2001, s. 255.

<sup>26</sup> Moran Berna, *Yakup Kadri Karasmazoglu ve İsmail-Hakkî Fikri Karasmazoglu ile İsmail-Hakkî Fikri-Gökalp*, s. 153-66:

թշնամիների թիվը, խորացավ լարվածությունը և հասավ իր գագաթնակետին: «Օտարը» վեպում գործող անձինք, վարքագծերը և զգացմունքներն ամբողջությամբ տգեղ են և ևաղկալի: Գյուղացիների մեջ ուրախ մարդկանց, լավ և արժանավայել վերաբերմունքի չենք կադող հանդիպել, ինչպես նաև՝ մաքուր ընկերության և երջանիկ սիրո: Գյուղում չենք կարող գտնել մեկին, ով տգեղ ու կեղտոտ չէ և կամ վրայից վատ հուս չի գալիս<sup>37</sup>:

«Քաղրո» ամսագրի հրատարակիչ-գրողները եշում են, որ «Օտարը» ռեալիզմի հաղթանակն է՝ ընդգծելով, որ այն դրեց ազգային գրականության հիմքը<sup>38</sup>: Վեպի ստեղծությամբ՝ այլ թուրք գրականագետներ Լիհադ Սամի Բահարլըն, Իսմաիլ Հաքիբ Սևաքը և Բուրհան Ումիթ Յուսիբաքը ևս այն կարծիքն են հայտնել, որ «Օտարը» միակողմանի և հոռետեսական ստեղծագործություն է<sup>39</sup>: Վեպում գյուղացու հակասական բնութագրի վերաբերյալ գրքի երկրորդ հրատարակչության նախարանում պարզաբանումներ է տալիս հենց ինքը Յարուփ Քաղրին. «*Դրա պատճառը կրկին դու ես, թուրք մտավորական: Դու այս ավերված և ընչազուրկ մարդկանց համար իսել ես արել: Տարիներով, հազարամյակներով դու ծծում ես նրա արյունը և նրան նետել ես անպետք, կարծր հողի վրա և այժմ քեզ իրավունք ես վերապահում գալ և նրանից խորշել*»: Թուրք բնակչությունը ոգի ունի: Բայց չի կարողանում ազդեցություն գործել: Մի գլուխ ունի, բայց չի կարողանում այն լուսավորել: Մի մարմին ունի, բայց չի կարողանում այն սնել: Հողի վրա է սպրում, որը չի կարողանում մշակել: Դու նրան թողել ես կենդանական բնազդների, տգիտության, աղքատության և կարիքի մեջ: Լա կարծես մի մտախառն է անում մոխրագույն հողի կրծքին: Հիմա ձեռքիդ մանգաղն արած եկել ես ի նչ հեձե: Ի նչ ազան ես: Եկել ես այս եղի նջը հեձե, այս փշե դը: Ինարկն, եթե ուտերդ մարձես ամեն կողմից արյուն կգա, և ցավից դեմքդ կծովի: Չայրույթից բուռնցքներդ կսնդսնա: Քեզ այդքան տառապանք պատճառածը հենց քո ձեռքի ստեղծածն է, քո արարածը»<sup>40</sup>:

<sup>37</sup> Muzan Berna, "Yaban'ın Teknik ve İdeoloji", էջ 159:

<sup>38</sup> Atilla Özkırımı, *Türk Edebiyatında Yaban*, 1990, էջ 237-240:

<sup>39</sup> Atilla Özkırımı, *Türk Edebiyatında Yaban*, 1990, էջ 237-240:

<sup>40</sup> Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, İletişim Yayınları, 1970, s. 6-7. Yakup Kadri Karaosmanoğlu, *Büyük Eserleri Dizi 1*, İstanbul, İletişim Yayınları, 2001, s. 10-11.



Այս ամենի կողքին Քաղրիի վեպում կարմիր թելի նման եան այն միտքն է առաջ քաշում, որ գյուղացին կարող է զարգանալ ու վերափոխել միայն հզոր պետության և նոր մտավորականության հսկողության պարագայում:

Բառակցությունների մերօրյա զգայուն փուլում, որն իր բնույթով ու բարդությամբ աննախադեպ է թե՛ ՀՀ համար, թե՛ Եվրոպական իրականության մեջ, կան մարտահրավերներ, սակայն մյուս կողմից պետք է ընդունել, որ մինչև սահմանի բացումը քաղաքական ուժերի ու փորձագիտական շրջանակների ներգործության ռեսուրսները սահմանափակ են: Այնևայտ է, որ հարաբերությունների կարգավորման ներկա փուլի նպատակը դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է, որն ընդամենը փուլերից մեկն է, կամ առաջին փուլն է: Դրան կհաջորդի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման իրական գործընթացը, որը լինելու է առավել ինտենսիվ ու համալիր ջանքեր պահանջող: Այսինքն, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետևանքով իրական է միայն սահմանի բացումից հետո: Իրական մարտահրավերը կլինի սահմանի բացմանը հետևող ժամանակաշրջանում և այդ ժամանակ է, որ պետք է մեկտեղել Հայաստանի ու Սփյուռքի ռեսուրսները և գործակցելով երբ հարևանի հետ, հետամուտ լինել հայ ժողովրդի ազգային ինտելիգենցիայի իրականացմանը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի շարունակմանը:

Այսպիսով, բացի մի քանի էական դրվագներից, պետք է զգուշությամբ մտտենալ այն պնդումներին, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման դեպքում Հայաստանի ազգային անվտանգության շահերն անմիջապես կվեհասվեն: Իրական սպառնալիքները կծագեն, եթե դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո միջեռամակետ (2-3 տարի) ու նրկարաժամկետ (8-10 տարի) առումով չմշակվի համապատասխան գործուն օրգանավարություն: Թուրքիան ՀՀ-ի համար եղել և լինելու է դժվար գործընկեր, որի համար գերակա կլինեն մի շարք օրգանավարական տրամաչափի հարցերին հետամուտ լինելը:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում Թուրքիան իրեն կհամարի «90 տարի տևած աշխարհաքաղաքական կռիվն» լիովին հաղթահարած տարածաշրջանային գործոն ու շատ դեպքերում իրեն կդրսևորի առավել անկաշկանդ:

Ամփոփելով, ընդհանուր առմամբ, կարելի է կիսել Հայաստանի Հանրապետության քաղաքագույն ղեկավարության հետևյալ մտնցումը. Թուրքիայի հետ հարաբերությունները պետք է կարգավորվեն միայն իրավահավասարության, երկու կողմերի իրավունքների ու կենսական շահերի հարգման հիման վրա՝ առանց այնպիսի նախապայմանների, որոնք կարող են սպառնալ մեր հոգևոր ու ֆիզիկական անվտանգությանը, վիրավորել հայ ժողովրդի ազգային արժանապատվությունն ու պատմական նիշողությունը:

## ՀԱՄԵՆՆԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՄԻԿՐՈՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

### *Ուղեորություն Թուրքիայի Արդվինի և Ռիզեի համընցիների բնակավայրեր*

2010թ. հուլիսին մի փոքր խմբով այցելեցինք Թուրքիայի Արդվինի և Ռիզեի նահանգների համընցիների բնակավայրերը: Կարճ ժամանակամիջոցում հնարավորություն ունեցանք որոշակի դաշտային աշխատանք կատարել Արդվինի նահանգի Խոփայի (Հոփա) գավառի Քեմալփաշայի (Նախկին Մաքրիյա) եթաշրջանի համընցիների միջավայրում: (Նրանց նախնիները բնի մահմեդականացվել են 18-րդ դարում և հետագայում հաստատվել այս վայրերում): Այցելեցինք նաև Բիլբիլան կոչվող նրանց ամառային արոտավայրը՝ յալան, որը գտնվում էր Արդահանի գավառում: Ճանապարհին՝ Բաղդաշան քրդաբնակ գյուղի մոտ, մեր առջև խոյացավ մի ազդեցիկ, կիսականգուն բերդ, որը տեղացիներն անվանում էին Բագրատունի քալեսի (Բագրատունու բերդ): Շարունակելով մեր ճանապարհը՝ հասանք գրեթե ամպամերձ լեռների գրկում գտնվող Բիլբիլանի արոտավայրը: Այստեղ սպասվում էր չափազանց հետաքրքիր հանդիպում: Խոփայի գավառի տարբեր գյուղերից եկած տարեցները հայերենի Համընցի բարբառի տեղական խոսվածքով երգեցին դարերի խորքից մեր օրերը հասած ինքնատիպ մեղեդիներով խաղիկներ, ինչպես նաև պատմեցին հեքիաթներ ու գրույցներ<sup>1</sup>: Այնուհետև նրանք նահանգի կենտրոն Արդվին քաղաքում, Քեմալփաշայում: Նույն նպատակով այցելեցինք նաև Ռիզեի նահանգի Զամլինիջին (Ներքին Վիժե), Համըն և Արտաշեն<sup>2</sup> գավառների համընցիների բնակավայրերը:

<sup>1</sup> Բիլբիլան քաղաքում և Խոփայի գավառում Ս. Վարդանյանի հարցառած բանակցության ելույթը տե՛ս Ս. Վարդանյան, Բանակցության նոր զրահաներ Թուրքիայի Արդվինի նահանգում, «Չայն հասթենաֆան» ամսաթիղթ, Երևան, 2011, թիվ 1-2, 3-4:

<sup>2</sup> Արտաշենն ունի նաև Արաբշեն, Արաշլին, Արաշյան ևնչարոտանական տարբերակները, և ըստ տեղական ժողովրդական տուրաբանության տեղանունը բաղկացած է այսպես (գաշտ/աշեն) բնակավայրը բաղադրիկներից (Օ. Օսթեկ,



իքերն ապաշտպանեալսն զնր ևն կատարում իսլամական-թուրքական միջավայրում: Սակայն նրանց մեջ կան եան այնպիսիները, ուրբեր առհասարակ խուսափում են իրենց ծագման մասին խոսել, համարում են իրենց թուրք, կամ լավագույն դեպքում՝ համշենցի (համշենցի)<sup>5</sup>:

Այլ է պատկերը Ռիզեի եանանցի համշենցիների շրջանում: Այստեղ թուրքացումն առավել խոր արմատներ է գցել: Ռիզեի համշենցիները մոռացել են իրենց մայրենին՝ հայերենը, և խոսում են թուրքերեն: Ոմանք, թեև ընդունում են իրենց հայկական ծագումը, սակայն անմիջապես հավելում են, որ արդեն թուրքացել են: Արանց միջավայրում շրջանառվում է այն տեսակետը, որ նրանք սերվել են թյուրքական ցեղերից<sup>6</sup>: Դանլընիեմշիցի լրագրող և հայրենագետ Ջան Ուլուր Բիրյուլը, որի գրչին է պատկանում «Համշենցիներ, արտագնա աշխատանք և հրուշակագործություն»<sup>7</sup> արժեքավոր պատմագագագրական ուսումնասիրությունը, իր հոդվածներից մեկում գրում է. «Այսօր համշենցիների մեծամասնությունը մերժում է իր հայ լինելը: Իրականում, շրջանում օգտագործվող տեղանունների և առօրյա կյանքում կիրառվող առարկաների անունների չափ է նրանց հայերենը»<sup>8</sup>: Սակայն այստեղ էլ կան այնպիսիները, ուրբեր իրենց թուրք չեն համարում, այլ ուլդակի՝ համշենցի (Hemşinli): Նշենք, որ այսօր էլ Ռիզեի մի շարք շրջաններում արմատական իսլամը շարունակում է ամուր դիրքեր ունենալ<sup>9</sup>: Տեղացիների հետ մեր գրույցներից պարզվեց, որ

<sup>5</sup> Համշենցի ինքնակամման մասին տե՛ս Ս. Վաղարշյան, Թուրքիայի կյանակոչն էսրություն թղտրանակի վերաբերյալ, հայսխոս համշենցիներ, «Հանրագրտական ստացել» երևան, 2009, թիվ 16, էջ 8:

<sup>6</sup> Այլ մասին տե՛ս եան Մ. Օշան, Hemşinli Kipligi Davrine, Hemşin Toplumunun Trevvan, <http://hamshentsi.blogspot.com/2009/01/>: C. U. Biryol, Hemşinliler Ermeni mi?, *Radikal*, İstanbul, 2005, Haziran, 12. Sı u ևսինի հայերեն թարգմանությունը, Զ. Ու. Բիրյուլ, Հեմշենցիները հայք ր են, հեմշենցիների մասին: Թարգմտից թարգմանեց Լ. Սահակյանը, «Չայն հանրճնագրտ» անտրեքը, 2006, թիվ 12: C. U. Biryol, Emik Bir Kinlik Olarak Hemşinliler, <http://hamshentsi.blogspot.com/2009/01/>:

<sup>7</sup> C. U. Biryol, *Hemşinliler Göç ve Pastacılık, Gurbet Pastası*, İletişim Yayınları, İstanbul, 2007.

<sup>8</sup> Sı u C. U. Biryol, Emik Bir Kinlik Olarak Hemşinliler, <http://hamshentsi.blogspot.com/2009/01/>.

<sup>9</sup> Թեմալ Լաքի Ունալ, Մեհուլ (Էքսանա), մեկ այլ Համշեն, թարգմանեց և նստրագրեց Լ. Սահակյանը, «Չայն հանրճնագրտ» անտրեքը, 2010, թիվ 7-8:

Ռիզեի նահանգի Մե ծովի առափնյա շրջաններում գերակշռում են լազական բնակավայրերը, իսկ նահանգի խորքում՝ լեռնային հատվածներում, հիմնականում համշենաբնակ գյուղեր են: Մակայն պեսք է արձանագրենք, որ Ռիզեի նահանգի Չամլրհենշին գավառի համշենցիների գյուղերի մի մասն այդեն դատարկված է Ինչպես մեր ուղեկիցներն էին ասում, գավառի բնակիչներից շատերը կենսական ծանր պայմանների հետևանքով և աշխատանք գտնելու հույսով դուրս են եկել իրենց բնօրրանից և տեղափոխվել ավելի մեծ քաղաքներ: Ամռանը երանք հանգստի նպատակով ետ են վերադառնում: Համաձայն Ջ. Ու. Քիրոյի Չամլրհենշինում ձմռանը բնակչության թիվը 2400 է, իսկ ամռան ամիսներին հասնում է 6-7 հազարի: Նրանից տեղեկացանք, որ ամբողջ Թուրքիայում չամլրհենշինցիների թիվը, ոչ պաշտոնական տվյալներով, հասնում է 30 հազարի: Քոբոշ գյուղն ունի մշտական բնակելի 15-16 տուն, ամռան ամիսներին բնակչության թիվը հասնում է 40-50 տուն, Մաքրնիսում 60 տնից այժմ բնակելի է միայն 10-ը, Չաք գյուղում (իկում՝ Տափ) ձմռան ամիսներին ոչ ոք չի ապրում, իսկ ամռանը՝ մոտ 50 հոգի: Շառ Ա. Գեկչի՝ դեռևս 25 տարի առաջ Համշեն գավառի 80 տուն ունեցող Ջուզա/Չուդա (այժմ՝ Չամլրթեփե) գյուղից դուրս է եկել 40 տուն, այժմ այնտեղ մշտական բնակելի է ընդամենը 10 տուն, իսկ 30 տուն ծառայում է որպես ամառանոց: Ռիզեի նահանգի Համշենի, Չամլրհենշինի, Արդաշենի, Ֆընդըքլի, Փազարի, Չայելիի և Իջիզդերեի գավառներում բնակվող և Թուրքիայի այլ քաղաքներ տեղափոխված մայրենի բարբառը վաղուց մոռացած համշենցիների թիվը, մոտավոր հաշվումներով, 50-60 հազար է:

### *Միկրոտեղանունների պատմամշակութային և լեզվական արժեքը*

Թեև Ռիզեի նահանգում ապրող նախնիկնում բռնի մահվա-կանացված համշենցիների ներկայիս սերունդներն այսօր մոռացել են իրենց նախնիների մայրենին՝ հայոց լեզուն, կոթքրել են հայկական ինքնությունը, բայց շարունակում են գործածել իրենց բնակավայրերի՝ մեծերից ավանդված տեղանուններն ու միկրոտեղանունները, ինչպես նաև բազմաթիվ կենցաղային բառեր: Կան այնպիսի տեղանուններ, որոնք երբևեմ ենթարկվելով բառապատկերի լրիվ աղճատման՝ առաջին հայացքից թվում են օտար,



անհասկանալի: Իրականում, սակայն, տեղական բարբառային կամ օտար հնչյունական շղարշով պատված տեղանվան մեք անթեղված է մաքուր հայկական բառը՝ իր ձևությամբով հանդերձ: Ըստ այդմ էլ՝ Համշենի տեղանունների վերականգնումը բարդ խնդիր է, քանի որ դրանք հիմնականում կազմվել են տեղական բարբառային բառապաշարից՝ խոսվածքային հնչարտասանական հատվածքով: Լշենք, որ Համշենի բարբառն իր խոսվածքներով հանդերձ, համարվում է հայերենի ամենից խրթին բարբառներից մեկը: Ըստ մեծանուն հայագետ Հ. Աճառյանի այն «հարուստ է զրաբարթի այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեք կարելի չէ գտնել»<sup>10</sup> և նրանում պահպանված զրաբարթյան լեզվական շերտերը<sup>11</sup> վկայում են բարբառի հնագույն լինելու մասին: Ռեպլես ստորև ցույց կտանք, այդ են փաստում նաև տարածաշրջանի տեղանուններում առկա վաղեջահայկական արմատներն ու ածանցները:

Հ. Աճառյանը, ուսումնասիրելով Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության հետևանքով Սև ծովի ելուսիսային ափերում հաստատված քրիստոնյա համշենահայերի խոսակցական լեզուն, այն համարում է Համշենի ինքնուրույն բարբառ<sup>12</sup>, որը պատկանում է հայ բարբառների արևմտյան խմբակցության կր ճյուղին: Ծովել է Համշենի, Տրապիզոնի, Մամուկի (Ջանիկ), Կիրասունի, Օրդուի տարածքներում և հարակից վայրերում, ճորտիի ավազանի բնակավայրերում: Համշենի բարբառն ունի իր խոսվածքային յուրահատկություններն ու տարբերությունները<sup>13</sup>: Ցայսօր համապարփակ չեն ուսումնասիրված Համշենի բարբառով խոսող մահմադական համշենեցիների խոսվածքները, թեև լոել են առանձին անդրադարձներ և հոդվածներ<sup>14</sup>: Այս բազը զգալի չափով լրացրեց Ս. Վարդանյանի

<sup>10</sup> Հ. Աճառյան, *Քննության Համշենի բարբառի*, Երևան, 1947, էջ 12:

<sup>11</sup> Հ. Աճառյան, *Քննության Համշենի բարբառի*, էջ 12:

<sup>12</sup> Հ. Աճառյան, *Քննության Համշենի բարբառի*, էջ 12:

<sup>13</sup> Հ. Աճառյան, *Քննության Համշենի բարբառի*, էջ 14:

<sup>14</sup> G. Duménil, *Notes sur le parler d'un Arménien musulman d' Ardala. (Vüseyr de Rize). Revue des Études Arméniennes, tome 2, Paris, 1965, p. 135-142. Լույսիի՝ Trois récites dans le parler des Arméniens musulmans de Herzgin. Revue des Études Arméniennes, tome 4, Paris, 1967, p. 19-39. G. Duménil, *Dokumente Anatóliens sur les langues et les traditions du Caucase, IV. Recits lazes en dialecte d' Arhavi (parler de Şenköy). Bibliothèque de l'École des Hautes Études, Service des Sciences Religieuses, Volume LXXIV, Paris, 1967. G.**

2009թ. լույս տեսած արժեքավոր մենագրությունը<sup>15</sup>։ Գրքում հեղինակը հրապարակել է 1944թ. Աջարիայից Միջին Ասիա արտրված նախկինում կրոնավորի համընցիկներից դեռևս 1980-ական թթ. իր հավաքած բարբառային, բանահյուսական նյութերը։ Աշխատությունում տեղ են գտել նաև Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների համընցիկներից գրառված մի շարք խաղիկներ, ինչպես նաև հեղինակի տարիների անխոց աշխատանքի արդյունքում հավաքված Խոփայի խոսվածքի բառարանը։ Հ Աճառյանի և Ս. Վարդանյանի այս ուսումնասիրությունները կարևոր բանալի են եղել տեղանվանական մեր ճշգրտումների և բառաքնությունների համար։

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, Համընի տեղանուններն ունեն հնչյունական տարբերակներ<sup>16</sup> *Թեջինա* > *Թեզինա*, *Թոլենիչ* > *Թուլանչի* – *Թոլենես* > *Թոլակիս*, *Ջուֆիչ* > *Չուբիչ* – *Ջոթենես* > *Չոթիտուր*, *Բալախոր* > *Բելախոր* > *Բիլախոր* > *Փարանոյ*, *Մեսանոր* > *Միսանոր*, *Մաքրեիչ* > *Մաքրեիս* և այլն<sup>17</sup>։ Այս օրինակները վկայում են, որ երկրային Ռիզեի նահանգի համընցիկների խոսակցական լեզուն ունի խոսվածքներ։ Լշենք, որ Ռիզեի նահանգի համընցիկների խոսակցական թուրքերենը բարբառային դրսևորում է, և իր հնչյունական համակարգով տարբերվում է զրական թուրքերենից։ Գրատման ընթացքում պարզ դարձավ, որ Չամընիեճիկի գավառում թե՛ թուրքերեն, և թե՛ Համընի բարբառային բաներն արտաբերելիս նրանց խոսակցականում առկա է չ-ց, ջ-ճ, ծ-ճ բաղաձայնների հնչյունափոխությունը։ Թուրքերեն *յնեն* (մարգագետին) բառն արտասանում են *ցնեն*, *յայ-ցայ*, հայերեն

Duménil, Un Roman Policier en Arménien d'Ardala. *Revue des Études Arméniennes*, tome XX, Paris, 1986-87, p. 7-27. Տե՛ս նաև Bert Vaux, *Hamshetsma. The language of the Armenians of Hamshen, The Hamshets*, Edited by Hovhann H. Simozian, London and New York, 2007, p. 257-278.

<sup>15</sup> Ս. Վարդանյան, *Կրոնավորի ժամընցիկների բարբառը, բանահյուսականը և էրզրզվածը (նյութեր և ուսումնասիրություններ)*, ԵՊՀ Արաս, Երևան, 2009, 428 էջ։ Ս. Վարդանյանն, ուսումնասիրելով Խոփայի համընցիկների լեզուն, էրզրզվածում է, որ այն Համընի բարբառի առանձին խոսվածք է և ունի երկու ենթախոսվածք՝ արդյունքների և թուրքանցիկների (այսինքն՝ Արդալա գետի բնակիչների և զրանցիկների), եջվ աշխ., էջ 68։

<sup>16</sup> O. Yaman, *Emiklik ve Hamşin Üzerine*, *Halkbilimi*, Orta Doğu Teknik Üniversitesi, Türk Halk Bilimi Toplantısı, 1998, Güz, 7, s. 56.

<sup>17</sup> Թեմալ Լաքի Ռիտը, Մեղոզ (Երանոց) մեկ այլ Համըն, նույն տեղում։

խաչ>խաց ծնդ>ձնդ և այլն: Այս տարածքի տեղանունների բառաքննության համար խիստ կարևոր է հաշվի առնել նաև բարբառից եկող հեյդուսական առանձնահատկությունները:

Համշենի հայկական տեղանուններ են հիշատակում Մխիթարյան միաբաններ Մինաս Բժշկյանը, Ղուկաս Ինճիճյանը<sup>18</sup>, Ղևոնդ Ալիշանը<sup>19</sup>, Հակոբոս Տաշյանը<sup>20</sup>, ինչպես նաև Տեր Պողոս քահանա թումայանցը<sup>21</sup> և համշենահայ ազգագրագետներ ու բանահավաքներ Սարգիս Հայկունին<sup>22</sup> և Բարունակ Թողալցյանը<sup>23</sup>:

Տարածաշրջանում հանդիպում ենք նաև հուսական ու լազական ծագում ունեցող բազմաթիվ տեղանունների: Ավելի ուշ այնտեղ հաստատվել են թուրքական ցեղերը՝ բերելով իրենց տեղանունները կամ եղածների վրա հավելել լեզվական մակաշերտեր: Հետագայում Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի ղեկավար շրջանակներն այլ նահանգների տեղանունների հետ պաշտոնապես փոխել են նաև Ռիզե կազալի գրեթե բոլոր գյուղանունները: 1913թ. դեկտեմբերի 16-ին (2 Kanun-ı evvel 1329) «Գավառային վարչության խորհրդի» կազմած Ռիզեի կազալի նահիյեների հին և նոր տեղանունների ցուցակը գտնվում է Թուրքիայի գլխավոր արխիվում<sup>24</sup>: Այդ ընթացքում փոխվել են նաև Համշենի նահիյեի

<sup>18</sup> Ղ. Ինճիճյան, *Աջնարհագրություն յոթից մասանց աշխարհի*, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 397: Տն՝ ս այդ մասին նաև՝ Ա. Միշտերս, *Համշեն, պատմաաշխարհագրական ակնարկ* (19-20-րդ դարեր), *Համշեն և համշենահայություն (ցիսանաբույժ ճապարկ)*, Երևան-Մեջուք, 2007, էջ 32-33:

<sup>19</sup> Ղ. Ալիշան, *Տերապիս Հայոց Մեծաց Ա. Ղազար*, 1855, էջ 39:

<sup>20</sup> Բ. Տաշեան, *Տաշք դրոցից և՛ Թուրքուրդ պատմական-տեղագրական ուսումնասիրություն* հ. Բ, Մխիթարյան տպարան, Վենետիկ, 1980, էջ 20-21, 71-84:

<sup>21</sup> Ղ. Թումայանց, *Պոմսույի ձայնը, աշխարհագրական և բարոյագիտական վիճակի հրատարակում*, «Լուսաբ», Տիֆլիս, գիրք Բ (ուսյիս), 1899, էջ 175:

<sup>22</sup> Ա. Հայկունի, *Նշխարներ*, կրթած ու մտածողան հայեր, «Արաբաս», 1895, թիվ 8, էջ 296: Լզնեք, որ ցարական Ռուսաստանի, Նորիդային Միության ուղղակական, ինչպես նաև թուրքական և հայկական բարտեղների հիման վրա Համշենի հայկական տեղանունների մի ցուցակ է կազմել և կրթաբարձր Ա. Նիխալցյանը, տե՛ս Համամաշեն-Համշենի հայկական տեղանունները, «Ճայն Համշենահայաստան», 2008, թիվ 9-10, 11-12, 2009, թիվ 1-2: Ա. Էրազմբաթ, *Археологические находки в Ахмаматинском уезде*, «Ахмаматинский уезд», Крестовозра, Крестовозра, 2009, с. 94-100:

<sup>23</sup> Բ. Թողալցյան, *Համշենահայերի ազգագրությունը, ծայ պարագրություն և բանահյուսությունը նյութեր և ուսումնասիրություններ*, հ. 13, ՀԱՍՀ ԳԱ Էրևան, Երևան, 1981, էջ 29:

<sup>24</sup> A. Yiksel, *Doğu Karadeniz Arayışmaları*, Bayrak Matbaası, İstanbul, 2005, s. 12:

գլուղանունները<sup>25</sup>: 1916թ. հունվարի 5-ին Էնվեր փաշայի՝ երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահամեղական տեղանունների փոփոխման հրամանագրից հետո նույն թվականի հուլիսի 3-ին Տրապիզոնի ևահանգապետարանը կազմել է 23 էջանոց մի ցուցակ, որում ընդգրկված էին Սամսունից մինչև Արդվին ընկած տարածաշրջանի գյուղերի հին ու նոր անունները<sup>26</sup>:

Բ. Քաղաքներ ժամանակին այս առիթով գրել է, որ Համշենի շրջանի և «հետագայում ողջ Պոնտոսով մեկ սփռված համշենահայերի հիմնադրած կամ նրանցով բնակեցված բնակավայրերի մեծ մասի անվանումները թուրքական իշխանությունների կողմից կամ հիմնովին փոխվել են, կամ էլ աղավաղվել այնպես, որ հայկականի ոչ մի եջուլլ չի մնացել»<sup>27</sup>: Այդուհանդերձ, կատարածս գրանցումները հաստատում են, որ թուրքական իշխանությունների և այդպես էլ չի հաջողվել Չամլոհենմշիևի և Արուաշենի գավառների բնակչության հիշողությունից ամբողջությամբ արմատախիլ անել դարերի խորքից եկած տեղանունները, մասնավորապես միկրոտեղանունները:

Օսգումով համշենցի գրող և լրագրող Ա. Գենչի «Համշեն երկրի աշխատասեր կանայք» գրքի վերջում կցված բառարանում բերված են Համշենի մի շարք միկրոտեղանուններ<sup>28</sup>: Որոշ միկրոտեղանուններ կան նաև համշենցի ուսումնասիրող Իբրահիմ Քարաջայի «Համշեն, պատմություն, լեզու, ավանդույթներ և սովորույթներ» գրքում<sup>29</sup>: Իրենց մայրենին մոտացած մահամեղական բաշ-համշենցիների խոսակցական թուրքերենում հուանդացի գիտնական Ուվե Բլեսինգը ևս բազմաթիվ բարբառային բառերի հետ գրի է առել մի շարք միկրոտեղանուններ՝ *Ագինչոյ, Ադփեճոյ, Ադվ՛չուր, Սևուշդէդ, Այդեր (Արսեր), Բուչեղայոյ, Էնթիփոս, Սակթիփոս, Հեղիփոս*,

<sup>25</sup> K. Hoşoğlu, *Köylerin Eski İsimleri*, Eski İsimler Hakkında Belgiler, Rize Halk Eğitim Yayınevi, 2001.

<sup>26</sup> A. Yüksel, ելվ աշխ., էջ 14: Տե՛ս նաև M. Safi, *Rizede Tahrir Önce Erzurum*, էջ 6-7: A. Taşınar, Rize Tarihi, Rize, 2004, s. 576-580. Տեղանունների բուլղարացման քաղաքականության մասին տե՛ս Լ. Sahakyan, *Turkification of the Ottoman Empire and the Republic of Turkey*, Montreal, Arod Books, 2010.

<sup>27</sup> Բ. Գ. Քաղաքյան, *Համշենահայերի ազգագրությունը, հայ ազգագրություն և բանասիրություն* էջ 29:

<sup>28</sup> A. Genç, *Çaldıran Kadınlar Üsküsü*, 2 basım, İstanbul, 2010, s. 114-152.

<sup>29</sup> I. Kavaca, *Henüz, Tarihi, Dil, Gelenek ve Görenekler*, İstanbul, 2006, s. 76-124.

Քէքսէ, Փարսըլուր, Փաշեօվիթ, Սալ, Սալչուր, Արդէն, Ավէլօր, Ջենարթափ, Չիմարչուր, Գաղուրթ, Գալէր, Քօղուրթ, Մալթ, Մէլօվիթ, Մէրօր, Փօքուրթ, Սօխեօվիթ: Անձնանուններից Ու. Բլեսինգը գրանցել է՝ Ափէլ, Ավէլիթ, Ատարէլ, Արաթիւն-օղլու, Քօշօր-Քօշօր, Մէրդէսի-օղլու, Մարթիլ<sup>20</sup>:

Սույն ուսումնասիրության շրջանակում կներկայացնենք Ռիզէի եանանգի Գամլընէլշին գավառում գտնվող Ալդերի (իմա՝ Արուեր, բարբառիս բնութշ թ>յ հեյունեափոխությամբ) յալլաում (ամասայիս արուտավայր), Մաքրնիս (ըստ Ղ Ինճիճյանի՝ Մակրեվիեց<sup>21</sup>) և Չիեյիվա (ըստ Ղ Ինճիճյանի՝ Եյիվա<sup>22</sup>) գյուղերում, Արուաշենի գավառի Օջե (իմա՝ Օձե-Լ. Ս.) գյուղում գրանցած շուրջ հարյուր հայկական միկրո կամ այլ բնորոշմամբ՝ ժողովրդական տեղանունները, որոնք գալիս են լրացնելու տեղանվանական վերոնշյալ ցանկերը:

Կան այնպիսի թուրք հեղինակներ, ովքեր բացահայտ հայկական միկրոտեղանվան մեջ արհեստականորեն փնտրում են թյուրքական, ղրղզական, կարաչայական արմատներ և անանգներ եպատակ ունենալով ժխտել Համշենում հայկականության որևէ հետքի գոյությունը<sup>23</sup>: Այդպիսի նկրտումներով այցի է ընկնում հատկապես թուրք հեղինակ Ս. Արըջըն, որը 2009թ. հրատարակված իր «Դամբուրի պատմություն...» գրքում, հետևելով հայտնի թուրք կեղծարար Քըրգըրօղլուի մեթոդներին, Համշենի տարբեր շրջաններից գրանցված անգամ ակնհայտ հայկական տեղանուններն ու բառերը (մի քանի բացառությամբ) հայտարարում է թյուրքական

<sup>20</sup> U. Blasing, *Armenisches Lehngut im Türkisch-Türkischen am Beispiel von Hemşin*, Amsterdam-Atlanta, GA, 1992, p. 91-95. Տե՛ս նաև ինչի՛ն՝ *Armenisch-Türkisch Etymologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemşingebiet nebst einigen Anmerkungen zum Armenischen, insbesondere dem Hemşindialekt*, Amsterdam-Atlanta, GA, 1995, p. 124-139. U. Blasing, *Armenians in the vocabulary and culture of the Turkish Hemşinli* (տե՛ս *The Hemşinli History, society and identity in the Highlands of Northwest Turkey*, Edited by Hovann H. Simonian, London and New York, 2007, p. 282, 283, 285, 287, 288, 289, 293).

<sup>21</sup> Ղ Ռաֆֆան, *Աղխարնագություն չորից մասանց աշխարհձ*, Է. Ա. Վենետիկ, 1806, էջ 397:

<sup>22</sup> Ղ Ռաֆֆան, *Աղխարնագություն չորից մասանց աշխարհձ*, Է. Ա. էջ 379:

<sup>23</sup> Kirazlı M. F., *I. Selim Çiftında Hıpa ile Arhavi Köyünü*, TFA içinde, yıl 17, cilt 10, no. 201 (Nisan 1966), İstanbul, s. 4104. Sakaoğlu M. Ali, *Dünden Bugüne Hemşin Kavadenir İdeo Bir Tarihi*, Yeniyurt Yayınları, Ankara, 1990.

ծագման<sup>24</sup>: թուրք եղիմակների այդօրինակ կեղծիքները նկատել և քննադատել են նաև Ու. Բլեխերը<sup>25</sup>, և Մկրտչյանը<sup>26</sup>:

Լշենք, որ հայկական աղբյուրներում, հասկանալի պատճառներով, շատ քիչ տեղեկություններ են պահպանվել միկրոտեղատեսների մասին: Հիմնականում ուշաղբյուրյան կենսոբնում են եղել վարչական ավելի մեծ ու հայտնի միավորները, լեռներն ու լեռնաշղթաները, սարերը, գետերն ու լճերն իրենց անուններով հանդերձ: Միանգամայն իրավացի է Ս. Տեր-Մինոսյանը, գրելով, որ «ազգագրական բազմաժանր և լայնածավալ աշխատանքներում բացակայում են ժողովրդական տեղանունների պահպանման, նրանց ծագումնաբանական, պատմաեկոգրաֆիկական, մշակութային և լեզվական հարցերին վերաբերող և պարզաբանող գիտական ամբողջական հետազոտություններ»<sup>27</sup>: Ուստի, մեր առյուծապանակում համարում ենք այս բացն ինչ-որ չափով լրացնելու նպատակ:

Այժմ համառոտ անդրադառնանք տեղանուն և միկրոտեղանուն հասկացություններին: Ինչպես հայտնի է, *toponym* (տեղանուն) տերմինն առաջացել է հունարեն «*topos*»-տեղ և «*onoma*»-անուն բառից: Ելնելով օբյեկտների մեծությունից՝ տեղանունները բաժանվում են երկու գլխավոր խմբի՝ *մակրոտեղանուններ* և *միկրոտեղանուններ*: Մակրոտեղանունները բնության և մարդու ստեղծած խոշոր օբյեկտների, վարչաքաղաքական միավորների անուններն են: Կախված օբյեկտների բնույթից՝ տեղանունները բաժանվում են հետևյալ տեսակների՝ բնակավայրի անուններ *օյկոնիմներ* (ծագել է հունարեն «*oikos*»-բնակարան, տուն բառից), *հիդրոնիմներ* (հունարեն «*hydro*»-ջուր բառից) և օրոնիմներ (լեռնանուններ՝ հունարեն «*oros*»-լեռ բառից): Միկրոտեղանունները հայտնի են միայն մարդկանց որոշակի խմբին: Չրանք փոքր միավորների՝ արոտավայրերի, կալերի, ճահիճների, անտառների,

<sup>24</sup> S. Anca, *Dumbr Taribi, Hengst-parim etimologic skenijel*, Kuzkulest Yayincilik, I Basm, Istanbul, 2008.

<sup>25</sup> U. Blasing, *Armenisch-Türkisch Etymologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hengstgebiet nebst einigen Anmerkungen zum Armenischen, insbesondere dem Hengstdialekt*, p. 129.

<sup>26</sup> Լ. Մկրտչյան, *Հայկոնից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում* «Աստղիկ» հրատ., Երևան, 2007, էջ 44-46:

<sup>27</sup> Ս. Տեր-Մինոսյան, *Աշտարակի ժողովրդական տեղանունների բառարան* «Տիգրան Մեծ» խրատ., Երևան, 2008, էջ 13:

բըրքների, գետակների, անվակների, հանդավայրերի, ձորակների, ջրհորների անուններ են<sup>38</sup>: Մասնագիտական զբաղմունքի մեջ կարելի է հաճախ հանդիպել միկրոտեղանուն եզրի գործածությանը: Ն. Պոդըլսկայան դրանք բնութագրում է հետևյալ կերպ. «...ավելի հաճախ բնության, ֆիզիկա-աշխարհագրական օբյեկտին տրվող հատուկ անուն է, ավելի հազվադեպ մարդու ստեղծած օբյեկտին տրվող հատուկ անուն է, որ ունի գործածության նեղ ոլորտ և գործում է միայն միկրոտարածքներում, հայտնի են տվյալ անվանատարված միկրոօբյեկտների մոտ ապրող մարդկանց...»<sup>39</sup>: Միկրոտեղանուններից շատերը բավական հին լեզվական իրողություններ են, և ինչպես տեղանունը, միավորվում են տեղանվանական հասակարգի մեջ<sup>40</sup>:

Ժողովրդական տեղանունները հատուկ անունների (ономастик) ամենից շարժուն և հաղորդակցական բաժինն են: Լեզվական այս փաստերը գտնվում են աշխարհագրության, պատմության, հասարակագիտության, ազգագրության սահմանագծում և այս բոլոր գիտակարգերի համար ներկայացնում են հատուկ հետաքրքրություն՝ մեծ հնարավորություններ ընձեռելով խոր ուսումնասիրման համար: Դրանք հիմնականում կազմվում են տեղական բարբառային բառապաշարից և տեղական աշխարհագրական տերմիններից<sup>41</sup>, որոնց ձևավորման մեջ որոշակի դեր ունեն նաև հատուկ գոյականների տեսակները՝ բնակավայրերի, գետերի, լճերի և այլ անունները: Միկրոտեղանունների աղբյուր են համարվում նաև անձնանուններն ու ազգանունները<sup>42</sup>: Տեղանվանական այս տեսակը դրսևորվում է որոշակի շարահյուսական հարաբերությամբ, ունի իր խտվածքային տարատեսակները, հաճախ հանդես է գալիս որպես

<sup>38</sup> Э. Мурзек, *Очерки топонимии*, Минск, Москва, 1974, с. 23. Ю. А. Карпенко, *Свойства и источники микротопонимии/Микротопонимии*, М., 1967.

<sup>39</sup> Н. Поддольская, *Словари русской ономастической терминологии*, Наука, Москва, 1978, с. 86.

<sup>40</sup> Н. Поддольская, *Словари русской ономастической терминологии*, с. 86.

<sup>41</sup> А. И. Яценко, *Лексикоэтимологический анализ микротопонимии определенной территории. Курс лекций для студентов филологических факультетов педагогического института*, гос. пед. ин-т, Вологда, 1977, с. 24-27.

<sup>42</sup> Е. М. Адамюк, *О приложениях составления региональных словарей белорусских микротопонимии // Перспективы развития славянской ономастики*, Наука, Москва, 1980, с. 182-183.

բառակապակցություն: Միկրոտեղանունը, համընդհանուր ճանաչում ձեռք բերելով, կարող է վերածվել մակրոտեղանունի<sup>43</sup>: Կախված տվյալ տարածքի յուրահատկություններից՝ միկրոտեղանուններն ունեն իրենց դրսևորման ասանձնահատկությունները: Այսպես, օրինակ թեև երանց հատուկ է միալեզվությունը, սակայն Ռիզեի համընդհանրից կատարածս գրառումներում առկա են նաև *թուրքերեն+բարբառային բառ* կամ *բարբառային բառ+թուրքերեն* կադապարաձևերը, օրինակ՝ *Բաշթուր, Թեքինդուզի, Խաչինդուզի* և այլն: Բեակնաբար, բառակազմական այս կադապարաձևն առաջացել է լեզվական ձուլման արդյունքում<sup>44</sup>:

Միկրոտեղանուններն ավելի մանրամասն պատկերացում են տալիս տվյալ տեղանքի աշխարհագրական դիրքի, բուսակալության, բնակչության գրադմուների, լեզվական իրողությունների մասին: Առավել հաճախ օգտագործվում են խոսակցական լեզվում: Ըստ ռուս տեղանվանագետ Ա. Վ. Մուպերանսկայայի՝ դրանք «բնության կամ արհեստականորեն ստեղծված ոչ մեծ օբյեկտների անհատական անվանումներն են, որոնք սովորաբար արտացոլում են նրանց բնույթն ու էությունը: Կոնկրետ մեկ ժողովրդի մշակույթի արդյունք են և կոնկրետ մեկ ժողովրդի լեզվական փաստ»<sup>45</sup>: Դրանք գոյություն ունեն ինքնուրույնաբար և ավելի շատ տեղական բարբառի ծնունդ են: Մասնագիտական գրականության մեջ միկրոտեղանունը բնութագրվում է որպես լեզվական և պատմական փաստ, բայց ոչ համակարգված-տեղանվանական: Կա նաև տեսակետ, որ միկրոտեղանունները սովորաբար ապրում են այնքան, որքան տվյալ տարածքում շարունակվում է ապրել լեզվական այս փաստերը կրող բնակչությունը<sup>46</sup>:

Մեր ուսումնասիրությունների և այս կողմ գրանցումների ընթացքում պարզ դարձավ մի կարևոր երևույթ, եթե տարածա-

<sup>43</sup> В. С. Каравенко, *Проблемы и перспективы развития топонимической терминологии*, Русский язык, Известия Смоленского государственного университета, Смоленск, 2008, №3, с. 90-91.

<sup>44</sup> Համընդհանրի լեզվական ձուլման մասին տե՛ս Լ. Ստանյան, Հայկական երկերի՝ թեի կրտսեմախոսական համընդհանրի ինքնության հիշատակության և դրսևորում, *Թուրքագիտական և օտարագիտական ձեռագրություններ*, Ուլրեն Սահրաբույանի ղեկավարությամբ խմբագրություն, հ. V, Երևան, 2008, էջ 243-260.

<sup>45</sup> А. В. Суперанская, *Что такое топонимика?*, Наука, Москва, 1985, с. 48.

<sup>46</sup> А. В. Суперанская, *Что такое топонимика?*, с. 47.



գոտու առավել մեծ վարչական միավորների անունները՝ շրջան, ավան, գյուղ, ժամանակի ընթացքում կրել են մասնակի կամ ամբողջական փոփոխություններ, զանազան աղավաղումներ (այս հարցերին կանոնադատական մեր հաջորդ հրատարակումներում), ապա Չամլըհենմշիկի և Արտաշեսի գավառների բլուրների, ձորերի, դաշտերի, արտերի, այգիների, հանդերի, անտառների, արտավայրերի, գետակների, առուների, աղբյուրների հանդեպների միկրոտեղանունները չնայած իրենց բարբառային հնչարտասանական դրսևորումներին, զարմանալիորեն մնացել են ավելի մաքուր, կրթման՝ անաղարտ:

**Դաշտային աշխատանքի ընթացքում գրառված  
միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն**

Ադերում (Արտեր), որև այսօր Չամլըհենմշիկի զբոսաշրջության գեղեցիկ կենտրոններից է, Գելլին օրթուաու (Gelin örtüü-Հարսի քոզ) ջրվեժի ճանապարհի երկարությամբ ձգվում էին փոքրիկ փաճառակոցներ: Աշխատողները հիմնականում տարեց հանդենցիներ էին: Այստեղ ևս ծաղուկեց ևոր զբառումներ կատարել<sup>47</sup>: Երանցից մեկը հիշեց հետևյալ բնիկ հայկական բառերը *գաթի սէր* (կաթի սեր), *էճըղուկ* (այծպտուկ, թծապտուկը խաղողի տեսակ է<sup>48</sup>), ևսև՝ *Բեղլուս* (կազմվել է բաղնդ+ն+ուտ, բառամիջի նշ)

<sup>47</sup> Հանդեցն անուսիները տեղում բարսահառակ կարկանդակներ էին պատրաստում փաճառի ճանաչ: Երանց սկզբնական պատասխանների մեր հարցերին: Երբ փորձեցի ճշանկ, թե ինչ են մտածում իրենց ծագումն մասին, անուսիք սկսեց պատմել հանդենցիների մասին կեղծարար Քրեղզուլուի անասնակները (Քրեղզուլուի կեղծարարությունների մասին տես Լ. Սահակյան, Օտտոնյան կայսրությունում հանդենակարի լոնի մասնագիտացումն արտարակառուցական ևնասնակները, Քուրդստանի մասին մասնագիտացումն ևնասնակները, Օտտոնյան կայսրությունում, Ռուսին Սամբատուրենի շրջանում իմաստագրություն, հ. IV, Աստիկ, Երևան, 2006, էջ 208-211):

<sup>48</sup> Հ. Անասյանը քիստուկա հանդենցիների բարբառում այդ ղիմաց գրանցել է ան, էճ (Հ. Անասյան, Հայերեն պոստալիան բարբառ, հ. 1, ԵՊՀ կրտս., Երևան, 1971, էջ 170): Շատ Բ. Քուրդստանի՝ Ենթասուկ են ասում ժգլազ (ձիվազ) տեսակներից մեկին, որն «իր անվանն է արժանացել հառիկների այժի պատկերի նման լինելու պատճառով» (Բ. Քուրդստան, Հանդենակարի արքայությունը, ձայն արքայությունն է բանագրություն էջ 134): Համանուն «ձայն լեզվի բարբառային բառարանի» հանդենակարի բարբառում ծիպուսուկ են ասում նաև խաղողի անասնին (Ն. Բ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» կրտս., Երևան 2002, էջ 168):

հնչյունափոխությամբ, որը լեզվական արագաբանությամբ աղավաղվել է դառնալով *բեդյուս*), *Մեդո>Մեդու* միկրոտեղանունները:

Ադերում որոշ միկրոտեղանուններ գրառեցի տիկին Հանիֆե Վազիֆից (ծնվ. 1933թ. Չամլըհեմշինում): Ջրույցի հենց սկզբում նա շեշտեց, որ այդ բառերը լսել է իր մեծերից, և որ դրանք շատ հին ժամանակներից են գալիս: Նա արագությամբ սկսեց ֆվարկել Չամլըհեմշինի կենտրոնից մինչև Ադեր ձգվող հողերի, բլուրների, որոշ արտավայրերի, այգիների, եակղերի իր մտապահած անուններ: Սակայն լեզվական ձուլումն այս շրջանում այերան խորն է, որ դրանց մի մասի իմաստներն արդեն մոռացվել էին ու անհասկանալի էին Հանիֆեի և գրույցի ժամանակ մեզ շրջապատող մյուս համշենցի կանանց համար:

Ստորև ներկայացվում են այդ միկրոտեղանունները՝ մեր բացատրություններով.

**Աղփիտփ (Ağpılap)** - արտավայրի անուն է, տեղանունը կարծում ենք կազմվել է *Աղջուր>աղջրի* թ-ի անկումով և *աղի* բառերից *աղջրիտփ*: Ա. Գեկչի բառարանում նա հանդիպեցինք *Անփիտփ*, ինչպես նաև *Անջուր* տեղանունների, որոնց հիմքում ծայրենև աղջուր բառն է Անփիտփը, ըստ երև, ջրատար մարգագետնի անուն է<sup>49</sup>: Չամլըհեմշինում Աղջուր բաղադրիչով տեղանուն է գրանցել նաև Ս. Արըջըն՝ *Ջանջաղուր/Չենյաղփուր (Çançalğur/Çençalğur)*: Այն Վարոշ բերդի, որ հայտնի է նաև Բալայի բերդ (Kale-i Balı-Վերին բերդ) անունով, մոտակայքում գտնվող մի շրջանի անուն է Կասկածից վեր է, որ այս տեղանունը կազմվել է *ճանճ (մեղրամանճ)+աղջուր* բառերից: Եվ իզուր են թուրք հեղինակի՝ այս տեղանվան մեջ կարաչայական կամ դյուզական արմատներ փնտրելու լուրջ ճիզերը<sup>50</sup>:

**Աղփենու (Ağpenos)** - կազմվել է *աղբ>աղփ+անօց>ենօց>ենու* բաղադրիչներից՝ այսինքն՝ գոմաղբով ծածկված վայր: Ու. Բլեսինգը նման տեղանուն է գրանցել նաև հարևան Չայելի գավառում: Համշենի բարբառի *Ռոսիայի* խառվածքում *աղփ* բառը նշանակում է բացառապես գոմաղբ, թրիք, իսկ կենցաղային *աղբին* ասում են *ավելուսթ*<sup>51</sup>: Այդ արմատով տեղանուններն անսովոր չեն

<sup>49</sup> A. Genç, *Çalıntı Kelimeler Ülkemizi Hemşin*, s. 115.

<sup>50</sup> S. Arıcı, *Dümbür Türkçesi, Hemşinli-parçin etimolojik sözlüğü*, s. 240-241.

<sup>51</sup> Ս. Վաչագանյան, *Ֆրանսիայի ժամանակակից բարբառը, բանասիրությանը և կրթությանը (կուրթը և ուսումնասիրություններ)*, էջ 273, 339.

համշենցիների շրջանում: Տեղանունը կազմվել է *աղբ* (գոմաղբ) բառից և *-անոց* վերջածանցից, այսինքն՝ գոմաղբով ծածկված վայր: Հուլանդացի գիտնականը նշում է, որ թուրքերենը հայերենից փոխառել է *աղբ* բառը, և թուրքական բարբառներում հանդիպում են *աղբան*, *աղբուն*, *անբուն*, *անբրն*, *աղբուն* տարբերակները: Այս ձևերը նա եռյանգես համարում է հայերենից փոխառյալ: *Աղբ* բառից անգամ կազմվել են բայաձևեր՝ *սինտեթիկ-հողը պարարտացնել*, *սինտեթիկ/անբանիկ-պարարտացում*, *սինտեթիկ-պարարտացված* դաշտ: Տրապիզոնի նահանգի Արաքլը գավառի Քիզիրեսու գյուղի համշենցիների խոսակցական թուրքերենում նա պահանջվել է *անբուն*<sup>22</sup> բառը, իսկ Վաթիքների խոսվածքում գործածական է *աղբ* տարբերակը<sup>23</sup>: Այս բոլորին հավելենք նաև, որ Չայեյի (ինչում՝ Մափավրի) գավառի Ռաշտո (այժմ՝ Քարաաղաջ) գյուղի մահմեդական համշենցիները նա օգտագործում են *աղբ* բառի *անբուն* բարբառային տարբերակը<sup>24</sup>:

**Արիքուր (Arıkuur)** - արտավայրի անուն է՝ Վարձում ենք՝ տեղանունը կազմվել է *արի* (սեռ. հոլ.) + *քար* բաղադրիչներից: Այսինքն՝ *քարարի* բառն է, դրսևփոխության օրենքի համաձայն տեղի է ունեցել բառերի տեղաշարժ: Ըստ Հ. Աճառյանի *արի* նշանակում է *«1. քարարի, 2. ավերակ տեղեր»*<sup>25</sup>: Գ. Ջահուկյանն *արի* բառը դնում է վաղնջահայկական բառերի շարքում<sup>26</sup>: Երկրորդ բաղադրիչը բնիկ հայկական *քար* բառն է՝ հնչյունափոխված *քար* տարբերակով: *Քար* բառը հայերենի բարբառներում ունի նաև *քոթ*, *քոթ*, *քոյ*, *քուր* բարբառային հնչյունափոխված դրսևորումները<sup>27</sup>: Արիքար տեղանուն է հիշվում նաև Գեղամա լեռներում: Եղևք, որ այժմ արմատով կան նաև մի շարք հայկական տեղանուններ՝ *Արիգձա*,

<sup>22</sup> Saklı Engiler Kizirmas, Derleme, Collection, Mecit Çeliktas, Proje Yönetmeni: Birol Topaloglu, İstanbul, Temmuz, 2010, s. 7. Տե՛ս նաև Մահույան Լ, Քիզիրեսուի հայկենցիները, «Չայեյի համշենական» ամսագրեր, 2011, թիվ 1-2:

<sup>23</sup> U. Elksing, *Armenisch-Türkisch Etimologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Heimatsgebiet*, pp. 124-125. Edinb. Eintröffen, Kultur, Trabzon-Merkez Etimoloji Bölümü, Ankara, 1989, s. 33.

<sup>24</sup> Ö. Öztürk, *Karadeniz Anadolu'daki Sözlük*, c. I, İstanbul, 2005, s. 33-34.

<sup>25</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արտավայրի բառարան*, հ. 1, էջ 174-175:

<sup>26</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Լեզվաբանական ժամանակաշրջան*, ՀԱՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 258:

<sup>27</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արտավայրի բառարան*, հ. 4, էջ 559:

Արիձոր, Արիսար, Արիտակ, Արիվան, Արիվանք, Արեվանք և այլն<sup>60</sup> :

Ավզաք (Avzak) - հավանաբար կազմվել է ավազան բառից Համշենցիներն *ավզո՞ծ* են ասում գուռին, քրավազանին<sup>61</sup> :

Ացկոզ (Ac'koğ) - կազմվել է *աք+կոռ* կոզով բաղադրիչներից խոսվածքին բնորոշ *ք>չ>ց* բաղաձայնների հնչյունափոխությամբ և *ւ-ի* անկումով :

Բաշթուր (Baštur) - կազմվել է *բաշ* (թրք. գլխավոր)+*դուր* բաղադրիչներից *դ>թ, ո>ր* փոփոխությամբ :

Դոձղաբակ (Dodzğabak) - կազմվել է *տոտախ+դոզդեի* (ծառատեսակ)+*բակ* բառերից : Խոփալի համշենցիների խոսվածքում ևս պահպանվել է *դոսիի բառը*<sup>62</sup> : *Բակ* նշանակում է «տան շուրջը եղած զամիթ», ևսև ունեցել է «ոչխարների փարախ իմաստը»<sup>63</sup> : Այս դեպքում Դոձղաբակ նշանակում է տոտախի ծառերով լի բակ, տարածք :

Գալեր (Galer) - միկրոտեղանունը *կալ+լեր* բառն է բառանկզքի *կ>ց* հնչյունափոխությամբ : *Գալ* նշանակում է «ցորեն կամենելու տեղ»<sup>64</sup>, այսինքն ցորենը կամով մաքրելու, հատկները ծղոտից ազատելու տեղ<sup>65</sup> : Եվ քանի որ Համշենում ցորեն չէր աճում խոնավության պատճառով, ըստ Բ. Քուլաքյանի համշենցիները կալ էին ասում վայրի կաղինը (խոզակաղին) կալսելու վայրին<sup>66</sup> : Քրիստոնյա համշենցիների բարբառում Հ Աճադանն արտանձնացնում է ևսև -*լեր* հոգևակներ<sup>67</sup> : Ս. Վարդանյանը Խոփալի կրոնափոխ

<sup>60</sup> Հայաստանի և Ժառանգի շրջանների տեղանունների բառարան, հ. 1, ԵՊՀ հրատ., Երևան, 1986, էջ 241-243 :

<sup>61</sup> Ս. Վարդանյան, *Գրոմազդեի ծախճմանայնի բարբառը...*, էջ 275 :

<sup>62</sup> Ս. Վարդանյան, *Գրոմազդեի ծախճմանայնի բարբառը...*, էջ 334 :

<sup>63</sup> Հ Աճադան, *Հարի՞ծն արտաստիան բառարան*, հ. 1, էջ 390-391 :

<sup>64</sup> Հ Աճադան, *Հարի՞ծն արտաստիան բառարան*, հ. 2, ԵՊՀ հրատ., Երևան, 1973, էջ 483 :

<sup>65</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 4, Երևան, 2004, էջ 12 :

<sup>66</sup> Սովորաբար այն լինում էր թեք վայրում, որպեսզի սևորումների ժամանակ ջուրը չկուտակվի : Գալինը փոստ էին կալում, արևի տակ յորացնում, որից էնտե կալվորները կաղի հատիկները տեղատու էին կեղևից (Բ. Քուլաքյան, *Լեզվ. աշխ.*, էջ 132) :

<sup>67</sup> Ըստ Հ Աճադանի՝ Համշենի բարբառն ունի երեք հոգևակներ տեսնել «-իք կամ -եր, -նիք կամ -նի և

-ք» (տե՛ս Հ Աճադան, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 79) :

համշենցիների խափածքում ետյեպես գրանցել է -էր հոգեակերտը<sup>64</sup>: Գալեր/Գալիք անուևով գյուղ է եղել նաև Բարերոյի գավառում<sup>65</sup>:

**Շնգեղուք (Ingezut)** - կազմվել է *ընկույթ+ուս* բաղադրիչներից: *Ուս* տեղանվանակազմ վերջածանցը Գ. Ջահուկյանը համարում է հնդկարտալական ծագման: Այն կենսունակ անանց է եղել նաև վաղեջահայերենում<sup>66</sup> և բնորոշ է հայկական տեղանունների՝ *Քեղուս, Կաղուս, Լորուս, Տանձուս* և այլն: Համշենի գավառում շատ տարածված է -*ուս+ուք* տեղանվանակերտ անանցը: Հետաքրքրական է, որ Ծամրեհեմշիևում պահպանվել է *ընկույթ* տարբերակը: Իսկ Խոփայի համշենցիները ընկույզի ասում են *գազալ, կակալ*<sup>67</sup>: Հ. Աճառյանն *ընկույթ* բառը համարում է հայկական, և ըստ նրա՝ հարևան լեզուներում այն փոխառված է հայերենից, քանի որ Հայաստանը եղել է ընկույզի արտադրության նշանավոր երկիր<sup>68</sup>: Ինչպես գրում է ծնունդով Տրապիզոնի Կյուչանա գյուղից համշենահայության ազգագրության խորագիտակ մասնագետ Բ. Թողաքյանը, Համշենի անտառները հարուստ էին ընկույզի ծառերով: «Ընկուզենիներ հատուկենտ տեկում էին արտերի, կաշուտների եզրերին, ...կալիս բավականին տնտեսություններ, որոնք իրենց տեսերձ հողերը կամ առանձին հողամասերը հարկացնում էին ընկույզի մշակմանը, որի հետևանքով այդ վայրերը կամ թաղերը կոչում էին *ընկուզուս* կամ *ընկուզեղ*»<sup>69</sup>:

**Թոլիքցոր (Tolik çor)** - տեղանվան մեջ առկա են *Թոլիք+ջուր+ջոր+ջոր* բաղադրիչները՝ տեղական բնորոշ հեյուևսփոխությանը: Հավանաբար տեղանվան առաջին բաղադրիչի մեջ *թուլթուլ* բառն է, որ հայ բարբառներում նշանակում է *ցոր-ցոր*, գործածական է նաև *թուլ տննլ* բայական կառույցը, որ նշանակում է

<sup>64</sup> ՏՅ՝ Ս. Վարդանյան, *Գրոմպոլիս համընձանայզի բայբառը...*, էջ 156-158):

<sup>65</sup> Լ. Մանուկյան, *Բազմը Հայքի Բարերոյ, Սոլեր, Ղերբան գավառները տեղանուններն ու ժողովրդագրությունը XVII դարի օսմանյան աշխարհագրո օտայաններում*, «Հուսակ» հրատ., Երևան, 2007, էջ 148:

<sup>66</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի գաանություն Լայուսայզի ժամանակաշրջան*, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 415:

<sup>67</sup> Ս. Վարդանյան, *Գրոմպոլիս համընձանայզի բայբառը...*, էջ 353:

<sup>68</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արտասփան բառայան*, հ. 2, էջ 130-131:

<sup>69</sup> Բ. Թողաքյան, *Համընձանայզի ազգագրությունը, ծայ ազգագրություն և բանականություն*, էջ 132-133:

գլորվել<sup>72</sup>։ Իսկ երկուրդ բաղադրիչը՝ *ցորո*, հայերեն ջուր բառն է *թուր>ջուր>ջոր* խոսվածքային իր դրսևորումով։ Ըստ այդմ էլ Քոչիցբուր նշանակում է զլզլացոր, զլոր-զլոր իջևող ջուր, առվակ։ Ու Բլեսիեզը ևս նկատել է որ թուրքախոս համշենցիների խոսվածքներում ջուր բառն ունի՝ *ջոր, չոր, ջոր* դրսևորումները։ Իսկ Հալա և Մոլավենիս (Մոլեմի) գյուղերում *թուր*-ի բառավերջի *ր*-ն վերածվել է *չ*-ի՝ *թուր>չայ*<sup>73</sup>, մի երևույթ, որ բնորոշ է Համշենի բարբառին։ Քրիստոսյա համշենցիների բարբառում ջրի դիմաց Հ Աճառյանը գրանցել է *ճայր*<sup>74</sup>։ Խոփաղի խոսվածքում օգտագործվում են *չուր* և *չայ* տարբերակները<sup>75</sup>։ Մեր ուղեկից Ուրուր Բիբոյից իմացանք, որ Չանլիենշիում մոտավորապես 2600մ բարձրության վրա գտնվում է *Ջերեզոյիս>Ջրեզոյիս* անունով արտավայր, որտեղ կա եկեղեցու եկուցեր։ Հետաքրքրական է որ այս տեղանվան մեջ պահպանվել է ջուր արմատի *ջր* հնչյունափոխված ձևը։

**Լորուս (Lorut)** - կազմվել է *լորի* (ծառատեսակ)+ուս բաղադրիչներից։ Տարածաշրջանը հարուստ է լորենու ծառերով։

**Ռացթուր (Kbaç'tur)** - կազմվել է *խաչ>խաց>դուս>թուր* բաղադրիչներից՝ տեղական խոսվածքին բնորոշ հնչյունափոխությամբ։ Քրիստոսյա համշենցիների բարբառում ևույնպես գործածական է *խաչդուս* բառակապակցությունը, որ նշանակում է եկեղեցու դուս<sup>76</sup>։ Առհասարակ Ռիզնի համշենցիների շրջանում տարածված են *խաչ* արմատով տեղանունները՝ *Ռացինա>Ռաչինա, Ռաչալիթ>Ռաչալիտա, Ռաչիվանաք>Ռաչիվանք* և այլն։

**Չեզովիթ (Dzeğovit)** - կազմվել է *ձեղ>ձեղ>հովիս>ովիթ* բաղադրիչներից։ *Սեղ, ձիղ* հայերենի որոշ բարբառներում նշանակում է հարդի շյուղ։ Համշենի բարբառում *ձեղ* են ասում եգիպտացորենի ցողուններին, որն օգտագործում են իբրև ձմեռվա անասանակեր<sup>77</sup>։ Խոփաղի համշենցիների խոսվածքում պահպան-

<sup>72</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» կրթա., Երևան, 2002, էջ 123։

<sup>73</sup> U. Blasing, *Armenisch-Türkisch Etimologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Heimatgebiet*, p. 126.

<sup>74</sup> Ս. Վարդանյան, *Տրտնապետի համշենցիների բարբառը...*, էջ 383։

<sup>75</sup> Հ Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 252։

<sup>76</sup> Հ Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 260։

<sup>77</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» կրթա., Երևան, 2002, էջ 400-401։

վել է *ճաղ* տարբերակը<sup>78</sup>։ Տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *հովհաղ*, որը բնիկ հայկական հով արմատից է կազմվել, նշանակում է «ճոր», «ցածր բլրակ», ունի նաև օվիտ տարբերակը և «երկու ձևով է մտնում է բազմաթիվ հայկական տեղանունների մեջ՝ ինչպես Բալահովիտ, Կոզովիտ, Աղիովիտ և այլն»<sup>79</sup>։

**Չիվաղեուք** - կազմվել է *ձիվաղ* (*ձիվաղենի*-ծառատեսակ)*+ն+ուք* բաղադրիչներից։ *Չիվաղենի* հնչյունափոխված ձևն է Խոփալի համշենցիները *ձիվաղենի* ասում են դարձեցնելուստեձևում<sup>80</sup>։ Ունի բալի կամ կեռասի մեծության պատույներ, որոնք հասունանալիս սևանում են։ Ի. Քարաջալի բառարանում գրանցվել է **Չեանուք** տարբերակը (դաշտի անուն Խաչալիի՝ գյուղում)<sup>81</sup>։

**Մաղուք** (*Mağluc*) - կազմվել է *մաղուք+մաղուք* բաղադրիչից՝ *ուք+ուք* անանցի հավելումով, ալվել է բառի երկրորդ վանկի օ ձայնավորը։ Ղ. Ալիշանի 1895թ. հրատարակած «*Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*» արժեքավոր ուսումնասիրության մեջ նշվում է *մաղուք* տարբերակը. «*Մորենայ նման պտուղ վայրի. Տեղն այլ Մաղուս կ'ըսեն ի Պոնտու։ Լույսն է և ժուլժուխ*»<sup>82</sup>։ Հստ «Հայոց լեզվի բարբառային բառարանի» 1. մտքեռն թփի տեսակ է 2. երկար վազերով փուշ<sup>83</sup>։ Համշենի բնակիչների ունեն նաև մի ասանցվածք. «Եթե տղա չունենք, մեր տան ծուխը կմարի։ Եթե մեր աղիները ծածկվեն մաղուով, ապա մեր օջախները կխեղվեն։ Oğlumuz olmazsa evimiz kapanır. Bağımız, bahçemiz mağoluk olur, ocağımız batar»<sup>84</sup>։ Խոփալի համշենցիների խոսվածքում պահպանվել է *մաղուք* տարբերակը<sup>85</sup>։ Այսպիսով, *Մաղուք>Մաղուս* նշանակում է մաղուի թփերի անելու տեղ։

<sup>78</sup> Լ. Մանուկյան, Հայկական երգերը՝ լոռի կրոնափոխված համշենցիների ինքնության հնչողաբան և դրսևորում, *Քուրապետական և օտարազգետական ձեռագրապատկերներ*, Ռոբերտ Մաքրատարանի ընդհանուր խմբագրություն, հ. V, Երևան, 2006, էջ 259։

<sup>79</sup> Զ. Անուշյան, *Հայերեն արմատական բառարան* հ. 3, ԵՊՀ կրտս., Երևան, 1977, էջ 166-177։

<sup>80</sup> Ս. Վարդանյան, *Գրոնադոյե ձայնձեմանայդոյ բարբառը...* էջ 334։

<sup>81</sup> I. Karaca, *Hençin, Terik, Dil, Gelenek ve Görenekler* s. 80.

<sup>82</sup> Ղ. Ալիշան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*՝ Անեկով-Ա. Ղազար, 1895, էջ 413։

<sup>83</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 2 Երևան, 2007, էջ 18։

<sup>84</sup> Ö. Öztürk, *Karadeniz Anıtlarında Sözlük* c. II, İstanbul, 2005, s. 804

<sup>85</sup> Ս. Վարդանյան, *Գրոնադոյե ձայնձեմանայդոյ բարբառը...* էջ 304։





տարբերակը<sup>92</sup>։ Մակայն Չամլըհենշինում գրատուներ կատարելիս նկատեցի, որ որոշ բաներում տեղի է ունեցել բառամիջի *ա-օ* հեյտունափոխություն։ Եվ լեզվական արագաբանությամբ բառը սեղմվել է դատնալով *անցուտ-մացանների փշուտ ծառերի, քփերի տեղ*։ Հետաքրքրական է, որ քրիստոնյա համընկեցիների բարբառում Հ Աճառյանը գրանցել է «մացառյանմաք»-փայտը կամ տախտակը փշիշուտի, ճղճղուտի» բայը<sup>93</sup>։

**Սալ (Sal)** - տեղացիները *սալ* ասում են անընդհատ հոսող ջրի հետևանքով կոկված կարծր քարին։ Սալ եղանակում է «տափակ քարի մեծ հատոր»<sup>94</sup>։ Քրիստոնյա համընկեցիների բարբառում ևս պահպանվել է սալ ձևը՝ «մեծ և տափակ սալ քար իմաստով»<sup>95</sup>։

**Սոք (Sot)** - *Սոք* եղանակում է *«ուժեղ մրրկաշուկ քամի»*<sup>96</sup>։ Հայաստանում անսովոր չեն Սոք անունով բնակավայրերը։ *Սոք* անունով գավառ է եղել Մեծ Հայքի Մյուսրաց աշխարհի հյուսիսարևմտյան կողմում։ Համապատասխանում է նախկին ՀԽՄՀ Վարդենիսի շրջանին։ Սոք անունով ձևափոխաց է եղել ևսև ՀԽՄՀ Թումանյանի շրջանում<sup>97</sup>։ Հ Աճառյանը, մեջբերելով տեղանվան Ստեփանոս Օրբելյանի ստուգաբանությունը՝ «Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց և դառնաշուկ օդոցն կոչեցաւ Սոթք» («որ մշտական բուքերի և ցրտաշուկ եղանակների պատճառով կոչվել է Սոթք»<sup>98</sup>), հավելում է, որ ԼՃԲ-ի՝ սոք բառի «*սլիկո, կարծր*» իմաստով, բացատրության հետ որևէ կապ չունի<sup>99</sup>։

**Ծաքուք (Tsakut)** - կազմվել է *ցախ-ցաք+ուտուք* բաղադրիչներից, որ Համընկի բարբառում եղանակում է անտառ։ Հ Աճառյանը *ցախ* բառը համարում է բնիկ հայկական<sup>100</sup>, ծովային

<sup>92</sup> Հ Աճառյան, *Հայերեն արևմտաֆան բառաբան* հ. 3, Երևան, 1977, ԵՊՀ կրատ., էջ 290։ Տե՛ս ևսև *Լուսինի՝ Քննություն Համընկի բարբառի*, էջ 244։

<sup>93</sup> Հ Աճառյան, *Քննություն Համընկի բարբառի*, էջ 244։

<sup>94</sup> Հ Աճառյան, *Հայերեն արևմտաֆան բառաբան* հ. 4, ԵՊՀ կրատ., Երևան, 1979, էջ 155։

<sup>95</sup> Հ Աճառյան, *Քննություն Համընկի բարբառի*, էջ 252։

<sup>96</sup> Հ Աճառյան, *Հայերեն արևմտաֆան բառաբան* հ. 4, էջ 238։

<sup>97</sup> *Հայաստանի և Հայասնից շրջանների տեղանունների բառարան* հ. 4, ԵՊՀ կրատ., Երևան, 1998, էջ 651։

<sup>98</sup> Ստեփանոս Օրբելյան, *Մյուսիկից պատմություն քաղաք, ներածություն և եանդազրույթունները Ա Արքայականի, «Մովսեսական գործ», Երևան, 1986, էջ 70։*

<sup>99</sup> Հ Աճառյան, *Հայերեն արևմտաֆան բառաբան* հ. 4, էջ 238։

<sup>100</sup> Հ Աճառյան, *Հայերեն արևմտաֆան բառաբան* հ. 4, էջ 446-447։

համշենցիները ևս անտառին ասում են *ցախալ*<sup>101</sup>: Ինչպես գրում է Ղ Ալիշանը, *ցախ* ասում են «ըստ ոմանց Քիծխի ծառն, ըստ այլոց Հացի ծառն: Տրսապիզոնի կողմեր Յախ կոչեն Խալանյը, *Erica Arbores Beruyere arborescente*, որոյ երկայն բարակ ճղերուն տերեւներն խիտ խիտ մանրիկ մազեր են, և վայելուչ տեսք մընծայեն թուփին, ասկէ կու շինեն անը»<sup>102</sup>:

**Փագենդեղ (Pegendeğ)** - կազմվել է *փակեն+տեղ+փագեն+դեղ* բաղադրիչներից: Համշենի բարբառի Խոփալի խոսվածքում *փագեն* ասում են փայտաշեն խոտանոցին, պահեստին<sup>103</sup>: Ի տարբերություն սերեղերների (փայտե սյուների վրա կառուցված մթերանոց)<sup>104</sup>, սարքիների (սյուների վրա կառուցված փայտյա մեկ հարկանի շինություն՝ խոտ պահելու համար) և փացնանների<sup>105</sup> փագենները կառուցվում են անմիջապես հողի վրա<sup>106</sup>: Չամլրիեմշինում կա նաև Փագեն/Քագեն անունով գյուղ<sup>107</sup>:

**Փլիլինուք (Pillinduz)** - կազմվել է *փիլոնչ+փիլունմ* (խոտաբույսի տեսակ)+*ուլուուք* բաղադրիչներից: Խոփալի համշենցիները պահպանել են *փիլոնչ* ձևը<sup>108</sup>: Ղ Ալիշանը ելում է *փիլունց* տարբերակը տալով հետևյալ նկարագիրը. «Տրսապիզոնեցից այս անուամբ և յատուկ մակդիրներով այլ կոչեն քանի մի տեսակ խոտեղեն Պտերներ, որ շարք մեն տերևոց, որոց իրաքանչիւրն բաժնուած ի մանրաձև երկայն սրածայր մասեր...

<sup>101</sup> Ս. Վարդանյան, *Գրոմպեդիկ ձայննամայրիկի թարգմանք...* էջ 320:

<sup>102</sup> Ղ Ալիշան, *Հայաստանի ծառ և ծաղիկների բուսաբանություն* էջ 613:

<sup>103</sup> Ս. Վարդանյան, *Գրոմպեդիկ ձայննամայրիկի թարգմանք...* էջ 322:

<sup>104</sup> Սերեղերները 2-3 մ բարձրության մը, չափը 40 թմ, չորս կողմից բաց պատշգամբով շրջափակված կառույցներ են: Օղ խաղալու համար փայրիկ պատմանները ցանցվեն են, երբեմն հստակապես են զարդանախշերով Ախտեղ պատմ են երկրաստորին, կարտաֆիլ, լաթ, ասի և այլն Մթեղը կենդանիներից ապահով պահելու համար սերեղերի տանդուղը շարժական է (տե՛ս Վարդանյան Ս., *Գրոմպեդիկ ձայննամայրիկի թարգմանք...* էջ 317): Սերեղերները բացի Ռիզից կառուցվում են նաև Տրապիզոնի, Գյումուշխանի, Էրզրումի, Օլյաթի, Գիրեսունի (յուս՝ Վիլասան), Ջոնգուլյաթի շրջաններում: Ունի նաև սերանոց (Տրապիզոն), սեյմնթ (Գյումուշխան, Էրզրում), սեյմնթ (Օլյաթ, Գիրեսուն, Ռիզ) սերնծ (Ջոնգուլյաթ), սպրանթ (Համշեն, Չամլրիեմշին) նկարաստանակա տարբերակները (Օ. Օւտրիկ, *Karadeniz Ansiklopedik Sözlük*, c. II, İstanbul, 2005, s. 1022:

<sup>105</sup> Օ. Օւտրիկ, *Karadeniz Ansiklopedik Sözlük*, c. II, s. 967.

<sup>106</sup> Ս. Վարդանյան, *Գրոմպեդիկ ձայննամայրիկի թարգմանք...* էջ 323:

<sup>107</sup> Օ. Օւտրիկ, *Karadeniz Ansiklopedik Sözlük*, c. I, s. 154.

<sup>108</sup> Ս. Վարդանյան, *Գրոմպեդիկ ձայննամայրիկի թարգմանք...* էջ 324:

շատ գեղեցիկ մանրաշար տեսք մի կ'ընծայեն, ունի նաև *Արջգիլուեցն* ավելի լայն է տեսքով կամ երկայն մատներով, եղափիլուեցն կոչուի էջ Պտեր<sup>109</sup>։

**Փողփաղոթ** (Pogpodus) - կարծում ենք, որ տեղանունը կազմվել է *փողփաղոթ* > *փաղ քառերից* և *-ուտ* անանցից, այսինքն *փողփաղոթ* > *փողփաղ* + *ուտ* > *ուղ*։ Խոփայի համընկնների մոտ պահպանվել է *ձողփաղենի* տարբերակը<sup>110</sup>։ Ա Գեևյի բառարանում գրանցվել է **Փեմկենչեն** - *Polpeden* (որպես բույս)<sup>111</sup>։ Զափազանց հետաքրքրական է որ *փողփեռտե* տարբերակով, որպես ծառանուն, հիշվում է նաև Ղ Ալիշանի «Հայրուսակում», որի դիմաց նա գրում է «Յոգ աղամի այրպես կոչումս ի Պոնտոս, քննութեան կարօսյի տնտսին»<sup>112</sup>։ Բառի առաջին արմատը հայերեն *փաղ* բառի հնչյունափոխված *պաղ* տարբերակն է, երկրորդ բաղադրիչը թուրքերեն *աղաջ* (*agac*) - ծառ բառն է, որը տեղական խոսվածքի օրինակափոխությամբ հնչյունափոխվել է *աղամի* (*agadam*), այսինքն փող աղամի, նշանակում է փողի ծառ։ Ինձ հաջողվեց շտախենից հետևել Մաքրևիս գյուղում, գրանցել, որ *փողփաղոթ* > *փողփեռի* են ասում մի ծառատեսակի, որի ճյուղերը փողի պես սնամեջ են։ Այս ծառի փայտը, Զամլըհենչիենի Մաքրևիս գյուղում, ինչպես մեզ ցույց տվեցին և թուրքերենով բացատրեցին տեղացի կանայք, օգտագործում են որպես գործիք, որով փչում ու բորբոքում են կրակը և այն կոչում են *փաղ*։ Ըստ թուրքական «Մեծուկան հանրագիտարանային բառարանի» ունի նաև *փաղ* տարբերակը<sup>113</sup>։ Տեղանվան երկրորդ արմատը փայտ բառը, Համընկնի բարբառում ունի *փաղ* > *փաթ* > *փեղ* > *փի* > հնչյունափոխված դրսևորումները։ Խոփայի համընկնների խոսվածքներում նա պահպանվել են փայտ բառի *փաղ*, *փաթ* հնչյունափոխված ձևերը<sup>114</sup>։

**Քամիքեղ** (Kamikelög) - կազմվել է քամի + գլուխ > քեղոլ բաղադրիչներից։ Ըստ Բ. Թուրաքյանի համընկնիները կատեմիի սերմերը չորացնելուց հետո, այն մաքրում էին կալամաղերով ու քամուն էին տալիս թեփերից անջատելու նպատակով։ «Քամուն

<sup>109</sup> Ղ Ալիշան, *Հայրուսակ վամ հայփանան բուսաբանութիւն* էջ 628

<sup>110</sup> Ա. Վարդանյան, *Պոնտոսյե համընկնների բարբառը...* էջ 334

<sup>111</sup> A. Gené, *Calypso Kadunlar Ülkesi Hacılar*, s. 143.

<sup>112</sup> Ղ Ալիշան, *Հայրուսակ վամ հայփանան բուսաբանութիւն* էջ 633:

<sup>113</sup> Ö. Özlük, *Karadeniz Anadolusudü Sözlük*, c. II, s. 966, 967.

<sup>114</sup> Ա. Վարդանյան, *Պոնտոսյե համընկնների բարբառը...* էջ 322:

տալու համար կանգնում էին բարձր պատվանդանի վրա ու ամանից սերմացուն քիչ-քիչ թափում<sup>115</sup>։ Կարծում ենք, որ Քամիքեղոյը նման մի վայրի անուն է։

**Քաշված (Kashvats)** - հավանաբար կազմվել է հայերենի *քաշ* բառից, որը նշանակում է ցած, ոչ բարձր<sup>116</sup>։ Հայաստանի տեղանունների բառարանում *քաշ* արմատով նշված է շուրջ երեք տասնյակ տեղանուն այսպես օրինակ՝ *Քաշուեիք, Քաշաթաղ, Քաշաղ, Քաշինաթոց* և այլն<sup>117</sup>։

**Քարտի (Karap)** - տեղանունը կազմվել է *քար+այն* բաղադրիչներից։ Լշեք, որ Չամլըհենշիկում Քարափ տեղանուն է գրանցել նաև Ա. Գենչը<sup>118</sup>։ *Քարայի քաշ+Քերայի քաշ* տեղանուն է հիշվում նաև Արդվիհի նահանգի Յուսուֆեյի (նախկին Կիսկիս) գավառում, տեղացիներն այդպես են անվանում ժայռային գանգված ունեցող այս տեղանքը<sup>119</sup>։

**Քարեղօղ (Karedoğ)** - տեղանունը կազմվել է *քար+ե+ղօղ+տեղ* բաղադրիչներից։ Տարածագրություն *քար* արմատով պահպանվել են նաև այլ միկրոտեղանուններ, ինչպես օրինակ՝ *Քարօց* (ամառային արոտավայր Չայկի գավառում), *Քարուեշ* (ամառային արոտավայր Չամլըհենշիկ գավառում, որն ունի 13 տուն)։ Քարուեշ անունով քաղաքացույթ է հիշատակում 9-10-րդ դարերի հայ նշանավոր պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին Մեծ Հայքի Սյունյաց աշխարհում<sup>120</sup>։ Ի դեպ՝ *Քարուեշ/Քարուեշ, Քարանուեշ/Քարանուեշ լեռան, գետի և գյուղի անուններ կան Սյունիքում և Լեռնային Ղարաբաղում*<sup>121</sup>։ Լշեք, որ *քար* արմատով հարյուրից ավելի տեղանուն է եղել Մեծ Հայքում և Կիլիկիայում<sup>122</sup>։ Քարեղօղ

<sup>115</sup> Բ. Քուրաբյան, *Հանրեմանայնի արգազությունը, իսկ արգազությունն է բանավարություն* էջ 130։

<sup>116</sup> Փանանյանից *հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 4, ՀՄՄԸ ԳԱ կրտս., Երևան, 1980, էջ 709։

<sup>117</sup> *Հայաստանի և հայրենից ջրբանների տեղանունների բառարան*, հ. 5, էջ 98-300։

<sup>118</sup> A. Genç, *Galyatos Kadimler Ülkası Haritası*, էջ 135։

<sup>119</sup> Ö. Öztürk, *Karadonia, Anadoludaki Sırtlık*, c. 2, s. 626.

<sup>120</sup> Հովհաննես Խաթուրյան Դրասխանակերտցի, *Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները* Գ. Քրանյանի, ԵՊԸ կրտս., Երևան, 1996, էջ 334-335։

<sup>121</sup> *Հայաստանի և հայրենից ջրբանների տեղանունների բառարան*, հ. 5, էջ 314-315։

<sup>122</sup> *Հայաստանի և հայրենից ջրբանների տեղանունների բառարան*, հ. 5, էջ 309-333։

տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *տեղ* բառը, բնիկ հայկական է, որն աղավաղվելով վերածվել է *դոդ*-ի:

**Քեքմեց** (*Ketmeç*) - կազմվել է *գեւ>քեք+մեց>մեց* բաղադրիչներից՝ տեղական խոսվածքին բնորոշ հեչուևալիս-խուսթյամբ: Ի դեպ *Գեւասմեց* տեղանուն է հիշատակվում Մեծ Հայքի Մյուսիսաց աշխարհի Գեղարքունիք գավառում 903թ.<sup>123</sup>:

**Օցուք** (*Otsur*) - տեղանունը կազմվել է *օձ>օց+ուս* բաղադրիչներից: Հայաստանի այլ գավառներում ևս գրանցվել են *օձ* արմատով տեղանուններ<sup>124</sup>, այդ թվում՝ վերոնշյալ *Օձուս* կաղապարածևով տեղանուններ են եղել Համշենի հարևան Նոտորքում, Սպեր գավառում, ինչպես նաև Կարսում, Չիշկանձազի շրջանում<sup>125</sup>:

Հնասարքի լեզվական փաստեր գրառեցի Մաքրենս գյուղի բնակիչ, տիկին Գյուլուլ Գյուլայից: Զրույցի ընթացքում պարզվեց, որ նրա մայրական կողմից պապը՝ Կարդանը, հարևան գյուղի քահանան (քեշիշը) էր: Եւ վկայեց նաև, որ գյուղի մոտակայքում ժամանակին եղել է վանք, որից այժմ միայն ավերակներ են մնացել: Եւ իր թուրքերեն խոսքում հենց վանք բառն էլ օգտագործեց: Երջակա միկրոտեղանուններից թվարկեց՝ Անուփի դաղ-Հակոբի լեռ, Արանի չալըր (մարգագետին), Դօվօր/Դօվերի (տավար) թաղամաս Ծամլրիևեմշիի Չիշիվա գյուղում, Խօցիևա>Խաչիևա, Հացիևեղեղվ> խաչի (եկեղեցու) հետևի կողմ (մի այգու տնուն է, թարգմանաբար ասում են նաև Քրիստ բոսթան), Հեղեն փօս>Հետևի կողմում գտնվող հարթավայր, Մարկօսի լեռ (ամառային արուտավայր), Մարսևի (Մառան) լեռ (ամառային արուտավայր), Մեղօյի յալա (Մեղվի յալա), Մեկիփի փօս, Քօքօշ - գյուղատուն, հավանաբար *կօկեշ/գօգոշ* բառի աղավաղված ձևն է, Համշենի բարբառում այդպես են ասում խխունցի պատյանին<sup>126</sup>, Ծաղղեղ (կազմվել է շաղ-ցող, եղյամ և տեղ բառերից), Մեկվօր-Մաղխալօր

<sup>123</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, ԵՂՁ կրտս., Երևան, 1986, էջ 843:

<sup>124</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 471-475: Լ. Մանուկյան, *Բարձր Հայքի Բարձագ, Մարձ, Դեբրան գավառների տեղանունները և ժողովրդագրությունը XVII դարի օսմանյան աշխարհագրի մատյաններում*, էջ 210:

<sup>125</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 475:

<sup>126</sup> Լ. Անուրանը Համշենի բարբառի գավառական բառերի շարքում գրանցել է նաև կրեղ (գոգոջ) բառը (սև ս Հ. Անուրան, *Քննադրան Համշենի բարբառի*, էջ 261):

(Ակաթ-բուլա, որը համշենցիներն օգտագործում են որպես դեղամիջոց սակավարյունության բուժման համար<sup>127</sup>), Չուլինա (թաղամաս, Չամլոհենշինի Չիկչիվա գյուղում) տեղակուները: Հին գերդաստաններից, ընտանիքներից, տներից հիշատակեց Ալեքսի տուն, Անտոնի տուն, Ավեթիքի տուն, Քեղիի տուն, Բոթոսի-Պառոսի տուն, Գավազի (ինչպես բացատրեց Գյոնուլ Գյուլայը, գավազան բառի կրճատն է) տուն, Գինոսի տուն, Խաչիկի տուն, Կիրակոսի տուն, Չարքիների տուն, Քոզիքի/Քոզիսի տուն, Փեարեսի (Պետրոսի) տուն, Փիրիկի տուն, Մազիկի տուն, Մուսիկի տուն, Փրսիկի տուն, Փոլադի տուն, Խաչիկի տուն, անձնանուններից հիշատակեց Գասպար, Ցաքուշ (Ցագունի), Խաթուն, Խաչատուր, Մարի, Մուլան, Վարդան: Հիշեց, ինչպես ինքն էր աւում, իր քերզիկի (keregin)-քեռակնոջ Միրիէի անունը: Հավելեց նաև Եամիրանդ անունը ասելով, որ Եամիրամի փոփոխված տարբերակն է: Լշենք, որ Չամլոհենշին գավառի Մուլավեյիս (Մուլեվի) գյուղի բնակիչները նա իրենց խոսակցական թուրքերենում մի շարք հայերեն բառերի հետ պահպանել են հայերեն տոնմանուններ, օրինակ Գիրագոսանչ<sup>128</sup> տեղական խոսվածքին բնորոշ ենյունափոխությամբ Կիրակոս+Գիրագոս+ենց+անց+անչ:

Այդ բարձրադիր լեռան զազաթից անազնացած իջեում է ջրվեժը, կամ ինչպես համշենցիներն են ասում, չախչախանը Կարծում ենք բառահիմքում չախչախ բառն է, որը տարածված է նաև հայ բարբառներում, ունի չախչախիկ ձևը: Ըստ «Հարց լեզվի բարբառային բառարանի»<sup>129</sup> նշանակում է «ջրաղացի մաս, որն իր ցնցումներով կարգավորում է աղացվող հատիկի հոսքը դեպի ջրաղացք»<sup>130</sup>: Ջրաղացից անընդհանու գալիս են չախչախանների ձայնը և ջրի խոխոջը: Նիբաղում ենք, որ ջրվեժի արագահոս ջրի աղմուկը տեղացիները նմանեցրել են ջրաղացի չախչախի ձայներին, այդպիսով ջրվեժները կոչելով չախչախան: Օ. Օզթուրքն իր բառարանում գրանցել է չաջաքա, չամչաքա բառերի ենչարտասանական տարբերակ-

<sup>127</sup> Akso H., Hemşinlilerin Hastalıkları Tedavi Yöntemleri, "Zir Yayıncılık", Karadeniz'in Yerel Tarih, Folklor, Biyografi ve Coğrafya Dergisi, Sayı 12 Eylül-Ekim, Nisan, 2010, s. 35.

<sup>128</sup> А. Тулумджян, Холм-ахемшкыи и баш-ахемшкыи материалы экспедиции, «Հայր Խամբձնավան», 2006, թիվ 1-2: Տն'ս ևուլի՝ Յեռն և կորն, Առն, N 3, 2005, с. 10.

<sup>129</sup> Հարց լեզվի բարբառային բառարան, է. Պ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2007, էջ 372.

ները: Լա ևս այս բաները բացատրում է որպես ցրադացի մաս, որը եզիպտացորենի հատիկներն ուղղում է դեպի ցրադացքար<sup>100</sup>: Կարմիր սարի չախչախները թափվում է սարի ստորոտով հոսող գետը, եկեց այստեղ, ըստ Ղ Ռճրճյանի, միախառնվում են Քաշխառնչեն և Եվոդխա (Եղեովխա) գետերը ու թափվում Սև ծով<sup>101</sup>: Գյուղի մոտակա գետի վրա պահպանվել է հնագույն կամարածև մի կամուրջ: Տանի զուղը սարի լանջին տափարակ մի հատվածի վրա է: Տների մեծ մասը լքված է Կանգուն են քարե հիմքերի վրա կառուցված ընդամենը մի քանի փայտաշեն տներ: Գյուղում հիմնականում էին տների և շինությունների ավերակներ են: Գյուղն ունի ստուարակ ստջյուր: Այնտեղ հանդիպեցինք մի համշենցի ընտանիքի, որը եկել էր ամառային արձակուրդն անցկացնելու:

Մեզ ուղեկցող Ջան Ուղուր Բիրյուլից գրանցեցի, որ Զամլրհենշինի հին անունը եղել է **Հեմեգեդուր (Hemegedur): Հեմեգեդուր** տեղանվան երկրորդ բաղադրիչը ծայրերն կտուր բառի բարբառային դրսևորումն է *կտուր>գեդուր*, առաջին բաղադրիչը հավանաբար կարող է լինել Համամ անհանունը (Համշենի իշխանության հիմնադիր Համամ Ամասուհու անունից) բառավերջի *մ-ի* անկումով՝ բառավերջի *մ-ի* անկումով, այսինքն Համամի կտուր, տակիք, որ փոխարկրական իմաստով կարող է նշանակել Համամի տուն: Կարծում ենք, որ լեզվական արագաբանությամբ և տեղական խոսվածքի ազդեցությամբ դարձել է **Հեմեգեդուր**, ինչպես օրինակ Համամաշենը դարձել է Համշեն: Ավելացնենք, որ *կտուր>գքուր* արմատով **«Kara-Gur-Dagh» Քարա (սև)+կտուր**, մեկ այլ լեռնանուն է հիշվում Համշենում: Ըստ Ն. Տաշյանի տեղադրության՝ **Քարա+կտուր** բարձր զագաթը գտնվում է «Բաշ-Քոյ ևս անկէ վեր ուղիղ նյուսիսակողմը կ'իյնայ րուն Համշեն ալ ևս իր կողերեն կը բլիսի Համշենի գետը անցնելով նախ Սոգորնի և անկէ Համշեն, որոնք իրարմէ շատ հեռու ալ չեն»<sup>102</sup>: Եշենք, որ 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր (tahrir) մատյաններում ներկայիս Զամլրհենշինի տարածքը կոչվել է **Քարա-Հեմշին**<sup>103</sup>, ավելի ուշ

<sup>100</sup> O. Cettiri, *Karadeniz, Anıtköprü'dü Şöelü*, c. 1, s. 241.

<sup>101</sup> Ղ Ռճրճյան, *Աշխարհագրություն լոգիք մասանց աշխարհի*, Կ. Ս, էջ 396.

<sup>102</sup> Յ. Տաշեան, *Տայր զոսցիք ևս Աստղաբար, գրամանվան-տեղացոսվան ևս սոսմանսիսիսիսիս*, Կ. Ս, էջ 18-19.

<sup>103</sup> A. Tappinac, *Rise Teriké Rise*, 2004, s. 124.

կոչվել է Վիչե Աշաղը կամ Աշաղը Վիչե (Vice Asag; կամ Asag; Vice-  
Lereghis Վիժե):

...

Չափազանց հետաքրքիր հանդիպում էր սպասվում Արտաշեն  
գավառի Օջե (Օձե - L. U.) գյուղում, որն այժմ ունի 140 տուն: Այն  
գտնվում է Մեծ ծովին դիմառաջաց բլրի վրա և թաղված էր  
պողատու այգիների մեջ: Գյուղացիներն արդեն տեղյակ էին մեր  
գալստյան մասին: Զատիվեր ճանապարհով բարձրացանք գյուղի  
կենտրոնը, ուր մեզ պարկապուկի կվազանցությամբ իրենց  
շուրջպարով (հորոն) դիմավորեցին գյուղի երիտասարդները:  
Համարվել էին նաև մեծահասակները: Կատարյալ էություն էր:  
Այնտեղ գրառումներ կատարեցի 1934թ. Փազարի գավառում ծնված  
Լուրեքթին Քեփենեքից: Լա թվարկեց Արտաշեն գավառի  
ներկայիս համշենարենակ գյուղերը: Դրանք են՝

Դրանք են Աբուի շրջան (բաժանվում է երկու գյուղի՝  
Չաքուլիթ, այժմ՝ Ասլանդերև, Ցուփե, այժմ՝ Քեղդերև), Բացոս,  
Ջենիմոշ, Ղանլա, Փիցխալա (այժմ՝ Ցաղաջջլար),  
Քուրուփիթ, Գուրուփիթ (այժմ Ենեքոյ), Օջե (իսկ Օձե-Լ. U.): Եղեց  
նաև, որ այժմ Արտաշենում ապրում է շուրջ երեք հազար  
համշենցի: Երանց մի մասը այստեղ է հաստատվել՝ հետանալով  
Չամրիենշիկի լեռնային գյուղերից: Լուրեքթին Քեփենեքը պատմում  
էր, որ ընդամենը 50-60 տարի առաջ գյուղերում, ինչպես նաև իրենց  
ընտանիքում, բուրդը խոսում էին Համշենի բարբառով: Այսօր թեև  
մոռացել են իրենց մայրենին, բայց խոսակցական թուրքերենում  
դեռևս պահպանել են տեղական բարբառային բառեր, ինչպես  
օրինակ՝ *ակիշ* (թանրի շիշ), *բարդի*, *գոդիմ* (կռանմ), *դութ* (թութ),  
*եղիեջ* (եղինեջ), *խաչաչուր*<sup>134</sup> (խաչաբուր-տանձի տեսակ), *մետուր*  
(մետուր), *դոջիզ* (կորիզ), *ժոխ* (մաշ), *փիլունց* (փիլունձ-պտեր ազգի  
*ժառի տեսակ*), *փուչակ* (փչակ), *քլթստան* (կարթի աման) և այլն:  
Ստորև ներկայացնում ենք Լուրեքթին Քեփենեքից գրանցած  
միկրոտեղանունները՝ մեր բացատրություններով: Հետաքրքիր է

<sup>134</sup> Օսո Ղ. Ինժինյանի՝ իտալացուր տանձի տեսակը ստացված է եղել նաև  
Տրապիզոնում, «որ է հեծածք և մեծ սնկն կրից նաև հոբանն ճրվուց կոնկ մի գիւղ...»  
(Ղ. Ինժինյան, Աշխարհագրութան լոբից մասանց ոչխարիկ, Խ. Ա. էջ 382):



եան, որ Օջն գյուղում առ այսօր պահպանվել է համշենցիների սուլեով հաղորդակցվելու յուրահատուկ միջոցը:

**Ասրաթ/Արաաթ (Arat)** - արծաթ բառն է ծօս հեյունափոխությանը, առաջին տարբերակում տեղի է ունեցել բառամիջի բաղաձայնների դրափոխություն, մի երևույթ, որ հաստուկ է հայ բարբառների:

**Բախեղազ (Bakhedag)** - կազմվել է բարխ (պարենի)+տակ բաղադրիչներից, այսինքն՝ ժայռի տակ: Խոփայի համշենցիների բարբառում նա ժայռին ասում են բարխ<sup>125</sup>: *Պարենի նշանակում է «ժայռ, լեռան ջջված մասը, քարքարոտ տեղեր»<sup>126</sup>*:

**Բախենոզ (Bakhenoz)** - տեղանունը կազմվել է բարխ (ժայռ) և օղ բաղադրիչներից: Օղ Համշենի բարբառում ասում են բլրին: Լուրնթթին Քեփենեքի նկարագրությանը՝ խոսքը վերաբերում է ժայռոտ գագաթ ունեցող բլրի:

**Գլինչխազ (Glinçkhaç)** - տեղանվան երկրորդ բաղադրիչը *Խաչ* բառն է *Խաչ* արմատով մակրո և միկրոտեղանվանական կառույցները տարածված են Ռիզեի համշենցիների շրջանում, օրինակ *Խաչ, Խաչիքար > Խաչքար, Խաչիվանք > Խաչիվանաք, Խաչափայտ > Խաչափիթ, Խաչիուն, Խաչին+տեղ > Հաչիեղաղ, Խաչի բակ > Խաչի սպիա, Խաչի թիկունք > Խաչի սիդոթի* և այլն: Այս տեղանունները մեկ անգամ նա հաստատում են, որ Համշենը եպիսկոպոս էր և որ հայ քրիստոնեական հոգևոր կենտրոններից մեկը:

**Ջեմազ (Zemag)** - ծմակ բառն է, որն, ըստ Հ. Աճառյանի, նշանակում է *«արև շտեմած՝ շուք տեղ ձորի մեջ»*, ... որից էլ ծմակային «ձորային անարև տեղ»: Հ. Աճառյանը քրիստոնեա համշենաբայերի բարբառում գրանցել է *ձմազ* տարբերակը<sup>127</sup>:

**Փասիզոսդուզի (Tasigonçuzi)**-տեղանունը կազմվել է *թասիկ>թասիզ (աման)+օն (տեղ, հող)* և թուրքերեն *դուզի (հայրթավաղք խմատով)* բառերից: Հավանաբար եպիսկոպոսը եղել է Փաղիզոսդուզի Փոս բառը, որ Համշենի բարբառում նշանակում է հարթավայր, հետագայում թուրքերենի է թարգմանվել: Ե. Քևիենեքի նկարագրությանը՝ տեղանքի մակերեսը թեև հարթ է, բայց ունի թասի

<sup>125</sup> Ա. Վարդանյան, *Գյուեպեթի համշենաբայերի բարբառը...*, էջ 277:

<sup>126</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* հ. 1, էջ 59:

<sup>127</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, էջ 12 կրատ., Երևան, 1973, էջ 463-464:

նման մի փոքր գոգավորություն: Հ Աճադանը քրիստոնյա համընկեցիների բարբառում գրանցել է սեռական-տրական հոլովի -օժ մասնիկը, որը համարժեք է հայերենի այլ բարբառների -ան վերջավորությանը, ինչպես *ճնճդուկ-ջինջըղոցուն, աղջիկ-ախճգուն, մուկ-մթուն, էր-էրուն, աշուն, աշուն* և այլն: Լեզվաբանը նշում է, որ գրական հայերենում, ինչպես և բարբառներում այս հոլովմանը պատկանող բառերի թիվը շատ քիչ է, իսկ Համընկեի բարբառում քսանից ավելի է<sup>138</sup>: Հետաքրքրական է, որ տեղանվան առաջին բաղադրիչը պահպանել է բարբառի ձևաբանական օրինաչափությունը: Տեղանվան երկրորդ բաղադրիչը թուրքերեն *դուզ* (*düz*) բառը, ստացել է թուրքերենի երրորդ դեմքի պատկանելության -i անձանց առաջին բաղադրիչի հետ կազմելով գոյականական կապակցություն հատկացուցիչ հատկացալ փոխադարձությունը (Birinci Tamlama): Թուրքերենի բարբառներում, ի տարբերություն գրական լեզվի, բացակայում է ձայնավորների ներդաշնակության օրենքը, ուստի դուզ բառը -ու (-ü) անձանցի փոխարեն ստացել է -ի (-i):

**Թեքինդուզի (Tekinduzi)** - տեղանունը կազմվել է *թեք+ին* և *դուզ* բառերով: Ե. Քեփենեքի նկարագրությամբ տեղանքն ունի թերություն:

**Խաչինդուզի (Khaçinduzi)** - տեղանվան մեջ առկա են *խաչ+ին* և *դուզ+ի* (հարթավայր) բառերը: Հնում հավանաբար եղել է *խաչինկիտ*:

**Խոթուք (Xhotuk)**-կազմվել է *խուտ+խոթ* +*ուտ>ուք* բաղադրիչներից:

**Մամինոզ (Maminog)**-կազմվել է *մամ* (*մայր, մեծ մայր*)+*ին* և *ոզ* (շուր) բաղադրիչներից, այսինքն՝ *Մեծ մար բուր*:

**Մուտիկամոդու (Mutikamodu)** - տեղանվան մեջ առկա է *մուտիկ+կա* (*մթնկա*) և *մուտ* բաղադրիչները: Թուփայի համընկեցիների խոսվածքում նա պահպանվել է *լուտիկկա* բառի *լուտիկկա* տարբերակը՝ «լուտիկա էրօնդ քիշեր» - լուտնկա գեղեցիկ գիշեր: Եշենք, որ *մուք* արմատով տեղանուններ են եղել Համընկեի հարևան Խոտորջրում, նաև Բիթլիսում, Խարբերդում, Կիլիկիայում և այլն: Օրինակ՝ *Մուք, Մուքձոր, Մուքեա, Մուքուն*<sup>139</sup>:

<sup>138</sup> Հ Աճադան, Քննության Համընկեի բարբառի, էջ 95-96:

<sup>139</sup> Հայաստանի և ձայնակից ջրանների անբանունների բառարան, հ. 4, էջ 2 նշան., էրևան., էջ 882:

Ջիեցուն դաղը (*Cincun dağ*) - կազմվել է *ճնճդուկ* «ծխա, բոլուն» *ճնճուդ* «ջիեցույց և դաղը» (թրք. թարգմ. սար) բաղադրիչներից: Հայ բարբառներում կան *ճնջուդ*, *ճուեցուդ*, *ջուեցիդ*, *ջնջոզ* և այլ դրսևորումներ<sup>140</sup>:

**Վարինթեվ** (*Varintev*) - կազմվել է *վար(ենկրքե) + ին (սեռ. հոլ.) + թե* բաղադրիչներից՝ *ենրքնի կզով* իմաստով:

**Վեթքար** (*Vetkar*) - տեղանունը կազմվել է *վեթ (վերին) + քար* բաղադրիչներից: Խոփայի համշենցիները ևս վերևիս ասում են *վեթի, վեթու*<sup>141</sup>:

**Չըլըրլեզ** (*Ç[r]kələğ*) / **Չըլըրլեզ** (*Ç[r]kələğ*) - տեղանունը կազմվել է *ջուր + գլուխ > չըր + րեզոլ* բառերից, որ եշանակում է աղբյուրի վերևի մաս: Արդյաև ևս ասում են *Խոփայի համշենցիները աղբյուրի վերևի մասին, կամ այն վայրին, որտեղից սկիզբ է առնում ջուրը*<sup>142</sup>:

**Սալես** (*Sales*) - տեղանունը կազմվել է *սալ (աղորկ) + երես* բաղադրիչներից:

**Սալար** (*Salçur*) - տեղանունը կազմվել է *սալ + ջուր > չար* բաղադրիչներից:

**Փակինդակ** (*Pakindak*) - կազմվել է *բակ + փագ + ին + տակ + դագ* բաղադրիչներից:

**Քոփքար** (*Koptur*) - կարծում ենք տեղանվան մեջ *կոպ* > *քոփ (փակ) + դուր* բաղադրիչներն են:

**Օղլթևափուր** (*Oğltsapur*) - տեղանունը կազմվել է *յոթն + աղբյուր* բաղադրիչներից: Համշենի բարբառին քնորոշ հնչյունափոխությամբ:

Համեմատության համար ավելացնենք, որ Տրապիզոնի Արաքը<sup>143</sup> գավառի Քիզիրնուս (իսր. *Գզիրնոց*<sup>144</sup>, երբ անունը

<sup>140</sup> Հ. Անաչյան, *Հայերեն տրանսպոնան բառաբան* հ. 3, էջ 207-208:

<sup>141</sup> Մ. Վարդանյան, *Գրոհայրի ճամբանամայրի բարբառը...*, էջ 319:

<sup>142</sup> Ս. Վարդանյան, *Բանականացած երբ ցրտումներ Քուլաքիայի Արզնիկի ճանահոցում, Մանգվան խորհրդի, «Չոլի եռակենական», 2011, թիվ 1-2:*

<sup>143</sup> Դա տեսակետ, որ *Արաքը* անունը ծագել է հունական *Նիքալիս* եկրոսի անունից (Օ. Օտրեկ, *Karadeniz Arşivleri ve Sözlük*, I c., s. 88): Մովսես կոթնում ենք, որ տեղանվան էկրոսում *Արաքը* իջեանի անունն է, որը մարտը հազվական է և աղափարվելով դարձել է *Արաքը*: Դա է հաստատում նաև 13-րդ դարի իսպանացի ճանապարհորդ Ռուի Գոնսալես դե Վրոսիտոյի մի հարցումը, ըստ որի Սամաղզամը մեկնելու ճանապարհին երա պատվիրակությունը մեկնե Տրապիզոն

Քաղաքը)<sup>143</sup> գյուղի համընթացները, որոնք բռնի իսլամացման արդյունքում կորցրել են ազգային ինքնությունն ու մարտնչին, մինչև այսօր իրենց խոսակցական թուրքերենում ևսլանգա զործածում են հայերեն բառեր<sup>144</sup> ու միկրոտեղանուններ՝ կարծելով, որ դրանք հունարեն են<sup>145</sup>։ Բնակիչների պատմաձի համաձայն կրանց նախնիները Քիզիրնուս են տեղափոխվել Չամլըհենձի զավառից թե երբ են Քիզիրնուսի համընթացները մասնադակակնացվել, առայժմ ստույգ տեղեկություններ չունենք, սակայն տեղացիների վկայությամբ, կրանք այնտեղ հաստատվել են 17-18-րդ դարերում<sup>146</sup>։ Ինչպես արդեն կշիղ ենք, հենց այդ դարերում է շամընում իրագործվել զանգավածային բռնի իսլամացում<sup>147</sup>։ Եվ այդ ժամանակ էլ բնակչության մի մասը ստիպված լքել է իր հայրենի բնօրրանն ու հաստատվել հարևան Քարաղերն (Մև զեռ) և

---

հասնելը, անցել է Առաքիղ երկրով։ Առաքիղ այդ եղերի տերն էր, ու օրեն կրա բնակիչները քրիստոնյա հայեր էին, ասկայն վառ մարդիկ էին և ավազակաբարո։ Կրանք մինչև եսրկ չէին վերցնում, թուչ չէին ասլոս, որ իրենց եղերով պատվիրակներն անցնեն Արատից Կրավիխոն անցնում է Մյուրմենն, ապա Տրապիզոն (Տն ու Բյո Դուսալեզ զե Կրանո, *Արառոս Կրանոստան ու Շամընը զո Առքո Կրոյո* (1403-1406), "Դեյոն", Մոսկո, 1990, շ. 160)։

<sup>143</sup> Լ. Սահակյան, Քիզիրնուսի համընթացները, «Չայն Ճառընձայն», 2011, թիվ 1-2։

<sup>144</sup> Այն զանվում է զավառի կենտրոնից 30-37 կմ, իսկ նահանցի կենտրոնից 60 կմ հեռավորության վրա։ Քարաղերն (Մև զեռ) զավառից մոտ 30 կմ հեռավորությանը Քիզիրնուսի կամարն է, որից մինչև գյուղի կենտրոն 7 կմ է։ Այսօր գյուղն ունի 2.185 խաղը բնակիչ (Օ. Օւտրիկ, *Կարձեռն Առակընձի Տնուն* II շ., շ. 680-681)։

<sup>145</sup> *Sekil Ezgiler Kizirmos Derleme*, Collection, Mecidi Çeliktaş, Proje Yönetmeni: Bırol Topaloğlu, İstanbul, Temmuz, 2010, շ. 10. Ի. Ակսու, Կիզիրոս, Արակի՛ճա հիր Հեռլոն կոյն, "Յիր Կթան", Տոյ 12, Էյլն-Էկոմ, Ոթո, 2010, շ. Տն ու նահ Լ. Սահակյան, Քիզիրնուսի համընթացները, «Չայն Ճառընձայն», 2011, թիվ 1-2։

<sup>147</sup> Ալեյի ուչ «Քիզիրնուսի բացերնան երկր» խոսակցավառակում ընկզրկված երկերի զրառոլ Մեղիթ Չելիլթոյաչն իր ինձոցոն այս բառերից մոտավորապես 50-ի խոստոնները հարցրել է հունարեն ինձոցո իր համապարաղացի ընկերոցը և պարզել, որ զցանք ոչ թե հունարեն են, այլ հայերեն (սն ու Ի. Ակսու, Կիզիրոս, Կիզիրոս, Արակի՛ճա հիր Հեռլոն կոյն, "Յիր Կթան", Տոյ 12, շ. 59, Լ. Սահակյան, Քիզիրնուսի համընթացները)։

<sup>146</sup> Ի. Ակսու, Կիզիրոս, Արակի՛ճա հիր Հեռլոն կոյն...

<sup>147</sup> Լ. Սահակյան, Օսմանյան կայսրությունում համընթացայրի բռնի մասնադակակնացման քաղաքականության հետևանքները, *Քարաղերնում ու Օսմանյան ժամանակների ճեռազատությունն ու Ուրբն Սաֆարտոյակի իսլամացումը*, Երևան, 2006, հ. IV, էջ 207-228։

Սուրմենն գավառներում: Սակայն հետագայում այդ գավառները ես չեն խուսափել իսլամացման դաժան քաղաքականությունից:

Քիզիրևսի միկրոտեղակուսուները, թեև կրում են տեղական խաղաղությանը բնորոշ հնչյունական մակաշերտեր, հնչյունական աղավաղումներ, սակայն դրանք հայերեն են ինչպես իրենց բաղադրիչներով, այնպես էլ կառուցվածքով: Այսպես օրինակ **Գարնուք** (Garnut) - կազմվել է *կաղի+ուս* բաղադրիչներից, *կաղևուս+գարնուք*: **Գումդեղ** (Gumdeğ) - կազմվել է *գում+գում+տեղ+դեղ* բաղադրիչներից: **Էդրուք** - կազմվել է *էղի կամ էղի+ուք* բաղադրիչներից: Համշենի բարբառում *էղի* են ասում դեռահաս կաթեահաս ցորենին, գարուն<sup>150</sup>: **Թեխուք** (Tehkut) - կազմվել է *թեղի+ուս* բաղադրիչներից: **Լենդերեվ** (Lenderev) - կազմվել է *լայն+տերն* բաղադրիչներից, լայն տերև>լեն դերվ հնչյունափոխությամբ: **Հաչովիք** (Haçovit) - կազմվել է *հաչ+հովիս+ովիք* բառերից: **Դորդուս** (Gordut) - տեղակական մեջ ընկած է *կորկուս* (ձավար) բառը: Խոփայի՝ համշենցիների խոսվածքում գործածական է *գարգուս* հնչարտասանական տարբերակը<sup>151</sup>: **Մոմուք** (Momut) - կազմվել է *մոնի* (կաղևու տեսակ)+*ուս* բաղադրիչներից: **Վեժոն** (Vejon) - կազմվել է վիժ արմատից և -ան ածանցից: Հայերեն *վեժ* նշանակում է «նոսակ», սահակ, ցարտամա»<sup>152</sup>: *Վեժ+Վրժ* արմատով տեղակուսուները տարածված են եղել Համշենի գավառում, նաև Մեծ Հայքում՝ *Վժան*, *Վժնա դաշտ*, *Վժնաջուր*, *Վժնես վանք*, *Վժնեխ*, *Վժնեխ*, *Վժնաբերդ*, *Վժնեխ*<sup>153</sup>: **Վերիփոս** (Veripos) - կազմվել է *վերի+փոս* (*հարթավայր*) բառերից: **Ոս** (Os) - հավանաբար սա կույն Համշենի բարբառի Խոփայի խոսվածքում գործածվող *ուսի*<sup>154</sup> բառն է, որ ասում են *ձնահյուսին*: Բառի բացատրությունն ավելի է հիմնավորվում այն հանգամանքով, որ Քիզիրևսում ձմեռը խստաշունչ է և ձնառատ<sup>155</sup>: **Քերենկաջ** (Kerenkas) - կազմվել է

<sup>150</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 368:

<sup>151</sup> Ս. Վարդանյան, *Գրոնակյեի համբնամայեղի բարբառը, բանահյուսությունը և էթնոլոգիանը* (Երևան և Ստամբուլ: Բաղադրություններ), էջ 283:

<sup>152</sup> Լեզ. բառակց. ձայնաբան լեզույի հ. 2, էջ 12 կրտա, Երևան 1981, էջ 820:

<sup>153</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղակուսուների բառարան, հ. 4, էջ 804:

<sup>154</sup> Ս. Վարդանյան, *Գրոնակյեի համբնամայեղի բարբառը, բանահյուսությունը և էթնոլոգիանը*, էջ 322:

<sup>155</sup> *Seki Engiler Kizirou* s. 10:

քերե՞զերանքաշէ, կտրել քտերից, այսինքն՝ զերան կտրելու սեղ: Քիզիրնոսի շրջակա միկրոսեղանուններն իրենց կառուցվածքով, հեյունական դրսևորումներով հար և նման են Չամրհեմշին և Արուաշեն գավառներում մեր զրատած տեղանուններին: Լեզվական այս նմուշները ևս հաստատում են, որ Քիզիրնոսի համշենցիների նախնիները դուրս են եկել Համշենի գավառից:

Այսպիսով, սույն հոդվածում քննության ենթարկված լեզվական փաստերը, թեև կրում են տեղական խոսվածքներին հատուկ հնչարտասանական մակաշեղտեր և ժամանակի ընթացքում ենթարկվել են նաև թուրքերենի հեյունական որոշակի ազդեցությանը, այդուհանդերձ, նրանցում պահպանվել են հայկական արմատներ, տեղանվանակազմ և քերականական հատկանիշներ, որոնք կարևոր էլուք կարող են մատուցել հայ տեղանվանագիտությանն ու բարբառագիտությանը, լույս սփռել Համշենի պատմության մի շարք խնդիրների պարզաբանման վրա:

Ինչպես ցույց տվեց կատարված վերլուծությունը, Համշենի տեղանունների բառաքննության համար անհրաժեշտ է հաշվի առնել նրանցում առկա տեղական խոսվածքային հեյունական յուրահատկությունները, իմաստային, քերականական, բառակազմական առանձնահատկությունները, ինչը հիմնականում անտեսում են թուրք եղինակները: Մասնավորապես, սույն տեղանվանագիտական քննությամբ հերքվում են որոշ թուրք «զիտնականների» տեղանվանական մտացածին բացատրությունները:

Միկրոտեղանունները, կամ ժողովրդական տեղանունները, հայոց պատմական հիշողության և մշակութային ժառանգության մասն են: Հետևաբար, դրանց ուսումնասիրությունը պետք է ընդգրկվի հայ պատմաբանասիրության օրակարգում, հատկապես այն պատճառով, որ դրանց մեծ մասը, զտնվելով թուրքական միջավայրում, ժամանակին չգրանցվելու դեպքում սերեղափոխության հետևանքով դատապարտված է մոռացության:

## ՀԱՄԵՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՌՈՒՆՆԵՐԸ

(տեղագրական ուսումնասիրություն)

Պատմաաշխարհագրական տեղանք: Միջնադարում Համշենի իշխանությունն ընդգրկում էր Համշենի մեծ գետի (ներկայումս՝ Բյույուք դերե) վերին և միջին հոսանքների ավազանը, այսինքն՝ եղված գետի վտակներ՝ Աերին Համշեն, Քաջջար և Թալա գետերի ավազանները, Ֆիրթիկա գետի՝ ավազանը, Ջեմիլ գետի վերին և Աթինա կամ Պազար գետի վերին և միջին հոսանքների ավազանները: Իշխանության արևելյան սահմանն անցնում էր Ֆիրթիկա գետի արևելյան ջրաժանով, իսկ արևմտյան սահմանը՝ Ջեմիլ և Ֆիրթիկա արևմտյան ջրաժաններով: Հարավում Համշենի իշխանության սահմանն անցնում էր Պոնտական լեռների՝ Սպերի հյուսիսակողմից մինչև Քաջջար լեռ ձգվող հատվածի, որը կոչվում է Համշենի լեռնաշղթա, և Քաջջար ու Ալթըմարմաղ լեռնաշղթաների ջրաժաններով, իսկ հյուսիսում տարածվում մինչև Բյույուք դերեի ստորին հոսանքի շրջանը<sup>1</sup>: Հետագայում՝ Ռուսի Գեոստալես դե Կլավիխոյի ուղեգրության մեջ հիշատակվող Համշենի Առաքել իշխանությունն ընդգրկում էր միևնույն տարածքը<sup>2</sup>: Կ. Կոխի ուղևորության ժամանակ (19-րդ դարի 1-ին կես) գոյություն ունեցող Համշենի ձորապետությունը նս ուներ նույն սահմանները<sup>3</sup>:

<sup>1</sup> Տարբեր ժամանակաշրջանների աշխարհագրական քարտեզներում և մասնավորապես, նոր տպագրվածներում, երբեմն Ֆիրթիկա անունով կոչվում է նաև Բյույուք դերե գետը (րոտ հայկական ավանդության՝ վերջինս կոչվում էր Համշենի մեծ գետ (Ս. Հալվուխի, «Համշեն», Արասա, 1895, էջ 295-297)), որ սխալ է Ֆիրթիկա գետի ակունքները սկիզբ են առնում Ալթըմարմաղ և Լազիստանի լեռնաշղթաներից: Գետն հոսում է հյուսիսարևմտյան ուղղությամբ և եղվափյու Արտաշեն քաղաքից կուսիս՝ Չիլաքջիվատ բնակավայրի մոտակայքում, միախառնվում Համշենի մեծ գետին: Երկու գետերի ցրկվելից մինչև նալ գետն հոսանքը կրում է Ֆիրթիկա անունը:

<sup>2</sup> Արման Եղիազարյան, «Համամաշեն-Համշենի, Խամսեոն իշխանութեան, Արտաշենի և Համշենի ալ բնակավայրերի տեղադրութեան շուրջ», Հասկ. Արթիվյա, մադի, 2009, էջ 510

<sup>3</sup> Риза Гюккалес де Келикеси, *Дневник путешествия по двору Текури в Самарканд в 1403-1406 гг.*, СПб., 1881, стр. 382-384

<sup>4</sup> K. Koch, *Reise im Pontischen Gebirge und Türkische Armenia, Wanderungen im Oriente II*, Weimar, 1846, 80, pp. XVI-468

Քաջբարի լեռնաշղթայի և Ռեակ ու Պարխար գետերի միջև ընկած լեռնային երկրամասը Համշենի հետ միասին կազմում է բնաշխարհագրական ամբողջական միջավայր և, դասելով Թուրքիայի երկկայս վարչական բաժանումից, որը մեծապես հիմնված է հին վարչական բաժանումների վրա և, որով հիշյալ լեռնային երկրամասը Ռեակ անունով մտցված է Ռիզեի գավառի (ընդգրկում է Համշենը և հարևան որոշ շրջաններ) մեջ, Համշենի մաս է կազմել: Ընդգրկելով Պոնտական լեռների վերոհիշյալ հատվածը՝ Համշենի իշխանությունը, փաստորեն, իբր սահմաններում ենթադրում էր նաև Մեծ Հայքի որոշ հողեր, որը, մեր կարծիքով, ցույց է տալիս եթե նույնիսկ ոչ ամբողջ Համշենի, սակայն, անկասկած, դրա հյուսիսային հատվածի պատկանելությունը Մեծ Հայքին<sup>2</sup>:

<sup>2</sup> Եղիազարեան, «Համամայն-Համշենի, համանուն իշխանություն, Արտաշենի և Համշենի այլ բնակավայրերի տեղադրություն շուրջ», էջ 510-511



## Ցանկ

Համշենի հայկական տեղանունների<sup>6</sup>

*Սույն ցանկը, որտեղ ներկայացված են Համշենում ներկայումս գոյություն ունեցող հայկական տեղանունները, վերջնական չէ և կարող է համալրվել նոր պատմական և քարտեզագրական նյութի հիման վրա:*

*Փակագծերի մեջ բերվում են նաև տեղանունների թուրքերեն տարբերակները: Մի տեղանվան կրկնության դեպքում (համանուն բնակավայր, հովիտ, գետ, լիճ) թուրքերեն տարբերակը ներկայացվում է միայն մեկ անգամ: Թուրքերեն անվանումները չեն բերվում այն դեպքում, երբ հայերեն ու թուրքերեն տեղանուններն ամբողջությամբ համընկելում են:*

1. Աղվաջուր գետ - սկիզբ է առնում Մև Քաջքար լեռից և, հոսելով սկզբում հյուսիս-արևմուտք, իսկ այնուհետև՝ արևմուտք, միախառնվում է Արսեր (Այդեր) կամ Նալա գետին:
2. Աղվաջուր գյուղ - գտնվում է Մև Քաջքար լեռից հյուսիս՝ համանուն գետակի ստորին հոսանքի աջ ափին:
3. Ամբար լճակ - գտնվում է Քաջքարի լեռնաշղթայի հարավարևմտյան հատվածի հյուսիսասիայաց լանջին՝ Հագարկապի լեռնանցքի (Հագարկապի դեղիսի) հարևանությամբ, 3006 մ բարձրությամբ տեանուն լեռան հյուսիսային լանջին:
4. Անհատակ (Անհատագ) լճակ - գտնվում է Համշենի լեռնաշղթայում (Հեմշին դաղ)՝ Նիևու լեռան (3453 մ) հյուսիսային լանջին, Տերևովիտ գետի (Տիրովիտ չայ) ակունքի մերձակայքում:
5. Ապիվանք (Ապիվենակ<sup>7</sup>) գյուղ - գտնվում է Բալահովիտ բնակավայրի հարևանությամբ՝ վերջինից հարավ՝ Բալահովիտ գետի վերին հոսանքի աջ ափին: Անվանումը ցույց է տալիս, որ

<sup>6</sup> Նման փորձ կատարել է Բարունակ Քաղաքցունդ (Барунак Топракян, *Չուրաբախ առաջնորդ քրոնիկ*, Аռաջնորդական գրքակազմ, 2002, էջ 34-36), սակայն ուսումնասիրողի կազմած ցուցակը թերի է:

<sup>7</sup> Չուտնառաջնորդի հայկական այս միջավայրում տեղանվան վերջին «վանք» բաղադրիչը թուրքազման արդյունքում դարձել է «վենակ», ինչպես, օրինակ՝ «Չաչիվանք»-«Չաչիվենակ» դեպքում: Այդ իրողությունը կազմել է նույնպես լինել այն բանի, որ «վանք» բառը համընկնաբայ բաղադրում ենչում է «վենքիկ» ձևով:

բնակավայրն այդպես է կոչվել այդտեղ գտնվող համանուն վանքի անունից:

6. Ասիվանք լեռ - գտնվում է համանուն բնակավայրից արևելք և ունի 3125 մ բարձրություն:

7. Ավեջուր գետ - սկիզբ է առնում 3518 մ բարձրություն ունեցող Բուլուտ լեռից և, հոսելով հարավարևմտյան ուղղությամբ, մրախառնվում է Արտեր գետին:

8. Ավեջուր գյուղ - գտնվում է Արտեր բնակավայրի մոտակայքում՝ նրանից դեպի արևելք, համանուն գետակի աջ ափին:

9. Ավուձոր (Ավուցոր) գյուղ - գտնվում է Սև Քաջքար լեռան հյուսիսարևմտյան լանջին՝ Աղվաջրի հարևանությամբ, վերջինից հարավ:

10. Արտա գյուղ - գտնվում է Արտեր գետի միջին հոսանքի աջ ափին՝ Արտեր բնակավայրից հարավ-արևելք:

11. Արտաշենի բերդ (Վարոշ կալև, Կալև-ի-Բալա)<sup>6</sup> - ավերակները գտնվում են համանուն բնակավայրի հարևանությամբ՝ վերջինից արևմուտք:

12. Արտաշեն (Վարոշ) գյուղ<sup>7</sup> - գտնվում է Համշենի լեռնաշղթայի միջին հատվածի հյուսիսային լանջին՝ Համշենի մեծ գետի ակունքների շրջանում: Արտաշենից հյուսիս մրախառնվում են Վերին Համշեն (Բաշ Հեմշին չալ) և Եղևնովիտ (Էլնիտ չալ) գետերը:

13. Արտաշեն (Վարոշ) լեռ - գտնվում է համանուն բնակավայրից արևելք և ունի 3456 մ բարձրություն:

14. Արտեր (Ադեր) գետ<sup>8</sup> - ակունքները սկիզբ են առնում Քաջքար լեռից: Հոսում է հյուսիսարևմտյան ուղղությամբ և մրախառնվում Համշենի մեծ գետին կամ Բյույուք դերեին՝ Վարոշ և Մակրոնկավան բնակավայրերի մոտակայքում:

15. Արտեր գյուղ - գտնվում է համանուն գետի միջին հոսանքի աջ ափին՝ Խալա բնակավայրից հարավ:

<sup>6</sup> Արտաշենի տեղադրությունը տե՛ս Լոյսաբարան, «Համամաշեն-Համշենի համանուն իշխանություն», Արտաշենի և Համշենի այլ բնակավայրերի տեղադրությունը շուրջ, էջ 510-511

<sup>7</sup> Ս. Նալկունի, «Համշեն», Արարատ, 1895, էջ 295-297: Արևելյան իտալիկա Արտաշեն քաղաքը եղևնել և՛ լեռն Արտաշենից հեռավորում տեղափոխվածները:

<sup>8</sup> Համշենի յուզյուսում «ր»-ն բառամիջում այրուստանվում է «»:

16. Բալանջուր գետ - սկիզբ է առնում Բուլուն լեռան հյուսիսային լանջերից և, հոսելով հյուսիս-արևմուտք, խառնվում է Ճերմակջուր (Չեյմակջուր) գետին:
17. Բալանջուր գյուղ - գտնվում է Ազվաջրից և Ավուձորից հարավ-արևմուտք՝ համանուն գետակի վերին հոսանքի աջ ափին:
18. Բալահովիտ (Պալովիտ) - համանուն գետի միջին և ստորին հոսանքների հովիտն է:
19. Բալահովիտ գետ - սկիզբ է առնում Քաջքար լեռան արևմտյան լանջերից և, հոսելով սկզբում հյուսիս, իսկ այնուհետև կտրուկ թեքվելով արևմուտք, միախառնվում է Համշենի մեծ գետին Ենեցուղի (Ենեջուղ) և Զիր ամրոցի (Զիր կալե) մոտակայքում:
20. Բալահովիտ գյուղ - գտնվում է համանուն գետի վերին հոսանքի ձախ ափին՝ ուղրանից հարավ:
21. Բալահովտի լեռնանցք - այդպես է կոչվում Համշենի լեռնաշղթայի հյուսիսարևելյան հատվածում՝ Բալահովիտ գետի ակունքի մերձակայքում գտնվող լեռնանցքը:
22. Բանիվաս գյուղ - գտնվում է Զիամ լեռան (1905 մ) հյուսիսարևելյան լանջին՝ Ֆիրթինա գետի ձախ վտակի միջին հոսանքի ձախ ափին:
23. Բոզագետ գետակ - սկիզբ է առնում Համշենի լեռնաշղթայի արևելյան հատվածում գտնվող Մեծհովիտ լեռան (3772 մ) շրջանից և, հոսելով հյուսիս-արևմուտք, միախառնվում է Աջուեր գետի ձախ վտակ Կավրոն գետի հետ:
24. Բոզագետ գյուղ - գտնվում է Կարմրագետ գետակի և Կավրոն գետի միախառնման վայրի մերձակայքում՝ երկու գետերի միջագետքում:
25. Բոդատգետ գետակ - սկիզբ է առնում Ալթըփարմալ լեռնաշղթայի միջնամասում գտնվող 3259 մ բարձրությամբ անանուն լեռան հարավարևմտյան լանջից, որ գտնվում է Ալթըփարմալ լեռնանցքից արևելք: Հոսում է հարավարևելյան ուղղությամբ և, միախառնվելով Օմանեսգետին, միախառնվում է Պարխար (Բարխալ) գետին:
26. Բոդատգետ գյուղ - գտնվում է համանուն գետակի ստորին հոսանքի ձախ ափին՝ Քաջքար լեռնաշղթայի և Նուակ ու Պարխար գետերի միջև գտնվող լեռնային երկրամասի հյուսիսային մասում:

27. Բորիվան գյուղ - գտնվում է Քաջքար լեռնաշղթայից հարավ ընկած լեռնալիս շրջանում՝ Բողապետի և Պարխար գետի միջագետքում:
28. Գյուլչեն լեռ - գտնվում է Պազար գետի միջին հոսանքի ավազանում, գետի ձախափնյակում, Համշեն (Հեմշին) բնակավայրից հարավ: Ունի 835 մ բարձրություն:
29. Գյուլչեն Ստորին (Օրթա Գյուլչեն) գյուղ - գտնվում է համանուն լեռան արևելյան լանջին:
30. Գյուլչեն Վերին (Քաջ Գյուլչեն) գյուղ - գտնվում է համանուն լեռան և Ստորին Գյուլչենի միջև:
31. Եղևեռվիտ, Եղևահովիտ (Էլնիտ) - Եղևեռվիտ գետի ստորին հոսանքի հովիտն է:
32. Եղևեռվիտ գետ - սկիզբ է առնում Քաթուսի լեռնաշղթայից (Քաթուս դաղ), հոսում էյուսիս-արևմուտք, այնուհետև կտրուկ թեքվում է արևմուտք և միախառնվում Վերին Համշեն գետի հետ:
33. Եղևեռվիտ գյուղ - գտնվում է համանուն գետի ստորին հոսանքի աջ ափին՝ Արտաշեն (Վարոշ) լեռից էյուսիս: Այստեղ էր գտնվում Եղևեռվիտի սբ. Խաչ վանքը (Խաչեքարտ վանք):
34. Եղևեռվիտ լեռ - գտնվում է Եղևեռվիտ բնակավայրից էյուսիս և ունի 2940 մ բարձրություն:
35. Զամվան գյուղ - գտնվում է Պարխար (Քարխա) գետի միջին հոսանքի ձախ ափին՝ Քաջքար լեռնաշղթայից հարավ ընկած լեռնակրգում:
36. Զիր ամրոց - գտնվում է Համշենի մեծ գետի և Բալսահովիտ գետի միախառնման վայրից հարավ՝ Շեն գյուղի (Շենքոյ) հարևանությամբ:
37. Զիլամրոց գյուղ - գտնվում է Զիր ամրոցի մտասկայքում՝ նրանից արևմուտք:
38. Քազվոր (Քեկֆուր) լեռ<sup>11</sup> - գտնվում է Վերին, Միջին և Ստորին Համշեն գյուղերից էյուսիս-արևմուտք և ունի 3352 մ բարձրություն:

<sup>11</sup> Հավանորար՝ Քազվոր: Անուշ, հավանորար, ստաբուկ է Համշենի իշխանանիտի հետ հարևանության պատճառով: Ըստ երևույթին, այստեղ զիր է իսթաբուկ ախ իջորդություն, որ Համշենում Բազրատանից թազվորոթյան շրջանում հաստատվել էին Բազրատանիներ (տե՛ս Արման Եղևեռվիտ, հարավ):

39. Թաթուսի (Թաթուս) լեռանցք - գտնվում է Համշենի լեռնաշղթայում՝ համանուն լճակի և կիրճի միջև:
40. Թաթուսի լեռնաշղթա - սկսում է Թաթուսի լեռնանցքից և ուրբասպտույտ շարունակվում մինչև Խոտորքրի լեռնանցք՝ Խիկոտ լեռան (3453 մ) մուտակայքում:
41. Թաթուսի լճակ - գտնվում է Համշենի լեռնաշղթայի հարավ-արևմտյան հատվածի հյուսիսային լանջին՝ Ստորին Համշենից հարավ-արևելք:
42. Թաթուսի կիրճ - Թաթուսի լեռնանցքից հարավ՝ մինչև Ճանաջուր (Չանաջուր) գետի ակունքները տանող կիրճն է:
43. Թամսիվան (Չամլը Հեմշին, Չամլըհեմշին) քաղաք - գտնվում է Համշենի մեծ գետի ստորին հոսանքի ձախ աջին: Բնակավայրը Չամլը Հեմշին է վերանվանվել 20-րդ դ. 50-ական թթ. հետո<sup>12</sup>:
44. Թեղուտ գյուղ - գտնվում է Եղևնովյա գետի՝ Համշենի մեծ գետ թափվելու տեղին մոտ՝ երկու գետերի միջագետքում:
45. Խաղեռովյա (Խալղովյա) - Ֆիրթինա գետի ձախ վտակի հովիտն է:
46. Խաղեռովյա գյուղ - գտնվում է Ֆիրթինա գետի ձախափեյա վտակի ստորին հոսանքի աջ ափին՝ Ալջըլիարմաղ լեռից հյուսիս:
47. Խաչ (Խաց) լեռ<sup>13</sup> - գտնվում է Բալախովյա գետի միջին հոսանքի աջ ափին, որտեղ գետը կտրուկ թեքվում է արևմուտք: Ունի 2173 մ բարձրություն:
48. Խաչինեհտն (Հացինեհեղն)<sup>14</sup> - գտնվում է Խաչ լեռան հարավային լանջին:
49. Խաչինտակ (Խացինդակ) գյուղ - գտնվում է Խաչ լեռան հյուսիսային լանջին:
50. Խաչիվանք (Խաչիվենակ) լեռ - գտնվում է Եղևնովյա բնակավայրից հարավ և ունի 2955 մ բարձրություն:

<sup>12</sup> Համշենի իշխանությունը Հայ Բազմառուսիկների տերության համակարգում: Բե՛մ 2009, թիվ 3, էջ 153-158:

<sup>13</sup> Եղևնագրեան, «Համանաշեն-Համշենի, համանուն իշխանութեան, Արտաշէնի և Համշենի աղ բնակավայրերի տեղադրութեան շուրջ», էջ 508

<sup>14</sup> Տե՛ս Լեռնին Սանակյան, «Այգեպարտեան Համշեն մասացելոջ տեղանուններ և անհետնուններ», Չայն Հանրեմական 2010, թիվ 9-10, էջ 1

<sup>15</sup> Լույս տեսքում:

51. Խոտորջուր (Հողուլուր, Հողիջուր) գետ - սկիզբ է առնում Թաթոսի լեռնաշղթայից և հոսում հարավ-արևելք:
52. Խոտորջուր գետ - սկիզբ է առնում Թաթոսի լեռնաշղթայից և հոսում հարավ: Երկու Խոտորջուր գետերի անուններն էլ առաջացել են Խոտորջրի անվանումից:
53. Խոտորջրի լեռանցք - գտնվում է Համշենի լեռնաշղթայում՝ Նինուս լեռան մերձակայքում:
54. Խնակ (Հեվեկ) - Մռակ և Պարխար գետերի ու Քաջքար լեռնաշղթայի միջև տարածվող լեռնակղզին է:
55. Խնակ գետ - սկիզբ է առնում Քաջքար, Օձասար (Օզ թեխ) և Մեծեռվիտ (Մեզուվիտ) լեռների շրջանից և հոսում արևելք:
56. Խնակ գյուղ - գտնվում է համանուն գետի միջին հոսանքի աջ ափին՝ Քաջքար լեռնաշղթայից հարավ:
57. Խնուս գյուղ - գտնվում է Բալթաշ լեռան (3182 մ) արևմտյան լանջին՝ Թազվոր լեռից հարավ:
58. Կաթոշ գյուղ<sup>15</sup> - գտնվում է Համշենի մեծ գետի ստորին հոսանքի ձախ ափին՝ Յանսիվանից հարավ-արևմուտք: Այստեղ է գտնվել Ավագ վանքը:
59. Կաղմուտ լեռ - գտնվում է Վերջևրակ լեռից հարավ և ունի 3431 մ բարձրություն:
60. Կարմիկ գյուղ - գտնվում է Տերեռվիտ բնակավայրից հյուսիս՝ Տերեռվիտ գետի ուղրանի մերձակայքում, 2930 մ բարձրությամբ անանուն լեռան արևմտյան լանջին:
61. Կարմիկերենչ լճակ<sup>16</sup> - գտնվում է Բալախովոյի հարավում՝ 3382 մ բարձրությամբ անանուն լեռան հյուսիսարևելյան լանջին: Լճակից արևելք գտնվում է Կարմիկ բնակավայրը, որի անունից էլ կոչվում է լճակը:
62. Կարուեշ գյուղ - գտնվում է Բալախովոյի հարավում՝ Կարմիկերենչ լճակից հյուսիս և Բալախովիտ բնակավայրից արևմուտք:
63. Կտտեկջուր գետ - Բալախովիտ գետի աջ վտակն է, որ սկիզբ է առնում 3054 մ բարձրությամբ անանուն լեռից:

<sup>15</sup> Լ. Մանակյանը կարծում է, որ անունն առաջացել է «կոթշ, գոթշ» բառից, որ նշանակում է խմորեղի պատրաստ (տուխ տեղում):

<sup>16</sup> Համշենի բարձրամոմ ստեմալին պատկանելիության ցույց տվող «նեց» վերջածանցն արտասանվում է նեջ՝ ձևով:

64. Կոտեճցուր գյուղ - գտնվում է համանուն գետի և Բալասուլիս գետի միախառնման վայրի մերձակայքում՝ Նաչ լեռան հարևանությամբ:

65. Հազարկասյի լեռանցք<sup>17</sup> - գտնվում է Քաջքարի լեռնաշղթայի միջևամասում՝ 3631 մ բարձրությամբ անանուն լեռից հյուսիս - արևելք:

66. Համշեն (Հեմշին) բերդաքաղաք - գտնվում է Թազվոր լեռան արևելյան լանջին և Լույնական է Վերին Համշեն գետի ստորին հոսանքի ձախ ափին գտնվող ներկայիս Հեմշին կալե (կամ Կալե) բերդաքաղաքի ավերակներին<sup>18</sup>: Ռուսական ցարական բանակային շտաբի 5 վերստանոց քարտեզում Կալեն կոչվում է Հեմշին: Վերակառուցված Տամբուր բերդաքաղաքն է, որտեղ գտնվում էր Մր. Միոն եկեղեցին<sup>19</sup>:

67. Համշենի լեռնաշղթա - ձգվում է Պոնտական լեռների՝ Սպերի հյուսիսակողմում գտնվող կեռից մինչև Քաջքար լեռ:

68. Համշենի մեծ գետ (Բյուլուք դերե) - բնաշխարհագրական այս միջավայրի ամենամեծ գետն է, որ սկիզբ է առնում Վերջերակ լեռից: Գետի վերին հոսանքը, որի ափին գտնվում են Վերին, Միջին և Ստորին Համշեն գյուղերը, կոչվում է Վերին Համշեն (Բաշ Հեմշին) գետ:

69. Համշեն Միջին գյուղ (Օրթա Հեմշին) - գտնվում է Վերին Համշենի հարևանությամբ՝ նրանից արևելք:

70. Համշեն Ստորին գյուղ (Աշաղի Հեմշին) - գտնվում է Միջին Համշենի հարևանությամբ՝ նրանից արևելք:

71. Համշեն Վերին գյուղ (Բաշ Հեմշին) - գտնվում է Թազվոր լեռան հարավարևելյան լանջին՝ Համշենի մեծ գետի վերին հոսանքի, որ կոչվում է Վերին Համշեն, ավազանում:

72. Համշեն (Հեմշին) քաղաք - գտնվում է Պազար գետի վերին հոսանքի ավազանում՝ Գյուլշեն լեռից հյուսիս:

<sup>17</sup> Քաջտեղեկում նրանն ելվում է Հազարկասյ, երբեմն՝ Հիզարկասյի սարերակներով:

<sup>18</sup> Եղիազարեան. «Համամաշեն-Համշենի, համանուն իջնանախարհ, Արտաշենի և Համշենի այլ բնակավայրերի տեղադրության շուրջ», էջ 508-509

<sup>19</sup> Յովհան Մամիկոնեան, Պատմություն Տայասույ, Մատենադպրոց Հայոց, է դար, Մեթոյան, 2005, էջ 1115-1119

73. Հովիտ (Ուվիտ) գյուղ - Մատանի գետի (Շեյթան չայ) հովիտն է՝ Ջեմիլ գետի վերնագավառում:
74. Հովիտ լեռ - գտնվում է Ջեմիլ գետի վերին հոսանքի ավազանում և ունի 3252 մ բարձրություն:
75. Հովիտ լեռանեցք - գտնվում է համանուն լեռից արևմուտք, Մատանի գետի կիրճում:
76. Հովիտ լճակ - գտնվում է համանուն լեռան հյուսիսարևմտյան լանջին:
77. Ղուշիվան գյուղ - գտնվում է Կարոշ բնակավայրից հարավ՝ Համշենի մեծ գետի ստորին հոսանքի ձախ ափին:
78. Ճանջուր (Ջանջուր) գյուղ - գտնվում է Թազվոր լեռան արևելյան լանջին:
79. Ճանաջուր գետ (Ջանաջուր) - սկիզբ է առնում Համշենի լեռնաշղթայի հարավարևմտյան հատվածից և հոսում հարավ:
80. Ճանհովիտ (Ջանհովիտ) - համանուն գետի հովիտն է:
81. Ճանհովիտ գետ - սկիզբ է առնում Ճերմակջուր լեռից (3441 մ) և, հոսելով հյուսիս, միախառնվում Ճերմակջուր (Ջերմակջուր) գետին:
82. Ճերմակջուր (Ջերմակջուր) գետ - Արտեր գետի աջ վտակներից է, որ հոսում է հյուսիս և միախառնվում Կավրոն գետին:
83. Ճերմակջուր գյուղ - գտնվում է համանուն գետի և Ճննհովիտ գետի միախառնման վայրի մերձակայքում:
84. Ճերմակջուր լեռ - գտնվում է Համշենի լեռնաշղթայում և ունի 3441 մ բարձրություն:
85. Ճերմակջուր լեռանեցք - գտնվում է համանուն լեռից արևմուտք՝ 3541 մ բարձրությամբ անառնի լեռան մերձակայքում:
86. Ճերմակջուր լճակ - գտնվում է համանուն լեռան ու լեռանեցքի միջև:
87. Ճերմակջրի ձոր - համանուն գետի ձորն է:
88. Մակրոնեկավան(ք) գյուղ - գտնվում է Համշենի մեծ գետի և Արտեր գետի ջրկիցքի մերձակայքում՝ Կարոշից արևելք: Անվանումը ցույց է տալիս, որ բնակավայրի այդպես է կոչվել այդտեղ գտնվող համանուն վանքի անունից:
89. Մեծհովիտ (Մեզովիտ) - համանուն լեռից սկիզբ առնող և արևելք հոսող գետակի հովիտն է:



90. Մեծհովիտ լեռ - գտնվում է Քաջջար լեռից հյուսիս-արևելք և ունի 3772 մ բարձրություն:
91. Մեծմուն (Մեցմուն) գյուղ - գտնվում է Համշենի մեծ գետի միջին հոսանքի ձախ ափին՝ վերջինի և Բալահովիտ գետի ջրկիզից ու Ենեցյուղից (Ենեքոյ) հյուսիս:
92. Միրատիտ գյուղ - գտնվում է Ճաակ բնակավայրից արևմուտք, Ճաակ գետի ստորին հոսանքի ձախ ափին:
93. Ենե գյուղ (Ենեքոյ) - գտնվում է Հեմշին բնակավայրից հյուսիս՝ Չինա ամրոցի մոտակայքում:
94. Ենե գյուղ - գտնվում է Համշենի մեծ գետի միջին հոսանքի ձախ ափին՝ Ջիլ կալեի մերձակայքում:
95. Չիլենց գյուղ - գտնվում է Կարմիկերենց լճակի և Եղևհովիտ լեռան միջև:
96. Չիեթիվա (ն<sup>՝</sup>) գյուղ - գտնվում է Ղուշիվան և Մեծմուն գյուղերի միջև՝ Համշենի մեծ գետի միջին հոսանքի ձախ ափին:
97. Չիեթիթ գյուղ - գտնվում է Ստորին Գյուշենի և Կարոշի միջև՝ Մալմանասից հարավ-արևմուտք:
98. Պարխար (Քարխալ) գետ - այս գետի վերին հոսանքը, որ իրենից ներկայացնում է Ճաակ գետի շարունակությունը, Համշենի սահմանն է:
99. Պարխար գյուղ - գտնվում է համանուն գետի վերին հոսանքի ձախ ափին, որից ավելի արևելք գետը կտրուկ թեքվում է դեպի հարավ:
100. Պարխարի լեռնաեզր - գտնվում է Քաջջար լեռնաշղթայում՝ Քաջջար գետի (Կաչկար չայ) ակունքի մերձակայքում:
101. Պիպերխար լեռ - գտնվում է Խալդիսի հյուսիսարևմտյան հատվածում և ունի 1973 մ բարձրություն:
102. Ջաղուտ գյուղ - գտնվում է Խալա քաղաքի մերձակայքում՝ վերջինից արևմուտք:
103. Ջերմ լեռ - գտնվում է Համշենի մեծ գետի ակունքների շրջանում և ունի 3434 մ բարձրություն:
104. Մարիլիճ (Մարիգուլ) - գտնվում է Աղվաջուր բնակավայրից հյուսիս-արևմուտք՝ Քաջջար գետի միջին հոսանքի ձախ ափին:
105. Մարիկնով (Մարիկցով) լճակ - գտնվում է Համշենի լեռնաշղթայի միջին հատվածի հյուսիսային լանջին՝ 3522 մ բարձրությամբ անանուն լեռան արևելքում:


106. Մեյրանքար գյուղ - գտնվում է Եղնեովիտ լեռից հյուսիս արևմուտք՝ 2640 մ բարձրությամբ անառնոն լեռան արևմտյան լանջին:
107. Սև Քաջքար (Քեմեռլի Կաջկար) լեռ - գտնվում է Քաջքար լեռնաշղթայում՝ Աղվազուր գետակի ակունքի մոտակայքում, և ունի 3688 մ բարձրություն:
108. Մեքար լճակ - գտնվում է Ջեմիլ գետի ակունքների շրջանում՝ Վերջերակ լճակի հարևանությամբ:
109. Վերին Համշեն (Քաշ Հնմշին) գետ - սկիզբ է առնում Վերջերակ լեռից: Նրա ամերին են գտնվում Վերին, Միջին և Ստորին Համշեն գյուղերը:
110. Վերջերակ (Վերջենիկ) լեռ - գտնվում է Համշենի լեռնաշղթայում և ունի 3711 մ բարձրություն:
111. Վերջերակ լճակ - գտնվում է համանուն լեռան արևմտյան լանջին:
112. Տափ (Չաթ) գյուղ<sup>20</sup> - գտնվում է Համշենի մեծ գետի և Եղնեովիտ գետի ջրկիցի մոտակայքում՝ վերջինից հյուսիս:
113. Տափ լեռ - գտնվում է համանուն գյուղից արևմուտք՝ Համշենի մեծ գետի ձախ ամին և ունի 2406 մ բարձրություն:
114. Տերեովիտ (Տերովիտ) - Եղնեովիտ գետի աջ վտակի հովիտն է:
115. Տերեովիտ գետ - Եղնեովիտ գետի աջ վտակն է, որ սկիզբ է առնում Խինտա լեռան հյուսիսային լանջից, հոսում հյուսիս, համանուն բնակավայրի մոտակայքում կտրուկ թեքվում արևմուտք և միախառնվում է Եղնեովիտ գետին:
116. Տերեովիտ գյուղ - գտնվում է Ալիվանքից հարավ-արևմուտք՝ Եղնեովիտ գետի աջ վտակի ոլորանում, վերջինիս գետի ձախ ամին:
117. Քաջքար (Կաջկար) գետ - սկիզբ է առնում Քաջքար լեռնաշղթայի հարավարևմտյան մասից՝ 3631 մ բարձրությամբ անառնոն լեռան արևմտյան լանջից: Հոսում է հյուսիսարևմտյան ուղղությամբ և միախառնվում Արտեր գետին:
118. Քաջքար լեռ - շրջանի ամենաբարձր զագաթն է (3937 մ): Գտնվում է Օճասարի և Մեծեովտի հարևանությամբ:

<sup>20</sup> Դուկաս Ինճինեան, Աշխարհագրություն չորրորդ մասում, աշխարհի մասն Ա Ասիա, Վենետիկ, 1806, էջ 397

119. Քաջքար լեռաշղթա - ձգվում է Սև Քաջքար լեռից մինչև Ալթըփարմաղ լեռը (3551 մ):
120. Քաջքար լճակ - գտնվում է Սև Քաջքար լեռան արևմտյան լանջին՝ Ավուձորի մոտակայքում:
121. Օձասար (Օզ թեփն) - գտնվում է Համշենի լեռաշղթայում՝ Մեծհովիտ և Քաջքար լեռաշղթայի մոտակայքում: Ունի 3881 մ բարձրություն:
122. Օմանեսգետ - գտնվում է համանուն գետակի աջ ափին՝ Քաջքար լեռաշղթայից հարավ ընկած լեռնային շրջանում:
123. Օմանեսգետ գետակ - սկիզբ է առնում Ալթըփարմաղ լեռաշղթայում գտնվող Սև լեռան արևմտյան լանջից: Հոսում է արևելյան ուղղությամբ և միախառնվում Բողատգետին:

## Օգտագործած քարտեզներ և գրականություն

1. Յարական Ռուսաստանի բանակային շտաբի հինգ և տասվերասանոց քարտեզներ:
2. Սովետական միության բանակային շտաբի տարբեր մասշտաբների տոպոգրաֆիկ քարտեզներ:
3. Թուրքական հինգվերստանոց քարտեզ:
4. Ռիզևի շրջանի թուրքական արդի քարտեզներ:
5. Ս. Երևնյան, Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1983, քարտեզ:
6. Բ. Հարությունյան, Մեծ Հայքն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, Երևան, 2001, քարտեզ:
7. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարսուռոյ,- «Մատենագիրք Հայոց», Է դար, Անթիլիաս, 2005:
8. «Պատմութիւն Ղեսեղայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Ղեսեղցուրգ, 1887:
9. Մ. Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Մեծ Ծով, Վենետիկ, 1819:
10. Ղ. Բաճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, Ասիա, Վենետիկ, 1806:
11. Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855:
12. Ս. Հայկունի, Համշեն,- «Արարատ», 1895:
13. Հ. Տաշեան, Տարբ. դրացիք և Ռուսորջուր,- «Հանդէս ամսօրեայ», 1971, թիվ 10-12:
14. Ա. Եղիազարեան, Համամաշեն-Համշենի, համանուն իշխանութեան, Արտաշենի եւ Համշենի այլ բնակավայրերի տեղադրութեան շուրջ,- «Հանկ», Անթիլիաս, մայիս 2009:
15. В. Торлякин, Этнография амшенских армян,- Амшенская библиотека, Краснодар, 2002.
16. Рюи Гонзалес де Клавико, Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406 гг., СПб., 1881.
17. В. Джирфорд Пальгрев, Отчет о провинциях Анатоллии за 1867-68, 1869 и 1872 гг.,- Материалы для описания Азиатской Турции и Батумской области, Тифлис, 1882.
18. И. Кузнецов, Хемшилы и амшенские армяне в культурном контексте Понта,- Амшенская библиотека.
19. А. Тулумджян, Земля и корни,- «Алеш», 2005, N 3.
20. К. Koch, Reise im Pontischen Gebirge und Turkischen Armenien, Wanderungen im Oriente II, Weimar, 1846.



## ԳՐԱՄՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Վ. ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ «ԻՍԼԱՄԸ ԹՈՒՐԳՅԱՅԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՑԱՆՔՈՒՄ  
(1970-2001 թթ)», Երևան, Լիմուշ 2008, 249 էջ**

1990-ական թթ. Թուրքիայում տեղի ունեցող փոփոխություններից ամենախիստակալը կրոնական գործոնի կամ քաղաքական իսլամի աննախադեպ ակտիվացումն է: Քաղաքական իսլամի վերելքը նշանավորվեց 1995 թ. խորհրդարանական ընտրություններում իսլամամետ «Բարօրություն» կուսակցության հաղթանակով և 2002 թ. «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալով:

Թուրքական աշխարհիկ իսլամի մոդելի ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ: Տարաբնույթ գիտական կենտրոններ Թուրքիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում բազմաթիվ արժեքավոր ֆունդամենտալ գիտական ուսումնասիրություններ են կատարել այդ բնագավառում: Այս գիտական ուսումնասիրությունը մեզանում ևս տարիների պատմության ունի, և հայ թուրքագետները լուրջ ներդրում ունեն այս բարդ խնդրի գիտական լուսարանման հարցում: Այդ տեսակետից բավարար է հիշատակել Դաֆֆի Կոնդակյանի «Թուրքիա. ներքին քաղաքականություն և իսլամ» աշխատությունը:

Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում իսլամի դերին նվիրված է պատմական գիտությունների թեկնածու Վաներամ Տեր-Մաթևոսյանի գիտական ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը վերլուծում է 1970-2001 թթ. ընթացքում իսլամի վերելքը Թուրքիայում, կրոնական գործոնի օգտագործումը գաղափարական, քաղաքական պայքարում և այլ հարակից գործընթացներ: Անշուշտ կրոնական գործոնի օգտագործումը հանրապետական Թուրքիայում սկսել է դեռևս 1940-1950-ական թթ.՝ միակուսակցական համակարգից բազմակուսակցականի անցման շրջանում: 1950-60 թթ. «Ղեկավարական» կուսակցությունը, վարչապետ Ադնան Մենդերեսի գլխավորությամբ որոշակիորեն մեղմացնելով «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության կատավարման օրոք կրոնական քաղաքականությունը, փորձեց օգտագործել իսլամական միասնությունն ընդեմ քրդական

անջատողականության: Հետագայում 1960-70-ական թթ. Ցուրքիայում ձևավորվեց «թուրք-խալամական համադրության» գաղափարախոսությունը, որն «Ազգային փրկություն» կուսակցության գաղափարական հիմք հանդիսացավ: Վ. Տեր-Մաթևոսյանի աշխատության առաջին գլխում բազմաթիվ աղբյուրների օգտագործմամբ գիտական վերլուծության է ենթարկվում 1970-80-ական թթ. ներքաղաքական պայքարում իսլամական գաղափարախոսության օգտագործումը և Նեքմեթին էրբաքանի կողմից ղեկավարվող «Ազգային փրկություն» կուսակցության գործունեությունը, որը 1970-ական թթ. կառավարող կուսիցիաների անդամ է հանդիսացել: Մակայե ներքաղաքական բարդ իրավիճակի և զինվորականության ճնշման պայմաններում ակտիվ իսլամական քաղաքականություն վարել անհնարին էր: Բավական է նշել, որ ձախ և աջ կուսակցությունների պայքարի ու անաբեկչության հետ մեկտեղ երկրում աճող իսլամական տենդենցները, որոնց ակտիվացմանը կոր գարկ հաղորդեց 1979 թ. հարևան Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը, 1980 թ. սեպտեմբերի 12-ին Ցուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման պատճառներից մեկը հանդիսացան: Իշխանությունն իր ձեռքը վերցրած զինվորականությունը հալածանքներ տեղաց ոչ միայն ձախակողմյան և աջակողմյան կուսակցությունների, այլ նաև՝ իսլամամետ ուժերի վրա:

Ինչպես նշում է Վ. Տեր-Մաթևոսյանը, իսլամական ուժերի ակտիվացում հատկապես ակնառու է Ցուրգուք՝ Օզալի կառավարման տարիներին: Որոշ գիտնականներ այդ ակտիվացման մեջ նշում են նաև սուրյեկտիվ գործոն, այն է Օզալի իսլամական թարիքատներից (սղանդներից) մեկին պատկանելիությունը<sup>1</sup>: Մակայե իրական իսլամական տրամադրությունների և իսլամական ուժերի ակտիվացումը սկսում է 1990-ական թթ. սկզբին: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Տեր-Մաթևոսյանը աջակողմյան և ձախակողմյան կուսակցությունների վարած անհաջող քաղաքականության պայմաններում, իսլամամետ «Բարոություն» կուսակցության կողմից առաջ քաշված «Ազգային տեսակետ» և «Արդար կարգ» ծրագրերը հասարակությունը դիտեց որպես երբորդ,

<sup>1</sup> Առաջը գնում է Բեքթաշի թարիքաթի մասին - Ա. Ա.



այլընտրանքային ուղի, որը կարող է բերել երկրի բարեկեցությանն ու ուժեղացմանը, ավելի անկախ արտաքին քաղաքականության վարմանը, իսկ իսլամական երկրների հետ համագործակցության ուժեղացման միջոցով, տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի և նշանակության ուժեղացմանը:

Վ. Տեր-Մաթևոսյանի աշխատության գիտական նորույթն այն է, որ հեղինակը հանգամանորեն վերլուծում է «Ազգային տեսակետ»-ի (*Milli Görüş*) գործունեությունը, որը շուրջ երեք տասնամյակ Թուրքիայի ամենաազդեցիկ կրոնա-գաղափարական շարժումն էր: Մենագրության մյուս կարևոր նորույթը «Բարոյություն» կուսակցության վարած քաղաքականությունում ժողովրդավարացմանը հատկացված դերակատարման ուսումնասիրությունն էր. «ԲԿ-ի համար ժողովրդավարությունը ոչ թե նպատակ էր, այլ՝ միջոց, միևնույն վերջնական նպատակն անորոշ ձևակերպմամբ հրամցվող, «Երջանկության կարգի» հիմնադրումն էր» (էջ 135):

«Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում»<sup>2</sup> գրքում լուսարանվում է նաև Սաիդի Լուրսիի կողմից հիմնադրված «նուրսիջիների» գաղափարախոսությունը, ինչպես նաև նրա հետևորդ հակդիսացող և աշխարհում մեծ թափ տուցած Ֆեթուլահ Գյուլենի կողմից ղեկավարվող «ցուլենական» շարժումը: Այս շարժման հաջողությունը և «արևմտյան կրթություն – չափավոր իսլամական բարքեր» բանաձևի գրավորությունը քաղաքական իսլամի զարգացման նոր դրսևորումներից մեկն է:

Ամփոփելով, կցանկանայի՞ք նշել, որ Վահրամ Տեր-Մաթևոսյանի «Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում» աշխատությունը հաջողված բազմակողմանի գիտական վերլուծություն է, որն իր արժանի տեղն է գրադեցնում հայրենի թուրքագիտությունում՝ իսլամի տեղի և իսլամական շարժման լուսարանմանը նվիրված հիմնարար աշխատությունների շարքում:

*Արսեն Ավագյան*

<sup>2</sup> Վահրամ Տեր-Մաթևոսյան, *Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում* (1970-2001 թթ), Լիմոնջ հրատարակչություն, Նրևան, 2008, 249 էջ

**Ռ. ՄԵԼՔՈՒՑԱՆ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԹԵՄԱՆ ԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԵՁ» ,Երևան , ՎՄՎ-Պրինտ 2010, 128 էջ**

Պատմական, հասարակական կարևոր իրադարձությունները շատ հաճախ իրենց գեղարվեստական արտացոլումն են գտնում գրականության մեջ և դառնում ժողովրդական հիշողության յուրահատուկ «շտեմարան»: Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Մելքոնյանի հեղինակած վերջին գրքում քննության է առնվում նորագույն շրջանի թուրքական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի արտացոլման հարցը: Փաստենք, որ հեղինակն իր առջև բավական բարդ խնդիր է դրել քանի որ իր իսկ դիտարկմամբ. «Թուրքիայում արգելված մի շարք թեմաների հանդեպ 20-րդ դարի թուրք գրականությունն, ընդհանուր առմամբ, որդեգրել է նույն դիրքորոշումը» (էջ 5):

Վերլուծելով մեզանում առավելապես անհայտ 20-րդ դարի մի շարք թուրք գրողների ստեղծագործություններ՝ Մելքոնյանը վեր է հանել հաճախ տողատակերում արտահայտված ակնարկները Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ: Իսկ արդեն 21-րդ դարի սկզբի որոշ թուրք հեղինակների գրքերում Հայոց ցեղասպանության հարցն ավելի բացահայտ է ներկայացված՝ հիմնականում ակնատես-վերապրողների հուշերի հիման վրա: Ի տարբերություն պատմաբանների, գրողներն իրենց հուզող խնդիրներն արծարծելիս հաճախ անուղղակիորեն են անդրադառնում երևույթներին, արտացոլում չեն ձգտում բացահայտել իրենց ստեղծագործության հիմնական թեմաները ողջ խորությամբ, բայց և այնպես իրենց ասելիքը տեղ են հասցնում պատենցիալ ընթերցողին: Լավ ընթերցողը հեղինակի կերտած գրական կերպարների կամ էլ իրական հերոսների հետ միասին է «ճանապարհորդում» իրադարձությունների և այուժների հարձակոտում, իսկ եթե ստեղծագործությունն ունենում է գեղարվեստականորեն մեծ արտահայտչականություն՝ ընթերցողն ինքն է գիրքը փակելուց հետո փորձում գտնել նկարագրվող երևույթների իրական պատճառները, սկսում է դրանց ակունքների սելիական փնտրտուքը: Այս իմաստով է միայն հուսադրող գրախոսվող աշխատության հեղինակի այն դիտարկումը, թե «թուրքական գրականության...

անդրադարձը Հայոց ցեղասպանության թեմային կարևոր է նաև այն առումով, որ կարող է նպաստել թուրքական հասարակության մեջ պատմական ճշմարտության, այն է՝ Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու և ընդունելու գործընթացին, քանի որ այս ստեղծագործություններում պատմական «չոր» փաստերը ներկայացվում են մարդկային անհատական ողբերգությունների միջոցով, ինչը, շատ հաճախ, ավելի ազդեցիկ է լինում» (Էջ 118):

Չնայած գրքի վերնագիրը հուշում է աշխատանքի առավելապես գրականագիտական ուղղվածության մասին, սակայն հարկ է նկատել, որ հեղինակի վերլուծությունները և ներկայացրած փաստերը գտնվում են տարբեր գիտակարգերի (պատմագրություն, բանասիրություն, ազգագրություն) հատման տիրույթում, ինչը, փաստորեն, արևելագիտության բնորոշ հատկանիշներից կարելի է համարել: Ռուբեն Մելքոնյանի գրքի հիմնական թեմատիկան աշխատության մեջ ներկայացվում է մեկ հիմնական մոտիվի ու դրա ճյուղավորումների միջոցով, որոնցից ամենակարևորը կարելի է բնութագրել «րոնի իսլամացված հայերի ու երանց սերունդների տրավմատիկ հիշողություն ու դրանով պայմանավորված ինքնություն» ձևակերպմամբ: Պատահական չէ այս մոտիվի հայտնվելը թե՛ թուրք հեղինակների, թե՛ նրանց ստեղծագործությունները վերլուծող հեղինակի աշխատությունում: Բանն այն է, որ Ռ. Մելքոնյանը հայաստանյան (թերևս նաև հայագիտական) իրականության մեջ միակ հետազոտողն է, որը հարցի իրապես պրոֆեսիոնալ գիտակն է: Այդ են վկայում նախ և առաջ նրա տասնյակ հրապարակումները ինչպես գիտական, կույնպես և գիտահանրամատչելի պարբերականներում, բազմաթիվ հեռուստատելույթները և հարցազրույցները, որոնք հենված են թուրքական (և թուրքահայ) իրականության խորը իմացության վրա: Գիտելիքների աղբյուրը ոչ միայն թուրք մասնագետների աշխատանքներն են, այլ նաև անձնական դիտարկումները, դաշտային աշխատանքները Թուրքիայի հայության մեջ:

Թուրք հեղինակների համար վերոնշյալ մոտիվի հայտնվելը պայմանավորված է դրա՝ թուրքական հասարակության մեջ ավելի ու ավելի արդիական դառնալու հանգամանքով: Արդյունքում որոշ թուրք գրողներ՝ ոչ մեծ փնտրտուքի շնորհիվ, ծագումով հայերի են գտնում թուրքական հասարակության ամենատարբեր շերտերում

ու սկսում են այդ թեման ներկայացնել տարբեր աստիճանի գեղարվեստական մշակմամբ կամ պարզապես շարքային մարդկանց պատմությունների վերաշարադրմամբ: Եվ դա դառնում է այն յուրատեսակ «բանալին», որ հնարավորություն է ընձեռում մի փոքր բարձրացնելու վարագույրը քսաներորդ դարասկզբի իրադարձությունների և մասնավորապես Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ:

Ռուբեն Մելքոնյանի գրքում նկատելի են նաև ազգագրական բնույթի նկարագրություններ. զրքի անգամ եկթագլուխների վերնագրերի ձևակերպումները, հայագետների (ու, մասնավորապես, ազգագրագետների) համար բացահայտում են Թուրքիայում բնակվող հայության մեջ տեղ գտնող էթնոմշակութային գործընթացների երբերանգները: Մասնավորապես՝ պատկերվում են հայաստյաց միջավայրում հայկական ինքնության պահպանման ձևերը, հայրեր-որդիներ հանկարամիասնության փոխակերպումը տասեր-թոռներ կապի, գաղտնիքները պահելու ձևերն ու դրանց հանկարծակի կամ օրինաչափ բացահայտումները, բնութագրական ձևակերպումների օգտագործումները, տրավմատիկ առօրյայի դրսևորումները, երրորդ-չորրորդ սերնդի հայկական արմատներ ունեցող երիտասարդների պահվածքը և այլ գեղարվեստական կամ իրական կյանքից վերցրած լուծումներ: Միանգամայն ակնհայտ է դառնում, որ մերօրյա Թուրքիայում ցեղասպանության տրավմատիկ երանգներ կրող հիշողությունն է հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոնը: Մի գործոն, որի կատուցողական գործառնությունները մինչ վերջերս վերագրվում էր լույ սփյուռքահայ ինքնության պահպանմանը, պարզվում է, որ միանգամայն աշխատում է նաև իր պապենական տարածքներում բնակվող Թուրքիայի հայության սերունդների համար:

Ամփոփելով՝ փաստենք, որ Ռուբեն Մելքոնյանի «Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ» զիրքը ուշագրավ է նոր փաստերով, հետաքրքիր վերլուծություններով հարստացնում է հայաստանյան գիտական (արևելագետական) միտքը, իսկ երիտասարդ թուրքագետի գիտական պրպտումները արժանի են խրախուսման:

*Հարություն Մարության*

**Լ. ՀՈՎՍԵԹՅԱՆ Վ. ԻՎԱՆՈՎ «ՀԱՐԱՎԱՅԻՆ  
ԿՈՎԿԱՍԻ (ԱՂԲԵՁԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ) ԵՎ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ  
ԹՈՒՐԹԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ», Երևան,  
Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ,  
2010, 166 էջ**

Հայրենական թուրքագիտության մեջ հաճախ են լույս տեսնում տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինքներին, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներին հետ թուրքիայի հարաբերություններին և համագործակցության հեռանկարներին նվիրված հոդվածներ և աշխատություններ: Այդ աշխատությունների մի մասն այժի է ընկնում ոչ թե գիտական, այլ պոպուլիստական մտածեցմամբ, որոնցում, ելնելով տարաբնույթ պատճառներից, կամ գերազնահատվում, կամ էլ թերազնահատվում են թուրքիայի հնարավորությունները, յուրովի, հաճախակի իրականությունից շատ հեռու են մեկնաբանվում Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջաններում թուրքիաթուրքալեզու հանրապետությունների միջև համագործակցության տարբեր խեղդիրները:

Լսեն Հովսեփյանի և Վաղյիմիր Իվանովի՝ «Հարավային Կովկասի (Ալբերջան, Վրաստան) և Կենտրոնական Ասիայի երկրների հետ թուրքիայի համագործակցության ռազմաքաղաքական ասպեկտները» աշխատությունը, ի տարբերություն վերոնշյալ ուսումնասիրությունների, այժի է ընկնում իր գիտական վերլուծությամբ, աղբյուրների հնարավորին չափ լայն ընդգրկմամբ և անպատմածեցմամբ: Հեղինակներին հաջողվել է առեղծել կուտ գիտական աշխատություն, որտեղ բազմաթիվ աղբյուրների վերլուծության հիման վրա ներկայացվում են թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության դրդապատճառները, նպատակները և այդ նպատակների իրականացմանն ուղղված ռազմաքաղաքական համագործակցության տարբեր դրսևորումները:

Համահեղինակներին աշխատությունը կազմված է երեք գլխից և վերջաբանից: Առաջին գլխում, որը վերնագրված է «Թուրքիայի

արտաքին քաղաքականության կովկասյան և կենտրոնասիական ուղղությունները: Կոնցենպտուալ մտտեցումների և պրակտիկայի փոխկապակցվածությունը» ներկայացվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության այդ երկու կարևոր ուղղությունների ձևավորման քաղաքական գծի պատճառները, դրանց կապը եախարդոլ շրջաններում գոյություն ունեցող մտտեցումների, եախկին կայսերական նկրտումների հետ, ինչպես նաև ներկայացվում են Թուրքիայի քաղաքական վերեախափում նշված տարածաշրջաններում իրականացվող քաղաքական գծի ռազմավարական ուշենիշները: Գլխում մեջբերվում են տարբեր թուրքական գործիչների ելույթներն ու արտահայտված դիրքորոշումները, թուրքալեզու հանրապետությունների հետ համագործակցության դիկամիկան և վերլուծվում խոչընդոտող հանգամանքները:

Աշխատությունում հիմնական ուշադրությունը դարձվում է Թուրքիայի ռազմաքաղաքական համագործակցությանը Ադրբեջանի և Վրաստանի հետ: Այս խնդրի լուսաբանմանը և կարևոր իրադարձությունների ներկայացմանն է նվիրված «Թուրքիայի ռազմաքաղաքական համագործակցությունը Հարավային Կովկասի երկրների (Ադրբեջան, Վրաստան) հետ» վերնագրված երկուրդ գլուխը: Հեղինակները իրավացիորեն նշում են, որ Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականությունը հիմնվում է Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական դաշինքի վրա, որի ազդեցության ոլորտում է գտնվում նաև Վրաստանը: «Մեկ ազգ - երկու պետություն» մտտեցմամբ Ադրբեջանին տրամադրված զենքն ու զինամթերքը, այդ երկրի հետ իրականացվող ռազմատեխնիկական համագործակցությունը և կնքված պայմանագրերը թուրք-ադրբեջանական դաշինքը դարձրել են կարևոր տարածաշրջանային գործոն, որը մեծապես ազդում է ՀՀ ազգային անվտանգության համակարգի ձևավորման վրա: Աշխատությունում ներկայացված է նաև Թուրքիայի կողմից Ադրբեջանի զինված ուժերի արդիականացման ծրագիրը, իրականացման փուլերը և դրա հավանական հետևանքները հայկական պետությունների համար: Գրքում բազմակողմանի և ուշագրավ փաստերի վերլուծության հիման վրա ներկայացվում է նաև Թուրքիայի աջակցությունը Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորմանը:

Լույս գլխում վերաձևվում է թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության բնույթն ու անցած փուլերը, Թուրքիայի ներդրումները Վրաստանի տնտեսական համակարգում և զինված ուժերի արդիականացման գործում խաղացած դերը, ընդգծվում է Վրաստանի տարանցիկ երկիր հանդիսանալու նշանակությունը թուրք-ադրբեջանական ռազմավարական դաշինքի ամրապնդման և հետագա զարգացման տեսանկյունից:

Գրքի «Կենտրոնական Ասիայի թուրքալեզու հանրապետությունների հետ Թուրքիայի ռազմական համագործակցությունը, ընդհանուր ակնարկ» վերնագրված երրորդ գլխում համառոտակիտրեն, բաց հիմնական դրույթների մասին պատկերացում կազմելու համար բավարար նյութի ընդգրկմամբ լուսաբանվում է Թուրքիա-թյուրքալեզու հանրապետություններ ռազմա-տեխնիկական համագործակցությունը, հիմնական միտումներն ու հնարավորությունները:

Ամփոփելով՝ կցանկանայիսք նշել, որ Առև Հովսեփյանի և Վլադիմիր Իվանովի «Հարավային Կովկասի (Ադրբեջան և Վրաստան) և Կենտրոնական Ասիայի երկրների հետ Թուրքիայի ռազմաքաղաքական համագործակցության ասպեկտները» աշխատությունը, լուսաբանելով Թուրքիայի կովկասյան և կենտրոնասիական քաղաքականության ռազմաքաղաքական տեսանկյունները, նյութի բազմազանության և զիտական բազմակողմանի վերլուծության շնորհիվ կարևոր զիտակիրառական նշանակություն ունի և հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն այդ խնդիրներով զբաղվող թուրքագետների և քաղաքագետների համար:

*Արսեն Ավագյան*

Պատմական գիտությունների դոկտոր

Դեռ 1980 ական թվականներից այս անունը քաջ հայտնի հայ հասարակությանը:

1980 թ. դեկտեմբերին Խոսե Անտոնիո Գուտիարանը պատահաբար վիրավորվում է Մադրիդում հայկական վրիժառուների ռումբից: Չբոված «լրագրողական մեծ հետաքրքրությամբ և մասամբ ստոկհոլմյան ախտանիշանով, Գուտիարանը ջանք չի խնայում ճանաչելու այդ հակամարտության արմատները: Լա հանդիպում է Լիբանանում այդ գործողության պատասխանատուների հետ, որից հետո լույս է տեսնում «Ֆեուսը» վերնագրով գիրքը, որտեղ հեղինակը պատմում է այդ արտասովոր հանդիպման մասին և բացահայտում հայկական վրեժի պատճառները: Գիրքը սկզբունքային «ոչ» է բռնությանն ու մահին և գույք կյանքին:

27 տարի անց նա այցելեց արդեն անկախ Հայաստան և հանդիպեց ԱՄԱՄ-ի նախկին անդամների հետ, որոնք վայր եղյրել գեները և լծվել խաղաղ կյանքին: Հայաստանում Գուտիարանը ուսումնասիրեց «հայ ժողովրդի ասյրած մեծ ողբերգությունը՝ 1915թ. ցեղասպանությունը»: Իր կոր գիրքում՝ «Հայեր՝ մոռացված ցեղասպանություն» Գուտիարանը հիշեցնում է 20-րդ դ. առաջին ցեղասպանության մասին, երբ Թուրքիան ոչնչացրեց մեկ ու կես միլիոն հայ, և որը Անկարայի ներկա կառավարությունը շարունակում է ժխտել, վիճարկելով նույնիսկ հայոցցեղասպանության լինելու փաստը:

Հայերի մասին այս երկրորդ գիրքը ծնվեց Բարսելոնի մի խումբ հայերի հետ շփումից, Իսպանիայի հայ համայնքին հանդիպելուց հետո: Գրքի մտահղացումը ստիպեց հեղինակին ուսումնասիրություններ կատարել և հայտնաբերել իր համար անսպասելի տեղեկություններ հայերի վերաբերյալ Իսպանիայում, հետաքրքրվել իր հայ ծանոթների և այլոց պատմություններով, որոնք բողոքն էլ ցեղասպանություն վերապածների զավակներ կամ թոռներ են Ըստ հեղինակի՝ հնարավորություններ ստեղծվեց գիրքի միջոցով օգնելու հայկական հարցի արդարացի լուծմանը և «ես ոգևորվեցի այն գրելու հնարավորինս լավագույն վայրում՝ Հայաստանում»:



Իրավամբ խոսե Անտոնիո Գուոնասեր հայ ժողովրդի իսկական բարեկամն է, մտահոգված երա անցյալով, ներկայով և ապագայով: Դրա վառ ապացույցն է իրեն իսկ տողերը, գրված արգենտինահայերի «տո» կայքին.

«...Երեսնամ սկսեցի գրել այն ինչ այսօր գիրք է, որի մեջ դրել եմ բոլոր հույսերը որ կեպաստի տարածելու Հայկական հարցը, որ այն կլինի ևս մի ավագահատիկ, որը կգումարվի մեր ջանքերին, որպեսզի, չնայած ուշ՝ այնուամենայնիվ աշխարհը ճանաչի հայերի հետ կատարված պատմական անարդարությունը. Մա է իմ՝ ինչպես և գրքի նպատակը»:

**G.H. GUARCH "EL TESTAMENTO ARMENIO", Editorial  
Almuzara, S.L., 2008, 480p.**

Ըստ իսպանացի գրող Գոնսալո Էրեսանդես Գուարչի, ով վերջերս հրատարակեց «Հայոց Կտակարան» վեպը՝ «պատմական գրականությունը լավագույն հակաթույնն է մոռացության դեմ. մի ավագահատիկ՝ կանխարգելելու ռոբերգությունները, հակամարտությունները և սխալները»:

«Աշխարհի քաղաքացի» այս կատալոնացին համարում է, որ «եթե մոռանում ենք և զգայունություն չունենք մեզ շրջապատող աշխարհի հանդեպ, մենք պատժված կլինենք շատ դաժան իրողություններով, որոնք կրկին կարող են պատահել»:

Եւ համոզված է, որ աշխարհը, որտեղ մենք ապրում ենք «ավելի քիչ կայուն է, քան թվում է», և որպես օրինակներ կշում է թե, ինչ կատարվեց հայկական ցեղասպանության, երեսկան հուլոցստի կամ Ռուսանդայի թուրքիների ոչնչացման հետ, ինչ կատարվեց Իրաքում, կամ ինչ կատարվում է այժմ ԱՖրիկայում:

Հեղինակի հետաքրքրությունը հայ ժողովրդով և 20-րդ դարի սկզբում Թուրքիայի ձեռքով կրա ապրած ցեղասպանությամբ պատահականության արդյունք էր, որի «պատասխանատուն» ծագումով հայ մի կին էր, որի հետ մասնակցել էր մի հարսանիքի: Այն ժամանակ Էրեսանդես Գուարչը արդեն գրել և հրատարակել էր

մի քանի պատմական վեպեր, որոնց թվում «Երեք կանանց պատմություն»՝ Բաղկաներում պատերազմի մասին, «Շալոմ Սեֆարադ»՝ սեֆարադների վտարման մասին, և «Քրդական պատգամ»՝ քուրդ ժողովրդի պատմության մասին:

Այդ պատահական հանդիպումից ինչից հետաքրքրությունը՝ տեղեկանալու հայոց ցեղասպանության մակրամասներին, և իր տպավորություններն ամփոփեց առաջին գիրքում՝ «Հայկական տոհմածառ» վերնագրով: Գուարչը ցնցված էր դարասկզբին հայ ժողովրդի հանդեպ իրկանացված ոճրագործությանը և առավելապես տպավորված՝ հայերիս հարստներու մեծագույն կամքով ու ստեղծագործ մտքով:

«Հայոց կտակարանը» հեղինակի երկրորդ գիրքն այս թեմայով, որտեղ նա փորձում է ուսումնասիրել այն պատճառները, որ բերեցին այդ ողբերգությանը: Նա պարզաբանում է, որ «քաղաքակապես ոչինչ չունի ժամանակակից թուրքերի դեմ», բայց համարում է, որ «թուրքական կառավարությունը մեկնումիշտ պետք էր ճանաչի ցեղասպանության գոյության փաստը»:

«Հայոց կտակարանը» պատմավեպ է, որի գլխավոր հերոսը՝ պատմության հեղինակը,

մեծահարուստ ընտանիքից սերող ֆրանսիացի լրագրող Անրի դե Լատուրն է, որը 1885թ. դիվանագիտական անձնագրով գործուղվում է Թուրքիա աշխատելու: Ականատես լինելով 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբերին Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական ջարդերին, նա աշխատում է հնարավորինս շատ մարդ փրկել թուրք ոճրագործներից՝ օգտագործելով ինչպես իր դիվանագիտական կարգավիճակը, այնպես էլ անձնական կապերը: Պատահական չի նաև իր ամուսնությունը է մի հայ աղջկա հետ, իրենց զավակի ճակատագիրը, որ թողնելով փափկասուն կյանքն Արևմուտքում, ասանց ծնողներին զգուշացնելու, իր կամքով մեկնում է մոլոր կախիկների հայրենիքը՝ կռվելու նրա պաշտպանության և ազատագրման համար և զոհվում է: Անրի դե Լատուրը դառնում է հայ ժողովրդի և նրա շահերի ջատագովն ու պաշտպանը՝ ամբողջ պատասխանատվությամբ և անշահախնդիր ծառայելով այդ նպատակներին:

Հարկ է նշել, որ գրքի հերոսները հիմնականում հորինված կերպարներ են, սակայն իրական են հիմնական փաստերն ու

գործողությունները, որոնք հանգեցրեցին մարդկության դեմ կատարած ամենամեծ հանցագործություններից մեկին:

Չնայած դրան մինչ այսօր Թուրքիան շարունակում է չճանաչել ցեղասպանությունը և չհասկանալ, որ այդ քայլը, ըստ Գուարչի «Գեշանակեր ազգային ինքնամաքում, ինչը նրան կօգներ փոխակերպվելու եվրոպական և ժամանակակից պետության»:

Գուարչը մեծապես գնահատում է պատմաբանների դերը, որոնց աշխատանքներից արժեքավոր կտյուղեր է գտնում իր վեպերի համար, քայց ընդգծում է նաև այն մեծ կարևորությունը, որ ունեն վիպասանները, ինչպես ինքն է, քանզի գեղարվեստական գրականությունը կարող է լուրջ ներդրում ունենալ հայոց ցեղասպանության՝ միջազգային լան հանրության կողմից ճանաչման գործընթացում:

Գոնեսալո Էրևանդես Գուարչը (Բարսելոնա, 1945) անցել է փայլուն գրական ուղի: «Հայկական տոհմածառ» գրքի համար արժանացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի ոլորտում ներդրման համար ոսկե մեդալի և ընտրվել Հայաստանի գիտության և գրականության ակադեմիայի պատվավոր անդամ, արժանացել նաև ՀԲԸՄ-ի 2007 թ. Կ Փափազյանի մրցանակին՝ իր նշանակալի նպաստի համար հայ ժողովրդի մշակութային և պատմական հաստատակամության մեջ:

S.C. CODINACH "EL PRIMER GENOCIDIO DEL SIGLO  
XX", REVISTA "SAPIENS", N. 66,  
ABRIL 2008, BARCELONA, PP. 18-25

Հայոց ցեղասպանությունը բազմիցս արտացոլվել է տարբեր երկրներում և տարբեր լեզուներով: Մակայն սույն խորագրով հոդվածը իսպանական «Sapiens»<sup>1</sup> (2008 թ., № 66) ամսագրում

<sup>1</sup> El primer genocidi del segle XX. «Sapiens», Barcelona, № 66, 2008. Տեղեկացնեք, որ «Sapiens» պատմականագիտական ամսագիրը ներկայումս կառավարվում է ամենամեծ քանակությամբ վճարովի հատկան է, որը տարածվում է ամսական 100.000 ընթերցողների միջև: Այն պատկանում է «Մշակույթ 03» խմբին, որը նաև կառավարվում է կառավարկան ևս մի քանի հայրենի ամսագրեր:

առանձնանում է երանով, որ այդ թեմային առաջին անգամ լայնորեն անդրադաստեղծում է կատարուկան մի լրատվամիջոց՝ մանրամասնորեն նկարագրելով դրա հանգամանքները և իրականացումը, ինչպես նաև հետևանքները և արձագանքները:

Հողվածը, գրել է լրագրուհի Սոնիա Կասաս Կոդիկաչը՝ պատմաբան Ագուստի Կոլումիենսի և Բարսելոնի հայ մշակութային ընկերության նախագահ Գոռ Արգարյանի աջակցությամբ:

Հողվածը կառուցված է իրական, փաստագրական և օբյեկտիվ տվյալների հիման վրա: Թուրքական պետության կողմից հայ փոքրամասնության դեմ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրագործված ցեղասպանությունը շարունակում է մնալ քննարկումների և վեճերի թեմա: Այդ կապակցությամբ հեղինակը գրում է «Հարյուր տարի անց՝ Թուրքիան շարունակում է այն չընդունել և կիրառում է օրենք, համաձայն որի պատժվում են այն հիշատակող անձիք: Նաև այն չեն ընդունել պաշտոնապես Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, Միացյալ Նահանգները կամ Իսրայելը այն դեպքում, երբ նույն Հիտլերը ժամանակին այն օրինակ էր բերել՝ «Ո՞վ է հիշում հայերին»: Ֆուրերն այդ մասին ասել էր 1939թ. Վարշավայում մինչ փաստարկում էր իր վերջնական որոշումը»<sup>3</sup>:

Որպես նախաբան հեղինակը նշում է, որ 1915-1917 թթ. Օսմանյան կայսրությունում ապրող հայերի երկու երրորդը ոչնչացվել է թուրք իշխանությունների կողմից: Համարվելով հոլոքոստի նախադեպ ակնարկում է «Աներևակալորեն այն մնաց որպես քիչ հայտնի մի դրվագ: Հարյուր տարի անց Թուրքիայի կողմից սնուցած լուռությունը և մերժումը թույլ չտվեցին, որ վերքերը կարողանային դարմանալ: Մեկ միլիոնից ավելի գոռ: Հայկական աղբյուրներն էլ խոսում են մեկ ու կես միլիոն գոռերի մասին, մինչ թուրքական կառավարությունը 1919 թ. ճանաչել է 800.000: Այսօր Թուրքիան չի ընդունում ցեղասպանությունը, ցանկանալով ամեն կերպ խոչընդոտել հարցի արդար ու օբյեկտիվ ներկայացումը և նախընտրում

<sup>3</sup> Հողվածում մի քանի անգամ հիշատակվում է, որ ցեղասպանությունից անցել է հարյուր տարի: Մինչդեռ Հարց ցեղասպանության 100-ամյա տարեկիցը լրատվում է 2015 թ.:

<sup>4</sup> El primer genocidi del segle XX, Barcelona, «Sípcius», № 66, 2008, p. 20.

խեղաթյուրել պատմական իրականությունը»<sup>4</sup>։ Իսպանացի հողվածագիբրը Լույնիսկ եկատում է, որ գերմանացիները, որոնք Առաջին աշխարհամարտում հանդիսանում էին Թուրքիայի դաշնակիցները, բազմիցս գրել են հայերի հանդեպ իրականացված դաժանությունների մասին։ Հողվածում մեջբերվում է Հալեայի գերմանական դպրոցի չորս ուսուցիչների նամակը, որտեղ Բեռլինի Արտաքին գործերի նախարարությանը հայտնում են իրենց վրդովմուտքը։ Մասնավորապես, որ «3000 հասած հայ գյուղացի կանանցից 40-ն էին ողջ մնացել։ Ամենագիտեցիկները իրենց պանծապանների վավաշուտության գոհ են, մնացածները սովի և ծարավի գոհ են. Լույնիսկ ջուր լինելու դեպքում նրանց արգելվում է խմել։ Եվրոպացիներին ևս արգելված է օգնել նրանց։ Ամեն օր Հալեայից դուրս են բերվում 100-ից ավելի դիակ»<sup>5</sup>։ Իրոք Հալեայը դարձավ արտաքսումների կենտրոն։ Թուրքական կառավարությունն այնտեղ բացեց Արտաքսումների գլխավոր վարչություն, որը զբաղվում էր Ցրակիայից, Կիլիկիայից և Փոքր Ասիայի արևմուտքից եկող խմբերի տեղաբաշխումով։ Ավելի քան կես միլիոն մարդ տեղավորվեցին քաղաքից դուրս բաց երկնքի տակ մի քանի տասնյակ ճամբարներում, ուր ենթարկվեցին դանձրանքի և կյանքի պայմաններին։ 1916 թ. դեկտեմբերին թուրք իշխանությունները վարձեցին քոչվոր ցեղերի և չեթեն մարդասպանների, որպեսզի վերացնեին ողջ մնացածներին։ Վերջիններին նրանք քչեցին Դեր Ջորի անապատ, ուր առաջին գազախցերի վերածված քարանձավներում նրանց վառեցին<sup>6</sup>։

Ըստ հայկական աղբյուրների՝ 1912 թ մարդահամարի տվյալների համաձայն Օսմանյան կայսրությունում բնակվող 2.100.000 հայերից վերապրեցին միայն 600.000-ը<sup>7</sup>։ Միևնույն ժամանակ Պոլիսում արդեն երկար ժամանակ գործում էր «լքված ունեցվածքի» կոչվող մի հանձնաժողով, որն իրականացնում էր հայերի ունեցվածքի բռնագրավումը։ Հիշենակը հիշեցնում է «Թուրք ղեկավարների անպատկառությունը հասավ այն

<sup>4</sup> Լույն տեղում, էջ 18։

<sup>5</sup> Լույն տեղում, էջ 21։

<sup>6</sup> Լույն տեղում, էջ 22-23։

<sup>7</sup> Լույն տեղում, էջ 23։

աստիճանի, որ նրանք պահանջում են կյանքի ապահովագրական վկայականները և բանկային հաշիվները, որ որոշ հայեր ունեին Միացյալ Լատինագներում: Սակայն թալանը չի սահմանափակվում միայն մասնավոր սեփականության շրջանակով՝ եկեղեցիներ, վանքեր, գրադարաններ, ամրոցներ, դպրոցներ, անբնակ ավաններ... հայ ժողովրդի սեփականությունը պարբերաբար կանարգվի և կոչնչացվի: Կարճ ամիսների ընթացքում թուրք իշխանությունները ջնջեցին մշակութային ժառանգության վկայությունները՝ ստեղծված ավելի քան երեք հազարամյա պատմության ընթացքում:

Միայն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին զինադադարի ստորագրումից հետո 1918 թ. հոկտեմբերի 18-ին դաշնակիցները պահանջում են քրեական պատասխանատվության կանչել կոտորածների հեղինակներին: Ակնկալելով դաշնակիցների բարենաճությունը և ապագա խաղաղության կոնֆերանսի ապաստումով նոր Օսմանյան կառավարությունը 1919 թ. կազմում է ռազմական խորհուրդ երիտթուրքերի դատավարության համար, որ երկիրը բերին ռազմական պարտության և արքայների ու «ամբողջ մի ժողովրդի ոչնչացման»<sup>4</sup>:

Կոտորածների գլխավոր կազմակերպիչներն ու կատարողները թալեաթը և Ջեմալը դատապարտվեցին մահապատժի, սակայն նրանք փախան արդարությունից, ինչը չփրկեց նրանց, քանի որ ստացան հասանելիք պատիժը: Սուդանի թերլեդյանի գործը դարձավ այն հազվադեպ դատավարություններից մեկը որտեղ պաշտոնապես ճանաչվեց ցեղասպանությունը, հիմնված գերմանական դատարաններում լսված տարբեր պատերազմի վկայությունների վրա, որոնք տեսել էին հայ բնակչության դեմ իրագործված դաժանություններն ու բռնությունները: Հեց ներշնչված այդ դատավարությամբ լեռ Ռաֆայել Լեմկինը ստեղծեց ցեղասպանություն բառը: Միևնույն ժամանակ թուրքիացում գնեկրալ Մուսթաֆա Աթաթուրքը սկսում է արևմտացման գործընթացը, որը լիովին կվտխի Օսմանյան կայսրության պատկերը: Լոր այբուբենի ստեղծմանը և խալիֆաթի վերացմանը զուսմարվում են այլ որոշումներ, ինչպես ընդհանուր համաձայնումը,

<sup>4</sup> Լույս տեսում, էջ 24:

որը վերացնում է Օսմանյան դատական գործընթացները: Ընդունված այդ որոշումը միջազգային հանրությունը վավերացնում է Լոզանի պայմանագրով 1923 թ.<sup>9</sup>:

Քեմալական հանրապետությանը հաջողվեց խույս տալ պատասխանատվությունից և դեռ ավելին՝ մերժել ընդհանրապես սույն փաստը: Դիրքորոշում, որը ժառանգել է ներկայիս թուրքիան: Ներկայանալով աշխարհի առաջ որպես ժամանակակից և աշխարհիկ պետություն Աթաթուրքը վերաստեղծում է պատմությունը վերնից ներքև: Կարծես թե այլևս հայ ժողովուրդ գոյություն չունի, բավական կլինի թուրք միացյալ ազգի առասպելը հաստատված Անատոլիայում ժամանակի ակունքներից և ժառանգած խեթերից ու բյուզանդացիներից: Փաստորեն հայերը դիտվում են որպես նկվորեեր և այլ քաղաքակրթության ներկայացուցիչներ: Կոտորածների վերապրածներին, վախենալով իրենց կյանքի համար, այլ ելք չի մնում քան լքել հարազատ օջախները և գալթել Ամերիկա, Եվրոպա և նորաստեղծ Խորհրդային Հայաստան: Հետագայում հայ ժողովրդի դեմ գործած հանցագործությունները մոռացության կմտնովեն, իսկ 1948 թ. թուրքիան առանց բարդությունների կստորագրի Միացյալ ազգերի ցեղասպանության մասին կոնվենցիայի պայմանագիրը: Ինչպես Խորհրդային Հայաստանի այնպես էլ սփյուռքի համար ցեղասպանության ճանաչման պահանջարկը դառնում է առաջնային սկսած 1965 թ.<sup>10</sup> դիվանագիտական երկարատև պայքարի սյուներից մեկը:

<sup>9</sup> Լույս տեսնում էջ 23:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ



## ՌՈՒԲԵՆ ՄԱՀԱԿՅԱՆԻ 80 ԱՄՅԱԿԻՆ ԼՎԻՐԿԱՍ ԳԻՏԱԿԱՆ ԼՍՏԱՇՐՋԱՆ

2009 թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված վաստակաշատ թուրքագետ, Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի երկարամյա վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր *Ռուբեն Մահակյանի* 80-ամյակին:

Ինստիտուտի գիտաշխատողների ու մագիստրանտների, տարբեր բուհերի ուսանողների, Ռ. Մահակյանի հարազատների և ընկերների մասնակցությամբ կայացած նիստը բացեցին ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար *Վաղդիմիր Բարխուդարյանը* և Արևելագիտության ինստիտուտի տնօրեն *Ռուբեն Մաֆրասոյանը*։

*Ռ. Մաֆրասոյանը* «Ռ. Մահակյան. գեանատականի և հիշատակի խոսք» խորագրով ելույթում խոսեց ճանաչված թուրքագետի կատարած աշխատանքների մասին, ընդգծելով, որ դրանք ինքնատիպ են և արժեքավոր ու մնայուն հետք են թողել թուրքագիտության մեջ: Երա գիտական հետազոտությունների կենտրոնում են եղել Թուրքիայի երազույն շրջանի ներքին և արտաքին քաղաքականությունը, Հայկական հարցի պատմագրությունը, հայերի ցեղասպանության մասին թուրք, անգլիացի ու ֆրանսիացի հեղինակների աշխատությունների քննադատական վերլուծությունը: Ռ. Մաֆրասոյանի գեանատամբ Ռ. Մահակյանը այն փոքրաթիվ գիտնականների թվին է պատկանում, որոնք 1960-ական թվականներին Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության շուրջ իրենց ուսումնասիրություններով շրջադարձային դեր խաղացին խորհրդահայ իրականության մեջ: 1963 թ. Ե. Մադգայանի հետ համատեղ Ռ. Մահակյանը երատարակեց «Հայ ժողովրդի կոր շրջանի պատմության նեկարիտությունը թուրք պատմագրության մեջ» աշխատությունը: Մեկ տարի անց էլ՝ 1964 թ., լույս տեսավ նրա «Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսարևումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ» խորագրով գիրքը: Այս երկու աշխատություններում թուրքագետը քաղազերծում է պատմության թուրք կեղծարարներին: Բացի այդ, Ռ. Մահակյանը Մ. Լեոսիայանի հետ

համատեղ կազմեց, վերջինիս խմբագրությանը տպագրված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և եռթերի ժողովածուն (1966 թ.): Հետագայում թուրքագետը մասնակցել է նաև Ջ. Կիրակոսյանի խմբագրությանը լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուի (1972 թ.) կազմակերպմանը: Գիտական մեծ արժեք է ներկայացնում հեղինակի՝ 1970 թ. հրատարակված «Ֆրանս-թուրքական հրապարտությունները և Կիլիկիան 1918-1923 թթ.» մենագրությունը, որի ընդլայնված և նոր երկրորդ հարստացված տարբերակը՝ ռուսերեն լեզվով, լույս է տեսել 1986 թ.: Իսկ 1990 թ. լույս տեսավ նրա «Ցեղասպանության պատմությունից» խորագիրը կրող հոդվածների ժողովածուն, որտեղ ի մի են բերված անխափ գիտնականի մի քանի տասնյակ տարիների համառ, քրտնաջան, գիտական պրպտումների արդյունքները: Ամփոփելով իր խոսքը Արևելագիտության ինստիտուտի տնօրենը ելեց, որ Ռ. Սահակյանի հետազոտությունները ծանրակշիռ խոսք են Հայկական հարցի և ցեղասպանության ոլորտներում:

Այնուհետև Ռ. Սահակյանի հետ կապված իրենց ելչոդությունները պատմեցին նրա տիկինը՝ *Վալենտինա Ղևոնդյան*, Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, պ. գ. դ. *Վահան Բայրուդյան*, Թուրքիայի բաժնի գիտաշխատող *Անուշ Հովհաննիսյան*, Ռ. Սահակյանի ասպիրանտ, ներկայումս՝ ԵՊՀ գիտքարտուղար, պ. գ. թ. *Վահրամ Պետրոսյան* և ուրիշներ:

Դրան հաջորդեց գիտաժողովի գիտական մասը: Լավեցին Թուրքիայի պատմության նոր և նորագույն շրջանի հիմնահարցերին վերաբերող մի շարք զեկուցումներ: Առաջին զեկուցողը Ա. Հովհաննիսյանն (ՀՀ ԳԱԱ ԱԻ) էր՝ «Արևելյան լեզուներ և Ֆրանսիայի քաղաքականությունը (թուրքական նոր հրապարակումների լույսի ներքո)» թեմայով: Եւ, հիմնվելով թուրքական վերջին տարիների հրապարակումների վրա, խոսեց 1917 թ. Ֆրանսիական զորքերի կազմում ստեղծված հայկական կամավորական զորագունդի՝ Արևելյան լեզուների ռազմական գործունեությունների մասին: Ուշագրավ էր Վ. Պետրոսյանի (ԵՊՀ) «Իրաքյան Թուրքիստանի ինքնավարությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համամտեցատում» խորագիրով կուլթը, որում նա

անդրադարձավ Իրաքյան վերջին պատերազմից հետո տարածաշրջանում տեղեկված իրավիճակին: Թուրքիայի բաժնի երիտասարդ գիտաշխատող *Կ. Եփրոյանը* (ՀՀ ԳԱԱ ԱԻ)՝ իր գեկուցման մեջ վերլուծեց Թուրք տարեգիր Ահմեդ Ջևդեյի փաշայի «Մա'րուգաթ» աշխատությանում 19-րդ դարում Կիլիկիայում անցկացված բարեփոխումների վերաբերյալ ատկա գրառումները: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեծ տերությունների և Թուրքիայի միջև «Օսմանյան պարտքի» խեղդի շուրջ ընթացած բանակցությունների մասին խոսեց *Ա. Մարտիրոսյանը* (ՀՊՄՀ): *Ք. Մեյրոնյանը* (ՀՀ ԳԱԱ ԱԻ) իր խոսքում անդրադարձավ 1945-1948 թթ հայկական հողային պահանջատիրության խեղդին վերաբերող Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի և Կախարարության արխիվային փաստաթղթերին:

Ռուբեն Մահակյանի 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը ընդգրկվել են Արևելագիտության ինստիտուտում հրատարակվող ժողովածուներում՝ «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (հատոր 7-րդ), «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ» (հատոր 28-րդ), «Մերձավոր Արևելք» (հատոր 7-րդ):

ՄԵԼՔՈՍԱՆ ՔՐԻՍՏՈՒՆ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ XXXI ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

2010 թ. հուլիսի 28-30-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ Երիտասարդ արևելագետների XXXI հանրապետական գիտական նստաշրջանը: Այն նվիրված էր Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի, Կովկասի երկրների ու ժողովրդների պատմության, միջազգային հարաբերությունների և արևելյան մշակույթի հիմնախնդիրներին: Հնչեցին 51 զեկուցումներ, որոնցից 24 վերաբերում էին Թուրքիայի պատմությանը և անդրադառնում՝ ցեղասպանագիտության, օսմանագիտության և թյուրքագիտության մի շարք եիմնահարցերին, Հայկական հարցին ու Թուրքիայի ներկա քաղաքական զարգացումներին:

Հուլիսի 28-ին գիտաշխատողների, ուսանողների, գանձվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած լիազումար նիստը բացեց արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների խորհրդի նախագահ *Սոնա Գրիգորյանը*: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար *Վլադիմիր Բարխուդարյանը* և Արևելագիտության ինստիտուտի տնօրեն *Ռուբեն Մախրատյանը*:

Այնուհետև լավեցին մի շարք զեկուցումներ (նիստի նախագահ՝ *Ս. Գրիգորյան*), որտեղ հնչեցին ուշագրավ հարցադրումներ ու արժեքավոր դիսարկումներ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ու ժողովրդների քաղաքական վիճակի, միջազգային հարաբերությունների և արդի զարգացման հեռանկարների վերաբերյալ: Թուրք-խորալեական հարաբերությունների ձևավորման նախապատմությանն էր նվիրված պ. գ. թ. *Քրիստինե Մելքոնյանի* (ՀՀ ԳԱԱ ԱՐ)՝ «Իսրայել պետության ստեղծումը և թուրքական մամուլի արձագանքը (1948 թ.)» խորագրով զեկուցումը:

Լիազումար նիստի ավարտից հետո՝ նույն օրը, գիտական նստաշրջանը բաժանվեց երկու առանձին նիստերի: Առաջինը նվիրված էր իրանագիտությանը (ինստիտուտի նիստերի դանիճ, նիստի նախագահ՝ պ. գ. թ. *Գ. Իսկանդարյան*), իսկ երկրորդը՝ թյուրքագիտությանը (Թուրքիայի բաժին, նիստի նախագահ՝ պ. գ. թ. *Վ. Տեր-Մոսիսյան*):

«Թյուրքագիտություն» խորագիրը կրող նկատը բացեց Շ. Արխանյանը (ԵՊՀ) «Մոթուն Շանունը օդուզական ցեղերի նախահայր» գեկուցումով: Եւ ներկայացրեց, թէ որտեղից էին ծագում օդուզները և ույ՛ր էին երանց նախնիները: «Թյուրքական մողելը», երա վերելքն և անկումն Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետություններում: խորագրով գեկուցման մեջ Լ. Միհասյանը (ՀՊՍՀ), անդրադարձավ, թէ «թյուրքական մողելի» գաղափարը ինչպէս է կիրառել Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետություններում և հիմնավորեց, թէ ինչու այն ընդունելություն չունեցավ այդ տարածաշրջանում: Թյուրքական լեզվի առանձնահատկություններին նվիրված ուշագրով գեկուցումներով հանդես եկավ Հ. Ասատրյանը (ԵՊՀ) («Ներկա ժամանակների դրսևորումները թյուրքերենի արևմտյան խմբի բարբառներում») և Լ. Ռաչատրյանը (ԵՊՀ) («Թյուրքական լեզուների ներքին փոխազդեցությունների շուրջ»):

Հուլիսի 29-ին գիտական նստաշրջանը ունեցավ չորս նիստ՝ «Արարագիտություն» (ինստիտուտի նիստերի դասի՛ճ, նիստի նախագահ՝ պ. գ. թ. Ա. Ասատրյան), «Օսմանագիտություն» (Թուրքիայի բաժին, նիստի նախագահ՝ Տ. Մանուկյան), «Գրականություն, Արևելյան ժողովրդների գրական հուշարձաններ» (Իրանի բաժին, նիստի նախագահ՝ բ. գ. դ. Ա. Կոզմոյան) և «Հին Արևելք» (Հին Արևելքի բաժին, նիստի նախագահ՝ պ. գ. թ. Ռ. Նազարյան) խորագրերով:

Օսմանագիտությանը նվիրված նիստում առաջինը գեկուցումով հանդես եկավ Վ. Հայրությունյանը (ՀՀ ԳԱԱ ԱԻ): Եւ՝ «Այնիները հայկական աղբյուրներում» գեկուցման մեջ դիտարկեց հայ եղիականների մտ ալնիների վերաբերյալ եղած հիշատակումները: «Գատմագիր Ամմեղ Ջուղեք» փաշան Սսի կաթողիկոսության մասին» և «Եփրոսեկի (ՀՀ ԳԱԱ ԱԻ) գեկուցումը վերաբերում էր 19-րդ դարի կեսի Սսի կաթողիկոսության պատմությանը: Եւ օգտագործելով հայտնի թուրք տարեգիր Ամմեղ Ջուղեք» փաշայի «Թեզաքիր» աշխատության մեջ առկա զոսումները Սսի կաթողիկոսության մասին, համանաուական զուգահեռներ էր անցկացնում հայ պատմագիրների և թուրք պատմագրի մտ ալանալանված եղութրի միջև: Ա. Քայրապշյանը (ԵՊՀ) «Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հպատակների իրավական հիմնախնդիրները իսլամի դիտանկյունից» խորագրով գեկուցումն մեջ վերլուծեց Օսմանյան կայսրությունում քրիստոնյա հպատակների իրավական հիմնախնդիրները,

փաստելով, որ ղեկավար շրջանակներն, առաջնորդվելով շարիաթական սկզբունքներով, երանց հանդես կիրառել են կրոնական և կենցաղային քաղաքի սահմանափակումներ և այս կերպ խաթարել են ոչ մուսուլման հայատականների սոցիալական հենքը՝ նվազեցնելով տնտեսության մեջ վերջիններիս ազդեցությունն ու կշիռը: *Գ. Վարդանյանը* (ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ) անդրադարձավ Առաջին աշխարհամարտի նախօրեին հույն բնակչության թվաքանակի հիմնախնդրին նվիրված զեկուցումով («Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հույն բնակչության թվականակի խելիքը»): «Արևմտահայ մամուլը «Մամուլի ազատության» և գրաքննության վերահաստատման շրջանում» խորագրով զեկուցման մեջ *Տ. Ղալթախչյանը* (ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ) հանգամանալիորեն ներկայացնեց, թե ինչպես է 1908 թ. Օսմանյան կայսրությունում սահմանադրության հոչակումով վերացված գրաքննությունը դրսևորվել արևմտահայ մամուլի կյանքում: Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան *Է. Հայտությունյանը* (ՈՀՍՂ) («Մեծույան նեղուցների հիմնահարցն Առաջին համաշխարհային պատերազմից հետո») և *Ա. Ալավերդյանը* (ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ) («Ազգային փոքրամասնությունների զեմ ուղղված քեմալականության դրույթների մշակումը Էրզրումի և Սվազի 1919 թ. համաժողովներում»):

Բացի այդ, հուլիսի 29-ին «Գրականություն, Արևելյան ժողովրդների գրական հուշարձաններ» ընդհանուր խորագրով եխատում եղան երկու ելույթներ, որոնք ևս կառանձնացնենք, քանի որ վերաբերում էին թուրքական գրականությանը: Առաջինը՝ բ. գ. թ. *Տ. Պետրոսյանի* (ԵՊՀ) «Քաղաքացիական քեարերգությունը օսմանյան գրականության մեջ (19-րդ դարի վերջ)» թեմայով զեկուցումն էր, որում խոսվեց 19-րդ դարավերջին սուլթան Արդու Համիդ II-ի բոնապետական վարչակազմի օրոք ծեուեղ առած, զարգացած և իր վախճանն ապրած «Մերվեթ»-ի ֆյունուսի գրականությունը» խորագիթը կրող գրական ուղղության մասին: Իսկ երկրորդը՝ *Ա. Ոսկանյանի* (ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ) ելույթն էր, որում ղիտարկեց թուրք արձակագիր Օրհան Փամուկի ստեղծագործություններում գույների խորհրդապաշտական նշանակությունը («Գույների խորհրդապաշտությունը Օրհան Փամուկի վեպերում»):

Հուլիսի 30-ին գիտական նստաշրջանը շարունակեց իր աշխատանքը, անցկացվեցին երեք եխատեր՝ «Հեուակոր Արևելք»

(ինստիտուտի նիստերի դահլիճ, նիստի ետխազան՝ պ. գ. թ. Ա *Հարությունյան*), «Թուրքիայի պատմություն» (Թուրքիայի բաժին, նիստի ետխազան՝ պ. գ. թ. Զ *Մեջբեկյան*) և «Տեղաապանությունը և Հայկական հարցը» (ինստիտուտի նիստերի դահլիճ, նիստի ետխազան՝ Ա *Հովհաննիսյան*) խորագրերով:

«Թուրքիայի պատմություն» ընդհանուր խորագրով նիստում հեղան ելույթները վերաբերում էին Թուրքիայի նորագույն պատմությանը և հատկապես մեծ ուշադրություն դարձվեց արդի փուլին: Ա *Մեջբեկյանի* (ՀՀ ԳԱԱ ԱԻ) «Հավաստությունները ստամբուլահայ համայնքում (1945-1947թթ.)» վերնագրով զեկուցումն անդրադարձ էր հետպատերազմյան ժամանակաշրջանում ստամբուլահայ համայնքում ծագած հիմնական դիրքերին, հատկապես մեծ ուշադրության դարձնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Աբալակյանի գործունեությանը: Լ *Բացբադյան* (ԵՊՀ) իր զեկուցումում «Թուրքիայում փախստական, ապաստան նայող և ապօրենի բնակություն հաստատած անձանց խնդիրների շուրջ» ներկայացրեց Թուրքիայում ապօրենի բնակություն հաստատած և փախստական անձանց խնդիրները, առավել ևս, որ երանց շարքերում կան նաև ապօրենի բնակվող հայեր, որոնց փաստ հաճախ օգտագործվում է թուրքական իշխանությունների կողմից քաղաքական միտումներով: «Եվրոպայում Թուրքիայի ժողովրդագրական քաղաքականությունը Ֆրանսիայի օրինակով» խորագիրը կրող Կ *Քոջայանի* (ՌՀ(Մ)Հ) զեկույցը դիտարկում է թուրքերի մասայական արտագաղթը դեպի Ֆրանսիա, փաստելով, որ այդ նրկում այսօր թուրքական համայնքը հասնում է 400-500 հազարի: Վերջին տարիների Թուրք-սիրական բարի դրացիական երկադմանի հարաբերությունների զարգացմանն անդրադարձավ Ա *Սարգսյանը* (ԵՊՀ) զեկուցման («Թուրք-սիրական հարաբերությունները արդի փուլում») մեջ:

Նատաշրջանի վերջին նիստը, որը կրում էր «Տեղաապանությունը և Հայկական հարցը» խորագիրը բացեց Ա *Մկրտումյանը* (ՀՊՄՀ) «Ն. Պ. Բզևանուր և Հայկական հարցը Ադրիանապոլսի զինադադարից մինչև Սան Ստեֆանոյի ետխազան հաշտության պայմանագիր» զեկուցումով: Նա անդրադարձավ Հայկական հարցի շուրջ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ընթացած քննարկումների ընթացքում ռուս դիվանագետ Ն. Պ. Բզևանուր ունեցած

ղերակատարությանը: Ա Ակնքատկանն (22 ԳԱԱ 28ԹԻ) իր «Ճեղա-  
 սպանություն և սեռասպանություն (զենդերոցիդ)» զեկուցման մեջ  
 զենդերոցիդը դիտարկեց որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս:  
 Հ Ազատյան (2ԳԱ2) էլ իր «Տերությունների վերջին բանակցությունները  
 Հայկական հարցի շուրջ (ըստ թուրքական մատույլի)» զեկուցմամբ  
 անդրադարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո  
 Հայկական հարցի հետ կապված՝ խորհրդա-թուրքական  
 հարաբերություններում ծագած ճգնաժամին և, որ ժամանակակից  
 թուրք հեղինակների մի մասը հաշվի առնելով երկրում անկա  
 հակամարտիկյան տրամադրությունները, և որովհի է գեռնատում ԱՄՆ-  
 ի հետպատերազմյան վարքագիծը ու այլևս Վաշինգտոնին չեն դիտում  
 որպես Թուրքիայի ազատարարի: «Մշակութային մոդելները» որպես  
 ամբոխի վարքի կազմակերպման ազդակներ Հայոց ցեղասպանության  
 համատեքստում» զեկուցման մեջ Հ Գրիգորյանն (22 ԳԱԱ 28ԹԻ)  
 փորձեց էիմնավորել, որ ոչ թե մշակույթը կամ բնագրի է ձևավորում  
 վարքը, այլ «մշակութային մոդելներ» են ազդակներ, զրգոյներ  
 հանդիսանում բնագրի արթնացման համար: Ա Գրիգորյանի  
 (ՌՆ2(Մ)2)՝ «Հայոց ցեղասպանության հարցը Գերմանիայի թուրքական  
 համայնքի օրակարգում» թեմայով զեկուցման մեջ լուսաբանվեցին  
 Հայոց ցեղասպանության ճանաչումը կանխելու ուղղությամբ  
 Գերմանիայի թուրքական համայնքի կողմից ձեռնարկած քայլերը:

Եսլյն օրը՝ հուլիսի 30-ին տեղի ունեցավ Երիտասարդ  
 արևելագետների XXXI հանրասպետական գիտական ետաաշրջանի  
 փակումն ու արդյունքների ամփոփումը: Մատիտուտի տնօրեն՝ Ա  
 Մախրասոյանը դրական միտում համարվեց ինչպես տարեցտարի  
 սովելացող մասնագետների թիվը, այնպես էլ երանց զեկուցումների  
 թեմաների լայն շրջանակը: Երա գեանուտմամբ՝ գիտաժողովը  
 ընթացավ գիտական մակարդակով և վերջինիս արդյունքները ապա-  
 ցուցեցին, որ արևելագիտությունը ոչ միայն Հարատանում պահ-  
 պանում է իր դիրքերը, այլ զարգանալու հնարավորություն ունի:

2010 թ. հուլիսի 28-30-ին 22 ԳԱԱ Արևելագիտության ինստիտու-  
 տում կայացած Երիտասարդ արևելագետների XXXI հանրասպետա-  
 կան գիտական ետաաշրջանի լավագույն ելուքերը կընդգրկվեն  
 ինստիտուտում երատարակվող «Մերձավոր Արևելք» ժողովածուի 7-  
 րդ հատորում:

ՄԵԼՔՈՒՑԱՆ ՔՐՈՒՍՏՆԵ



Տպարանակը՝ 300 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հաստատարանկություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47  
Էլ. փոստ [lus@gevorg-grazir.com](mailto:lus@gevorg-grazir.com)

